



L. Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ –
ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Երևան 2018

Л. Н. АВETИCЯН

**КОМПАРАТИВНЫЕ
ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ В
СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

Ереван 2018

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Ա 791

Տպագրվում է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Պատրաստման արտո խմբագիր՝
բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Լ. Մ. Խաչատրյան

Հրատարակության են երաշխավորել՝

բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Լ. Կ. Եգեկյան

բան. գիտ. թեկնածու, դոցենտ Գ. Մ. Մխիթարյան

Ավետիսյան Լ. Ն.

Ա 791 ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ-ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱ-
ՅԵՐԵՆՈՒՄ /Լ. Ն. Ավետիսյան, խմբ.՝ Լ. Մ. Խաչատրյան. – Եր.: Էդիթ Պրինտ,
2018. – 184 էջ:

Մենագրության մեջ համաժամանակյա հայեցակետով քննվում են ժամանակակից
հայերենի համեմատություն-դարձվածային միավորները (ՀԴՄ), որոնք որոշակի
դասակարար կշիռ ունեն մեր լեզվի դարձվածային համակարգում:

Բացահայտվում են անվանողական ՀԴՄ-ների միարժեքության և փարարժե-
քության, կապակցելիության և գործառական հաճախականության հարցերը, այդ
կարգի կապակցությունների դարձվածային և իդիոմատիկ հատկանիշների, իմաս-
տային (թեմատիկ) խմբերի, փարբերակայնության, հոմանշության ու հականշության
խնդիրները, ինչպես նաև հաղորդակցական ՀԴՄ-ների կառուցվածքային-քերական-
ական ու իմաստային առանձնահատկությունները:

Գիրքը նախատեսված է բանասիրական ֆակուլտետի ուսանողների, դարձվա-
ծաբանների և, ընդհանրապես, հայոց լեզվի հարցերով հետաքրքրվողների համար:

*В монографии синхроническим методом рассматриваются компаративные
фразеологические единицы (КФЕ) современного армянского языка, которые имеют
определенную значимость во фразеологической системе языка.*

*Выявляются вопросы частеречной односемантической и полисемантической,
синтаксической сочетаемости и функционально-синтаксической частотности
номинативных КФЕ, задачи фразеологических и идиоматических свойств, семан-
тических (тематических) групп, вариантности, синонимии и антонимии таких
единиц, а также структурно-грамматические и семантические особенности
коммуникативных КФЕ.*

*Книга предназначена для ученых-фразеологов и тех, кто заинтересован
вопросами лингвистики.*

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-9939-75-229-7

© Լ. Ավետիսյան, 2018

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համեմատություն ցույց տվող դարձվածային միավորները¹ խոսքի պատկերավորության հիման վրա առաջացած կայուն, պատրաստի վերարտադրելի և մասամբ կամ ամբողջությամբ վերափոխանակված կապակցություններ են: ՀԴՄ-ների հիմքում ընկած պատկերավոր համեմատությունն արտահայտում է որևէ առարկայի ու նրա հատկանիշի կամ գործողության, այլև հատկանիշի հարաբերությունը մեկ այլ առարկայի հատկանիշի, գործողության հիմնական կամ ընդհանուր հատկանիշների հետ²:

ՀԴՄ-ների կազմության համար անհրաժեշտ է երեք անդամ. համեմատության առարկան կամ սուբյեկտը, համեմատության հենակետը, որը պատկերավորության կրողն է, և այն ընդհանուրը, որը հատուկ է թե՛ սուբյեկտին և թե՛ համեմատության հենակետին³:

Հմմտ. Երեխան (1) ձկան պես (2) լուռ է (3): Երեխան (1) լուռ է (3) ինչպես ձուկը (2):

Աղջիկը (1) մոմի պես (2) հալվում է (3): Աղջիկը (1) հալվում է (3) ինչպես մոմը (2):

ՀԴՄ-ների կազմում մշտական անդամներ են համարվում վերջին երկուսը: Այդ պատճառով էլ ՀԴՄ-ները կոչվում են երկանդամ կայուն կապակցություններ (ռուս.՝ *бинарные устойчивые обороты*):

Ժամանակակից հայերենի ՀԴՄ-ները կազմվում են առավել հաճախ *պես* և *նման* կապերով, այլև՝ *չափ*, *ինչպես (որպես)*, *իբրև*, *սսես*, *կարծես*, *ոնց որ* համեմատական բառերով⁴:

¹ Երկարաբանությունից խուսափելու համար այսուհետև մեր ուսումնասիրության մեջ կգործածենք մասնագիտական գրականության մեջ ընդունված *համեմատություն-դարձվածային միավորներ* եզրույթը և վերջինիս հապավումը՝ ՀԴՄ:

² Հմմտ. Խ. Գ. Բաղիկյան, Դարձվածային ոճաբանություն, Ե., Եր. համալս., 2000, էջ 22:

³ Տե՛ս Ա. Գ. Назарян, Фразеология современного французского языка, М., «Высшая школа», 1987, էջ 112:

⁴ Հմմտ. ռուս. *как, словно, точно, как будто, что, будто* (как гром среди ясного неба), անգլ. *as...as, like* (like a bolt from the blue), ֆրանս. *comme, comme si* (éclater comme une bombe), գերմ. *wie, als, als wenn, wie wenn, als ob, gleich* (wie ein Donnenschlag aus heiterem Himmel) և այլն:

Հմմտ. քարի նման լուռ, թռչունի պես ազատ, սև ինչպես գիշերը, մի բաժակ ջուր խմելու չափ հեշտ, չոր ու ցամաք որպես կմախք, թափվել ինչպես առափուռության եղջյուրից, իբրև մորից նոր ծնված, կարծես ասեղների վրա նստած լինել, ոնց որ պատին ասես, ասես որոտ պարզ երկնքից և այլն:

ՀԴՄ-ներն ընդգծում են առարկայի, երևույթի այս կամ այն առանձնահատկությունը:

ՀԴՄ-ները՝ որպես պատրաստի վերարտադրելի կառույցներ, լեզվի դարձվածային կազմի մեջ առանձնակի տեղ ունեն:

Լեզվի դարձվածային միավորների (ԴՄ) համակարգը ձևավորվում է նրա մյուս մակարդակների (բառափմաստային, ձևաբանական և շարահյուսական) միավորների հիման վրա: Ընդհանրապես յուրաքանչյուր ԴՄ ունի բաղադրամասային հիմք. այն առանձին բաղադրիչներից կազմված մի որոշակի կառույց է, որն ունի ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններ: Յուրաքանչյուր դարձվածքի կազմում առկա են բառային անդամներ, այն ունի ձևաբանական-շարահյուսական կառուցվածք, գործառական-շարահյուսական բնութագիր:

ՀԴՄ-ներում առավել կամ պակաս չափով արտացոլվում են լեզվի մյուս մակարդակների հիմնական հատկանիշները: Լեզվի ձևութաբանական մակարդակում ՀԴՄ-ները հատկանշվում են որոշակի խոսքիմասային իմաստներով: ՀԴՄ-ների ընդհանուր բառաքերականական իմաստներով պայմանավորված՝ շարահյուսական մակարդակում որոշվում է նրանց իմաստային-գործառական դերը:

Ընդհանրապես լեզվական միավորների արտահայտած հասկացությունների ուսումնասիրությունը կատարվում է իմաստաբանության տիրույթում:

ԴՄ-ների իմաստաբանական մեկնաբանությունը, նրանց իմաստային առանձնահատկությունների քննությունն ու համընդհանուր իմաստային փոխհարաբերությունների պարզաբանումը դարձվածաբանության կարևորագույն հարցերից են:

ՀԴՄ-ներում առկա բազմիմաստության, հոմանշության և հականշության պարզաբանումը իմաստաբանության արդիական խնդիրներից մեկն է:

Սույն աշխատանքի թեմայի ընտրությունը պայմանավորված է հայերենում համեմատություն-դարձվածային միավորների պակաս ուսումնասիրված լինելով: Մինչ այս հետազոտությունը մեզանում ՀԴՄ-ները քննարկվել են ընդհանրապես ԴՄ-ներին առնչվող տարաբնույթ հարցերի շրջանակներում: Հայերենում եղել են անդրադարձներ ՀԴՄ-ներին վերաբերող այնպիսի խնդիրներին, ինչպիսին են՝ պատկերավոր համեմատության դերը ՀԴՄ-ների ձևավորման գործում, կապակցությունների ձևաբանական դասակարգումը, կաղապարները, գործառական արժեքները, ծագումնաբանությունը, ինչպես նաև գունանուն բաղադրիչով ՀԴՄ-ների իմաստային ու կառուցվածքային առանձնահատկությունները:

Այսպիսով, ժամանակակից հայերենի ՀԴՄ-ների ամբողջական կառուցվածքային-քերականական և իմաստաբանական մեկնաբանության անհրաժեշտությունն անժխտելի է:

Այս ուսումնասիրության նյութ ենք դարձրել ժամանակակից հայերենի ՀԴՄ-ները (ինչպես նաև գրաբարի, միջին հայերենի, արևմտահայերենի, ռուսերենի և այլ օտար լեզուների այդօրինակ կապակցությունները՝ զուտ որպես համեմատության եզրեր):

Աշխատանքում բացահայտել ենք անվանողական ՀԴՄ-ների միարժեքության և տարարժեքության, կապակցելիության և գործառական հաճախականության հարցերը, այդ կարգի կապակցությունների դարձվածային և իդիոմատիկ հատկանիշների, իմաստային (թեմատիկ) խմբերի, տարբերակայնության, հոմանշության ու հականշության խնդիրները, ինչպես նաև հաղորդակցական ՀԴՄ-ների կառուցվածքային-քերականական ու իմաստային առանձնահատկությունները:

Աշխատանքը կատարված է լեզվաբանական հետազոտության համաժամանակյա, այն է՝ նկարագրական մեթոդի արտաքին և ներքին մեկնաբանության եղանակներով:

Կառուցվածքային վերլուծությամբ բացահայտել ենք ՀԴՄ-ների կառուցվածքային-քերականական խմբերն ու ենթախմբերը, նրանց հատկանիշները:

Իմաստաբանական դասակարգմամբ առանձնացրել ու մեկնաբանել ենք համեմատություն-դարձվածքներն ու համեմատություն-ի-

դիմները, նրանց իմաստային դաշտերն ու իմաստային (թեմատիկ) խմբերը:

Նկարագրական մեթոդի եղանակներից կիրառել ենք նաև հակադրությունը (բայական ՀԴՄ-ների գերադաս բայ բաղադրիչների քերականական կարգերի հակադրություններ, հականշային ՀԴՄ-ներ), վիճակագրությունը (ՀԴՄ-ների քանակային բնութագրումներ, անդրադարձներ նրանց տարածման չափերին):

Առանձին դեպքերում օգտվել ենք համեմատական մեթոդից՝ անդրադառնալով հայերենի պատմական զարգացման տարբեր շրջանների և այլ լեզուների ՀԴՄ-ներին՝ ժամանակակից հայերենի նույն կարգի կապակցությունների հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները բացահայտելու առումներով:

Աշխատանքի հիմնական նպատակն է կատարել ՀԴՄ-ների ամբողջական վերլուծություն, որի համար անհրաժեշտ է բացահայտել, նկարագրել ու գիտականորեն մեկնաբանել ՀԴՄ-ների կառուցվածքային, քերականական և իմաստային առանձնահատկությունները: Հետազոտության այս առանցքային խնդիրները լուծելու համար պետք է՝

1. բացահայտել ՀԴՄ-ների կառուցվածքային տիպերը, ոչ հաղորդակցական ՀԴՄ-ների կաղապարները, ծավալային ընդգրկումներն ու կազմը, նրանց բաղադրիչների կապակցման եղանակները,

2. վեր հանել այդօրինակ կապակցությունների քերականական և շարահյուսական հատկանիշները, ինչպես նաև քերականական-կառուցվածքային բնութագրերը,

3. առանձնացնել ՀԴՄ-ների կառուցվածքային տարբերակներն ու այդօրինակ կապակցությունների ընդհանուր իմաստային-քերականական տիպերը,

4. բացահայտել իմաստային այս կամ այն տիպին առնչվող ՀԴՄ-ների կապակցական հնարավորությունները,

5. ցույց տալ նրանց ձևաիմաստային փոխհարաբերության դրսևորումները (բազմիմաստություն, հոմանշություն և հականշություն),

6. վեր հանել հայերենի զարգացման տարբեր շրջանների ՀԴՄ-ների իմաստակառուցվածքային և քերականական ինչպես ընդհան-

րությունները, այնպես էլ յուրահատկությունները,

7. քննել ՀԴՄ-ների այլալեզու համարժեքները՝ միջլեզվային ընդհանրություններն ու տարբերությունները բացահայտելու համար:

Համեմատություն-դարձվածային միավորների՝ որպես լեզվի դարձվածային կազմում առկա առանձնահատուկ միավորների կառուցվածքային-քերականական քննությունը, իմաստաբանական մեկնաբանությունը դարձվածաբանության կարևոր խնդիրներից են: Արդի հայերենի ՀԴՄ-ների համապարփակ ուսումնասիրությունը, քննության առարկայից բխող եզրակացությունները կարող են նպաստել դարձվածաբանության տեսության ամբողջացմանը:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ-ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԸՄԲՌԵՆՈՒՄԸ ԼԵՔՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Դարձվածաբանությունը լեզվաբանության համեմատաբար երիտասարդ գիտաճյուղերից է (լեզվաբանները 20-րդ դարի 50-60-ական թթ. են սկսել զբաղվել դարձվածքների քննությամբ): Համապատասխանաբար թե՛ հայ, թե՛ արտասահմանյան մասնագիտական գրականության մեջ համեմատություն-դարձվածային միավորների կամ համեմատություն-դարձվածային արտահայտությունների ուսումնասիրությունն սկսվում է ավելի ուշ շրջանից:

Հայագիտության մեջ (հատկապես խորհրդային շրջանի լեզվաբանական աշխատություններում) եղան անդրադարձներ ՀԴՄ-ներին առնչվող խնդիրներին:

Մ. Աբեղյանը բառերի կապակցությունների նորիմաստավորումը համարում է դարձվածքների առաջացման հիմք:

Մեր ուսումնասիրած նյութի տեսանկյունից ուշագրավ է, որ Մ. Աբեղյանը *պես, նման, չափ* «անիսկական կապերին» անդրադառնալիս խոսում է նրանց արտահայտած իմաստների և կապի խնդրի հետ մեկտեղ նրանց կատարած շարահյուսական գործառույթների մասին: Նա հաճախ որպես օրինակներ բերում է հենց ՀԴՄ-ներն առանց անվանելու (հմմտ. *կտրուկ ինչպես թուրը, կտրած գդալի պես մեջ ընկնել, ուռի պես դողալ* և այլն)⁵:

Ա. Մուրվալյանը դարձվածաբանությանն ու բայակազմությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ քննում է հայոց լեզվի դարձվածքների հին և նոր շերտերը: Նա դարձվածքը լայն իմաստով ըմբռնող լեզվաբաններից է: Ըստ նրա՝ «դարձվածքային առանձնահատուկ արտահայտությունների և սովորական արտահայտությունների միջև հաճախ դժվար է լինում որոշակի սահման դնել, ուստի դրանք ընդհանրապես կոչվում են դարձվածքներ», ինչպես՝ *հինգ մարդի պես գիպեճալ, կարկրի պես վրա տալ*:

Առանց ուղղակիորեն անվանելու՝ նա բերում է այնպիսի ՀԴՄ-

⁵ Մ. Խ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. 2, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1974, էջ 398-399:

ներ, «որոնք այս կամ այն չափով պահպանել են նաև իրենց սկզբնական (ուղղակի) առումը», ինչպես՝ *մազի պես (չափ), ջրի պես*⁶:

Ա. Մուրվալյանը դարձվածքները և իդիոմները չի գատում իրարից:

Ե. Գևորգյանը, հայերենի դարձվածքների քննության առնչությամբ հիմք ընդունելով, որ «ամեն կայուն բառակապակցություն դարձվածք չէ, բայց ամեն դարձվածք կայուն բառակապակցություն է», խոսում է նաև ՀԴՄ-ների մասին: Նախ նա նկատում է, որ բազմաթիվ փոխաբերությունների առաջացման համար հիմք են ծառայել պատրաստի գործածություն ունեցող կայուն համեմատությունները (հմմտ. *կոտրած գդալի պես մեջ ընկնել* համեմատությունից ունենք *կոտրած (անպոչ) գդալ* դարձվածքը): Ի հավելումն դրա, հեղինակը կանգ է առնում համեմատության՝ որպես դարձվածքներ կազմելու ոճական հնարներից մեկի վրա: Ըստ նրա, եթե «համեմատությունների եզրերի միջև եղած կապն անմիջապես աչքի է զարնում», ապա այդպիսի համեմատությունները պարզապես «մշտական գործածություն ունեցող կայուն համեմատություններ են» (հմմտ. *ոսկու պես փայլել, հինգ մարտի պես իմանալ*): Իսկ եթե «կայուն համեմատությունների եզրերի փոխադարձ կապը թաքնված է, իսկ բառակապակցության վերջնական իմաստը՝ սքողված», ապա գործ ունենք դարձվածքների հետ (հմմտ. *կապովի պես մեջքի վրա չընկնել, Ղազարոսի պես երգել, ջրի պես իմանալ*)⁷:

Վ. Քոչյանը, մշակելով ժամանակակից հայերենի բառակապակցությունների տեսությունը, երբեմն առանց անվանելու որպես օրինակներ բերում է այնպիսի ՀԴՄ-ներ, ինչպիսին են՝ *մահվան չափ տխուր, ձյունի պես սառն, մեռելի պես գունաթափ, գաջի պես գունաւոր, ձյունի պես ճերմակ, կոճղի պես հաստապտուկ* և այլն:

Այդպիսի ՀԴՄ-ները նա դասում է ածականական բառակապակցությունների շարքը:

Բայական բառակապակցությունների առնչությամբ նա նկատում է, որ «ձևի իմաստով կապի խնդիրն ու կապը մի շարք դեպ-

⁶ Ա. Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Ե., ՀՍՍՌ ԳԱ, 1959, էջ 16, 22, 27, 47:

⁷ Ե. Հ. Գևորգյան, Հայերենի դարձվածքները, Ե., ԵՊՀ, 1969, էջ 17, 49, 64:

քերում դարձվածքային բառակապակցություններ են կազմում բայերի հետ» (հմմտ. *կնոջ նման արտասուք թափել, հոր նման սիրել* և այլն):

Վ. Քոսյանը «ձև ցույց տվող խնդրային անդամը» անվանում է «խնդրային ձևի լրացում», որի դերը կատարում են *պես, նման* կապերն ու նրանց խնդիրները (հմմտ. *երազի նման հիշել, աչքի լույսի պես պահել // պահպանել, հալած յուրի պես ընդունել* և այլն)⁸:

Ինչպես տեսնում ենք, Վ. Քոսյանն անուղղակիորեն անդրադառնում է ՀԴՄ-ներին՝ որպես ամենից առաջ բառակապակցությունների քերականական առանձնահատկություններ ունեցողների:

Արժեքավոր է Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի ներդրումը հայոց լեզվի դարձվածաբանության տեսության և դարձվածաբանական բառարան ստեղծելու հարցում: Ելնելով դարձվածքների իմաստից ու ձևից, ինչպես նաև նրանց բաղադրիչների իմաստային կապերից՝ նրանք դարձվածքները բաժանում են չորս խմբի՝ դարձվածաբանական միակցություն, դարձվածաբանական միասնություն, դարձվածաբանական կապակցություն և դարձվածաբանական արտահայտություն⁹:

Ա. Սուքիասյանը և Ս. Գալստյանը դարձվածային միավորների շարքում ներկայացրել են հարյուրից ավելի ՀԴՄ-ներ՝ նրանց դարձվածային տարբերակներով հանդերձ: Նրանք հատուկ ուշադրություն են դարձրել թե՛ բարբառային (*ջաղացի պես տորոր փալով անցնել* – արագ-արագ կարդալ վերջացնել) ու խոսակցական (*որձակի պես ծուղորուղու կանչել* – իր անելիքը հոչակել) և թե՛ գրքային (*փախչել ինչպես սափանան կրակից* – սաստիկ վախենալ մի բանից) ՀԴՄ-ներին: Խնդրո առարկա դարձվածքների շրջանակներում նրանք ներկայացրել են ինչպես գոեիկաբանությունները (*մի դռան շան նման* – հաշտ ու խաղաղ), այնպես էլ արհամարհանք (*շան պես պոչ պտտեցնել* – քծնել) կամ ծաղրանք (*տերտերի չափ գիտենալ* – շատ «ուսյալ» լինել) արտահայտող կապակցությունները և այլն:

Հեղինակները թեև չեն տարբերակում ՀԴՄ-ները՝ որպես դարձ-

⁸ Վ. Ա. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1975, էջ 182-183, 431-432:

⁹ Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ, 1975, էջ 6-9, 14:

վաճքների առանձին շերտ կազմող կապակցություններ, այնուամենայնիվ բառարանում կան զգալի թվով ՀԴՄ-ներ, որոնք անհրաժեշտաբար ընդգրկել ենք մեր քննության շրջանակներում:

Պ. Բեդիրյանը նոր խոսք է ասում ՀԴՄ-ների ուսումնասիրության բնագավառում: Նա արդի հայերենի ՀԴՄ-ներն առանձնացնում է սովորական համեմատություններից՝ ըստ նրանց բնորոշ կայունության, պատրաստի վերարտադրելիության և վերաիմաստավորման հատկանիշների:

Խոսելով ՀԴՄ-ների «ներքին կառուցվածքի» մասին՝ Պ. Բեդիրյանն առանձնացնում է հետևյալ կաղապարները. ա) ածական + գոյական + կապ (*սնդիկի նման շարժուն, բողկի պես առողջ*), բ) բայ + գոյական + կապ (*ասուպի պես փայլել, մոլախոտի նման աճել*), գ) բարդ ստորադասական նախադասության ձևավորումով (*գարբերվել ինչպես երկինքը երկրից, խողովակի պես ընդունել, ինչ որ լցնում են*), դ) նախադասության (մեծ մասամբ ստորադասական) ձևավորումով (*կարծես նոր ծնվեց, ասես Մանթաշոփի թողը լինի*):

Ուշագրավ են նաև հեղինակի դիտարկումները ՀԴՄ-ների եզակի կառույցների վերաբերյալ (հմմտ. *լուցկու փուփ հիշեցնել, շղթայական ռեակցիայի ձևով, ասես նոտաներով*)¹⁰:

Պ. Բեդիրյանը ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցություններին նվիրված իր աշխատանքում առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում դարձվածային արտահայտություններին: Նա նկատում է, որ դրանք կայուն համեմատություններ են և «պարզ ցույց են տալիս, թե ինչպես են սովորական բանաձևումները ժամանակի ընթացքում դառնում դարձվածային միավորներ, պատրաստի վերարտադրելի կապակցություններ»¹¹:

Դարձվածքի ծագմանն անդրադարձել է Ս. Աբրահամյանը: Նա հանգամանորեն խոսել է նաև ԴՄ-ների միջազգային շերտի մասին, որոնց մեջ հանդիպում են ՀԴՄ-ներ, ինչպես՝ *կարմիր թելի պես*

¹⁰ Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., «Լույս», 1973, էջ 103-104, 105-106:

¹¹ Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., ՀՊՄԻ, 1990, էջ 49-51:

*անցնել*¹²:

Ինչպես տեսնում ենք, խնդրո առարկա հարցը հայերենում դարձվածքների համատեքստում քննարկվելիս փոխադրվել է նաև ստուգաբանական վերլուծության հարթություն:

Խ. Բաղիկյանը կատարում է արդի հայերենի ԴՄ-ների իմաստաբանական ու քերականական դասակարգում. տալիս է ԴՄ-ների կառուցվածքային կաղապարներն ըստ բաղադրիչների քանակի և իմաստային փոխհարաբերության, քննում անվանական, բայական և հաղորդակցական ԴՄ-ները, դրանց բաղադրիչների քերականական կարգերը, ամբողջական կառույցների ձևաբանական առանձնահատկություններն ու շարահյուսական գործառույթները: Համաժամանակյա քննության մեթոդով առաջնորդվելով՝ հեղինակը բառերին հարաբերակից կամ ոչ հաղորդակցական ԴՄ-ների շարքում տարբերում է գոյականական, ածականական, բայական, մակբայական և եղանակավորող ԴՄ-ներ:

Ուշագրավ է, որ Խ. Բաղիկյանը բայական անդամին որպես համեմատության խնդիր լրացնող գոյականական ԴՄ-ների շարքն է դասում այնպիսի ՀԴՄ-ներ, ինչպիսին են *անպոչ (կոտրած) գդալի նման, Թերահավար Թովմասի պես, կարասն ընկած մկան պես, գառնազգեստ գայլի նման, գետի երեսն ընկած փաշեղի նման, ինչպես երկինք ու երկիր* դարձվածքները:

Ածականական ՀԴՄ-ներին անդրադառնալով՝ հեղինակը նկատում է, որ *եղունգի չափ, ծրի աչքի չափ, ծովի ավազի չափ* և այլ ԴՄ-ներում *չափ* կապական բառը, գոյականի հետ հանդես գալով, համեմատության հարաբերություն է արտահայտում՝ շատության կամ քչության իմաստ հաղորդելով նրանց:

Բայական ԴՄ-ները ձևաբանության դիտանկյունից քննելով՝ հեղինակը վերլուծության է ենթարկում բայի հատկապես ըղձական և հարկադրական եղանակներով կաղապարված ՀԴՄ-ները (*Կյանքդ ջրի պես երկար լինի: Մարդ իր վերմակի չափ պետք է ոտքը պարզի*):

Մակբայական ԴՄ-ներն ու դրանց կառուցվածքային տիպերը ևս մանրազնին քննության են ենթարկվում Խ. Բաղիկյանի մենագրության մեջ: Մակբայական այնպիսի կառույցները, որոնք *պես* կա-

¹² Ս. Գ. Աբրահամյան, Հայոց լեզու, բառ և խոսք, Ե., «Լույս», 1978, էջ 144:

պով և նման կապական բառով են կազմված, նա կոչում է *համեմա-
տական* (ռուս.՝ *компаративный*) *ԴՄ-ներ*¹³:

Խ. Բաղիկյանը մեկ այլ աշխատության մեջ մանրակրկիտ քննության է ենթարկում համեմատությունը՝ որպես դարձվածքի արտահայտչական միջոցներից մեկը: Նա համեմատությունը դարձ-վածք դիտելու կարևորագույն հատկանիշ համարում է ողջ կապակ-ցության վերախմաստավորումը: Ըստ նրա՝ համեմատություն-դարձ-վածքները մեծ մասամբ լինում են միազագաթ՝ կազմվելով մեկ գո-յականից ու *նման, պես* կապերից: Արդի հայերենում միազագաթ ՀԴՄ-ներից գատ Խ. Բաղիկյանը տարբերում է ՀԴՄ-ներ, որոնք հանդես են գալիս պարզ նախադասություններում (հմմտ. *մի դռան շան նման յոլա գնալ, կապովի նման կոնակին չգալ*), և ՀԴՄ-ներ, որոնք հանդիպում են բարդ նախադասություններում (հմմտ. *տա-րուբեր լինել ինչպես քամիների բերանն ընկած չոր տերև, զգալ ինչ-պես ծուկը ջրում* և այլն):

Խ. Բաղիկյանը ՀԴՄ-ներին անդրադառնում է նաև լեզվի պատ-կերավորման այլևայլ միջոցների (չափազանցություն, նվազասույթ, բառախաղ, օքսիմորոն) տեսանկյունից:

Արժեքավոր է հեղինակի ներդրումը դարձվածային նորաբա-նությունների քննության առումով: Այդպիսի նորաբանություննե-րից են Խ. Բաղիկյանի նկատած *ավազի վրա շարված պապի նման քանդել, ուրքերը լեզհորմի չափ մեկնել* և այլ ՀԴՄ-ները¹⁴:

Ալ. Մարգարյանը ժամանակակից հայոց լեզվի բառակազմութ-յան, բառարանագրության և դարձվածաբանության հարցերը լու-սաբանելիս հպանցիկ խոսում է նաև *ծովի պես, հակառակի պես, հոգով չափ, շան նման, ջրի պես, սարի նման* և այլ ՀԴՄ-ների մա-սին: Վերջիններս նա դասում է անվանական դարձվածքների այն շարքը, որոնց վերջին բաղադրիչը կապով, իսկ առաջինը նրա խնդրի՝ գոյականի որևէ հոլովով է արտահայտվում:

Բայական դարձվածքների կառուցվածքային տիպերը քննարկե-լիս հեղինակն անուղակիորեն անդրադառնում է այնպիսի ՀԴՄ-

¹³ Խ. Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1986, էջ 91, 127, 140, 243-244, 261:

¹⁴ Խ. Գ. Բաղիկյան, Դարձվածային ոճաբանություն, Ե., Եր. համալս., 2000, էջ 25-26, 45, 47, 50, 172:

ներին, ինչպիսին են՝ *աչքի լուսի պես պահել, հալած յուղի տեղ ընդունել* և այլն¹⁵:

Հայերենի գունանուններին, նրանց լեզվաոճական արժեքին նվիրված իր աշխատության մեջ Ս. Գրիգորյանն անդրադառնում է գունանուններին՝ որպես դարձվածակազմիչ միավորների: Նա նկատում է, որ դարձվածքներ կազմվում են հիմնական գույների անուններով: Այս առնչությամբ հեղինակը ներկայացնում է նաև այնպիսի դարձվածքներ, որոնք կազմված են տվյալ գույնով օժտված որևէ գոյականի ու կապի միջոցով (հմմտ. *մոխրի նման գորշագույն, արծիճի նման գորշ, սաթի պես սև, ձյունի պես ճերմակ // սպիտակ, կակաչի պես շիկնել* և այլն)¹⁶:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ բոլոր դարձվածային օրինակները ՀԴՄ-ներ են, որոնք հատկանշվում են որպես գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածքներ:

Լ. Խաչատրյանը ժամանակակից հայերենի կայուն կապակցությունների (ԿԿ) բաղադրիչների բառաբերականական առանձնահատկությունների քննության առնչությամբ անդրադառնում է նաև գունանունների դարձվածակազմիչ դերին: Ընդ որում, խոսքը վերաբերում է այն գունանուններին, որոնք հանդես են բերում խոսքիմասային տարարժեքություն: Լ. Խաչատրյանը, ձևաբանական արժեքների տարբերակման կապակցությամբ, ուշադրություն է դարձնում նաև ՀԴՄ-ների խոսքիմասային տեղաշարժերին: Վեր հանելով գունանունների դարձվածակազմիչ արժեքը՝ նա իրավացիորեն նկատում է, որ «ոչ փոխաբերական ԿԿ-ներում գունանուն բաղադրիչները պահպանում են իրենց գունային-նշանային իմաստները, իսկ դարձվածային կապակցություններում դրանք, փոխաբերական նշանակություններ ստանալով, դադարում են գունային-նշանային իմաստներ արտահայտելուց»¹⁷:

Մեզ հետաքրքրող խնդրի առումով կարևոր է հեղինակի ներդրումը հատկապես գունանուն բաղադրիչով ՀԴՄ-ների ուսումնա-

¹⁵ Ալ. Ս. Մարգարյան, ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ, 1990, էջ 317, 321:

¹⁶ Ս. Ա. Գրիգորյան, Հայերենի գունանունները և նրանց լեզվաոճական արժեքը, Ե., «Նաիրի», 1998, էջ 63-64, 116:

¹⁷ Լ. Մ. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 1996, էջ 94-106, 214:

սիրության բնագավառում: Նա առանձին-առանձին քննում է խնդրո առարկա հարցը թե՛ գրաբարում (ըստ «Աստվածաշնչի») և թե՛ արդի հայերենում:

Լ. Խաչատրյանը հանգամանորեն խոսում է արդի հայերենի այն ՀԴՄ-ների մասին, որոնք գործածվում են իրենց նախնական, տվյալ դեպքում՝ գունային նշանակությամբ: Նա նկատում է, որ հայերենին բնորոշ են հիմնականում գունանուններով այդպիսի կապակցությունները (հմմտ. *սև ինչպես ածուխը, սպիտակ ինչպես պատի ծեփը, կարմիր ինչպես արյունը* և այլն):

Ընդհանրապես ՀԴՄ-ները նա իրավամբ դիտում է որպես երկանդամ կայուն կապակցություններ:

Հեղինակն արդի հայերենի մակարդակում համաժամանակյա կտրվածքով լուսաբանում է գունային հասկացություն արտահայտող ՀԴՄ-ների իմաստային կառուցվածքը, նրանց կաղապարները, կառուցվածքային տարբերակները, ՀԴՄ-ների փոխակերպումը (փոխկաղապարումը):

Նա նկատում է ՀԴՄ-ների՝ հայերենի զարգացման բոլոր շրջաններում հանդես գալու հանգամանքը՝ ընդգծելով, որ «այդ առումով բառակապակցական իմաստաբանության մարզում կարևորվում է այդօրինակ կառույցների ուսումնասիրությունը ոչ միայն համաժամանակյա, այլև տարժամանակյա հայեցակետով, որպեսզի վեր հանվեն դրանց իմաստային-կառուցվածքային ինչպես ընդհանրությունները, այնպես էլ յուրահատկությունները»¹⁸:

«Աստվածաշնչի» համատեքստում քննելով գույն նշանակող ՀԴՄ-ները՝ Լ. Խաչատրյանը մանրակրկիտ կերպով բնութագրում է գրաբարի ՀԴՄ-ները՝ ըստ գունանուն բաղադրիչների և ըստ իմաստագործառական արժեքների:

Նա, մշակելով ու զարգացնելով հայերենում գունանուն բաղադրիչներով ՀԴՄ-ների տեսության հարցերը, շեշտում է, որ «մատենագիտական երկերի ընդհանուր տվյալների հիման վրա քննություն կատարելով՝ կարելի է բացահայտել գունանուն բաղադրիչով ՀԴՄ-ների իմաստաբանությունը, գործառական արժեքը, դրանց

¹⁸ Լ. Մ. Խաչատրյան, Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորներն արդի հայերենում, «Բանբեր ԵՊՀ-ի», հ. 1, Ե., Եր. համալս., 1999, էջ 16-20:

ծագումնաբանությունն ու կաղապարները»¹⁹:

Գունանիշ բաղադրիչով ՀԴՄ-ները հայերենում, ռուսերենում և անգլերենում հանգամանալից կերպով լուսաբանվում են Հ. Ղազարյանի կողմից: Հեղինակը զուգահեռաբար քննարկում է հայերենի, ռուսերենի և անգլերենի գունանուն բաղադրիչով ԴՄ-ների իմաստային, կառուցվածքային, ձևաբանական, շարահյուսական և ոճական առանձնահատկությունները՝ նրանցում առկա ընդհանրություններով և տարբերություններով հանդերձ:

Նա գունանունով ՀԴՄ-ների կարևորագույն առանձնահատկությունը համարում է նրանց վերաիմաստավորվածությունը: Ըստ նրա՝ այդպիսի ՀԴՄ-ները «դարձվածային սերտաճումներ են, և նրանցում փոփոխության կամ օտարման ենթակա չեն գունանունները, այլապես դարձվածքներն ընդհանրապես կկորցնեն դարձվածային իմաստը և լավագույն դեպքում կարող են վերածվել սովորական շարահյուսական կապակցությունների» (հմմտ. *սև ուրբաթի պես* – տխուր, անտրամադիր):

Հեղինակը մանրամասնորեն խոսում է գունանունով ՀԴՄ-ների ձևաբանական արժեքների մասին՝ դրանք դասակարգելով երեք խմբի՝ ածականական, մակբայական և բայական:

Ածականական ՀԴՄ-ները, ըստ Հ. Ղազարյանի, մեծ մասամբ մենիմաստ են, թեև նրանցում կան և բազմիմաստ կառույցներ (հմմտ. *as black as ink, մրի պես սև* – 1. շատ մութ, 2. կեղտոտ, 3. մոայլ):

Նա ըստ ամենայնի կանգ է առնում գունանիշ բաղադրիչով մակբայական ՀԴՄ-ների քննության վրա (*like a bolt from the blue* – *ինչպես որոտ կապույտ երկնքից*): Գունանունով բայական համեմատություն-դարձվածքների կաղապարներին անդրադառնալիս հեղինակը նկատում է, որ «ածական + գոյական + անորոշ դերբայ» կառուցվածքային տիպն առկա է թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում և թե՛ անգլերենում՝ անորոշ դերբայի դիրքի տարբերությամբ (հմմտ. *մրի պես սև լինել* – *быть черным как сажа, be like a red rag to a bull* – բարկացնել):

Հ. Ղազարյանը, դարձվածքների ձևավորման հարցում արժևո-

¹⁹ Լ. Մ. Խաչատրյան, Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորները գրաբարում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հ. 1, Վանաձոր, «Իրավաբանական կենտրոն-PRESS», 2003, էջ 24:

րելով ոճական հնարները, հանգամանորեն խոսում է փոխաբերության և համեմատության կարևորության մասին²⁰:

Այսպիսով, հանրագումարի բերելով արդի հայագիտական աշխատություններում ՀԴՄ-ների վերաբերյալ տեսակետները՝ կարելի է եզրակացնել.

1. Շատ հետազոտողներ ՀԴՄ-ների ձևավորման հարցում կարևորել են պատկերավոր համեմատության դերը՝ զուգընթացաբար արժևորելով փոխաբերության, չափազանցության, բառախաղի, օքսիմորոնի և այլնի նշանակությունը (Ե. Գևորգյան, Պ. Բեդիրյան, Խ. Բադիկյան, Լ. Խաչատրյան, Հ. Ղազարյան):

2. Համեմատությունը դարձվածք դիտելու ամենակարևոր հատկանիշն են համարել ողջ կապակցության վերաիմաստավորումը՝ մատնանշելով նաև նրա կայունության և պատրաստի վերարտադրելիության անհրաժեշտությունը (Պ. Բեդիրյան, Խ. Բադիկյան, Հ. Ղազարյան):

3. Ընդհանրապես համեմատություններում տարբերել են մեծ մասամբ համեմատություններ և համեմատություն-դարձվածքներ (Ե. Գևորգյան, Պ. Բեդիրյան):

4. Բնութագրել են ՀԴՄ-ների կաղապարները, կատարել այդօրինակ դարձվածքների ձևաբանական դասակարգում՝ առանձնացնելով հիմնականում անվանական և բայական ՀԴՄ-ներ (Պ. Բեդիրյան, Խ. Բադիկյան, Ալ. Մարգարյան, Հ. Ղազարյան):

5. Հատուկ ուշադրություն են դարձրել միագագաթ ՀԴՄ-ներին, որոնք հիմնականում, ըստ ձևաբանական արժեքի, դիտել են իբրև մակբայներ (Խ. Բադիկյան, Հ. Ղազարյան):

6. ՀԴՄ-ների իմաստային կառուցվածքի վերլուծություն կատարելիս ըստ ամենայնի քննել են գունանունների դարձվածակազմիչ նշանակությունը, գունանիշ բաղադրիչով ՀԴՄ-ների իմաստաբանությունն ու կառուցվածքային դիտվածքը (Ս. Գրիգորյան, Լ. Խաչատրյան, Հ. Ղազարյան):

7. ՀԴՄ-ները լուսաբանել են նաև ստուգաբանական առումով (Պ. Բեդիրյան, Ս. Աբրահամյան):

²⁰ Հ. Ղազարյան, Գունանիշ բաղադրիչով դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, Ե., «Ճարտարագետ», 2004, էջ 67, 79, 83, 102-107, 131, 137:

Ռուս և արտասահմանյան լեզվաբանները ՀԴՄ-ներն ուսումնասիրել են տարբեր տեսանկյուններից:

Խնդրո առարկա դարձվածքները յուրովի են մեկնաբանվում Վ. Մ. Օգոլցևի աշխատություններում: Հեղինակը կայուն համեմատությունների դարձվածայնացմանը նվիրված աշխատության մեջ նշում է, որ դրանք դարձվածքներին պատկանելու տեսանկյունից պետք է խիստ տարբերակվեն ամենից առաջ իրենց իդիոմատիկ հատկանիշի աստիճանով: Ըստ այդմ, նա դարձվածքների շարքն է դասում այն կայուն համեմատությունները, որոնք տարբեր գործոնների ազդեցությամբ ցույց չեն տալիս իրական համեմատական հարաբերություններ և այդ պատճառով հատկանշվում են նրանով, որ առարկաների համեմատությունից նրանց բնորոշ հատկանիշը չի եզրակացվում (*как банный лист, как пробка (злуп), как зеницу ока* և այլն), և նրանք, որոնք լիովին պահպանում են համեմատության հարաբերությունները, բայց բնորոշվում են բաղադրիչների արխաիկ տարրերով (*как птица небесная, как перст* և այլն)²¹:

Հեղինակն անդրադառնում է թե՛ համեմատական հարաբերությունների արտահայտման միջոցներին, թե՛ կայուն համեմատությունների բաղադրիչներին՝ ընդգծելով, որ համեմատություն-դարձվածային կապակցությունները լեզվի դարձվածային կազմի մեջ որպես հատուկ խումբ առանձնացնող հիմնական հատկանիշներն այն համեմատության հարաբերություններն են, որոնք արտահայտվում են նրանց բնորոշ յուրահատուկ ներկառուցվածքային միջոցներով²²:

Վ. Օգոլցևը, քննելով ՀԴՄ-ների կառուցվածքային տիպերը, ռուսերենում այդօրինակ ԴՄ-ների շարքն է դասում ոչ միայն համեմատության հարաբերություն արտահայտող «ինչպես» անդամով դարձվածքները, այլև գոյականի գործիական հոլովով արտահայտված համեմատությունները (*стать горой, заливаться соловьем*), հայցականով նախդրավոր կապակցությունները (*разбиться в лепешку, с гилькин нос*), ածականի (մակբայի) համեմատական աստիճանով (*хуже горькой редьки, тише воды, ниже травы*) և ածա-

²¹ В. М. Огольцев, О фразеологизации устойчивых сравнений, Сб. «Вопросы семантики фразеологических единиц», ч. I, Новгород, ЛГПИ, 1971, էջ 67, 79:

²² В. М. Огольцев, Способы выражения компаративных отношений и компонентный состав устойчивого сравнения, նշվ. ժող., էջ 204:

կանակերտ ածանցներով (*черепашьим шагом, зробоная тишина*) համեմատությունները:

ՀԴՄ-ների առնչությամբ նա նշում է նաև, որ շատ դարձվածքներ հանդես են գալիս երկու՝ համեմատական և փոխաբերական ձևերով: Նա շեշտում է, որ փոխաբերությունը տարբերվում է բուն համեմատությունից նրանով, որ նրանում երբեք ձևային առումով չի արտահայտվում առարկաների համադրման հանգամանքը²³:

Վ. Օգոլցևը դիտարկում է նաև ռուսերենի ՀԴՄ-ները՝ ֆրանսերենի ՀԴՄ-ների զուգադրությամբ: Նա կանգ է առնում հատկապես *պես* կապով ձևավորված դարձվածքների քննության վրա՝ նշելով, որ այդպիսիները համեմատության հարաբերություններն ավելի ցայտուն են արտահայտում և միևնույն ժամանակ առավել տարածված են²⁴:

Լ. Ա. Լեբեդևան, ռուսերենի օրինակով անդրադառնալով մշտական համեմատություններին, դրանց շարքն է դասում այն կապակցությունները, որոնք ունեն բառային կայուն կազմ և ոչ ազատ կապակցելիություն բառային միջավայրի հետ:

Նա նկատում է, որ մշտական համեմատության բովանդակության և նրա գերադաս բառի միջև սովորաբար նկատվում է իմաստային համընկնում, որը պայմանավորված է նրանով, որ իր քերականական կառուցվածքում համեմատական կապակցությունը հանդես է գալիս որպես համեմատություն-ստորադասական նախադասության կրճատման արդյունք, որի գերադաս բառը համընկնում է նախնական ստորոգյալին (հմմտ. *бежит как на пожар - бежит, как бегут на пожар*)²⁵:

Լ. Դ. Իգնատևան առանձին ուսումնասիրություն է նվիրել *как* անդամով որակական-հանգամանքային իմաստ ունեցող ՀԴՄ-ների (*как безумный, как птица, как потерянный* և այլն) հոմանշային հարաբերությունների քննությանը²⁶:

²³ В. М. Огольцев, Структурные типы компаративных фразеологизмов, նշվ. ժող., էջ 320-322:

²⁴ В. М. Огольцев, Компаративные фразеологизмы русского языка в сопоставлении с французскими, Сб. «ВСФЕ», ч. II, Новгород, ЛГПИ, 1972, էջ 112:

²⁵ Л. А. Лебедева, Постоянные сравнения русского языка, Краснодар, КГУ, 1975, էջ 3:

²⁶ Л. Д. Игнатъева, Синонимические отношения фразеологизмов с компонентом «как» качественно-обстоятельственной семантики, Сб. «Вопросы фразеологии современного русского языка», Челябинск, ЧГПИ, 1975, էջ 60, 74-76:

Նա մանրագնին ուսումնասիրում է հոմանշություն և բազմիմաստություն փոխմիասնությունը, հոմանշային շարքի մեջ մտնող ՀԴՄ-ների բազմազանությունը՝ ձևաբանական և շարահյուսական առումներով:

Հեղինակը *как* բաղադրիչով ՀԴՄ-ները, ըստ ոճական գործառույթի, դասում է խոսակցական ոճին:

Լ. Իգնատևան թեկնածուական ատենախոսությամբ քննում է ժամանակակից ռուսերենի *как* դարձվածակազմիչ անդամով ԴՄ-ների կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները:

Հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է ՀԴՄ-ների ծավալային ընդգրկմանը, կառուցվածքային տարբերակների տիպերին, ընդգծում ՀԴՄ-ների անդամներից հատկապես *как* բաղադրիչի դերը նրանց ձևավորման մեջ: Արժեքավոր են Լ. Իգնատևայի դիտարկումները ՀԴՄ-ների իմաստաբանության ուսումնասիրության բնագավառում. նա քննում է այդ տիպի դարձվածքների իմաստի և ձևի միջև փոխհարաբերությունները, նրանց համընդհանուր իմաստաբանական առնչակցությունները (հոմանշություն, հականշություն և համանունություն):

Հեղինակը ՀԴՄ-ները համարում է զարգացող լեզվական միավորներ, որոնք «կարծրանալով ձևային առումով, դառնալով ձևաբանորեն և շարահյուսորեն անփոփոխելի՝ շարունակում են զարգանալ կառուցվածքային տարբերակների տիպերում և իմաստային տեղաշարժերի մեջ»²⁷:

Ի. Ա. Ֆեդոսովը խոսակցական ԴՄ-ների կառուցվածքային-շարահյուսական առանձնահատկությունները քննելիս կանգ է առնում նաև համեմատություն-դարձվածքների վրա: Նա խոսակցական ԴՄ-ների շարքն է դասում զգալի թվով ՀԴՄ-ներ՝ և գործիականով համեմատություններից, և բուն համեմատություն-դարձվածքներից, և համեմատություն-ստորադասական նախադասություններից:

Նա նկատում է, որ ՀԴՄ-ների մեծ մասն ունի բացասական հուզարտահայտչական գունավորում (հմմտ. *как банный лист, как*

²⁷ Л. Д. Игнатьева, Структурные и семантические свойства фразеологических единиц с фразообразующим компонентом «как» в современном русском языке, (АКД), Ленинград, ЛГПИ, 1976, էջ 6, 10, 15:

аршин проглотил, глуп как пробка և այլն)²⁸:

Վ. Պ. Ժուկովը ռուսերենի ԴՄ-ների իմաստաբանությունը քննելիս այդ լեզվի բոլոր դարձվածքները, ըստ իրենց համընդհանուր իմաստի դրսևորման, բաժանում է տարբեր տիպերի: Առաջին տիպին, ըստ նրա, պատկանում են այն դարձվածքները, որոնց ընդհանուր իմաստը կոահվում է քերականորեն գերադաս անդամից: Երկրորդ տիպին դասվում են այն դարձվածքները, որոնց իմաստը չի նախանշվում գլխավոր անդամով:

Այնուհետև Վ. Ժուկովը նկատում է, որ առանձնահատուկ միջակա տիպ են կազմում երկու նշված տեսակների հատկանիշները զուգակցող համեմատություն - դարձվածքները²⁹:

Ն. Մ. Շանսկին բոլոր դարձվածքները, ըստ կառուցվածքի, բաժանում է երկու հիմնական տիպերի՝ նախադասության կառուցվածքով (*дела-как сажа бела*) և բառակապակցության կառուցվածքով (*как выжатый лимон*) դարձվածքների:

Նա ժամանակակից ռուսերենի *как* համեմատության կապով կազմվող դարձվածքների շարքում առանձնացնում է այնպիսիները, որոնք ածականով կամ փոխանվանաբար գործածված բառով (ածական դերբայով) են «ավարտվում», և դարձվածքներ, որոնցում չկան այդ անդամները:

Առաջին խումբը, ըստ հեղինակի, մեծ չէ (հմմտ. *как потерянный, как вкопанный* և այլն), երկրորդ խումբը բազմանդամ է և շարունակ լրացվում է (*как две капли воды, как по нотам, как часы, как смерть* և այլն)³⁰:

Լ. Պ. Սմիթը քննության է առնում հիմնականում այն կայուն բառակապակցությունները, որոնք նրա կողմից որոշակիացվում են որպես իդիոմներ: Ըստ որում, նա *իդիոմ* բառը կիրառում է նեղ իմաստով՝ մատնանշելով ամենից առաջ այն ԴՄ-ները, որոնք լեզվական անկանոնություններ են. խախտում են կամ քերականության, կամ

²⁸ И. А. Федосов, Структурно-синтаксические признаки разговорных ФЕ в современном русском языке, Сб. «Проблемы образования фразеологических единиц», Тула, ТГПИ, 1976, էջ 84, 85:

²⁹ В. П. Жуков, Семантика фразеологических оборотов, М., «Просвещение», 1978, էջ 34:

³⁰ Н. М. Шанский, Фразеология современного русского языка, М., «Высшая школа», 1985, էջ 72-73, 84:

տրամաբանության օրենքները (հմմտ. *like water off a duck's back - как с гуся вода, as bolt from the blue - как гром среди ясного неба*):

Հեղինակը դարձվածային կապակցությունների շարքն է դասում մի շարք համեմատություններ, որոնք հաճախ հանդիպում են ժողովրդախոսակցական ոճում, և որոնցից շատերն անցել են գրական լեզվին (հմմտ. *as good as gold, as old as the hills, like as two peas* և այլն)³¹:

Ն. Ն. Ամսոսվան անգլերենի դարձվածքների քննության առնչությամբ խոսում է նաև ՀԴՄ-ների մասին՝ դրանք առանձնացնելով հատուկ խմբի մեջ՝ ըստ նրանցում առկա համատեքստային կապերի յուրահատկության և ծագման բնույթի:

Զարգացնելով դարձվածքների նեղ իմաստով ըմբռնման տեսությունը՝ Ն. Ամսոսվան ՀԴՄ-ների երկու տիպ է առանձնացնում՝ դարձույթ (*as cold as a key, as old as the hills, as silent as a mouse*) և իդիոմ (*nice as ninepence, as bold as brass, as warm as a bat*):

Նա առաջին հերթին նշում է ՀԴՄ-ների մի ամբողջ շարք, որոնք հատկանշվում են իդիոմին բնորոշ առանձնահատկություններով (ընդհանրական իմաստով, ամբողջովին չպատճառաբանված լինելով):

Ինչ վերաբերում է կայուն համեմատություններին, նա դրանք որոշակիացնում է որպես դարձվածային բառակապակցությունների տարատեսակներ³²:

Ս. Ի. Բոյզենզոնն զբաղվել է գույն նշանակող ՀԴՄ-ների ուսումնասիրությամբ: Նա ևս, հիմք ընդունելով դարձվածքների երկու հիմնական տիպերը, առանձնացնում է համեմատություն-դարձվածքներ և համեմատություն-իդիոմներ՝ քննությունը կատարելով անգլերենի և ռուսերենի օրինակներով:

Ըստ նրա՝ առաջին տիպը հատկանշվում է ոչ ազատ, դարձվածայնորեն կապված իմաստով անդամի առկայությամբ (հմմտ. *as white as chalk - белый как мел, as black as coal - черный как сажа*): Նա նշում է, որ համեմատություն-իդիոմներն ինչպես ռուսերենում, այնպես էլ սլավոնական մյուս լեզուներում հազվադեպ են (հմմտ. *as black as night- непроглядная тьма, as black as sin (thunder) - очень*

³¹ Л. П. Смит, Фразеология английского языка, М., Учпедгиз, 1959, էջ 5, 10, 20, 66, 69:

³² Н. Н. Амосова, Основы английской фразеологии, Ленинград, ЛУ, 1963, էջ 64, 87-88, 145-146:

мрачный)³³:

Ս. Ռոյզենզոնը քննում է բայական ՀԴՄ-ների՝ այլ տիպի դարձվածքների հետ ունեցած կառուցվածքային-իմաստաբանական կապերը՝ խոսելով նաև համեմատության ստեղծման համար անհրաժեշտ այն ընդհանուր հատկանիշների մասին, որոնք բնորոշ են կամ ավանդաբար վերագրվում են առարկաների և կենդանի էակների մի ամբողջ դասի³⁴:

Ն. Մ. Սիդյակովան անգլերենի ածականական ՀԴՄ-ների կիրառության հաճախականության հետ կապված հարցերը քննելիս ընդգծում է նաև իր համոզմունքն այն մասին, որ կայուն համեմատությունները, լինելով շատ տարածված ոճական հնարներ, հավասարապես կիրառվելով թե՛ պոեզիայում, թե՛ արձակում, բնորոշ են խոսակցական ոճին³⁵:

Ա. Վ. Կունինը, հետազոտելով անգլերենի դարձվածքների ձևաիմաստային առանձնահատկություններն ու ծագումնաբանությունը, նրանց բաղադրիչների կապակցական հնարավորությունները, այդ տեսանկյունից անդրադառնում է նաև ՀԴՄ-ներին:

Նա այն միտքն է զարգացնում, որ ՀԴՄ-ներին բնորոշ է իմաստի երկպալանայնությունը. մեկը համեմատվում է մյուսի հետ: Այդպիսի իմաստային կառուցվածքն առանձնացվում է որպես յուրահատուկ իմաստ, ավելի ստույգ՝ համեմատական իմաստ, որը դարձվածքի իմաստային տիպերից մեկն է³⁶:

Լ. Ի. Կովալյովան և Ն. Մ. Պրոխորովան քննում են անգլերենի կայուն համեմատությունների իմաստային առանձնահատկությունները:

³³ С. И. Ройзензон, Сравнительные устойчивые обороты, обозначающие цвет, Сб. «Проблемы фразеологии и задачи ее изучения в высшей и средней школе», Вологда, Северо-западное книжное изд., 1967, էջ 258-260:

³⁴ С. И. Ройзензон, Структурно-семантические связи глагольных компаративных фразеологических единиц с фразеологизмами других типов, Сб. «ВСФЕ», ч. II, էջ 141:

³⁵ Н. М. Сидякова, О частности и употребительности компаративных фразеологических единиц в английском языке, Сб. «ПФ», էջ 270:

³⁶ А. В. Кунин, Английская фразеология, М., «Высшая школа», 1970, էջ 21:

Ա. Կունինը մի շարք առարկություններ է ներկայացնում Ն. Ամսոսովայի դիտարկումների վերաբերյալ: Նա դեմ է դարձվածքների մի սովոր քանակություն Ն. Ամսոսովայի կողմից որպես ՀԴՄ-ներ բացատրելուն՝ զուտ այն պատճառաբանությամբ, թե նրանց բնորոշ չեն դարձվածայնորեն կապված իմաստներ: Հեղինակն անհիմն է համարում Ն. Ամսոսովայի այն պնդումը, որ ՀԴՄ-ներն ունեն անդամների ընդգծված ձևաբանական կառուցվածք:

Նրանք ՀԴՄ-ները ներկայացնում են որպես իմաստային բարդ ամբողջություններ, որոնք կարելի է քննել ըստ կաղապարների: Անգլերենի համար նրանք ընդունում են երկու այդպիսի կաղապար՝ համեմատության (*as cool as cucumber*) և աստիճանի (*better the foot slip than the tongue trip*)³⁷:

Ու. Մաք Մորդին և Ջ. Սեյդլը, անգլերենի օրինակով քննելով իդիոմը որպես լեզվական երևույթ, այն բնութագրում են իբրև բաների մի ամբողջություն, որի նշանակությունը կախված է այդ բաների առանձին իմաստներից:

Նրանք առանձնակի ուշադրություն են դարձնում համեմատություն-իդիոմներին: Ըստ նրանց՝ այդ համեմատությունները (*as black as ink, as bright as day, as cold as a stone* և այլն) լեզուն դարձնում են արտահայտիչ և մատչելի³⁸:

Գ. Քլեյսերն առանձին ուսումնասիրություն է նվիրել անգլերենի համեմատություններին: Նա դրանք բնութագրում է իբրև «պատկերավոր, հետևաբար և պոետիկ արտահայտություններ, որոնք ճշտությամբ դրսևորում և ցայտունորեն նկարագրում են որևէ իրողություն» (հմմտ. *like a bird, like an ocean, like a grave, like a leaf, like a landed fish, like a wolf* և այլն)³⁹:

Ա. Հ. Նազարյանը ֆրանսերենի դարձվածքների քննության համատեքստում ըստ ամենայնի անդրադառնում է ՀԴՄ-ներին:

Նա, մանրակրկիտ քննելով ֆրանսերենի ՀԴՄ-ների կառուցվածքային առանձնահատկությունները, նշում է երեք կաղապար՝ կազմված ա) ածականից ու գոյականից (հմմտ. *muet comme une carpe - немой как рыба*),

բ) բայից ու գոյականից (հմմտ. *courir comme au feu - бежать как на пожар*),

գ) մակբայից ու գոյականից (հմմտ. *droit comme une flèche - прямо как стрела*):

³⁷ Л. И. Ковалева, Н. М. Прохорова, О семантической природе устойчивых компаративов английского языка, Сб. «ВСФЕ», ч. II, էջ 55-56:

³⁸ J. Seidl, W. MC Mordie, English idioms and how to use them , M., Vishaya Shkola, 1983, էջ 4, 233:

³⁹ Grenville Kleiser, Similes and their use, New York and London, Funk and Wagnalls, 1925, էջ 3:

Նա ընդգծում է այն հանգամանքը, որ ոչ բոլոր պատկերավոր համեմատություններն են մտնում լեզվի դարձվածային ֆոնդի մեջ. որակական տարբերություն կա ոչ միայն պատկերավոր և ոչ պատկերավոր համեմատությունների, այլև ընդհանրապես պատկերավոր համեմատությունների և ՀԴՄ-ների միջև:

Ըստ նրա՝ ՀԴՄ-ների գերակշիռ մեծամասնությունը առաջացել է նրանց համեմատության անդամների բառային իմաստների թուլացման հետևանքով:

Ա. Նազարյանը ՀԴՄ-ներում առանձնացնում է համեմատություն-դարձվածքներ և համեմատություն-իդիոմներ: Վերջիններիս համար նա կարևորում է ընդհանրական իմաստը, որը «դարձվածքի անդամների իմաստներից չի բխում, և որը կարելի է բացատրել միայն ստուգաբանական վերլուծության օգնությամբ»⁴⁰:

Արժեքավոր է հեղինակի ներդրումը ֆրանսերենի պատկերավոր համեմատությունների բառարան ստեղծելու գործում: Ա. Նազարյանը համեմատություն-դարձվածքները սահմանելիս շեշտը դնում է նրանց թե՛ կայունության, թե՛ վերաիմաստավորման հատկանիշի վրա⁴¹:

Է. Խ. Բոտն առանձին հոդված է նվիրել ռուսերենի, գերմաներենի ու ֆրանսերենի ՀԴՄ-ների ուսումնասիրությանը: Ըստ նրա, եթե բովանդակության դիտվածքում համեմատությունը մի առարկայի (հասկացության կամ երևույթի) համադրումն է մյուսի հետ, որի հետ այն ունի ընդհանուր հատկանիշներ, ապա արտահայտության դիտվածքում այն մի կառույց է՝ կազմված երեք անդամներից. առաջին անդամն այն առարկան է, որի հետ համեմատում են մյուս առարկան, երկրորդն այն առարկան է, որի հետ համեմատում են առաջին առարկան, երրորդն այն հատկանիշն է (որակը, գործողությունը), որը դրվում է համեմատության հիմքում:

Նա համեմատության շարույթային կառուցվածքի բնորոշ առանձնահատկությունն է համարում համեմատության կապի առկայությունը:

⁴⁰ А. Г. Назарян, Фразеология современного французского языка, էջ 112, 113-114, 195, 198, 199:

⁴¹ А. Г. Назарян, Образные сравнения французского языка, М., «Наука», 1965, էջ 7:

Դարձվածային նյութի քննությունը Ն. Ամոսովայի նման կատարելով համատեքստային մեթոդով՝ նա «ոչ ազատ» համեմատությունների մեջ առանձնացնում է կայուն և մշտական համեմատություններ: Ըստ նրա՝ մշտական համեմատությունները վերաբերում են դարձվածաբանությանը, իսկ կայուն համեմատությունները՝ ոչ, թեպետ նշում է, որ դրանց միջև սահմանը որոշակի չէ:

Նա ՀԴՄ-ներում տարբերում է դարձվածքներ և իդիոմներ:

Առաջինների մեջ, ըստ նրա, գերադաս անդամը պահպանում է իր բառային նշանակությունը (հմմտ. *злун как пробка, худой как щенка, дumm wie Bohnenstroh, Geld wie Heu haben, bête comme un chou, maigre comme un clou*): Իսկ իդիոմներում այն ինչ-որ կերպ վերախմաստավորված է հանդես գալիս (հմմտ. *нужен как собаке пятая нога, поможет как мертвому припарки, гол как сокол, das raßt wie der Igel zum Handtuch, se'n soucier comme de l'an quarante, s'en soucier comme de colin- tampon*):

Կառուցվածքային առումով նա բոլոր երեք լեզուներում (ռուսերեն, գերմաներեն և ֆրանսերեն) առանձնացնում է մեծ մասամբ երկանդամ, այլև՝ միանդամ ՀԴՄ-ներ⁴²:

Ի. Ի. Չերնիշևան գերմաներենի դարձվածքների քննության համատեքստում խոսում է նաև ՀԴՄ-ները դարձվածաբանության մեջ որպես առանձին խումբ առանձնացնելու, ինչպես նաև նրանց իմաստային, կառուցվածքային, բառարտահայտչական յուրահատկությունների և համեմատական կապակցության դարձվածայնացման վերաբերյալ:

Նա ՀԴՄ-ների շարքն է դասում այն կայուն և պատրաստի վերարտադրելի կապակցությունները, որոնց դարձվածային յուրահատկությունը հիմնվում է ավանդական համեմատության վրա:

Ըստ նրա՝ կայուն կամ ավանդական համեմատությունները դարձվածքների առանձին խմբի մեջ առանձնացնելու հարցում առաջին հերթին հիմք են ընդունվում նրանց պատրաստի վերարտադրելիությունն ու կառուցվածքային-իմաստաբանական բնութագիրը:

Ի. Չերնիշևան այն տեսակետն է առաջ քաշում, որ համեմա-

⁴² Э. Х. Ротт, Компаративные фразеологизмы в русском, немецком и французском языках, Сб. «Вопросы романо-германского языкознания», Челябинск, ЧГПИ, 1967, էջ 115-116, 117-118:

տություն-դարձվածքները դարձվածաբանության զարգացող խմբերից են. դրանք անընդհատ լրացվում են նոր դարձվածքներով: Այդ միավորներն ունեն ցայտուն արտահայտչականություն, քանի որ դեռ թարմ են ու անսովոր⁴³:

Օ. Մ. Նևեդոմսկայայի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ռուսերենի և գերմաներենի ՀԴՄ-ների զուգադրական քննությանը: Հեղինակը համզամանորեն քննում է ՀԴՄ-ները կառուցվածքային-ձևաբանական և իմաստային տեսանկյուններից՝ անդրադառնալով նրանց սահմաններին և գործածության հաճախականության հարցերին: Նա խոսում է նաև ՀԴՄ-ների կազմությանը մասնակցող ռճական և արտահայտչական միջոցների մասին:

Արժեքավոր են հեղինակի դիտարկումներն ու եզրակացությունները ՀԴՄ-ների հոմանշության, բազմիմաստության, հականշության և տարբերակայնության հարցերի վերաբերյալ:

Օ. Նևեդոմսկայան ՀԴՄ-ները ձևաբանորեն դասակարգում է երեք խմբի՝ գոյականական (*ein Gedachtnis wie ein Sieb - голова как решето*), ածականական (*kalt wie Eis - холодный как лёд*) և բայական (*arbeiten wie ein Pferd - работать как лошадь*): Գոյականական ՀԴՄ-ներն առանձնացնում է այն հիմունքով, որ «այդպիսի դարձվածքների համեմատության մասը գոյական բաղադրիչով է բնորոշվում»:

Կատարելով ռուսերենի և գերմաներենի ՀԴՄ-ների զուգադրական քննություն՝ հեղինակը խոսում է նաև նրանց թարգմանական առանձնահատկությունների մասին⁴⁴:

Այսպիսով, ի մի բերելով ռուս և արտասահմանյան այլ դարձվածաբանների աշխատություններում մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ դիտարկումները՝ կարելի է եզրակացնել.

1. Շատ ուսումնասիրողներ խնդրո առարկա կապակցությունները դարձվածաբանության առանձին խումբ դիտելու հարցում թեև կարևորել են կապակցության կայունությունը, պատրաստի վերարտադրելիությունը և ոչ ազատ կապակցելիությունը (Վ. Օգոլցև, Լ.

⁴³ И. И. Чернышева, Фразеология современного немецкого языка, М., «Высшая школа», 1970, էջ 48-49, 58:

⁴⁴ О. М. Неведомская, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими, (АКД), Ленинград, ЛГУ, 1973, էջ 4, 11-12:

Լեբեդևա, Ի. Չերնիշևա), սակայն համեմատությունը որպես դարձվածք դիտելու կարևորագույն հատկանիշ համարել են նրա վերաիմաստավորվածությունը (Վ. Օգուցև, Ն. Ամոսովա, Ա. Նազարյան, Է. Ռոտ և ուրիշներ):

2. ՀԴՄ-ներում առանձնացրել են համեմատություն-դարձվածքներ և համեմատություն-իդիոմներ (Վ. Օգուցև, Ն. Ամոսովա, Ա. Ռոյզենզոն, Ա. Նազարյան):

Երբեմն այդ կարգի դարձվածքներում տարբերել են վերոհիշյալ տիպերի համեմատ միջակա դիրք զբաղեցնող ՀԴՄ-ներ (Վ. Ժուկով, Է. Ռոտ):

3. Հանգամանորեն քննարկել են ՀԴՄ-ների կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները (Վ. Օգուցև, Ի. Ֆեդոսով, Ն. Շանսկի, Լ. Կովալյովա, Ն. Պրոխորովա, Ա. Կունին, Ա. Ռոյզենզոն, Ա. Նազարյան, Օ. Նևեդոմսկայա): Ընդ որում, հատկապես ռուսերենի համար կառուցվածքային տիպեր են առանձնացրել՝ նշելով հիմնականում համեմատության կապերով ՀԴՄ-ներ և գոյականի գործիական հոլովաձևով համեմատության իմաստ արտահայտող ՀԴՄ-ներ (Վ. Օգուցև, Ի. Ֆեդոսով, Է. Ռոտ):

4. Խնդրո առարկա դարձվածքներն ըստ կազմության համարել են երկանդամ կապակցություններ՝ կարևորելով նրանցում նաև տրամաբանական սուբյեկտի առկայության նշանակությունը (Ա. Նազարյան, Է. Ռոտ):

5. Ըստ խոսքիմասային արժեքի՝ մեզ հետաքրքրող դարձվածքներում տարբերել են գոյականական, ածականական, բայական և մակբայական ՀԴՄ-ներ (Ա. Նազարյան, Օ. Նևեդոմսկայա):

6. ՀԴՄ-ները դարձվածաբանության մեջ որպես առանձին խումբ արժևորելով՝ դրանք համարել են կառուցվածքային տարբերակների, իմաստային տեղաշարժերի միջոցով շարունակ զարգացող, համալրվող լեզվական կառույցներ (Լ. Իզատևա, Ի. Չերնիշևա):

7. Կատարել են զուգադրական քննություն՝ համեմատության ծիրի մեջ ընդգրկելով անգլերենի, ռուսերենի, գերմաներենի, ֆրանսերենի և այլ լեզուների ՀԴՄ-ները, ցույց են տվել նրանց իմաստային, կառուցվածքային ինչպես ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները (Ա. Ռոյզենզոն, Է. Ռոտ, Օ. Նևեդոմսկայա, Վ. Օգուցև):

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ – ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ – ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I. ՀԴՄ-ների կառուցվածքային տիպերը

Մասնագիտական գրականության մեջ ընդհանուր առմամբ տարբերակվում է ԴՄ-ների, այդ թվում նաև ՀԴՄ-ների կառուցվածքային երկու տիպ՝

ա) դարձվածքներ, որոնք համընկնում են բառակապակցություններին,

բ) դարձվածքներ, որոնք համընկնում են նախադասություններին⁴⁵:

Ըստ որում, բառակապակցական կառուցվածքի ԴՄ-ներն ըմբռնվում են որպես անվանողական, իսկ նախադասության կառուցվածք ունեցողները՝ հաղորդակցական արժեքով կապակցություններ⁴⁶: Փաստորեն, անվանողական արժեքով ՀԴՄ-ները հարաբերակցվում են բառերի բառաքերականական կարգերին՝ խոսքի մասերին⁴⁷, միաժամանակ շարահյուսական մակարդակում՝ նախադասության կառուցվածքային դիտվածքում, հանդես են գալիս որպես նրա մեկ անդամ: Իսկ հաղորդակցական ՀԴՄ-ները, ձևավորումով լինելով նախադասություններ, վերարտադրվում են որպես խոսքի ավարտուն հատվածներ:

⁴⁵ Հմմտ. А. Д. Райхштейн, Сопоставительный анализ немецкой и русской фразеологии, М., «Высшая школа», 1980, էջ 14, Н. М. Шанский, Фразеология современного русского языка, էջ 72:

⁴⁶ Խ. Գ. Բադիկյան, Դարձվածքային ոճաբանություն, էջ 10-11:

⁴⁷ Դարձվածքաբանական գրականության մեջ այս իմաստով նշվում է նաև «կառուցվածքային կարգեր» (структурные классы) տերմինը (տես А. В. Кунин, Английская фразеология, էջ 326, Э. Х. Ротт, Компаративные фразеологизмы в русском, немецком и французском языках, էջ 119):

Ա. Բառակապակցական (անվանողական) ՀԴՄ-ներ

Անվանողական ՀԴՄ-ները՝ որպես վերախմաստավորված, պատրաստի վերարտադրելի և կայուն կապակցություններ, արտահայտության դիտվածքում (ըստ ձևի) հատկանշվում են բաղադրամասային հիմքով. կազմված են բաղադրիչ տարրերից: Ընդ որում, այդ կարգի կապակցությունները բնութագրվում են կառուցվածքային տարատեսակությամբ, որ պայմանավորված է նրանց բաղադրիչների խոսքիմասային պատկանելությամբ: Ժամանակակից հայերենի ՀԴՄ-ների շարահյուսական կառուցվածքի բնորոշ առանձնահատկությունը համեմատության կապերի առկայությունն է:

1. Անվանողական ՀԴՄ-ների կաղապարները, ծավալային ընդգրկումը և բաղադրիչների կապակցման եղանակները

Լեզվաբանական գրականության մեջ դարձվածքների կառուցվածքային մոդել⁴⁸ ասելով ընկալվում է շարահյուսական այն կաղապարը, որով ձևավորվում են այդօրինակ կապակցությունները⁴⁹:

ԴՄ-ների ձևավորման գործընթացն ապահովող մի քանի կաղապարներ գոյություն ունեն:

ՀԴՄ-ների կախյալ կամ համեմատական բաղադրիչն արտահայտվում է կապական կառուցով⁵⁰: Համեմատության մյուս եզրում

⁴⁸ Կաղապարումը՝ որպես գիտական իմացության մեթոդ, մասնագիտական գրականության մեջ կարևորվում է նաև ԴՄ-ների իմաստաբանության ուսումնասիրության առումով (տես Մ. Ի. Ковалева, Н. М. Прохорова, О семантической природе устойчивых компаративов английского языка, էջ 57):

⁴⁹ Տես В. М. Мокриенко, Славянская фразеология, М., «Высшая школа», 1989, էջ 51, Լ. Մ. Խաչատրյան, Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորներն արդի հայերենում, էջ 18:

⁵⁰ Հմմտ. ուսերենում համեմատության արտահայտման ներկառուցվածքային մի քանի միջոցներ գոյություն ունեն, դրանք են գոյականի գործիական հոլովը (*стать зорой*), նախդիրների հետ հանդես եկող հայցական հոլովը (*с зилькин нос*), ածականի կամ մակբայի համեմատության աստիճանները (*хуже горькой редьки*) և այլն (տես В. М. Огольцев, Структурные типы компаративных фразеологизмов, էջ 320-322): Գոյականի գործիական հոլովով արտահայտված համեմատություններ առկա են նաև անվերենում (տես Ի. А. Федосов, Структурно-синтаксические признаки разговорных ФЕ в современном русском языке, Сб. «Проблемы образования ФЕ», էջ 84):

Ուշագրավ է, որ արևմտահայերենի բառակապակցություններում հայցականը կարող

առկա է այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատությունը. շարահյուսական փոխհարաբերության առումով այն ՀԴՄ-ների գերադաս բաղադրիչն է: Վերջինս խնդրո առարկա կապակցություններում կարող է նաև բացակայել (միագագաթ ՀԴՄ-ներ):

Ժամանակակից հայերենի ՀԴՄ-ների կազմությանը մասնակցող կապերն են *պես, չափ, նման* հետադրությունները, *ինչպես, որպես, իբրև* նախադրությունները, *ինչպես նաև ասես, կարծես, ոնց որ* համեմատության հարաբերություն արտահայտող բառերը⁵¹:

Անվանողական ՀԴՄ-ների գերակշիռ մեծամասնությունը կազմվում է *պես* կապով և *նման* կապական բառով, որոնք ազատ կերպով փոխարինում են միմյանց՝ ձևավորելով ՀԴՄ-ների բառային տարբերակներ:

Դիտարկենք ՀԴՄ-ների կաղապարները՝ ըստ հերթականության:

ա) Ածական + գոյական + կապ կաղապարով ՀԴՄ-ներ

Ընդհանրապես ՀԴՄ-ների մեծամասնությունը երկանդամություններ (բինոմներ) են՝ կազմված գերադաս և կախյալ (համեմատական) բաղադրիչներից⁵²:

Այդորինակ կաղապարով ՀԴՄ-ներում ձևավորվում են **կապական կառույց + ածական և ածական + կապական կառույց** շարահյուսական տարբերակներ:

Կապական կառույց + ածական կաղապարով ՀԴՄ-ներում համեմատության կապերի (*պես, չափ, նման*) խնդիրն արտահայտվում է սեռական հոլովով:

Հմմտ. *տաշտի նման թեթև, բողկի պես առողջ, օձի պես սառը,*

է կատարել կապական կառույցի դեր: Հմմտ. *ծին ճերմակ* նշանակում է *ծինի պես ճերմակ* (տես Վ. Ա. Քոսյան, Արևմտահայերենի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1986, էջ 69):

⁵¹ Վերջիններս գործուն են հատկապես հաղորդակցական ՀԴՄ-ներում: Լեզվաբանական գրականության մեջ դրանք դիտվում են որպես համեմատության շղկկայներ (տես Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., «Լույս», 1969, էջ 232):

⁵² Տես А. Г. Назарян, Фразеология современного французского языка, էջ 113, И. И. Чернышева, Фразеология современного немецкого языка, էջ 50, С. И. Ройзензон, Структурно-семантические связи глагольных компаративных ФЕ с фразеологизмами других типов, էջ 139, К. М. Karapetian, English similes, Yerevan, YU press, 1984, էջ 14:

կաթի պես ճերմակ, Ադամի չափ ծեր, մեռելի պես գունապ, արծվի պես սրապես, սաթի պես սև, Ադամի պես մերկ, վարդի // գինու պես կարմիր⁵³, երկնքի պես կապույտ, կաղնու պես ամուր⁵⁴, գառան պես հեզ, աղվեսի պես խորամանկ, ճպուռի պես շափախոս⁵⁵, Հորի պես աղքատ, առյուծի պես քաջ, գազանի պես անգութ, պապի պես ամուր, Սողոմոնի նման իմաստուն, գիշերի պես խորհրդավոր, շան նման հավատարիմ, բյուրեղի պես մաքուր⁵⁶, օրվա պես պարզ, մահու պես դաժան, մոր պես քնքուշ, կյանքի չափ քաղցր, մորթի պես սրընթաց, ջրի պես էժան, Ղազարոսի նման աղքատ, ժամացույցի պես ճշգրիտ, Կրեստոսի նման հարուստ, ժայռի պես կանգուն և այլն:

Նույն այս երկանդամ կառույցը (հիմնականում նրա կախյալ անդամը) ունի ծավալման հնարավորություն⁵⁷: Այդօրինակ կառույցներում լիմաստ բառերի քանակը հասնում է հիմնականում երեքի, երբեմն՝ չորսի, հմմտ. *չծնված մանկան պես անեղծ*, *Հոռմի պապի պես անսխալական*, *ցերեկվա լույսի պես պարզ*, *արևի լույսի պես պարզ*, *գորոյան հանգույցի պես բարդ*, *մոր կաթի պես անհրաժեշտ*, *երկնքի թռչունների պես անհոգ*, *դանայան փակառի պես դատարկ*, *պապի ծեփի պես ճերմակ*, *ագռավի թևի նման սև*, *սարյակի փեղուրի պես սև*, *օխտը դևի հեքիաթի պես երկար*:

Ինչպես գիտենք, համեմատության մի եզրում, այն է՝ համեմատական մասում (որը դիտվում է որպես համեմատության հենա-

⁵³ Հմմտ. տարբերակային այդ ՀԴՄ-ների համարժեքներն արևմտահայերենում. *վարդի՝ գինիի պես կարմիր*:

⁵⁴ Հմմտ. գրաբարյան տարբերակը. *հզոր իբրև զկաղնի*:

⁵⁵ Հմմտ. այս ՀԴՄ-ն արևմտահայերենում. *ճպուռի մը պէս շափախօս*:

⁵⁶ Իբրև համեմատության եզրեր բերենք այս ՀԴՄ-ի համարժեքները ռուսերենում և անգլերենում, որոնք բնորոշ է կախյալ բաղադրիչի հետադրական դիրքը (դա առկա է նաև մեզանում. *մաքուր ինչպես բյուրեղը*).

чистый как стеклошко // clear as crystal.

Կառուցվածքային ու իմաստային այսօրինակ ընդհանրություններով հանդերձ, լեզվից լեզու դարձվածքներն ի հայտ են բերում նաև տարբերություններ, որոնք դրսևորվում են յուրաքանչյուր տեսանկյունից դրանք քննելիս. կառուցվածքային-քերականական, բառագիտական, ոճաբանական և հնչյունաբանական (այդ մասին հանգամանորեն տեսն Ա. Գ. Назарян, Фразеология-достижения и задачи, «Դարձվածաբանության խնդիրներ: Գիտաժողովի նյութեր», Ե., «Ձանգակ-97», 2003, էջ 11):

⁵⁷ Հմմտ. Յ. X. Ротт, նշվ. աշխ., էջ 120, Ա. Գ. Назарян, Образные сравнения французского языка, էջ 7, Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, էջ 105-106:

կետ), անպայման առկա է գոյական կամ փոխանվանաբար գործածված որևէ բառ:

Քննարկվող կառույցի շրջանակներում կարող է փոխանունություն ի հայտ գալ, հմմտ. *երկու անգամ երկու՝ չորսի պես պարզ*:

Վերը բերված բոլոր օրինակները երկանդամ (ծավալումով կամ առանց ծավալումի) ստորադասական կապակցություններ են:

Ածական + գոյական + կապ կաղապարով համաստորադասական կապակցություններ ժամանակակից հայերենում քիչ են հանդիպում:

Նրանց կախյալ անդամը բաղկացած է միմյանց համագոր երկու գոյականներից.

հմմտ. *օդ ու ջրի նման անհրաժեշտ, շուն ու կապույի պես անհաշտ, երկինք ու երկրի պես փարբեր, երկիր ու օվկիանի նման փարբեր // հեռու*⁵⁸:

Ածական + կապական կառույց կաղապարով ՀԴՄ-ներում համեմատության կապերի (*ինչպես, որպես, իբրև*) խնդիրն արտահայտվում է հայցական հոլովով⁵⁹: Այս կառույցը նախորդի շարահյուսական տարբերակն է. վերը նշված բոլոր ՀԴՄ-ներն էլ կարելի է ներկայացնել կառուցվածքային այս փոփոխակով:

Հմմտ. քննարկվող կաղապարով հետևյալ ՀԴՄ-ները. *կանգուն ինչպես ժայռ, ամայի ինչպես անապատ, դառն ինչպես լեռի*⁶⁰, *կարմիր ինչպես նուռը, սև ինչպես գիշերը, կոպիտ ինչպես արջը, չոր ու ցամաք որպես կմախք, բարի ինչպես հրեշտակը, կեղտոտ ինչպես խոզը, գորշ ինչպես արծիճը // քարը, փայլուն ինչպես արծաթը, զվարթ ինչպես թռչունը, ամուր ինչպես քարը // գրանիտը, սառն ինչպես քարը, անեղծ ինչպես մանուկը, գոռոզ ինչպես սիրամարգը, մաքուր որպես ձյուն, մռայլ որպես ժայռ, վեհ իբրև արծիվ, քաղցր որպես մեղր // շաքար*⁶¹, *սրբազան իբրև մեռոն, չար ինչպես սա-*

⁵⁸ Հմմտ. այսօրինակ ՀԴՄ-ների շարահյուսական հետևյալ տարբերակները. *անհրաժեշտ ինչպես օդն ու ջուրը, անհաշտ ինչպես շուն ու կապու, փարբեր ինչպես երկինք ու երկիր, հեռու ինչպես երկիր ու օվկիան*:

⁵⁹ Տե՛ս Վ. Ա. Քոսյան, Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1990, էջ 310:

⁶⁰ Հմմտ. այս ՀԴՄ-ն գրաբարում. *դառնագոյն քան զլեռի*:

⁶¹ Հմմտ. տվյալ ՀԴՄ-ի միջինհայերենյան տարբերակը. *քաղցր ու անուշ զերդ զշաքար*:

տրանսն, դիմացկուն իբրև կապու, լայն ինչպես աշխարհը, մաքուր // սպիտակ ինչպես լույսը⁶² և այլն:

Այս կառույցում ևս կարող են լինել ծավալումներ⁶³.

Հմնտ. պարզ ինչպես պղտոր գեպը, կարմիր ինչպես նոսն հապիկը, կարմիր ինչպես վարդի թերթը⁶⁴, պարզ ինչպես երկու անգամ երկու հավասար է չորսի, հարկավոր ինչպես ջուրը ծարաված մարդուն, գունապ ինչպես պապի ծեփը⁶⁵ և այլն:

բ) Բայ + գոյական + կապ կաղապարով ՀԴՄ-ներ

Այդպիսի կապակցությունները ժամանակակից հայերենի դարձվածային համակագում գերակշիռ մեծամասնություն են կազմում:

Առանց գերադաս բայ բաղադրիչի չի կարող լինել բայական կապակցություն: Այդօրինակ ՀԴՄ-ներում և ստորադաս, և գերադաս⁶⁶ բաղադրիչները կարող են հանդես գալ թե՛ առանց ծավալումի, թե՛ ծավալումով: Վերջինիս դեպքում կազմվում են ծավալուն շարահյուսական կառույցներ՝ բազմաբաղադրիչ բայական ՀԴՄ-ներ: Ըստ որում, **բայ + գոյական + կապ** կաղապարով ՀԴՄ-ներում ձևավորվում են **կապական կառույց + բայ** և **բայ + կապական կառույց** շարահյուսական տարբերակներ:

Կապական կառույց + բայ: Դրանք ժամանակակից հայերենում մեծ թիվ են կազմում: Նրանցում կապական կառույցը ձևավորվում է *պես, նման, չափ* կապերով (առանց որոնց իմաստազուրկ է համեմատական կապակցությունը) և գոյականի սեռական հոլովով արտահայտված կապի խնդրով՝ կազմելով շարահյուսական մեկ միա-

⁶² Այս ՀԴՄ-ի գրաբարյան փոփոխակն է *մաքուր որպես զոյս* կապակցությունը:

⁶³ Երկանդամ կառույցն ընդլայնող բաղադրիչները մասնագիտական գրականության մեջ կոչվում են ծավալիչներ (հմնտ. Յ. X. Pott, նշվ. աշխ., էջ 120):

⁶⁴ Հմնտ. այն միջին հայերենում. *կարմիր ի վարդին տերևն ի նման*:

⁶⁵ Իրականում այսօրինակ կապակցությունները բարդ ստորադասական նախադասություններից են առաջացել՝ կորցնելով ստորոգումային հատկանիշը, հանդես գալով բառակապակցությունների ձևավորումով (հմնտ. Լ. Մ. Խաչատրյան, Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորները գրաբարում, էջ 22):

⁶⁶ Առհասարակ ՀԴՄ-ների գերադաս (դոմինանտ) բաղադրիչը մասնագիտական գրականության մեջ կոչվում է նաև «tertium comparationis» (տե՛ս Օ. Մ. Неведомская, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими, АКД, էջ 4):

վոր⁶⁷, որն ստորադասվում է գլխավոր բայ բաղադրիչին: Վերջինս հիմնականում լինում է բայի ելակետային ձևը՝ անորոշ դերբայը⁶⁸:

Հմմտ. *ասուպի պես երևալ, դանակի պես կտրել, մոմի նման այրվել, ռումբի պես պայթել, ծամոնի պես կպչել, շան նման հոգնել, կրիայի պես քայլել, գրաստի պես բանել, գայլի պես լափել, ծիփիկի չափ ուրել*⁶⁹, *ձկան պես թարփալ, սոխակի նման դայլայլել, փայտի պես կանգնել, ծխի պես անցնել, աղբյուրի պես բխել, աղի պես հալվել, եզան պես համառել, թութակի պես կրկնել, սատրանայի պես սրել, գողի նման քայլել, ժամացույցի պես աշխատել, ժանտախտի նման տարածվել, հողի պես պտտվել, խելագարի նման սիրել, մեքենայի պես աշխատել, երազի նման հիշել, քարի պես լռել, խոզի պես ուրել, գաջի պես գունատվել, կաթի պես սպիտակել, կուպրի պես սևանալ, հարդի պես ծախվել, սպունգի նման կլանել, շան պես հասկանալ, ոսկու պես փայլել, Ղազարոսի պես երգել, հնդկահավի պես փքվել, ձնագնդի պես խոշորանալ, մահու չափ հոգնել, շան պես դողալ և այլն:*

Այս կառույցով ՀԴՄ-ների միջուկային կամ գերադաս բաղադրիչ կարող է լինել թե՛ հարադիր բայը, թե՛ այնպիսի բայական կապակցություն, որն առանձին էլ դարձվածք է:

Հմմտ. *թթվածնի պես պետք գալ // անհրաժեշտ լինել*⁷⁰, *ուղտի նման ոխ պահել, շան պես քարշ գալ, շան պես պոչ պտտեցնել, կատվի նման մեջքին չգալ // մեջքի վրա չընկնել, սարի պես թիկունք ունենալ, որձակի // աքաղաղի պես ծուղորուղու կանչել, ջայլա-*

⁶⁷ Ռուսերենում, անգլերենում, ֆրանսերենում և գերմաներենում կապական կառույցը հիմնականում որպես հետադրություն է հարաբերակցվում գերադաս բայական անդամին, հմմտ. *работать как вол // пошесть, work like a horse, travailler comme un boeuf, arbeiten wie ein Pferd*:

⁶⁸ Առանցքային բայ բաղադրիչը կարող է արտահայտվել դիմավոր-եղանակային ձևերով: Այդ դեպքում բայական ՀԴՄ-ները՝ որպես ամբողջական նախադասություններ, ձեռք են բերում հաղորդակցական արժեք (հմմտ. Ալ. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 327):

⁶⁹ Հմմտ. ռուս. *есть как птичка*, անգլ. *eat like a bird*:

⁷⁰ Ինչպես տեսնում ենք, բայական ՀԴՄ-ները կարող են ձևավորվել ածականական համեմատություններից՝ վերջիններիս ավելացնելով անորոշ դերբայ: Հմմտ. քննվող կառույցի հետևյալ ծավալումները. *սև աղվեսի պես հազվագյուր դառնալ, հրեշտակի պես գեղեցիկ լինել, թռչունի պես ազար գգալ, մրի պես սև լինել և այլն* (հմմտ. Շ. Ս. Поижензон, նշվ. աշխ., էջ 146, Հ. Ղազարյան, Գունանիշ բաղադրիչով դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, էջ 83):

մի պես գլուխն ավազի մեջ թաղել, դանակի պես սիրտը խրվել, քարի պես ծանրանալ սրտին՝ ուտերին // ճնշել սիրտը, եզան պես կողքի ընկնել, թեփի նման վեր տալ, կովի նման չվանը պակաս կապել, շան պես փսխածը ուրել, ջաղացի պես սորոր տալով անցնել, ջրի պես երկար արև ունենալ, այսօրվա պես միտքը լինել, ցեցի պես սիրտը կրծել, նետերի պես թափանցել մինչև սրտի խորքը, էնֆիեի պես քիթը քաշել, Պյուղատոսի պես ձեռքերը լվանալ, փյունիկի պես մոխիրներից հառնել և այլն:

Դիտարկվող կաղապարով (**կապական կառույց + բայ**) ՀԴՄ-ներում փոքրաթիվ չեն ծավալուն կամ բազմաբաղադրիչ ամբողջությունները⁷¹:

Ծավալումներով հանդես եկող բայական ՀԴՄ-ներն⁷² իրենց հերթին, ըստ կառուցվածքային գործոնի, բաժանվում են հետևյալ խմբերի.

1. ՀԴՄ-ներ, որոնցում միայն կախյալ բաղադրիչն է ծավալված (նրանց գերադաս անդամը կարող է լինել անորոշ դերբայ, հարադիր բայ կամ բայական դարձվածք):

Հմնտ. *օճառի պղպջակների պես* պայթել, *ջրից հանած* // *ափ նեղված ձկան պես* թարտալ, *աշնան տերևի պես* դողալ⁷³, *թոկած կապիկի պես* կանգնել, *դասաբխանի շան պես* դողալ, *մոր կաթի պես* ծծել, *էլեկտրական հոսանքի պես* ցնցել, *երկնքի թռչունների պես* ապրել, *կրակի բոցի պես* տարածվել, *որսկանի բարակի պես* վազել, *սատրանի չարիսի պես* դառնալ // պտտվել, *պատրի ծեփի պես* գունատվել, *գեղի բերանն ընկած տաշեղի պես* քշել, *օխտը դևի հեքիաթի պես* երկարել, *սև ամպի պես* չոքել, *բարի լույսի պես* պարզվել, *ածան* // *թխական հավի պես* կջկջալ, *թրջված հավի* // *մկան պես* կուչ գալ, *ավազի վրա*

⁷¹ Դարձվածաբանական գրականության մեջ երբեմն առանձնացվում են միագազաթ, երկգազաթ և բազմագազաթ ԴՄ-ներ՝ ըստ նրանց անդամների՝ լիմաստ բառեր լինելու հանգամանքի: Ըստ այդմ, այն ԴՄ-ները, որոնք ունեն մեկ լիմաստ տարր, պայմանականորեն համարվում են միագազաթ, երկու այդպիսի անդամ ունեցողները՝ երկգազաթ, երկուսից ավելի բաղադրիչներով կազմվածները՝ բազմագազաթ (տես Ա. Ի. Смирницкий, Лексикология современного английского языка, М., Изд. лит. на иностр. яз., 1956, էջ 212):

⁷² Հմնտ. А. Г. Назарян, Фразеология современного французского языка, էջ 114:

⁷³ Հմնտ. այս ՀԴՄ-ն ուուերենում և անգլերենում. ռուս. *дрожать как осиновый лист*, անգլ. *shake like an aspen leaf* (բառացի՝ *դողալ ինչպես կաղամախու տերևը*):

շարված պատի նման փուլ գալ, ստվարաթղթե տնակի պես փուլ գալ, կոշտ ոսկորի նման կոկորդում մնալ, քար գցած գորտի պես ճայնը կտրել, հնդիկ ֆաքիրի պես կուրծք ծեծել, սառը ցնցուղի պես խելքը գլուխը բերել, սուր թրի պես խելքը կտրել և այլն:

2. ՀԴՄ-ներ, որոնցում միայն գերադաս բայական անդամն է ծավալված՝ մեծ մասամբ կամընտիր (ֆակուլտատիվ) անդամներ ունենալու, ընդմիջարկումներով հանդես գալու տեսանկյունից:

Դարձվածքների կամընտիր բաղադրիչները նրանց «ազատ» փոփոխական անդամներն են, առանց որոնց այդօրինակ կապակցությունները թերի են, և որոնցով ամբողջանում են նրանց կազմն ու իմաստը: ԴՄ-ների կամընտիր բաղադրիչների փոխարեն սովորաբար գործածվում են *մեկը, մի բան* և համանման այլ բառեր՝ ուղիղ կամ թեք ձևերով⁷⁴:

Հմմտ. սովերի պես *հետևել մեկին*, հյուրի պես *պահել իրեն*, ոչխարների պես *հետևել մեկին*⁷⁵, ճանճերի պես *մի բանի վրա թափվել*, անասունի պես *վարվել մեկի հետ*, խողովակի պես *ընդունել մի բան*, սարի պես *կանգնել մեկի թիկունքին*:

ԴՄ-ների կազմում ընդմիջարկումներ են դիտվում այն անդամները, որոնք կայուն կերպով հարում են տվյալ կապակցությանը, նրա դարձվածային նշանակությանը և դարձվածքը դուրս չեն բերում տվյալ իմաստի կամ կառուցվածքի շրջանակներից⁷⁶:

Հմմտ. հետևյալ բայական ՀԴՄ-ները, որոնց գերադաս անդամներն ընդհատվում (ընդմիջարկվում) են հավելադրություններով. *ուրագի պես միշտ իր կողմը տաշել*, *մագնիսի պես դեպի իրեն ձգել*, *թիթեռնիկների նման անվերջ շուրջը պտտվել*, *կրիայի պես դանդաղ ընթանալ*, *օձի նման հազար շապիկ փոխել*, *մոմի նման ամեն կողմ շուռ տալ*, *թաշկինակի պես հաճախակի փոխել*, *սնկի նման արագ աճել*, *ուրվականների նման անվերջ հետապնդել*⁷⁷:

⁷⁴ ԴՄ-ների կամընտիր անդամների մասին հանգամանորեն տես Ա. Ի. Молотков, Основы фразеологии русского языка, Ленинград, «Наука», 1977, էջ 87, Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, էջ 54:

⁷⁵ Հմմտ. այս ՀԴՄ-ն անգլերենում. *follow smb. like sheep*.

⁷⁶ Տես Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, էջ 173:

⁷⁷ Ընդմիջարկելիություն դրսևորում են նաև ՀԴՄ-ների ստորադաս բաղադրիչները. հմմտ. *գիշերաշրջիկ լուսնոտի պես դեգերել*, *ոչխարի հոտի պես (մեկին) հետևել*, *մի դրան երկու շան պես յուլ գնալ*:

3. ՀԴՄ-ներ, որոնցում ծավալված են թե՛ գերադաս, թե՛ կախյալ բաղադրիչները.

հմմտ. **անպեղք** թաշկինակի պես **դեն** նեպել, **վանդակն ընկած** // **վանդակում փակված** գազանի պես **դեսուդեն** վազել, **սուր սլաքների պես** թափանցել **մինչև** սրտի խորքը, **չնչին** փաշեղի նման **իր հեպ** փանել, **ծանր** մուրճի պես հարվածել **գլխին**, **խորամանկ** աղվեսի նման **երկու ոտքով** թակարդն ընկնել:

Բայ + գոյական + կապ կաղապարով ՀԴՄ-ները կառուցվածքային առումով հատկանշվում են նաև փոխանուն բաղադրիչներով հանդես գալու ներունակությամբ:

Համեմատենք խնդրո առարկա կառույցով չծավալված հետևյալ համեմատությունները. *կաթվածահարի // շանթահարի պես վեր թռչել, խայթվածի պես վեր թռչել, մոլորվածի նման լինել, մեխվածի // բևեռվածի պես կանգ առնել, մեռածի պես քնել:*

Ստորև բերվող ՀԴՄ-ները հանդես են գալիս ծավալումներով.

մեկին իր ուզածի պես խաղացնել, գլխին կացնի հարված սրացածի պես կանգ առնել, կրակից փախչողի պես դուրս թռչել, ջանը կրակ ընկածի նման տեղում հանգիստ չմնալ, խեղդվողի պես ձեռքը փրփուրին գցել, վանդակն ընկածի // վանդակում փակվածի նման դեսուդեն վազել:

Բայ + կապական կառույց: Համանման կաղապարով ՀԴՄ-ները, լինելով նախորդ կառույցի շարահյուսական տարբերակները, ըստ արտահայտության դիտվածքի, համապատասխանում են բարդ ստորադասական նախադասությանը: Վերջինիս փոխակերպումից առաջացած շարահյուսական միավորներ են (առանց ստորոգման հատկանիշի)⁷⁸:

Հմմտ. վախենալ ինչպես կրակից, փոխվել ինչպես հեքիաթում // երազում, զգուշանալ // փախչել ինչպես վարակից // ժանտափտից, թափվել ինչպես դույլից, կանգնել ինչպես // որպես սար, աճել // փարածվել ինչպես սունկը, լռել ինչպես կոճղը, բացվել ինչպես

⁷⁸ Բայական ՀԴՄ-ները կարող են դրսևորվել նաև բարդ ստորադասական նախադասության ստորադաս բաղադրիչի ձևավորումով: Հմմտ. *ասես բերանից կրակ թափել, ինչպես ժեռ սարին ապավինել, ինչպես գրասուր քշել* և այլն: Այդպիսի կապակցությունները, մեծ մասամբ արտահայտվելով բայի դիմավոր-եղանակային ձևերով, ձեռք են բերում հաղորդակցական արժեք: Կրկնությունից խուսափելու համար դրանց կանդրադառնանք սույն ուսումնասիրության համապատասխան բաժնում:

վարդը, կանաչել ինչպես խոտը և այլն:

Վերոհիշյալ կառույցի ծավալումներն են հետևյալ ՀԴՄ-ները. դարանել (մեկին) ինչպես կապուն մկանը, զգալ ինչպես իր փանը, ընկնել որպես կոտրած գերան, հարձակվել ինչպես մեղունները մեղրի վրա, նայել ինչպես թուրքը խոզի մսի վրա, քշել ինչպես քամիների բերանն ընկած չոր տերև, ապրել ինչպես մի ուրախ թռչուն, թափվել ինչպես առափության եղջյուրից, հրապուրվել ինչպես երեսան խաղալիքով, խաբել ինչպես մանկանը իր խաղալիքով, արտացոլվել ինչպես արևը մի կաթիլ ջրում, (մեկի հետ) խաղալ ինչպես կապուն մկան հետ, պատել որպես խավար գիշեր:

Ինչպես տեսնում ենք, համանման ՀԴՄ-ներում ծավալման ենթակա է հիմնականում երկրորդ՝ ստորադաս բաղադրիչը:

Բայական համաստրադասական կապակցություններում առանցքային բայական անդամին հարաբերակցվում է երկու համադաս տարրերից կազմված համեմատական բաղադրիչը.

հմմտ. *մուկ ու կապվի պես ապրել, օր ու ջրի պես անհրաժեշտ լինել, ապրել ինչպես շուն ու կապու, փարբերվել ինչպես երկիր ու օվկիան:*

Բայական ՀԴՄ-ները հատկանշվում են նաև եզակի այնպիսի կառույցներով, որոնք ներառում են երկու համազոր ՀԴՄ-ներ.

հմմտ. *քարի պես քաղվել՝ հողի պես մաղվել, ջրի նման գնալ՝ ավազի նման կանգնել, սարի պես կանգնել՝ ուռի պես դողալ:*

գ) Կապ + կապի խնդիր կառույցով ՀԴՄ-ներ

Համեմատություն-դարձվածքների քերականական կառուցվածքը դիտարկելիս նրանցում նկատում ենք այնպիսի կապակցություններ, որոնցում բացակայում է համեմատության եզրերից մեկը, կառուցվածքային առումով՝ գերադաս անդամը: Այդ կարգի կապակցություններն անվանվում են միագագաթ⁷⁹, որովհետև նրանցում առկա է լիմաստ մեկ բաղադրիչ: Վերջինս կարող է լինել գոյական կամ փոխանվանաբար գործածված որևէ բառ, որը հանդես է գալիս սպասարկու կամ թերիմաստ բառի, ՀԴՄ-ների պարագայում՝ համե-

⁷⁹ Հմմտ. Խ. Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածքային միավորները, էջ 259-260, Ալ. Ս. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 317:

մատույթյան կապի հետ:

Կապ + կապի խնդիր կառույցով ՀԴՄ-ները մասնագիտական գրականության մեջ երբեմն կոչվում են *հալրած (կրճալրած) համեմատություն-դարձվածքներ (усеченные компаративные фразеологизмы)*⁸⁰:

Այդպիսի ՀԴՄ-ների արտահայտության պլանում առավել կենտրոնակ են *պես, նման* և *չափ* հետադրությունները:

Միագագաթ⁸¹ ՀԴՄ-ներում կարող են լինել չծավալված և ծավալված, ինչպես նաև փոխանունություններով հանդես եկող կապակցություններ: Դիտարկենք դրանք՝ ըստ հերթականության:

Հմմտ. գոյականով և համեմատության որևէ կապով կազմված հետևյալ ՀԴՄ-ները. *Գաբոսայի նման, սարի պես, սարի չափ*⁸², *ծառի պես, պարկերի պես, կմախքի նման, փախարակի պես, չինարի պես, կորեկի չափ, մասուրի չափ, բալի չափ, մազի նման, մազի չափ, ծովի պես, այծի նման, բորենու պես, եղունգի չափ, աշխարհի չափ, ամպի չափ, ծրի պես, կրակի պես, այսօրվա պես, ջրի պես, հոգու չափ, սլաքի պես, փայտի նման, մրջյունի պես, բուի նման, կաթվածի նման, մուրացկանի պես, ակնթարթի պես, հսկայի նման* և այլն:

Քննարկվող կառույցի ծավալումներում⁸³ առկա են երկու գոյականի և համեմատության կապերի զուգորդմամբ կազմված ՀԴՄ-ներ. հմմտ. *գնդասեղի գլխի չափ, քորոցի գլխի չափ, ասեղի ծայրի չափ, լուցկու փուփի չափ, ծրի աչքի չափ, թռչունի կրուցի չափ, գլխի մազի չափ*⁸⁴, *ծովի ավազի չափ*⁸⁵, *երկնքի աստղերի չափ,*

⁸⁰ А. Г. Назарян, նշվ. աշխ., էջ 115-116:

⁸¹ Է. Խ. Ռոտն, օրինակ, դրանք համարում է միատարր դարձվածքներ (одноэлементные фразеологизмы), իսկ երկբաղադրիչ ՀԴՄ-ները՝ երկտարր (двухэлементные КФЕ), (տես Յ. X. Ротт, նշվ. աշխ., էջ 119):

⁸² Հմմտ. այս ՀԴՄ-ն միջին հայերենում. *սարին չափ*, նույն կերպով և *ծովի պես* ՀԴՄ-ն. *ծովին չափ*:

⁸³ Լ. Դ. Իգնատևան այդ կարգի ՀԴՄ-ներն անվանում է բառակապակցություններ (հմմտ. *как осинового листа*), իսկ մեկ լիմաստ բառի ու մեկ կապի զուգորդումով կազմված ՀԴՄ-ները՝ կապակցություններ (հմմտ. *как полотно*), (տես Մ. Դ. Игнатьева, Структурные и семантические свойства фразеологических единиц с фразеобразующим компонентом «как» в современном русском языке, АКД, էջ 7):

⁸⁴ Հմմտ. այս ՀԴՄ-ի գրաբարյան տարբերակը. *բազում քան զհեր գլխոյ*:

⁸⁵ Հմմտ. գրաբարում. *իբրև զաւազ ծովու անչափ և անթիւ*:

*օճառի պղպջակների // բշտիկների պես, Հուդայի համբույրի նման, գարնան ծիծեռնակի պես, մազերի համրանքի չափ*⁸⁶:

Միագագաթ ՀԴՄ-ների շարքում առանձնանում են գոյականով և համեմատության իմաստ արտահայտող *ասես* բառով կազմված հետևյալ կապակցությունները. *ասես երագում, ասես հեքիաթում, ասես նոտաներով*:

Միմյանց համազոր գոյականներով ու համեմատության *պես* կապով են կազմվել *խաղ ու պարի պես, օդ ու ջրի պես* ՀԴՄ-ները:

Հմմտ. գոյականի, ածականի և կապի համադրումով կազմված հետևյալ ՀԴՄ-ները. *սև ուրբաթի պես, Թերահավատ Թովմասի պես, գառնազգեստ գայլի նման, ուխտյալ թշնամու պես, խորամանկ աղվեսի պես, դանայան փակառի պես, փորհչեյան դարարկության նման*⁸⁷:

Գոյականների, ածականի և համեմատության հարաբերություն արտահայտող *ասես, կարծես, ոնց որ* բառերի միավորումով են կազմվել *ասես որոտ պարզ // կապույտ // հստակ // պայծառ երկնքից, կարծես մոզական // կախարդական գավազանի հարվածով, ոնց որ քամաք ձորի աղվես* ՀԴՄ-ները:

Ստորև բերվող ՀԴՄ-ները ձևավորվել են գոյականի, դերբայի և կապի զուգակցումով.

*թրջված հավի պես, կոտրած գերանի պես, քամած լիմոնի պես*⁸⁸:

Ինչպես (որպես) նախադրության, գոյականների և թվականի կապակցումով են ձևավորվել *ինչպես մի ծառի պտուղ, ինչպես մի սաջի հաց, որպես երկու կաթիլ ջուր, ինչպես մի դռան շուն* ՀԴՄ-ները⁸⁹:

Գոյականով, թվականով և կապով է կազմվել *մի մարդու պես*

⁸⁶ Այդպիսի կապակցություններում տարբերակվում են կառուցի գլխավոր բաղադրիչ և ծավալիչ հասկացությունները: Հմմտ. *դարարկ ու փուչ պարկի պես* ՀԴՄ-ում *պարկի պես*-ը գերադաս է *դարարկ ու փուչ* բաղադրիչի համեմատությամբ: Այս հարաբերությամբ ունենք համաստորադասական կապակցություն:

⁸⁷ Այս խմբի մեջ առանձնանում է *ոնց որ* համեմատական բառից, ածականից ու գոյականից կազմված *ոնց որ դատը խոտ* ՀԴՄ-ն:

⁸⁸ Հմմտ. *որպես թրջված հավ, որպես կոտրած գերան, որպես քամած լիմոն*:

⁸⁹ Գոյականով, դերանունով և *ինչպես* նախադրությամբ է ձևավորվել *ինչպես մի պարկեր* ՀԴՄ-ն:

ՀԴՄ-ն:

Ինդրո առարկա կապակցություններում ծավալուն շարահյուսական միավորներ են ձևավորվում նաև երկու (երբեմն երեք) գոյականների, դերբայի և կապի համադրումով.

հմմտ. *դեզին նստած շան նման, ինչպես ափ նետված ձուկ, աղբյուրի ակը փակած վիշապի նման:*

Միագագաթ ծավալուն ՀԴՄ-ներ կարող են կազմվել նաև գոյականի, թվականի, դերբայի (հարակատար) ու կապի զուգորդումով.

հմմտ. *ինչպես մի ձու՝ մեջտեղից կիսած, ինչպես մի խնձոր՝ երկու կես արած:*

Կապ + կապի խնդիր կառուցով ՀԴՄ-ներում կարող են լինել փոխանուն բաղադրիչներ: Այդ կարգի կապակցությունները ևս հանդես են գալիս ինչպես առանց ծավալումների, այնպես էլ ծավալումներով:

Հմմտ. չծավալված հետևյալ ՀԴՄ-ները. *հակառակի պես⁹⁰, թարսի պես, շանթահարի // կաթվածահարի պես, խայթվածի պես, թքած-կպցրածի նման, ուզածիդ պես, մոլորվածի պես, սպանվածի պես, մեռածի պես, բևեռվածի // մեխվածի պես, փշրվածի նման:*

Հմմտ. հետևյալ ծավալուն շարահյուսական միավորները. *ջուրն ընկածի պես, ջուրը կոխած-հանածի պես, քեֆը փվածի պես, փայտ կուլ փվածի պես, օձից խայթվածի պես, օձի կծածի պես, ջանը կրակ ընկածի պես, գայլի բերանն ընկածի նման, գողության մեջ բռնվածի պես, գլխին կացնի հարված ստացածի պես, մի բան կորցրածի պես:*

Ինչպես տեսնում ենք, ՀԴՄ-ները դրսևորում են ներկառուցվածքային մի շարք յուրահատկություններ: Այս և այլ գործոններով պայմանավորված՝ այդօրինակ կապակցությունները լեզվի դարձվածային համակարգում հանդես են գալիս որպես տեսակարար միավորներ:

Այսպիսով՝

1. ՀԴՄ-ների մի եզրում անպայման առկա է գոյական, որը հանդես է գալիս համեմատության կապի հետ՝ կազմելով համեմատական կապակցության կախյալ բաղադրիչը, մյուսում՝ կամ ածական (ածականական ՀԴՄ-ների դեպքում), կամ բայ (բայական ՀԴՄ-ների դեպքում): Դրանք ՀԴՄ-ների ածական կամ բայ (քերականորեն)

⁹⁰ Հմմտ. ռուսերենում. *как на грех (как на зло)*, անգլերենում. *as bad luck would have it*.

գերադաս բաղադրիչներն են:

2. Այդօրինակ կաղապարումով ՀԴՄ-ներում կարող են լինել թե՛ փոխանունություններ, թե՛ կառույցների ծավալումներ: Վերջինս վերաբերում է ՀԴՄ-ների թե՛ կախյալ, թե՛ գերադաս անդամներին:

3. ՀԴՄ-ներում չափազանց կենսունակ են միազագաթ կամ միատարր կառույցները՝ կազմված լիմաստ և թերիմաստ բառերի համադրումով: Այդ կարգի կապակցություններում ևս գործուն է փոխանունությունը:

2. Անվանողական ՀԴՄ-ների քերականական հատկանիշները

ա) ՀԴՄ-ների ձևաբանական առանձնահատկությունները

ԴՄ-ների ձևաբանական արժեքն ընդհանուր առմամբ բխում է նրանց իմաստային, բառաքերականական և գործառական հատկանիշներից⁹¹:

Քանի որ յուրաքանչյուր ԴՄ ունի դարձվածային ընդհանուր իմաստ, նրա քերականական իմաստը ևս վերաբերում է ողջ կապակցությանը, ոչ թե նրա առանձին բաղադրիչներին⁹², թեև ԴՄ-ների գերադաս բաղադրիչը երբեմն վճռորոշ կարող է լինել այս հարցում⁹³:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ «որոշ դեպքերում աղերսակցություն գոյություն ունի դարձվածքների բաղադրիչների բառաքերականական առանձնահատկությունների և նրանց ձևի միջև, սակայն այդ կապն առկա է այնտեղ, որտեղ դարձվածքների քերականորեն գերադաս անդամները որոշում են նրանց պատկանելությունը այս կամ այն քերականական կարգին»⁹⁴:

Այսպիսով, ԴՄ-ների քերականական հատկանիշները քննելիս նկատի է առնվում ողջ շարահյուսական կապակցությունը, միա-

⁹¹ Խ. Գ. Բադիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, էջ 91-93:

⁹² Стів Л. Е. Кругликова, Фразеологические единицы современного русского литературного языка с «цветовыми» прилагательными (АКД), Ленинград, ЛГУ, 1977, էջ 9:

⁹³ Հմմտ. Ի. С. Козырев, Современный русский язык, Минск, «Вышэйш. школа», 1979, էջ 30, Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, էջ 135:

⁹⁴ В. Н. Телия, О лексических компонентах фразы как элементах ее структуры, Сб. «ПФ», Вологда, 1967, էջ 219:

ժամանակ չեն անտեսվում նրա առանձին բաղադրիչների քերականական առանձնահատկությունները, որովհետև «ցանկացած կայուն կապակցություն, ինչքան էլ նրա բաղադրիչները միաձույլ լինեն, կազմվում է տվյալ լեզվի քերականական օրենքներով, և տեսականորեն կարելի է այն ենթարկել ձևաիմաստային վերլուծության: Այսպիսի մոտեցումով կարելի է որոշել ինչպես ԿԿ-ների (կայուն կապակցությունների-Լ.Ա.) բաղադրիչների, այնպես էլ ամբողջ կառույցի բառաքերականական հատկանիշները. բաղիմաստը կամ հասկացական նշանակությունը (ուղիղ կամ փոխաբերական), խոսքիմասային իմաստը (միարժեք կամ տարարժեք) և շարահյուսական գործառույթը (տվյալ արժեքին հատուկ կամ փոխված)»⁹⁵:

ՀԴՄ-ները քերականական հայեցակետից հատկանշվում են մի շարք յուրահատկություններով, որոնք խարսխվում են այդօրինակ կապակցությունների արտաքին (կառուցվածքային) և ներքին (բովանդակային) գործոնների վրա:

Ըստ համընդհանուր քերականական իմաստի՝ անվանողական ՀԴՄ-ներն արտահայտում են հատկանշային հասկացություններ: Վերջիններս կարող են վերաբերել առարկային, հատկանիշին կամ գործողությանը և կամ արտահայտել առարկայի փոփոխվող հատկանիշ, այն է՝ շարժում: Ըստ այդմ, շարահյուսական ձևավորումով որպես բառակապակցություն հանդես եկող ՀԴՄ-ներում առանձնացվում են համապատասխանաբար ածականական, մակբայական և բայական կապակցություններ⁹⁶: Քննարկենք նրանց քերականական՝ ձևաբանական հատկանիշները:

Երբ խոսվում է ՀԴՄ-ների քերականական փոփոխությունների մասին, նկատի են առնվում հիմնականում նրանց գերադաս բաղադրիչները՝ չնայած նրանց երկու անդամներն էլ (գերադաս և ստորադաս) քերականական ձևավորում ունեն⁹⁷. միևնույն ՀԴՄ-ի

⁹⁵ Լ. Մ. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, էջ 7-8:

⁹⁶ ՀԴՄ-ներում հանդիպում են եզակի կապակցություններ, որոնք չունեն անվանողական արժեք. դրանք երանգավորում են խոսքը: Այդպիսիները հարկ է տարբերակել որպես եղանակավորող ՀԴՄ-ներ: Դրանք հիմնականում միազագաթ կառույցներ են: Հմմտ. *հակառակի պես, թարսի պես, սատրանայի պես, քրոջ պես, ախպոր // եղբոր պես // նման*:

⁹⁷ Տե՛ս А. И. Смирницкий, Лексикология современного английского языка, էջ 203-204:

քերականական ձևերի կրողը, ցուցիչը հիմնականում նրա գերադաս անդամն է⁹⁸:

1. Ածականի արժեք ունեցող ՀԴՄ-ներ

Ածականական ՀԴՄ-ների գերադաս բաղադրիչը մեծ մասամբ ածական է: Այս առումով կարևոր նշանակություն ունեն նաև հարակատար և ենթակայական դերբայները:

Ածականին հարաբերակից ՀԴՄ-ներում առկա են նաև միագագաթ կապակցություններ, որոնցում չկան գերադաս և սպասարկու բաղադրիչներ:

Որակական ածականները, դառնալով ՀԴՄ-ների գերադաս անդամներ, ազատ կիրառություններում հանդես եկող ածականների նկատմամբ ցուցաբերում են թե՛ ընդհանրություններ, թե տարբերություններ: Ըստ որում, տարբերությունները վերաբերում են դարձվածային իմաստով պայմանավորված սահմանափակումներին:

Ինչպես ազատ կապակցություններում (ԱԿ), այնպես էլ ՀԴՄ-ներում ածականը, դրվելով գոյականի (տվյալ դեպքում՝ համեմատության կապի ու կապի խնդրի) վրա, համեմատության աստիճաններ չի ստանում. միշտ գործածվում է դրական աստիճանով⁹⁹:

Ածականական ՀԴՄ-ներում առաջին պլան է մղվում ոչ թե համեմատության գործառույթը, այլ ածականով արտահայտված հատկանիշի սաստկական նշանակությունը: Երբ ասվում է *գունապ ինչպես պարի ծեփը*, նկատի է առնվում մեկի ոչ այնքան պատի ծեփի պես գունատ լինելը, որքան նրա սաստիկ գունատությունը:

⁹⁸ Հմմտ. В. П. Жуков, Русская фразеология, М., «Высшая школа», 1982, էջ 212, А. М. Чепасова, Л. А. Ивашко, Проблема структурности фразеологического значения, Сб. «Фразеологическое значение в языке и речи», Челябинск, ЧГПИ, 1988, էջ 24 –25:

⁹⁹ Հմմտ. ԱԿ-ներում *պես*, *չափ*, *նման* կապերով լրացում ունենալու դեպքում ածականը կազմում է ձևաբանական իմաստ արտահայտող կապակցություն, այն է՝ որակական ածականի հավասարական համեմատական աստիճան (տես Վ. Ա. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, էջ 183):

Ռուսերենում, անգլերենում և ֆրանսերենում ածականները դարձվածքների կազմում հաճախ կիրառվում են համեմատության աստիճաններով (տես Л. Е. Кругликова, նշվ. աշխ., էջ 12, А. В. Кунин, Английская фразеология, էջ 21, 303, А. Г. Назарян, Фразеология современного французского языка, էջ 116): Ֆրանսերենում, օրինակ, համեմատության *comme* կապն այս դեպքում փոխարինվում է *plus...que* կաղապարով: Հմմտ. *ծրունի պես սպիտակ* ՀԴՄ-ն ֆրանսերենում. *blanc comme la neige // plus blanc que la neige*.

Հմնտ. արծվի պես սրապես, կապարի նման կարծր, մեկուսի պես փափուկ, առյուծի պես քաջ¹⁰⁰, կաթի պես սպիտակ, օձի պես սառը, կաղնու նման ամուր և այլն:

Ածականական ՀԴՄ-ների գերադաս բաղադրիչն ըստ կազմության կարող է լինել **պարզ, ածանցավոր և բարդ**:

Հմնտ. **պարզ ածականներով** կազմված հետևյալ ՀԴՄ-ները. լույսի պես պարզ, տաշտի նման թեթև, Ադամի պես ծեր, խոզի պես գեր, շեղբի պես սուր, գիշերվա նման մութ, ժայռի նման մռայլ:

Հետևյալ ՀԴՄ-ների գերադաս բաղադրիչներն **ածանցավոր ածականներ** են. սափանայի նման տգեղ, մումիայի պես անշարժ, երեխայի պես անմեղ, գազանի պես անգութ, մանկան նման անօգնական, (Հռոմի) պապի պես անսխալական, արծաթի պես փայլուն, վարդի պես թովիչ, խոզի պես կեղտոտ:

Ստորև բերվող ՀԴՄ-ները բաղադրվել են **բարդ ածականներով**.

ոզնու պես փշապատ, բզեզի պես աշխատասեր (գոյական + բայահիմք), արագիլի պես բարձրահասակ, աշխարհի չափ լայնասիրտ, կոճղի պես պնդակազմ (ածական + գոյական), արծվի պես սրապես (ածական + բայահիմք), կաշաղակի պես շարտախոս (մակբայ+ բայահիմք):

Ինչպես նշել ենք, ածականի արժեքով հանդես եկող ՀԴՄ-ներում կարևորվում է **ենթակայական և հարակատար դերբայների** դերը¹⁰¹:

Առհասարակ դարձվածաբանական գրականության մեջ դերբայ գերադաս անդամով դարձվածքների հարցում տարակարծություններ կան: Մի դեպքում այդօրինակ բոլոր դարձվածքները համարվում են բայական կապակցություններ¹⁰², մյուս դեպքում՝ բայական դարձվածքների մասնավոր կիրառություններ՝ որոշակի վերապահումով, որ «կան մեծ թվով դերբայական կապակցություններ (մեծ մասամբ հարակատարով), որոնք էլ բուն դերբայական կապակցություն կառույցն են ներկայացնում. այս կարգի դարձվածքները

¹⁰⁰ Հմնտ. այս ՀԴՄ-ն ռուսերենում, անգլերենում և ֆրանսերենում. *смелый как лев // brave as a lion // brave comme un lion*.

¹⁰¹ Տես Խ. Գ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 155:

¹⁰² Ալ. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 317:

բայի ճևարանական արժեք չունեն, այլ գոյականի, վերաբերականների, մակբայի, ածականի»¹⁰³:

Ենթակայական և հարակատար դերբայներով կաղապարված ՀԴՄ-ներն առաջացել են բայական կապակցությունների հարացուցային ձևերից:

Ենթակայական դերբայը, առանց դարձվածայնորեն կապված իմաստի, հանդես է գալիս թե՛ գոյականին, թե՛ ածականին հատուկ շարահյուսական պաշտոններով: Նույն այս դերբայով¹⁰⁴ կազմված ՀԴՄ-ներն ունեն նաև ածականական կիրառություն՝ մատնանշելով առարկայի որևէ հատկանիշ.

իմմտ. ժամացույցի պես աշխատող, թանի ճանճի պես մեջ ընկնող, ասուպի պես երևացող, ճահճի պես ներս քաշող, օձի պես սողացող, առյուծի պես կռվող, կարկուտի նման տեղացող, սպունգի պես կլանող, կոճղի պես լռող, շան պես հասկացող, մոմի նման այրվող, մազնիսի պես ձգող, հարդի պես ծախվող, երագի նման հիշվող, փաշեղի նման փարուբերվող և այլն:

Ինչպես տեսնում ենք, որպես այդ կարգի կապակցությունների սերող կաղապարի գերադաս անդամներ կարող են հանդես գալ սեռային տարբեր պատկանելությամբ բայեր:

Հմմտ. ենթակայական դերբայով կազմված ՀԴՄ-ների ածականական-որոշչային կիրառությունները.

Կռվում էին նրանք հերոսաբար և բերդից *կարկուտի նման տեղացող* նետերը չէին կարողանում զսպել նրանց կատաղությունը (ԲՍ, 393): Աթոն դուրս եկավ, տեսավ *սելավի պես եկող* բազմությունը, ու աչքերը մթնեցին (ՎԱ, 198):

Փաստորեն, ինչպես նշվում է դարձվածաբանական գրականության մեջ, «որոշ ԿԿ-ների հարացուցային ձևեր, չնայած հանդես են գալիս նոր խոսքիմասային արժեքով, սերիչ կաղապարի նկատ-

¹⁰³ Տես Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 201:

¹⁰⁴ Ենթակայական դերբային հատուկ են թե՛ հատկանիշի, թե՛ անվան գաղափարները: Որպես գործողի անվան կարգ՝ ենթակայական դերբայը ՀԴՄ-ների կազմում կարող է գոյականին հատուկ թեքման ձևեր ունենալ. հանդես գալ եզակի և հոգնակի թվերով (*հերոսի պես մեռնող // ~ մեռնողներ*), գործածվել որոշյալ և անորոշ առումներով (*թութակի պես կրկնող // ~ կրկնողը*), դրվել զանազան հոլովներով՝ կատարելով նրանց հատուկ շարահյուսական պաշտոններ (*հողմի նման սուրացող // ~ սուրացողի // ~ սուրացողից*) և այլն:

մամբ տարարժեքություն չեն ցուցաբերում. դրանց նոր արժեքը պայմանավորված է շարահյուսական նոր գործառույթով, որ կրում է ժամանակավոր բնույթ և սահմանափակված է տվյալ տեքստի շրջանակներում»¹⁰⁵:

Քայի հարակատար դերբայը մատնանշում է և՛ բայական գործողության գաղափար, և՛ գործողության կատարման դրություն, վիճակ: Այն արտահայտում է թե՛ գոյականական, թե՛ հատկանշային՝ ածականական և մակբայական նշանակություններ: Այսպիսի դեպքերում նույնպես գործ ունենք բայական կապակցությունների մասնավոր գործածությունների հետ.

հմնտ. *երազի պես անցած, մոլախոտի պես աճած, քրթուկի պես կանգնած, գաջի պես գունաւորված, սարի պես կանգնած, Նոյի ազնավի նման ազոավացած, տոպրակի նման կախված, փնջած մորիի պես պահած, մոմի նման ամեն կողմ շուռ տրված, օձի նման հազար շապիկ փոխած, անպէտք թաշկինակի նման դեն նետված, աչքի լոյսի պես պահած*¹⁰⁶:

Այսպիսի դերբայական կապակցություններում ևս արտահայտություն է գտնում բայի սեռի քերականական կարգը: Վերը բերված օրինակներում առկա են սեռային տարբեր պատկանելություն ունեցող բայերի հարակատարով կաղապարված ՀԴՄ-ներ:

Հմնտ. այդ կարգի կառույցների ածականական-որոշչային կիրառությունները:

Ինչպե՞ս հայտնվեց այս չքնաղ դեմքը՝ *Քարի պես ընկած* իմ ճանապարհին (ՀԹ, Գ, 5, 20): Այդպիսի մի թրջված հավի նման կույ եկած չնչին արարածի մեջ այնքան կրակոտ աչքեր (ՊՊ, 5, 165): Տեսա *ամպի պես մթնած* ես նրա դեմքը մանկուց (ԵԶ, 3, 299):

Այնուամենայնիվ, գոյություն ունեն բայական ծագումով որոշ կապակցություններ, որոնք, դուրս գալով սերիչ կաղապարի խոսքիմասային արժեքի շրջանակներից, հանդես են գալիս իմաստարժեքային ած. // մկբ. համատեղումով¹⁰⁷:

Հմնտ. շան պես նվիրված (1. հավատարիմ-ած., 2. հավատար-

¹⁰⁵ Տեն Լ. Մ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 224:

¹⁰⁶ Գոյականական կիրառությամբ այդօրինակ ՀԴՄ-ներին բնորոշ են գոյականին հատուկ հոլովի, թվի, դիմային առման, որոշյալի և անորոշի քերականական կարգերը:

¹⁰⁷ Տեն Լ. Մ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 235:

մորեն-մկբ.), *շան // գայլի պես քաղցած // սոված, քաղցած ինչպես գայլը*¹⁰⁸ (1. անոթի-ած., 2. քաղցած վիճակում-մկբ.), *կախաղած շան պես* (1. ամբարիշտ-ած., 2. խիստ գայլացած վիճակում-մկբ.):

Հմմտ. - Դու մի բան տո՛ր ուտեմ, *գելի պես սոված* եմ (ՍԽՀ, 730): Երեխաները իսկույն վրա թափվեցին *քաղցած գայլերի պես* (ՆԴ, 96):

Ածականական ՀԴՄ-ների ստորադաս (համեմատական) բաղադրիչը մեծ մասամբ փոփոխություններ չի կրում: Նրանցում կապական կառույցի գոյական (կամ փոխանուն) բաղադրիչը, համեմատության կապերին բնորոշ հոլովառությամբ պայմանավորված, միշտ դրվում է կամ սեռական (*պես, չափ, նման* կապերի դեպքում), կամ հայցական (*ինչպես, որպես* նախադրությունների պարագայում) հոլովով:

Հմմտ. *թռչունի պես զվարթ, Ադամի չափ ծեր, կախվի նման դիմացկուն, ամայի ինչպես անապատ(ը), դառն ինչպես լեղի(ն), սև ինչպես գիշեր(ը)*:

Ինչպես երևում է բերված օրինակներից, **ածական + կապական կառույց** ձևավորումով ՀԴՄ-ները կարող են կաղապարվել թե՛ որոշիչ հոդով, թե՛ առանց դրա: Սակայն նրանցում պատահում են այնպիսի կապակցություններ, որոնք առանց որոշիչ հոդի չեն գործածվում.

հմմտ. *հարկավոր ինչպես ջուրը ծարաված մարդուն*:

Այդ կարգի որոշ ՀԴՄ-ներ էլ հիմնականում կիրառվում են առանց որոշիչ հոդի. հմմտ. *տարբեր ինչպես երկիր ու օվկիան, չոր ու ցամաք որպես կմախք*:

Ստացական հոդերի կիրառությունը ՀԴՄ-ներում գործուն չէ. նրանց առկայության դեպքում համեմատական կապակցությունը կգրկվի դարձվածային արժեքից, հմմտ. *հայելու պես պարզ, շան պես հավաքարիմ*:

Այս և այլ ՀԴՄ-ները չենք կարող գործածել «հայելուս // դ. պես

¹⁰⁸ Ս. Ի. Ռոյզենզոնը, անդրադառնալով ածականական և բայական ՀԴՄ-ների պատճառահետևանքային կապերին, *գայլի պես քաղցած* ՀԴՄ-ն համարում է ածականական արժեքով կապակցություն, որը հանդես է գալիս որպես պատճառ *գայլի պես լափել* բայական ՀԴՄ-ի համար (տես Ս. Ի. Ռոյզենզոն, Структурно-семантические связи глагольных КФЕ с фразеологизмами других типов, Сб. «ВСФЕ», ч. II, էջ 142):

Հմմտ. *քաղցած ինչպես գայլը* ՀԴՄ-ն ուուտերենում, անգլերենում և գերմաներենում. *голодный как волк / hungry as a wolf / hungrig wie ein Wolf*.

պարզ», «շանս // դ պես հավատարիմ» ձևերով և այլն:

Եզակի ՀԴՄ-ներում է թերևս հնարավոր ստացական հոդերի կիրառությունը: Այդպիսի ՀԴՄ-ները նրանց առկայությամբ չեն իմաստափոխվում և չեն վերածվում ազատ շարահյուսական կապակցությունների.

հմմտ. *կյանքի // կյանքիս // կյանքիդ պես թանկ, մոր // մորս // մորդ կաթի պես անհրաժեշտ*:

Նույնը վերաբերում է նաև ցուցական **ս** հոդի գործածությանը ՀԴՄ-ների շրջանակներում՝ **այս** ցուցական դերանվան նշանակությամբ.

հմմտ. *աշխարհի // աշխարհիս չափ լայն, արևի // արևիս լույսի պես պարզ*:

Այս բոլոր օրինակները, սակայն, միևնույն իմաստների տարբերակներն են:

Նույնը վերաբերում է նաև ՀԴՄ-ների կախյալ բաղադրիչների եզակի-հոգնակի զուգաձևություններին, որոնք քերականորեն չեզոք են¹⁰⁹: Տարբերակային ՀԴՄ-ներին համաձայնորեն կանդադառնանք այս ուսումնասիրության համանուն բաժնում: Այստեղ նշենք, որ մի քանի միագագաթ կապակցություններում պատահում են անվանական (գոյականական) այնպիսի բաղադրիչներ, որոնք կաղապարվում են միայն հոգնակի թվով.

հմմտ. *երկնքի աստղերի չափ, մազերի համրանքի չափ*:

Որոշ ՀԴՄ-ների անվանական անդամներ էլ հանդես են գալիս միայն եզակի թվով. խոսքը վերաբերում է անհոգնական գոյականներին.

հմմտ. *լողակի նման կապույտ, կաթի պես սպիտակ, արճիճի նման ամուր, մեղրի պես քաղցր, քացախի նման թթու, երկրագնդի նման կլոր, սատանայի պես չար, մեռոնի պես սրբազան, թթվածնի*

¹⁰⁹ Հմմտ. ժամանակակից ֆրանսերենում համաձայնություն կա ՀԴՄ-ների կախյալ բաղադրիչների թվի և համեմատության սուբյեկտի միջև (հաշվելի գոյականների դեպքում), (տե՛ս А. Г. Назарян, նշվ. աշխ, էջ 116):

Ժամանակակից հայերենի ՀԴՄ-ների՝ հոգնակի ձև ունեցող գոյականներով արտահայտված համեմատական անդամները կարող են թվով և՛ համաձայնել, և՛ չհամաձայնել համեմատության սուբյեկտին (*օրվա պես պարզ փաստեր, ծրուների պես մաքուր մարդ*): Հմմտ. նաև հետևյալ բնագրային օրինակները. Մի տեսնես՝ **հրեշտակի պես երեխեք** են (ԲՄ, 189): Ու *աղավնի* կթոցնեն **Ձյուների պես սպիտակ** (ԱԻ, 2, 33):

նման անհրաժեշտ, Հորի պես աղքատ, Կրեսոսի նման հարուստ, Ադամի պես մերկ, Սողոմոնի նման իմաստուն, Ղազարոսի նման աղքատ և այլն:

Անվանական (գոյականական) անդամները միայն եզակի թվով են գործածվում նաև միազագաթ հետևյալ ՀԴՄ-ներում.

*Գաբրուսայի նման, Հուդայի համբույրի նման, ոնց որ ցամաք ձորի աղվես, դանայան տակառի նման, տորիչելյան դատարկության պես, որպես երկու կաթիլ ջուր, Թերահավատ Թովմասի պես, սարի պես, որպես գայթակղության քար*¹¹⁰:

2. Բայի արժեք ունեցող ՀԴՄ-ներ

Ընդհանրապես յուրաքանչյուր լեզվի դարձվածային համակարգում գերակշռում են բայական ԴՄ-ները: Այդ կարգի կապակցությունների առանցքային բայ բաղադրիչը հանդես է գալիս կամ անդեմ-դերբայական, կամ դիմավոր-եղանակային ձևերով: Առաջին դեպքում բայական այդորինակ կապակցությունները գործածվում են անվանողական արժեքով, երկրորդ դեպքում հաղորդակցական արժեք են ստանում՝ համատեղելով բայական արժեքն ու հաղորդակցական գործառույթը¹¹¹: Փաստորեն, բայական ԴՄ-ները խոսքում հանդես են գալիս կամ իբրև նախադասության մեկ անդամ, կամ որպես ամբողջական նախադասություն՝ ցուցաբերելով գործառական երկակիություն:

Այսպես, *հինգ մատի պես գիտենալ* ՀԴՄ-ի գերադաս բայ բաղադրիչը բայի ելակետային ձևով՝ անորոշ դերբայով, արտահայտում է գործողության առավել ընդհանուր իմաստ և զուրկ է ստո-

¹¹⁰ Հմմտ. գրաբարի ՀԴՄ-ների կառուցվածքային առանձնահատկություններից մեկը նախդիրների առկայությունն է: Վերջինս բացակայում է ժամանակակից հայերենի ՀԴՄ-ներում (*քան զգայլ ազահ - գայլի պես ազահ // ազահ ինչպես գայլը, հզոր իբրև զկաղնի - կաղնու պես հզոր // հզոր ինչպես կաղնին, քան զգազան անգութ - գազանի նման անգութ // անգութ ինչպես գազանը*):

¹¹¹ Տե՛ս Ա. Գ. Назарян, նշվ. աշխ., էջ 99, Խ. Գ. Բադիկյան, նշվ. աշխ., էջ 161, Ալ. Ս. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 325:

Հմմտ. ոռուերենի որոշ բայական ՀԴՄ-ներում բայը կարող է հանդես գալ անդեմ կամ դիմավոր ձևերով, ըստ որում, վերջինս՝ անդեմ նշանակությամբ: Այդորինակ ՀԴՄ-ները դիտվում են իբրև անդեմ նախադասությունների քարացած ձևեր (*везет как утопленнику*), (տե՛ս В. Л. Архангельский, Устойчивые фразы в современном русском языке, Ростов н/Д, РУ, 1964, էջ 196):

րոգումից: Դիտարկենք այդ ՀԴՄ-ն խոսքային միջավայրում, որտեղ օժտված է ստորոգման հատկանիշով:

- Ջանս, ես քո հրավիրած մարդկանցից շատերին *հինգ մարդիս պես գիրքեմ* (ՔԹ, 447):

Առհասարակ բայը հատկանշվում է քերականական կարգերի առատությամբ: Այս իմաստով ամենահարուստ խոսքի մասն է, ըստ որում, օժտված է հատկանիշներով, որոնց մի մասը հատուկ է միայն բային (եղանակ, ժամանակ, սեռ, կերպ և այլն): Բայի խոսքիմասային նշանակությամբ արժեքավորվող ՀԴՄ-ներին հատուկ են բային բնորոշ բառաքերականական բոլոր հատկանիշները: Անշուշտ, գոյություն ունեն նաև որոշակի սահմանափակումներ որոշ քերականական կարգերում¹¹²:

Քանի որ բայական ՀԴՄ-ներում կան թե՛ անվանական, թե՛ բայական բաղադրիչներ, նրանց կարող են բնորոշ լինել թե՛ անվանը հատուկ առկայացման, թվի, դիմային առման, անձի և իրի, թե՛ բային բնորոշ սեռի, եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի, հաստատման-ժխտման քերականական կարգերը:

Ինչպես գիտենք, բայական ՀԴՄ-ների մեջ որպես գերադաս բաղադրիչներ երբեմն հանդես են գալիս այնպիսի կապակցություններ, որոնք ինքնին դարձվածքներ են: Այդօրինակ որոշ կապակցություններում անվանական անդամներ կան, որոնք միշտ կադապարվում են որոշիչ հոդով. առանց դրա վերջիններս զուրկ են դարձվածային արժեքից:

Հմմտ. Պյուղարոսի պես ձեռքերը լվանալ, օձի պես սիրպը կրծել, ջալլամի պես գլուխն ավազների մեջ թաղել, սառը ցնցուղի պես խեղը գլուխը բերել, սուր թրի պես խեղը կտրել, քարի պես ճնշել սիրպը, էնֆիեի պես քիթը քաշել:

Ի հակադրություն այդպիսի կառույցների՝ կան ՀԴՄ-ներ, որոնք կադապարվում են միայն առանց հոդի:

¹¹² Ժամանակակից ռուսերենի բայական դարձվածքների մի մասը չի կարող կիրառվել ինչպես անորոշի ձևով, այնպես էլ դիմավոր բոլոր ձևերով (տարբեր ժամանակներով, դեմքերով): Կան նաև այնպիսիները, որոնք կիրառվում են միայն մեկ կամ երկու դիմավոր ձևերով՝ չունենալով անորոշի ձև (տես А. И. Молотков, Основы фразеологии русского языка, էջ 134-135):

Պ. Ս. Բեդիրյանը ժամանակակից հայերենի բայական արժեքով դարձվածքները համարում է հիմնականում «պակասավոր» (տես Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 141):

Հմմտ. եզան պես կողքի ընկնել, շան պես պոչ պտտեցնել, ասես բերանից կրակ թափել, հնդիկ ֆաքիրի պես կուրծք ծեծել:

Բայ + կապական կառույց կաղապարով ՀԴՄ-ների համեմատական անդամները կարող են կիրառվել անորոշ-որոշյալ զույգ ձևերով՝ չիմաստափոխելով կապակցությունները (պատել ինչպես խավար գիշեր // գիշերը):

Այդ կարգի կառույցների ստորադաս բաղադրիչները երբեմն ձևավորվում են միայն որոշիչ հոդով:

Հմմտ. չփակչել ինչպես սափանան խաշին, հրապուրվել ինչպես երեխան խաղալիքով, նայել ինչպես թուրքը խոզի մսին:

Բայական ՀԴՄ-ների անվանական անդամները մեծ մասամբ անփոփոխ են մնում, փոփոխվում են հիմնականում բայ բաղադրիչները¹¹³:

Բայական ՀԴՄ-ների անվանական անդամները կարող են դեմքով, թվով համապատասխանել բայի դիմավոր-եղանակային ձևերին, կարող են և չհամապատասխանել նրանց:

Հմմտ. Ջայլամի պես գլուխը / գլուխներն ավագի մեջ է / են թաղում: Ջայլամի պես գլուխդ / գլուխն ավագի մեջ ես / է թաղում: Թալիսմանիս / թալիսմանիդ / թալիսմանի պես պահում եմ / ես / է: Թաշկինակիս / թաշկինակիդ / թաշկինակի պես փոխում եմ / ես / է: Աչքիս / աչքիդ / աչքի լույսի պես եմ / ես / է պահում:

Բայց՝ Թուֆակի պես կրկնում եմ / ես / է / ենք / եք / են: Քամու նման թռչում եմ / ես / է և այլն:

Ինչպես երևում է վերջին օրինակներից, եթե այս կարգի ՀԴՄ-ների անվանական բաղադրիչներն անփոփոխ չմնան, կապակցությունները կգրկվեն դարձվածային արժեքից:

Բայական ՀԴՄ-ների անվանական մասի գոյականը դրվում է մեծ մասամբ եզակի թվով: Կարող է կիրառվել հոգնակի ձևով, հատկապես երբ համեմատության առարկան հոգնակի թվով է գործածված:

Հմմտ. Աղջիկները բացվել են վարդի / վարդերի պես:

Երեխաները հալվում են մոմի / մոմերի պես¹¹⁴:

¹¹³ Հմմտ. Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 141:

¹¹⁴ Հմմտ. ասես բերանը ջուր առնել ՀԴՄ-ն խոսքային միջավայրում: Իսկ անհրավները, ասես բերանները ջուր առած, դիտմամբ լուում էին (ԲՍ, 151): Այսպիսի դեպքերում, ինչպես տեսնում ենք, անհրաժեշտ է թվային համաձայնություն:

Որոշ ՀԴՄ-ներում անվանական (գոյականական) բաղադրիչները հանդես են գալիս միայն եզակի թվով.

հմմտ. *աչքի լույսի պես սիրել, կարմիր թելի պես անցնել, գիսավոր աստղի պես փայլել, ապրել ինչպես Աբրահամի գոգում, Ձենով Օհանի պես գոռալ:*

Պատահում են ՀԴՄ-ներ, որոնց անվանական անդամները կադապարվում են միայն հոգնակի թվով.

հմմտ. *ճանճերի պես խոնվել, ճանճերի պես կոտորվել¹¹⁵, սուր սլաքների պես թափանցել մինչև սրտի խորքը, միկրոբների նման վխտալ, երկվորյակների պես (նման) լինել, կարծես փշերի / ասեղների վրա նստած լինել:*

Ժամանակակից հայերենի բայական ՀԴՄ-ները կարող են կորցնել դարձվածային նշանակությունը՝ անձի անունը իրի անունով փոխարինելու դեպքում: Շփոթությունից խուսափելու համար այդ կարգի կապակցությունները կազմվում են մեկը (անձի համար), մի բան (իրի համար) անդամների օգնությամբ:

Հմմտ. *մեկին իր ուզածի պես խաղացնել, մեկի հետ խաղալ ինչպես կարուն մկան հետ, ծանր մուրճի պես հարվածել մեկի գլխին, անասունի պես վարվել մեկի հետ, շան պես կապվել մեկի հետ, մի բանի (վրա) հարձակվել ինչպես մեղուները մեղրի վրա, մի բան կորցրածի նման լինել¹¹⁶:*

Բայական ՀԴՄ-ները ձևույթաբանական մակարդակում ի հայտ են բերում այնպիսի առանձնահատկություններ, որոնք բնորոշ են միայն բային, նրա քերականական կարգերին:

Բայական ՀԴՄ-ների խոնարհման ձևերից յուրաքանչյուրի ընդհանուր քերականական իմաստը նույնն է, ինչ բայերինը՝ ազատ կիրառության մեջ: Խոսողի վերաբերմունքը գործողության, եղելության նկատմամբ արտահայտվում է ՀԴՄ-ների բայ բաղադրիչների

Հնարավոր է նաև, որ չլինի այդպիսի համընկնում, հմմտ. *թիթեռի պես սպտ(վ)ել* ՀԴՄ- ի հետևյալ կիրառությունը. Ախար հասկացիր. Որքան ջանում եմ՝ էլի մտքերս քո շուրջն են պտտում, *Պարզում են* համառ *ինչպես թիթեռը...* (ՊՍ, 6, 258):

¹¹⁵ Հմմտ. այս ՀԴՄ-ն ուռերենում և անգլերենում. *валиться как муху, мрут как муху, die / drop like flies.*

¹¹⁶ Կան բայական որոշ ՀԴՄ-ներ, որոնք կադապարվում են թե՛ անձի, թե՛ իրի անվամբ. *մեկին // մի բանի վրա նայել ինչպես թուրքը խոզի մոտ վրա, մեկից // մի բանից փախչել ինչպես ժանդարիսից:*

համապատասխան ձևերի միջոցով:

Բայական ՀԴՄ-ներում, ինչպես և ընդհանրապես բայերի դեպքում, եղանակի քերականական կարգը սերտ միասնություն է կազմում ժամանակի քերականական կարգի հետ: ՀԴՄ-ների բայ բաղադրիչների, դրանով իսկ ամբողջական դարձվածքների քերականական ձևերը որոշակի եղանակային իմաստ արտահայտելու հետ մեկտեղ ցույց են տալիս այն ժամանակը, որի ընթացքում կատարվում է տվյալ ԴՄ-ով նշված գործողությունը:

Բայական ԴՄ-ներում, այդ թվում նաև ՀԴՄ-ներում, կերպի քերականական կարգը դրսևորվում է նրանում, որ կերպային տարբերությունները (կատարված, կատարվող և կատարելի) վերաբերում են ողջ ԴՄ-ին:

Բայի արժեքով հանդես եկող ՀԴՄ-ների դեմքի և թվի քերականական կարգերը ևս վերաբերում են ամբողջական դարձվածքներին, թեև արտահայտվում են միայն նրանց բայական բաղադրիչների միջոցով:

Որոշ ՀԴՄ-ներ ունեն խոնարհման լրիվ հարացույց, հմմտ. *սարի պես կանգնել* ՀԴՄ-ն ըստ եղանակների՝ դրական խոնարհումով, միայն առաջին դեմքով, եզակի թվով:

Սահմանական եղանակ - *սարի պես կանգնում եմ* (ներկա)

սարի պես կանգնում էի

(անցյալի անկատար)

սարի պես կանգնելու եմ (ապակատար)

սարի պես կանգնելու էի

(անցյալի ապակատար)

սարի պես կանգնել եմ (վաղակատար)

սարի պես կանգնել էի

(անցյալի վաղակատար)

սարի պես կանգնեցի

(անցյալ կատարյալ):

Ըղծական եղանակ - *սարի պես կանգնեմ* (ապառնի)

սարի պես կանգնեի (անցյալ):

Ենթադրական եղանակ - *սարի պես կկանգնեմ* (ապառնի)

սարի պես կկանգնեի (անցյալ):

Հարկադրական եղանակ – *սարի պես պիպի կանգնեմ* (ապառնի)
սարի պես պիպի կանգնեի (անցյալ):

Հրամայական եղանակ – *սարի պես կանգնիի*
(ապառնի ժ., երկրորդ դ.):

Որոշ ՀԴՄ-ներ բայի դիմավոր ձևերի մեջ ընտրության սահմանափակ հնարավորություններ են ցուցաբերում:

Հմմտ. բայի ժամանակի քերականական կարգի դրսևորումը ՀԴՄ-ներում:

Կարվի նման մեջքի վրա չընկնել, սարի պես թիկունք ունենալ ՀԴՄ-ներին առավել բնորոշ է ներկա և անցյալ ժամանակներով հանդես գալը: Իսկ, ասենք, *կարմիր թելի պես անցնել, ջրի նման գնալ՝ ավազի նման կանգնել, ուռի պես դողալ* ՀԴՄ-ները հիմնականում ներկա ժամանակով են կիրառվում, *մոմի պես այրվել, ջահի պես վառվել, ռումբի պես պայթել* ՀԴՄ-ները՝ մեծ մասամբ անցյալ ժամանակով:

Խոսքաշարում դիտարկենք մի քանի ՀԴՄ-ներ՝ կազմված բայի տարբեր դիմավոր-եղանակային ձևերով:

Հողմի պես թռչում է գալիքը (ԵԶ, 35) (սահմանական եղանակ, ներկա ժ., եզակի թ., երրորդ դ.):

Քաղաքային կառավարությունը թունոտ որդի պես կրծելու է ներսը ամեն տերության (ՍՍ, ԻՇ, 153) (ապակատար ժ., եզ. թ., երրորդ դ.):

Ահա ինչ, ուրեմն նա, որից *փախել էր որպես ժանտախտից*, ցույց տվեց այդքան հերոսություն (ԱՇ, 4, 388) (անցյալի վաղակատար ժ., եզ. թ., երրորդ դ.):

Կայծակի պես դու *շանթեցիր* թշնամուն (ԱԻ, 1, 367) (անցյալ կատարյալ ժ., եզ. թ., երկրորդ դ.):

Քաշվեցինք զգույշ մենք մի կողմ, որ հորձանքը մեզ չճզմե. Կամ *չնչին փաշեղի նման* մեզ հանկարծ *իր հեպ չբանի* (ԵԶ, 3, 16) (ըզձական եղանակ, ապառնի ժ., եզ. թ., երրորդ դ., ժխտական խոնարհում):

Թճո՞ղ, *ձուրթի պես մի կպչի* (ՀԼԴԲ, 395) (հրամայական եղանակ, արգելական հրամայական, եզ. թ.):

Իսկ խխունջը այն, որ նստել է տզրուկի նման մեր քթին, *Նա կանցնի ինչպես սրվերը*, Երբ արևը հասնի զենիթին (ԵՉ, 450) (ենթադրական եղանակ, ապառնի ժ., եզ. թ., երրորդ դ.):

Իսկ ով փքվում է իր մեծ անունով՝ առաքինությունն արտաքսած հոգուց՝ *Նա պիտի ցնդի պղպջակի պես* (ՍՍ, ԻՇ, 312) (հարկադրական եղանակ, ապառնի ժ., եզ. թ., երրորդ դ.) և այլն:

Դարձվածաբանական գրականության մեջ նշվում է, որ «բայական ԴՄ-ների բայ բաղադրիչների քերականական կարգերի՝ սեռի, դեմքի, ժամանակի, հաստատման-ժխտման, եղանակի հակադրություններում դարձվածքների իմաստների և իմաստափոխությունների մի ողջ աշխարհ կա թաքնված»¹¹⁷:

Անդրադառնանք ՀԴՄ-ներում առկա այդօրինակ հակադրություններին:

Ընդհանրապես բայերի կազմության առումով նշենք, որ կան ածանցյալներ, որոնք հատուկ են միայն նրանց: Այդպիսի բայածանցները ներունակ են հակադրություններով օժտելու բայական ՀԴՄ-ները:

Բազմապատկական ածանցյալները (**աւտ, ոտ, տ, կոտ**), դրվելով սկզբնաձևի **-ել** վերջավորությունից առաջ, կարող են էլ ավելի սաստկացնել միևնույն ՀԴՄ-ի իմաստը, հմմտ. *սնդիկի նման կրծել* – *սնդիկի նման կրծոտել*, *օձի պես սիրտը կրծել* – *օձի պես սիրտը կրծոտել*, *հավերի պես մորթել* – *հավերի պես մորթոտել*:

Հմմտ. Մեր ժամանակներում *հավերի պես են մորթոտում* մարդկանց (ԱՇ, 7, 106):

Բաղադրության - քերականական ածանցյալները (**ան, են, ն, չ**), իրենց տեղը զիջելով պատճառական **ցն** ածանցին, քերականական նոր իմաստ են հաղորդում ՀԴՄ-ների գերադաս բայ բաղադրիչներին, դրանով իսկ՝ համեմատական կապակցություններին՝ չեզոք – ներգործական սեռային հակադրություն առաջացնելով:

Հմմտ. *քամու նման թռչել* – *քամու նման թռցնել*, *ածուխի պես սևանալ* – *ածուխի պես սևացնել*, *կարմիր թելի պես անցնել* – *կարմիր թելի պես անցկացնել*:

Հմմտ. Հռետորները *կարմիր թելի պես անցկացնում էին* այն

¹¹⁷ Տես Խ. Գ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 225:

միտքը, որ անվտանգ երթևեկության ապահովումը պահանջում է բոլոր կազմակերպությունների համատեղ աշխատանք (ՀԼԴԲ, 317):

Իսկ, ասենք, *շան պես պոչ պտտեցնել // խաղացնել* (ստորաքարշություն անել) ՀԴՄ-ի բայ բաղադրիչը, ունենալով պատճառական ձևավորում, արտահայտում է չեզոք սեռի իմաստ:

Բայական ՀԴՄ-ներում դրական-ժխտական հակադրությունները նույնպես հետաքրքրություն են ներկայացնում: Բայական որոշ համեմատություն-դարձվածքներ որպես այդպիսին ընդունվում են միայն ժխտական ձևով. *ջանը կրակ ընկածի նման տեղում հանգիստ չմնալ* (հանգիստ չունենալ), *շուն ու կարվի պես յուր չգնալ* (հաշտ չլինել), *ուղտի պոչի պես ոչ երկարել, ոչ կարճանալ* (գործունեության մեջ առաջընթաց չունենալ), *չփակչել ինչպես սափրանան խաչին* (համատեղելի չլինել), *քարի պես չլսվել* (ուշադրության չարժանանալ):

Հմմտ. Եվ ճիչդ, երբ դու ճչալու լինես, - *Քարի պես չի լսվի* (ԵԶ, 3, 536):

Կան բայական ՀԴՄ-ներ, որոնք ձևավորումով ժխտական են, իսկ իմաստով՝ դրական. *կարվի նման մեջքին չգալ* (1. խուսափել վնասից, 2. համառել), *կարծես այս աշխարհից չլինել* (1. պարզամիտ լինել, 2. ցնծության, ինքնամոռացության մեջ լինել):

Հմմտ. Նրանք կարծես իրար չէին տեսնում, *կարծես այս աշխարհից չլինեին*, կարծես մոռացել էին, թե որտեղից են եկել ու կարծես այլևս գնալու տեղ չունեին (ԱՍԿ, 301):

Որոշ ՀԴՄ-ներ, ըստ արտահայտության պլանի, դրական են, իսկ բովանդակային առումով՝ ժխտական. *նոյյան ազոսավի նման լեշով ընկնել* (հատուկ առաքելությամբ մի տեղ գնալ ու չվերադառնալ), *սարի պես կանգնած՝ ուռի պես դողալ* (գործածվում է կատակաբան ոճում, իբրև թե՛ ցանկանալ օգնել, բայց չկարողանալ), *եզան // եզի պես կողքի ընկնել* (իր ասածից չիրաժարվել):

Հմմտ. Ինչ ես եզի պես կողքի ընկել (ՌՀԴԴԲ, 28):

Որոշ բայական ՀԴՄ-ներ ձևավորվել են ոճական հնարներից մեկի՝ հակադրությի հիման վրա, որի դեպքում դարձվածքի այս կամ այն բաղադրիչը, գործածվելով ժխտական իմաստով, դարձվածքն ամբողջությամբ օժտում է հակադիր բովանդակությամբ. *սազել ինչ-*

*պես թամբը կովին (ամենևին չսագել), հերվա ձյան պես անհրա-
ժեշտ լինել (ամենևին անհրաժեշտ չլինել) և այլն:*

Կարվի նման թաթերի վրա ընկնել // մեջքի վրա չընկնել ՀԴՄ-ն գերադաս բայ բաղադրիչի թե՛ դրական, թե՛ ժխտական ձևավորումով արտահայտում է նույն իմաստները. 1. խուսափել վնասից, վտանգից, 2. համառել:

Բայի սեռի քերականական կարգը նույնպես կարևորվում է ՀԴՄ-ների ձևի և բովանդակության փոխհարաբերության առումով: Այս իմաստով ուշագրավ է ՀԴՄ-ների բայ բաղադրիչների չեզոք-ներգործական հակադրությունը: Չեզոք սեռի բայերը, ինչպես գիտենք, կրավորական սեռի բայերի պես մտնում են անանցողական սեռադասի մեջ. ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի կատարման համար չի պահանջվում կրող առարկա¹¹⁸:

Ի տարբերություն չեզոք սեռի բայերի՝ ներգործական և ներգործական-պատճառական բայերն ընդգրկվում են անցողական սեռադասի մեջ՝ արտահայտելով գործողություն, որն անցնում է ենթակայից քերականական խնդրին:

ՀԴՄ-ներում չեզոք-ներգործական հակադրություն կարող է առաջանալ նրանց չեզոք բայ բաղադրիչը ներգործական-պատճառականով փոխարինելով:

*Հմմտ. հողմի պես թռչել-հողմի պես թռցնել
գրաստի պես աշխատել-գրաստի պես աշխատեցնել
աղբյուրի պես հոսել-աղբյուրի պես հոսեցնել
լողակի պես կապտել-լողակի պես կապտեցնել
շան պես սափկել-շան պես սափկեցնել
ձնագնդի պես խոշորանալ-ձնագնդի պես խոշորացնել
տղի պես կաչել-տղի պես կաչնել:*

Հմմտ. Նա տղի պես կպել է այդ գործին, չի ուզում ոչ մի բանի մասին մտածել (ՈՒԴԲ, 664): Ինչո՞ւ դուք վարչական կարգով կոլտնտեսությունների մարմնին դրանց տղի պես կպցրիք (ՔԹ, 462):

Կան չեզոք բայ բաղադրիչով ՀԴՄ-ներ, որոնք չունեն իրենց ներգործականով հակադրությունները. հմմտ. *կոշտ ոսկորի նման կո-*

¹¹⁸ Հմմտ. *կուպրի պես եռալ, մոսի պես հալվել* ՀԴՄ-ների միջինհայերենյան տարբերակները՝ խոնարհված ձևերով, որոնք նույնպես չեզոք են թե՛ ձևավորումով, թե՛ դարձվածային իմաստով. *Ջերդ կուպր եռամ: Ջինչ մոմ հալիմ:*

կորդում մնալ, կարկուտի պես վրա տալ, միկրոբների պես վխտալ, եզան պես համառել, թրջված հավի նման կուչ գալ, նայել ինչպես թուրքը խոզի մսին, կարվի նման մեջքի վրա չընկնել:

Չեզոք սեռի բայերով կազմված որոշ ՀԴՄ-ներ, դարձվածային յուրահատուկ իմաստով պայմանավորված, ներունակ են ներգործական սեռի իմաստ արտահայտելու:

Հմմտ. *նետերի պես թափանցել մինչև սրտի խորքը* (խոր խոցել), *ծանր մուրճի պես հարվածել գլխին* (սաստիկ խոցել / տանջել), *կինոժապավենի պես աչքերի առաջով անցնել* (մանրամասնորեն հիշել), *ածան հավի պես կշկշալ* (իր անելիքը հոչակել), *արճիճի // քարի պես ծանրանալ // նստել սրտին // կրծքին* (խիստ տանջել):

Հմմտ. Տիրեց ծանր լուռություն, որ թվում էր՝ *արճիճի պես նստեց* նրանց *կրծքին* (ԴԴ, 369):

ԴՄ-ների առանձնահատուկ բնույթից է բխում նաև ներգործական սեռի բայերի՝ դարձվածքների կազմում չեզոք սեռի իմաստ արտահայտելը:

Հմմտ. *երդումը ջրի պես խմել* (երդմանը շատ թեթև վերաբերվել), *օձի նման հազար անգամ շապիկ փոխել* (տառապել), *Ղազարոսի նման երգել* (երկերեսանի լինել), *ուղտի նման ոխ պահել* (հիշաշար լինել), *ասես ինչ-որ բան կորցրած լինել* (մոլորված լինել), *գրանիտի // քարի պես ճնշել սիրտը* (տառապել), *կարծես սեփական մարմնից // մսից պոկել* (չափազանց ժլատ լինել):

Հմմտ. Թվանշան դնելիս էլ այնքան ժլատ էր, որ *կարծես սեփական մարմնից պոկեր* (ԲՍ, 207):

Ներգործական սեռի բայ բաղադրիչներով ՀԴՄ-ներում վ քերականական ածանցի ավելացումով կարող է փոխվել բայի սեռը:

Հայտնի է, որ կրավորական սեռի բայերը ցույց են տալիս գործողություն, որը խնդրից անցնում է ենթակային՝ ի հակադրություն ներգործական սեռի: Կրավորական ձևավորումով ՀԴՄ-ներում առավել ցայտուն են արտահայտված պատճառահետևանքային կապերը:

Հմմտ. *երազի պես հիշել- երազի պես հիշվել*
տաշեղի պես քշել- տաշեղի պես քշվել
թալիսմանի պես պահել- թալիսմանի պես պահվել

*խարանի պես դրոշմել- խարանի պես դրոշմվել
հալած յուղի պես ընդունել- հալած յուղի պես ընդունվել
ներքնաշորի // թաշկինակի պես հաճախակի փոխել-
ներքնաշորի // թաշկինակի պես հաճախակի փոխվել
փունը պոպոքի միջի պես պահել- փունը պոպոքի միջի պես
պահվել*

*շան նման հալածել - շան նման հալածվել*¹¹⁹:

Հմմտ. Ես էլ շան նման հալածվում եմ այն խաղում, որ կյանք է կոչվում (ՎԱ, Գ, 8):

Որոշ դեպքերում ՀԴՄ-ների գերադաս բայ բաղադրիչները հատկանշվում են կամ ներգործականությամբ, կամ կրավորականությամբ:

Հետևյալ ՀԴՄ-ները բնութագրվում են ներգործական սեռային իմաստով. *գայլի պես լափել, ջրի պես գիտենալ, թութակի պես կրկնել, օձի պես խայթել, խոզի պես ուտել, շան պես հասկանալ, ուրվականների նման հետապանդել, (մեկին) իր ուզածի պես խաղացնել, խաբել ինչպես մանկանը իր խաղալիքով, դանակի հարվածի պես խայթել (սիրտը):*

Հմմտ. Այս խոսքերը *դանակի հարվածի նման խայթեցին* Հերյանի *սիրտը* (ԿԶ, 348):

Հրապուրվել ինչպես երեխան խաղալիքով ՀԴՄ-ն հատկանշվում է կրավորական սեռային իմաստով:

Ստորև բերվող ՀԴՄ-ները կաղապարվում են միայն կրավորական Վ սեռածանց ունեցող գերադաս բայ բաղադրիչներով՝ հանդես գալով իբրև կրավորակերպ չեզոք կառույցներ.

յուղի պես հարթվել, հարդի պես ծախվել, քարի պես քաղվել՝ հողի պես մաղվել, փորրիչեյան դատարկության պես (երբեք) չլցվել:

Հմմտ. Կա մի վիթխարի անորոշություն, Որ փորրիչեյան դատարկության պես Երբեք չի լցվում (ՊՍ, 2, 106):

¹¹⁹ Ինչպես նշվում է լեզվաբանական գրականության մեջ «Կրավորական սեռի բայերի ցույց տված գործողություն կատարողը հաճախ տվյալ նախադասության մեջ որևէ ձևով չի արտահայտվում» (տես Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, էջ 146):

3. Մակբայի արժեք ունեցող ՀԴՄ-ներ

Այս կարգի կապակցություններն ունեն անվանողական դեր: Մակբայական ՀԴՄ-ները հատկանշվում են որոշ յուրահատկություններով, որոնք պայմանավորված են ոչ միայն մակբայի խոսքի-մասային առանձնահատկություններով, այլև այդօրինակ դարձվածքների ձևախմաստային բնութագրով:

Ունենալով նյութական բովանդակություն՝ մակբայը դասվում է չթեքվող խոսքի մասերի շարքը:

Հատկանշային-մակբայական իմաստի ՀԴՄ-ները ժամանակակից հայերենում քիչ թիվ չեն կազմում, սակայն այդօրինակ կապակցությունները կազմվում են հիմնականում առանց մակբայների մասնակցության: Մասնագիտական գրականության մեջ այս իմաստով նշվում է, որ «եթե բառ-մակբայների դեպքում ուղղակի կապ և փոխկապվածություն կա նրանց բառական ու ձևաբանական (մակբայական) նշանակությունների միջև, ապա դարձվածքների այդպիսի համընկնումը պարտադիր չէ»¹²⁰:

Ժամանակակից հայերենում բուն մակբայներով կազմված ՀԴՄ-ներ գրեթե չկան: Եզակի այդպիսի օրինակներից է *նեղի // քամու պես արագ* տարբերակային ՀԴՄ-ն¹²¹:

Մակբայական ՀԴՄ-ների հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանց ձևավորմանը մասնակցում են գերազանցապես այլ խոսքի մասեր: Այնուամենայնիվ, ՀԴՄ-ներում որպես գերադաս բաղադրիչներ երբեմն պատահում են այնպիսի բառեր, որոնք համատեղում են առարկայի և գործողության հատկանիշների իմաստները՝ շարահյուսական առավել ծավալուն կառույցներում հանդես գալով կամ իբրև ածականներ, կամ իբրև մակբայներ: ՀԴՄ-ների այդպիսի բաղադրիչների քերականական իմաստները երկփեղկվում են ածականականի և մակբայականի միջև, այլ կերպ ասած՝

¹²⁰ Տե՛ս Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 161:

¹²¹ Հմմտ. մակբայ գերադաս բաղադրիչներով կազմված այդպիսի ՀԴՄ-ներն արևմտահայերենում. *նեղի պես արագ, վայրկեանի պես արագ, միջատի մը չափ արագ, սլաքի պես շեշտ*: Սակայն այդ կարգի ՀԴՄ-ներն առավել հաճախ կիրառվում են առանց մակբայների (միազգազաթ կառույցներով) թե՛ արևելահայերենում, թե՛ արևմտահայերենում: Հմմտ. Նա *կայծակի նման* անցնում էր մեկ փողոցից դեպի մյուսը (ԲՄ, 334): Անմիջապես հեռացավ սակայն, իր ներկայությունը ավելորդ նկատելով, որ նույն պահուն իսկ դուռը կրկին կհնչեր, ձգելով, որ *կայծակի պես* ներս նետվի կին մը (ՇՇ, 39):

համատեղվում են խոսքիմասային տարբեր արժեքները¹²²:

Այդպիսի բառեր են՝

լուռ -1. լռող, չխոսող, անտրտունջ (ած.), 2. անմունջ կերպով (մկբ.).

1. *ծկան // քարի // գերեզմանի պես լուռ* (համառորեն լռող) մարդ,

2. *ծկան // քարի // գերեզմանի պես լուռ* (համառորեն անտրտունջ կերպով) կրել վիրավորանքներ,

ազապ -1. ինքնիշխան (ած.), 2. ազատորեն (մկբ.).

1. *(դաշտի) քամու // թռչունի // երկնքի թռչունների պես ազապ* (անհոգությամբ ինքնիշխան) մարդ,

2. *(դաշտի) քամու // թռչունի // երկնքի թռչունների պես ազապ* (անհոգ ազատությամբ) ապրել,

տխուր -1. տխրություն արտահայտող (ած.), 2. տրտում կերպով (մկբ.).

1. *լաց լինելու չափ տխուր* (չափազանց տխրալի) խոսքեր,

2. *լաց լինելու չափ տխուր* (խիստ տրտում կերպով) խոսել,

ուղիղ -1. հավասար կերպով որևէ կողմ ձգվող, շիտակ (ած.), 2. ուղիղ կերպով (մկբ.).

1. *քանոնի պես ուղիղ* (խիստ ուղիղ) քայլ,

2. *քանոնի պես ուղիղ* (խիստ ուղիղ կերպով) կանգնել,

1. *նեպի սլացքի պես ուղիղ* (չափազանց ուղիղ) հարված,

2. *նեպի սլացքի պես ուղիղ* (չափազանց ուղիղ՝ անշեղորեն) թռչել:

Հմնտ. նաև իմաստաարժեքային ածական // մակբայ համատեղումով երկգազաթ հետևյալ ՀԴՄ-ները. *կաղնու նման անդրդվելի* (1. խիստ տոկուն, անզիջում - ած., 2. խիստ տոկուն՝ անզիջում կերպով - մկբ.), *սարի պես անսասան* (1. խիստ կայուն - ած., 2. անդրդվելիորեն, հաստատուն կերպով - մկբ.), *պապի // պարսպի // ժայռի պես ամուր* (1. խիստ ամուր - ած., 2. խիստ ամուր կերպով - մկբ.), *տկլոր ոնց որ Ադամը* (1. անգիտակից մերկ - ած., 2. անգիտակից մերկությամբ - մկբ.):

¹²² «Խոսքիմասային տարաբեկությունն այնպիսի քերականական իրողություն է, որտեղ առկա են արտահայտության պլանում (ծևով) չտարբերակվող, իսկ բովանդակության պլանում (իմաստով) հակադրվող միավորների խմբեր: ԿԿ-ներում խոսքիմասային տարաբեկությունը հատկանշվում է ձևավորման համաժամանակյա բնույթով» (տե՛ս Լ. Մ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 242-243):

Հմմտ. ածական // մակբայ երկարժեքություն ցուցաբերող ՀԴՄ-ների հետևյալ իրացումները մակբայական արժեքով.

Պատի պես ամուր շարվեցեք կանգուն (ԱԻ, 2, 275): Օ՛, սիրտ իմ, սիրտ իմ, տոկա՛ն ու կանգնի՛ր *ժայռի պես ամուր* (ԱԻ, 1, 63): Մի անգամ, *Տկոր, Ոնց որ Ադամը*, Վազել էր Ֆրեյլիհի ետևից – Ինքը Հիֆերդինգը (ԵԶ, 3, 184):

Մակբայական – պարագայական կիրառությամբ կարող են հանդես գալ բայական (դերբայական) կապակցությունները: Այդպիսի ՀԴՄ-ներում իբրև գերադաս բաղադրիչներ հանդես են գալիս անորոշ և հարակատար դերբայները: Վերջիններս ակտիվ միջոց են ընդհանրապես բայական դարձվածքները մակբայաբար կիրառելու մեջ¹²³:

Հմմտ. նեպի նման սլանալ - նեպի նման սլանալով

սոխակի պես երգել - սոխակի պես երգելով

խենթի պես սիրել - խենթի պես սիրելով

ծկան պես թպրտալ - ծկան պես թպրտալով

թրջված մկան պես կուչ գալ - թրջված մկան պես կուչ գալով

դանակի պես կտրել - դանակի պես կտրելով և այլն:

Հմմտ. Վարիչը *դանակի պես կտրեց* խնդրանքս՝ պատճառաբանելով, որ փող չունի (ՈւԴԲ, 162): - Սխալ է,- զրնգաց մի արծաթահնչյուն ձայն՝ *դանակի պես կտրելով* հոռետորի մտքերը (ՆԶ, 60):

Մակբայաբար գործածվում են նաև բայական ՀԴՄ-ների՝ հարակատար դերբայով կաղապարված կառույցները:

Հմմտ. քարի պես ընկնել- քարի պես ընկած

փյունիկի պես մոխիրներից հառնել- փյունիկի պես մոխիրներից հառնած

ճակնդեղի պես կարմրել- ճակնդեղի պես կարմրած

խեղդվողի պես ձեռքը փրփուրին գցել- խեղդվողի պես ձեռքը փրփուրին գցած

արձանի պես կանգնել- արձանի պես կանգնած

մեռելի պես գունաւորվել- մեռելի պես գունաւորված և այլն:

Հմմտ. Արտոն *մեռելի պես գունաւորեց* (ՔԹ, 500): Եվ վազեց կպավ պատին՝ *մեռելի պես գունաւորված* (ՆԴ, 78):

¹²³ Հմմտ. Խ. Գ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 276:

Բայական ՀԴՄ-ները մակբայաբար կարող են գործածվել միա-
ժամանակ թե՛ անորոշ դերբայի գործիական հոլովածնով, թե՛ հա-
րակատար դերբայով հանդես գալով:

*Հմմտ. շան պես հոգնել- շան պես հոգնելով // հոգնած
վանդակն ընկած գազանի պես դեսուդեն ընկնել - վանդակն ըն-
կած գազանի պես դեսուդեն ընկնելով // ընկած
մեռելի պես քնել- մեռելի պես քնելով // քնած
լեռան պես կանգնել- լեռան պես կանգնելով // կանգնած
ջայլամի պես գլուխն ավազների մեջ թաղել- ջայլամի պես
գլուխն ավազների մեջ թաղելով // թաղած:*

Այդպիսի կիրառությունների մասին մասնագիտական գրակա-
նության մեջ իրավամբ նշվում է, որ նրանք «չնայած սերիչ կաղա-
պարների նկատմամբ ցուցաբերում են իմաստաարժեքային հա-
կադրություններ, այնուամենայնիվ նրանց հետ չեն կազմում ձևա-
բանորեն տարարժեք կապակցությունների շարքեր, քանի որ լիո-
վին անկախ կապակցական միավորներ չեն դիտվում և գործածա-
կան են միայն խոսքային տվյալ իրադրության շրջանակներում»¹²⁴:

Ժամանակակից հայերենի ՀԴՄ-ներում մեծ թիվ են կազմում
իմաստաբանորեն և գործառնապես մակբայներին հարաբերակցվող
միագագաթ կառույցները¹²⁵: Թերիմաստ և լիիմաստ բառերով կա-
ղապարված այդօրինակ ՀԴՄ-ները երբեմն անվանվում են «նվա-
զագույն վերլուծական կառույցներ»՝ որպես բառաքերականական
ամբողջական բնութագիր ունեցող կապակցություններ¹²⁶: Նրան-
ցում համեմատության կապերի հետ հանդես է գալիս գոյականը
կամ փոխանվանաբար գործածված որևէ բառ (ածական կամ դեր-
բայ, հատկապես՝ հարակատար դերբայ):

¹²⁴ Տեն Լ. Մ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 225:

Ուշագրավ է նաև Վ. Պ. Ժուկովի դիտարկումն այս առումով, որ «որոշ բայական
դարձվածքների՝ մակբայականների վերածվելը կատարվում է աստիճանաբար, եր-
կար ժամանակի ընթացքում, ըստ որում, կան բայական դարձվածքներ, որոնց բառա-
քերականական վերածնունդը՝ մակբայացումը, դեռևս չի ավարտվել. դրանք ներառում
են բայական և մակբայական զուգահեռ արժեքներ» (հմմտ. *как нить дать, как ни в чем
не бывало*), (տե՛ս В. П. Жуков, Семантика фразеологических оборотов, էջ 35-36):

¹²⁵ Հմմտ. Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 159-160, Ալ. Ս. Մարգարյան, նշվ. աշխ., էջ
318, Խ. Գ. Բադիկյան, Դարձվածային ոճաբանություն, էջ 24-25:

¹²⁶ Հմմտ. А. Н. Кожин, Ю. П. Рухлов, Неполнозначные слова в структуре фразеологизма,
Сб. «ВСФЕ», ч. I, էջ 38:

Հմմտ. *հոգու չափ, ուրուրի պես, կաթվածի նման, ակնթարթի պես, խաղ ու պարի պես, ստրուկի նման, մուրացկանի պես, անկոչ հյուրի պես, գող կախվի պես, պահապան հրեշտակի պես, թափառական շան նման, խորամանկ աղվեսի պես, անոթի շան նման, դեզին նստած շան պես, աղբյուրի ակը փակած վիշապի պես, ծովն ընկած մարդու նման, կարասն ընկած մկան պես, պոչը կտրած շան պես, թրջված մկան պես*¹²⁷:

Փոխանուն անականները համատեղում են հատկանիշի և առարկայի գաղափարը՝ ձեռք բերելով գոյականի քերականական հատկանիշներ: Համեմատության կապերի խնդիրներ դառնալով՝ դրանք հոլովվում են **ի** հոլովմամբ:

Հմմտ. *շանթահարի պես, կաթվածահարի պես* և այլն:

Ի հոլովմամբ է հանդես գալիս նաև փոխանվանաբար գործածված հարակատար դերբայը¹²⁸:

Հմմտ. *խայթվածի պես, փշրվածի նման, բևեռվածի // մեխվածի պես, հարբածի պես, ջուրը կոխած-հանածի պես, օձի կծածի պես, փայտ կուլ տվածի նման, գայլի բերանն ընկածի պես, գողության մեջ բռնվածի պես, մի բան կորցրածի պես, իր ուզածի պես* և այլն:

Պատահում են մակբայական ՀԴՄ-ներ, որոնց գոյական բաղադրիչները եզակի թվով կիրառություն չունեն. հանդես են գալիս միայն հոգնակի թվով. հմմտ. *ինչպես առանց ձեռքերի, ասես նոտաներով*¹²⁹:

Կան մի շարք ՀԴՄ-ներ, որոնք կաղապարվում են միայն եզակի թվով. *ծովի պես, վարդի պես, կաթվածի նման, ակնթարթի պես, կրակի պես, մի մարդու պես, խաղ ու պարի պես*:

Այդ կարգի որոշ կապակցություններում էլ եզակի-հոգնակի հակադրությունը չեզոքանում է. դարձվածային տարբերակներ են կազմվում. *գետի // գետերի պես, ուխտյալ թշնամու // թշնամիների պես* և այլն:

Մակբայական որոշ ՀԴՄ-ներում կարևորվում է ստացական հո-

¹²⁷ Հմմտ. այս ՀԴՄ-ն անգլերենում. *like a drowned mouse*.

¹²⁸ Անորոշ դերբայը հոլովվում է ինքնին. որպես գործողության անուն՝ այն ներառում է նաև գոյական անվան հատկանիշներ՝ հոլովվելով **ու** անվանական հոլովմամբ. *աչք թարթելու պես*:

¹²⁹ Հմմտ. այս ՀԴՄ-ի ռուսերեն համարժեքը. *как по нотам*.

դերի գործածությունը: Այդօրինակ կապակցությունները, գործածվելով բայի դիմավոր ձևերի հետ, դեմքով համաձայնում են նրանց:

Հմմտ. *Ուզածիս // Ուզածիդ // Ուզածի (Ուզածին) պես եմ // ես // է վարվում: Քեֆսս // Քեֆդ // Քեֆը փվածի պես եմ // ես // է գործում:*

Լիիմաստ և թերիմաստ բառերով կազմված մակբայական ՀԴՄ-ներում առանձնանում են այն կառույցները, որոնք բարդ ստորադասական նախադասության ստորադաս բաղադրիչի ձևավորում ունեն, սակայն որոնք խոսողների կողմից դադարել են գիտակցվելուց իբրև բարդ նախադասության մասեր և կիրառվում են որպես կառուցվածքով ու իմաստով լիարժեք անվանողական ԴՄ-ներ¹³⁰:

Հմմտ. *ինչպես ափ ներված ձուկ, ինչպես ջուրը սագի փեփուրների վրայից, ինչպես երկրաշարժ // մրրիկ // փոթորիկ, ինչպես առանց ձեռքերի, ասես որոտ պարզ երկնքից* և այլն:

Գոյականի գործիական հոլովը գործուն է ոչ միայն դերբայները, այլև գոյականները մակբայաբար կիրառելու հարցում: Այն կարևորվում է նաև միագագաթ մակբայական ՀԴՄ-ներում, հմմտ. *ասես նուրաներով, ասես հրաշքով, ասես կախարդանքով, ասես մոգական գավազանով // ~ ի հարվածով, շղթայական ռեակցիայի ձևով:*

Ուշագրավ է, որ ՀԴՄ-ներում այդպիսի հնարավորությամբ օժտված է նաև գոյականի ներգոյական հոլովը, ըստ որում, նրանցում գոյականը դրվում է հիմնականում եզակի թվով, հմմտ. *ասես հեքիաթում, ասես երազում*¹³¹:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ ՀԴՄ-ներում ածական // մակբայ խոսքիմասային արժեքների համատեղում է առկա հենց միագագաթ կառույցներում, ընդսմին՝ մեկ գոյականով և համեմատության կապով ձևավորված կապակցություններում: Այդպիսի ՀԴՄ-ներում գոյականը հանդես է գալիս եզակի թվով:

Ձևաբանորեն երկարժեք այդօրինակ ՀԴՄ-ները խոսքից դուրս հատկանշվում են բազմիմաստությամբ, խոսքային միջավայրում՝ շարահյուսական տարբեր (որոշչային և պարագայական) գործառույթներով.

¹³⁰ Հմմտ. А. М. Чепасова, Л. А. Ивашко, Проблема структурности фразеологического значения, Сб. «Фразеологическое значение в языке и речи», էջ 28:

¹³¹ Նույնը վերաբերում է նաև տրականի՝ ՀԴՄ-ների մեջ պարագայական իմաստով գործածությանը, հմմտ. *ինչպես իր փանը:*

- կրակի նման* - 1. առույգ, աշխույժ, շարժուն, թուլուուն (ած.),
2. ճարպկորեն, շատ արագ (մկբ.).
- մազի չափ* - 1. շատ փոքր, քիչ, աննշան, չնչին (ած.),
2. բնավ, բոլորովին, ոչ մի կերպ (մկբ.).
- ուրագի պես* - 1. միայն իր մասին մտածող (ած.),
2. ուրիշների մասին չմտածելով, ամեն ինչ իրեն վերցնելով (մկբ.).
- սարի պես* - 1. վիթխարի, հսկա (ած.),
2. անհողդողդ, անսասան կերպով (մկբ.).
- վարդի պես* - 1. ջքնաղ, գեղեցկադեմ (ած.),
2. բարվոք, բարեկեցիկ կյանքով (մկբ.):

Այսպիսով՝

1. Ինչպես ԴՄ-ներն ընդհանրապես, այնպես էլ ՀԴՄ-ները մասնավորապես, հարաբերակցվում են այս կամ այն խոսքի մասին՝ պայմանավորված իրենց իմաստային, գործառական և բառաքերականական բնութագրով: Այս շարքում առաջին պլան է մղվում խնդրո առարկա կապակցությունների իմաստային գործոնը՝ ընդհանուր դարձվածային իմաստը, որով էլ ձևավորվում է այս կամ այն խոսքի մասի արժեքը:

2. Ժամանակակից հայերենում առկա են ածականական, բայական և մակբայական ՀԴՄ-ներ: Հետաքրքրություն են ներկայացնում ոչ անվանողական արժեքով եզակի այն կառույցները, որոնք խոսքը երանգավորող հատկանիշով են օժտված և տարբերակվում են իբրև եղանակավորող ՀԴՄ-ներ:

3. Ժամանակակից հայերենի ածականական ՀԴՄ-ներում որպես քերականորեն գերադաս բաղադրիչ հանդես է գալիս ածականը:

Ենթակայական և հարակատար դերբայներով կազմված որոշ կապակցություններ խոսքաշարում կարող են ունենալ ածականական-որոշային կիրառություն:

Ածականի արժեքով ՀԴՄ-ներում զգալի կշիռ ունեն միագագաթ կապակցությունները:

4. Գործածության մեծ հաճախականություն ունեն բայի արժեքով հանդես եկող ՀԴՄ-ները, որոնց կառուցվածքում մշտապես առկա է բայը: Վերջինս աչքի է ընկնում քերականական կարգերի

առատությամբ: Բայական ՀԴՄ-ների անվանական բաղադրիչներին բնորոշ են առկայացման, թվի, հոլովի, դիմային առման, անձի և իրային, իսկ բայ լրացյալին՝ սեռի, դեմքի, թվի, ժամանակի և եղանակի քերականական կարգերը:

Բայի խոսքիմասային նշանակությամբ արժեքավորվող ՀԴՄ-ներն ի հայտ են բերում չեզոք-ներգործական, ներգործական-կրավորական, հաստատական-ժխտական և այլ հակադրություններ, որոնք կարևոր դեր են կատարում նրանց դարձվածային արժեքի, ինչպես նաև վերաիմաստավորման հարցում:

5. Մակբայի արժեքով առանձնացող ՀԴՄ-ները հիմնականում ձևավորվում են առանց մակբայների մասնակցության:

Հարակատար և անորոշ դերբայներով կաղապարված որոշ կապակցություններ օժտված են մակբայաբար կիրառվելու հատկանիշով:

Ժամանակակից հայերենում որպես մակբայական ՀԴՄ-ներ հանդես են գալիս մեծ թվով միագագաթ կապակցություններ, որոնք իմաստաբանորեն բնութագրվում են գործողության կամ հատկանիշի հատկանիշ արտահայտելով: Այդօրինակ կառուցներում առկա անվանական և բայական անդամներն արտահայտում են իրենց ձևաբանական հատկանիշները (թիվ, հոլով, դիմային առում և այլն):

բ) ՀԴՄ-ների շարահյուսական գործառույթները

Ինչպես բոլոր ԴՄ-ները, այնպես էլ դարձվածային համեմատությունները չեն կարող գոյություն ունենալ առանց ուրիշ բառերի հետ ունեցած կապի: ՀԴՄ-ները շարահյուսական մակարդակում տարբեր գործառույթներ են ստանձնում:

Տարբեր խոսքիմասային նշանակություններով հատկանշվող ՀԴՄ-ները շարահյուսական մակարդակում դրսևորում են առավել կամ պակաս ակտիվություն¹³²:

¹³² Եզակի են եղանակավորող ՀԴՄ-ները, որոնք շարահյուսական մակարդակում կատարում են միջանկյալ կապակցությունների (նախադասությունների) դեր: Որպես միջանկյալ կապակցություններ գործածվող ՀԴՄ-ները նախադասության անդամ չեն դառնում, վերջինիս հետ քերականորեն կապված չեն և ունեն խոսքը երանգավորող գործառույթ:

Հմմտ. էս բոլորը քիչ էր կարծես, էնքան արիր, *սասրանի պես*, որ գրեցի մեծիս պարսավ (ՀԹԸ, 210):

Նախադասությունների կառուցվածքով ՀԴՄ-ներում ևս կան եղանակավորող կապակցություններ, որոնք շարահյուսական մակարդակում դիտվում են իբրև միջանկյալ

Առհասարակ դարձվածաբանական գրականության մեջ շեշտվում է, որ «ԴՄ-ների որոշակի շարքերի և բառերի շարահյուսական գործառույթների համընկնումը ԴՄ-ների՝ բառերի հետ նույնանալու ապացույց չէ, քանի որ նախադասության այս կամ այն անդամի դերում կարող են հանդես գալ ոչ միայն բառերն ու ԴՄ-ները, այլև ոչ դարձվածային բնույթի ԿԿ-ները, նույնիսկ բառերի ազատ կապակցությունները»¹³³:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ որոշակի տեքստում բառի և դարձվածքի շարությային հարաբերությամբ է կազմվում բառադարձվածային համատեքստը¹³⁴:

ԴՄ-ների համատեքստային կապերի դրսևորման առումով մատնանշվում են հետևյալ տիպերը.

1. նեղ համատեքստ, այսինքն՝ նախադասություն,

2. լայն համատեքստ, այսինքն՝ ամբողջական որևէ ստեղծագործություն կամ ստեղծագործության գլուխ¹³⁵:

Անվանողական ՀԴՄ-ներն իրացվում են նախադասության մեջ (նեղ համատեքստում) և հանդես են գալիս որպես նրա մեկ անդամ՝ շարահյուսորեն մասնավորվելով գործառական այս կամ այն դերով:

ԴՄ-ների և բառերի գործառական ընդհանրությունն արտահայտվում է նրանց համար այս կամ այն խոսքի մասի բառաքերականական ընդհանուր իմաստի առկայությամբ, որի հետևանքով էլ համընկնում են նրանց շարահյուսական գործառույթները¹³⁶:

Անդրադառնանք ՀԴՄ-ներին բնորոշ շարահյուսական կիրառություններին:

1. Ածականական ՀԴՄ-ների շարահյուսական գործառույթները

Ընդհանրապես ածականական ԴՄ-ները շարահյուսական մա-

նախադասություններ՝ հաղորդակցական արժեքով:
Հմնտ. Անտարակոյս, Հասանին առյուծի բաժին է վիճակվել, *մոր կաթի պես անուշ...* (ՊՊ, 5, 152):

¹³³ Տե՛ս Ա. Վ. Кунин, Английская фразеология, էջ 19:

¹³⁴ Տե՛ս В. П. Жуков, Русская фразеология, էջ 251:

¹³⁵ Հմնտ. А. В. Кунин, Англо-русский фразеологический словарь, М., «Сов. энциклопедия», 1967, էջ 1239:

¹³⁶ Տե՛ս А. В. Кунин, նշվ. աշխ., էջ 1235:

կարդակում հանդես են գալիս ածականին հատուկ բոլոր գործածություններով:

Ածականական ՀԴՄ-ները նախադասության կառուցվածքային դիտվածքում ամենից հաճախ հանդիպում են որոշչի և ստորոգելիի գործառական դերերով:

Ժամանակակից հայերենի **լրացական-որոշչային գործառույթ** ունեցող ՀԴՄ-ները խոսքաշարից դուրս ունեն անկախ արժեքներ:

Ածականական ՀԴՄ-ները որոշչի (գոյորոշ) գործառույթով հանդես են գալիս թե՛ նախադաս, թե՛ հետադաս դիրքերում: Վերջինս աղերսվում է կան սովորական, կան շրջուն շարադասության հետ:

Որպես որոշիչ գործածվող ածականական ՀԴՄ-ները մեզանում մեծ մասամբ նախադաս կիրառություն ունեն¹³⁷: Սովորական շարադասությամբ հանդես եկող ածականական-որոշչային ՀԴՄ-ները դրվում են որոշյալից առաջ:

Հմմտ. Նրա գեղակարկառ, *Սոսու պես սլացիկ* մարմինը Սարսուռն ոստումի պիք է դառնում (ԿԶ, 72): Նա է միշտ ուրախ տուն դարձողներից, ով *վարդի նման սիրուն* կին ունի (ԱԻ, 2, 265): Դու *լույսի պես մաքուր* մարդ ես (ՔԹ, 421):

Ինչպես ազատ կիրառության մեջ ածականների, այնպես էլ ածականական ՀԴՄ-ների պարագայում որոշիչ-որոշյալի կապակցության միջև քերականական համաձայնություն գոյություն չունի, նրանց կապակցությունը առդրական է. անկախ որոշյալի թվից, հոլովից, որոշչային ՀԴՄ-ն միշտ անփոփոխ ձևով է գործածվում:

Հմմտ. Միրոյի՝ *գրանիպի պես ամուր* այդ մարդու պատմությունը 1915-1920 թվականների արևմտահայության ճակատագրի կարդիոգրամն է (ՎՊ, 458): Նա ուզում էր համբերությունից հանել *սպառաժի նման լուռ*, ինքն իր մեջ ամփոփված այդ տղային (ԱՍՈ, 511):

Մերթընդմերթ նրա շուրթերից պոկվում էին *արճիճի պես ծանր* բաներ (ՔԹ, 96): Բայց *սալոանի պես խորամանկ* տղաներ էին (ԲՍ, 43):

Ածականական միագագաթ ՀԴՄ-ները խոսքային միջավայրում

¹³⁷ Ռուսերենում ածականական-որոշչային ՀԴՄ-ները հետադաս են լինում (տե՛ս Հ. Ղազարյան, Գունանիշ բաղադրիչով դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, էջ 70): Անգլերենում նախադաս որոշչի դերում հանդես եկող ՀԴՄ-ները կորցնում են բաղադրամասային բոլոր հատկանիշները և վերածվում բարդ բաների (հմմտ. А. В. Кунин, նշվ. աշխ., էջ 164):

նույնպես կարող են հանդես գալ որոշային դերով:

Հմմտ. Բռիլիանտի, այսինքն՝ *ադամանդի պես բժշկուհի է* (ՔԹ, 167): Զահել, *մարալի պես* աղջիկների ուշքը գնում է ընկեր Մոկացյանի համար (ն. տ., 85): Մի քանի սև փողերի համար *սարի պես* տղամարդը շուռ անցավ (ՊՊ, 5, 51):

Ընդհանրապես շրջուն շարադասություն ունեցող որոշիչը տրոհվող լրացում է: Վերջինս պայմանավորված է հայերենի ճկուն շարադասությամբ: Նրա միջոցով ընդգծվում, շեշտվում է որոշիչ-որոշյալ կապակցությունը: Որոշչային ՀԴՄ-ների գործածությունը հետադաս դիրքում մեզանում, նրանց սովորական շարադասության համեմատությամբ, գործառական հաճախականություն չունի¹³⁸:

Հմմտ. Ու մուսթ էր շուրջս և խավար անհուն, Իմ խաբված սրտում մթամած գիշեր՝ Եվ պաղ, և ծանր, *ծանր որպես քար* (ՎՏ, 96): Նրա դուրս գնալուց հետո ներս մտավ մի ծերունի՝ *չոր ու ցամաք որպես կմախք* (ՐՍ, 58): Ատում եմ սերը՝ *մահի պես անգույթ* (ԱԻ, 2, 53):

Որոշիչն, ինչպես գիտենք, լրացնում է ենթակային կամ գոյականական որևէ այլ անդամի՝ արտահայտելով նրա որակական ու քանական հատկանիշները. դրվելով որևէ գոյականական անդամի վրա՝ որոշիչն արտահայտում է նրա որակը, որպիսությունը, չափն ու քանակը:

Հմմտ. որոշչային միագագաթ ՀԴՄ-ների կիրառությունները՝ գոյականական անդամի չափի հատկանշային իմաստով. Ուզում է իր *ասեղի ծայրի չափ* ատամով իր թշնամուց վրեժ առնել (ՊՊ, 5, 122): Մելիք Մրտոն իր *ծովի չափ* կարողությունը փչացրեց (ն. տ., 184):

Ածականի խոսքիմասային արժեք ունեցող ՀԴՄ-ները նախադասության մեջ հանդես են գալիս նաև բաղադրյալ ստորոգյալի կազմում՝ ստանձնելով **ստորոգելի գործառույթ**:

Հմմտ. **ածականական ՀԴՄ + օժանդակ բայ** կաղապարով բաղադրյալ ստորոգյալի իրացումները խոսքային միջավայրում:

Եվ ես քեզ հետ եմ՝ հմայքիդ գերի, *հորհրդավոր ես գիշերի նման* (ՎՏ, 246): Մյուսները *քարի նման լուռ էին* (ՔՍ, 111): Ծառանում են այն հարցերը, որոնց հանդեպ տիրացուական ինտելիգեն-

¹³⁸ Ժամանակակից ֆրանսերենի ածականական ՀԴՄ-ները որոշչային-լրացական դերում մեծ մասամբ գործածվում են հետադրական դիրքում, լինում են տրոհվող որոշիչ (տե՛ս А. Г. Назарян, Фразеология современного французского языка, էջ 117):

ցիայի միտքը մուլար ու երկչոտ դողում է, ահով բռնված տեսնում է այն, ինչ չկա և չի տեսնում այն, ինչ *ակնբախ է արևի նման* (ՎՏ, 317): Եվ մեր համր հոգին *ծանր էր որպես քար* (ԵՉ, 86): Ներքևում ջրերը պարող *Լեդի են* երևի *ոնց որ մաղձը* (ԵՉ, 3, 238):

Միագագաթ ածականական ՀԴՄ-ները նույնպես կարող են ունենալ ստորոգելիի գործառույթ: Այս առումով մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ երբ կապն ու կապի խնդիրը ստորոգելիական վերադիր են դառնում հատկանշային նշանակությամբ, ենթադրում են ոչ թե զեղչված լրացյալ բայ, այլ գոյական¹³⁹:

Հմմտ. Արդյոք հիշում ես, անտառ էր, առու, *հեքիաթի պես էր, երազի նման* (ՎՏ, 54): Մկանունքներս այժմ տես, *երկաթի պես են* (ԱՇ, 2, 148): *Վայրի վարազի պես էր* անտառապահ Պանինը (ԱԲ, 4):

Ընդհանրապես անվանական բաղադրյալ ստորոգյալի կազմում կարող են հանդես գալ *թվալ, երևալ, լինել* և այլ վերացական բայեր: Ածականական ՀԴՄ-ներն այդ բայերի հետ ևս կարող են գործառույթով՝ անվանաբայական բաղադրյալ ստորոգյալի կազմում հանդես գալով որպես ստորոգելի:

Հմմտ. Սպասում են էլի, էլի, և ամեն անցնող թուպեն *հավիլտենության պես երկար է թվում* (ԲՍ, 58): Կան մարդիկ, որոնք դրսից *աղավնու նման մաքուր են երևում*, բայց էությամբ, գործով անզղի հատկություն ունեն (ՔԹ, 93): *Եղի՛ր մաքուր ինչպես ձյուն* (ՍՍ, ԻՇ, 58):

Ածականի խոսքիմասային արժեք ունեցող ՀԴՄ-ները, մակբայաբար հանդես գալով, կատարում են ձևի և չափի ու քանակի **պարագայական գործառույթներ**: Բայական անդամի այդօրինակ լրացումներն ընդհանրապես բաժանվում են բուն և հատկանշային պարագաների: Վերջիններս ցույց են տալիս գործողության ձևային և չափի հատկանիշներ՝ արտահայտվելով հատկանշային խոսքի մասերով՝ որակական ածականներով և մակբայներով: Դրանք ձևի ու չափի պարագաներն են¹⁴⁰:

Ածականական ՀԴՄ-ները, մակբայաբար հանդես գալով, դառնում են **ձևի պարագա**:

Հմմտ. Շրջապատի մեջ՝ կապույտ - կապուտակ, *մեռելի նման*

¹³⁹ Վ. Ա. Քոչյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, էջ 436:

¹⁴⁰ Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, էջ 315:

գունապ, դագաղում ... Լսում էր հողմի մռայլ ողբերին (ԱԻ, 2, 273):
Հմմտ. նաև *ձյունի պես ճերմակ* ածականական ՀԴՄ-ն բնագրային օրինակում:

Միթե գթառատ երկնքում չկա բավական անձրև, Որ լվա նրան *ձյունի պես ճերմակ* (ՍՍ, ԻՇ, 159):

Այստեղ այն գործառվել է իբրև **չափ ու քանակի պարագա** («ձյունի պես ճերմակ դառնալու աստիճան» իմաստով):

Հմմտ. *սարյակի փեփուրների նման սև* ՀԴՄ-ի պարագայական կիրառությունը:

Աչքերը փայլում էին *սարյակի փեփուրների նման սև* (ԱԲ, 28):

Ածականական այս ՀԴՄ-ն կիրառվել է մակբայաբար՝ ցույց տալով գործողության չափը («սաստիկ» իմաստով):

Այդօրինակ ՀԴՄ-ների մակբայական կիրառությունները սահմանափակվում են միայն տվյալ խոսքային միջավայրում:

Ինչպես տեսնում ենք, ածականական ՀԴՄ-ները, շարահյուսական մակարդակում կապակցության մեջ մտնելով բայական անդամների հետ, կատարում են մակբային բնորոշ պաշտոններ՝ անկախ կառուցվածքային առանձնահատկություններից:

ՀԴՄ-ների ձևաբանական առանձնահատկությունները քննելիս արդեն նշել ենք, որ որոշ ՀԴՄ-ներ համատեղում են ածականի և մակբայի խոսքիմասային արժեքները՝ շարահյուսական մակարդակում կատարելով իմաստագործառական տարբեր դերեր:

Հմմտ. *Քարի պես լուռ* այդ մարդն այլևս չէր կարող չխոսել (ած./որոշիչ): Նա *քարի պես լուռ* աշխատում էր (մկբ./ձևի պ.): *Երկնքի թռչունների պես ազապ* մարդիկ իրենց գործերով պիտի ապացուցեն, որ կարող են նաև ճախրել երկնքի թռչունների պես (ած./որոշիչ): Նա *երկնքի թռչունների պես ազապ* ապրեց իր կյանքի ամեն մի օրը (մկբ./ձևի պ.):

Աշխարհի չափ ՀԴՄ-ն դիտվում է որպես ածական՝ «շատ մեծ» իմաստով՝ նախադասության մեջ հանդես գալով որոշչի գործառույթով:

Ծերունին *աշխարհի չափ* խելք ունի:

Նույն ՀԴՄ-ն հատկանշվում է նաև մակբայի խոսքիմասային արժեքով՝ «սաստիկ» իմաստով հանդես գալով չափ ու քանակի

պարագայի պաշտոնում:

Աշխարհի չափ ուրախացել է նա:

Ծովի չափ ամբոխ է հավաքվել (ած./որոշիչ): *Ծովի չափ* համբերատար է նա: *Ծովի չափ* արտասովեց աղջիկը (մկբ./չափի պ.):

2. Բայական ՀԴՄ-ների շարահյուսական գործառույթները

Բայի խոսքիմասային նշանակությամբ արժեքավորվող ՀԴՄ-ները շարահյուսորեն կենսունակ են: Անվանողական արժեք ունեցող բայական ՀԴՄ-ները նախադասության մեջ կարող են կատարել շարահյուսական տարբեր պաշտոններ: Ամենից հաճախ դրանք հանդես են գալիս ստորոգյալի դերում, կարող են լինել նաև ենթակա, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիրներ և պարագաներ¹⁴¹:

Դիտարկենք դրանք առանձին-առանձին:

Բայական ՀԴՄ-ները, գործածվելով բայի խոնարհված բոլոր ձևերով, դառնում են **պարզ ստորոգյալ**: Մասնագիտական գրականության մեջ այս առումով ընդգծվում է, որ «բայական դարձվածքների լրացյալ բայը, եղանակային ձևերով դրվելով, կարող է ցույց տալ ասույթի բովանդակության հարաբերությունը խոսելու պահի հետ, դրանով դարձվածքը ձեռք է բերում հաղորդակցական արժեք, արտահայտում է արդեն միտք, դատողություն»¹⁴²:

Հետևյալ բայական ՀԴՄ-ները հանդես են գալիս պարզ ստորոգյալի շարահյուսական պաշտոնում.

Մենակությունն էր քարի պես լռում (ՎՏ, 39): Եղբայրս գժի պես սիրում է նրան (ՍԽՀ, 600): Եվ արտասուքը հեղեղի նման թափվում էր նրա գունատ թշերի վրա (ԲՊ, 38): Ճանապարհին շան պես մրսում էի (ՆԴ, 265): Իսկ Կարենը քարի պես լռել էր (ՔԹ, 308): Սրտում մի բան կար, որ քարի պես նստել էր խղճի վրա (ՍԽՄ, 557): Բազմությունը սպասում էր, թե երբ է նա արևի պես դուրս գալու (ԱՍԿ, 272): Վայ նրան, ով որ տուն ու տեղ ունի, կապված է շան պես իրենց տան շեմին (ԱԻ, 2, 63): Մանուշը սլացավ քամու պես (ՍԽՀ, 762): Ես լեռան պես ծանրացա խղճի վրա (ՆԲ, Գ, 9, 80): Երջանկությունը ժամանակի պես անվերջ երկարի՜ (ՀՍ, 365): Շան

¹⁴¹ Տեն Հ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 100:

¹⁴² Տեն Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 185:

նման կասարկեցնեին, եթե համարձակվեր մնալ մեր հասարակության մեջ (ՊՊ, 5, 263):

Բայական ՀԴՄ-ները դառնում են նաև **բաղադրյալ ստորոգյալ**: Դրանք դերբայական ՀԴՄ-ներն են, մասնավորապես անորոշ և ենթակայական դերբայներով կազմված կապակցությունները, որոնք որպես բաղադրյալ ստորոգյալներ հանդես են գալիս **անորոշ դերբայ + օժանդակ բայ** կամ **ենթակայական դերբայ + օժանդակ բայ** կաղապարով, ինչպես նաև **կան դիմավոր, կան եղանակիչ բայ + անորոշ դերբայ** կառույցով:

Հմմտ. Նրա միակ զբաղմունքն ամեն ինչ *թութակի պես կրկնելն է* (անորոշ դերբայ + օժանդակ բայ): Նա *շան պես պոչ պարտեցնող է* (ենթակայական դերբայ + օժանդակ բայ): Այդ հարցը *շարունակում էր ցեցի պես կրծել* նրա *սիրտը*: Վատ երևույթներն անմիջապես *սկսում են մոլախոտի պես աճել* (դիմավոր բայ + անորոշ դերբայ): Այդ նյութը *կարելի է և պետք է ջրի պես գիտենալ* (եղանակիչ բայ + անորոշ դերբայ):

Դարձվածաբանական գրականության մեջ նշվում է, որ «դարձվածքների կատարած շարահյուսական գործառույթների քանակն ու բնույթը որոշվում են նրանց իմաստային առանձնահատկությամբ և նրանցում այնպիսի քերականական կարգերի առկայությամբ կամ բացակայությամբ, ինչպիսին են դեմքը, ժամանակը և խոնարհումը»¹⁴³: Այս դիտարկումն առանձնապես հատկանշական է բայական ԴՄ-ների, այդ թվում և ՀԴՄ-ների համար:

Բայական ՀԴՄ-ների մեջ ուշագրավ են դերբայական կապակցությունները, որոնք շարահյուսական տեսակետից դերբայական դարձվածներ են՝ կազմված անորոշ, ենթակայական և հարակատար դերբայներով¹⁴⁴:

Բերենք դերբայական մի քանի ՀԴՄ-ների **որոշչային կիրառությունների**¹⁴⁵ բնագրային օրինակներ.

Կարկուտի պես թափվող քարերի տեղատարափից մեքենայի

¹⁴³ Տե՛ս Ա. Մ. Чепасова, Семантико-грамматические классы русских фразеологизмов, Челябинск, ЧПИ, 1974, էջ 54:

¹⁴⁴ Տե՛ս Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 199:

¹⁴⁵ Բայական ՀԴՄ-ների որոշչային և լրացական այլ գործառույթների մասին տե՛ս Ա. Գ. Назарян, նշվ. աշխ., էջ 118:

թափքը դղրդաց (ՍԽՀ, 618): Ու հետո Թափով ընկնելով ճութին՝ Չոհվում է նրա՝ ձյութի պես կաչուն Ու ճահճի նման ներս քաշող հյութին (ՊՍ, 6, 248): Հիմա կյանքը մեծ շնչով իր մեջ առած, բուրումով լցված, վարդի նման ծաղկած էակը կանգնած է դեմը (ԿՁ, 574):

Բայական ՀԴՄ-ները, մակբայական արժեքով կիրառվելով, նախադասության մեջ ստանձնում են **պարագայական գործառույթներ**:

Հատկապես ուշագրավ է նրանց հատկանշային-պարագայական կիրառությունը՝ **ձևի պարագայի գործառույթով**:

Հմմտ. Սոփիոն հալածում էր յուր ամուսնուն՝ սրվերի նման հեփնելով նրան ամեն բուպե, ամեն վայրկյան (ԱՇ, 2, 379): Սանթուրյանը լսում էր՝ թղթի պես գունափված (ԱՇ, 2, 473):

Դիտարկենք դերբայական ՀԴՄ-ները՝ հանգամանքային-պարագայական կիրառություններում¹⁴⁶:

Թեև Ասլանն արթնացավ հինգ ժամ մեռածի պես քնելուց հեփո, բայց գլուխը շարունակում էր պտտվել (ՍԽՀ, 171), **(ժամանակի պարագա)**:

Ես դուրս եմ վազում՝ քեզ որոնելու, Տեսնելու ցուլք գեթ հեռվից հեռու Եվ *հսկելու* քեզ *սրվերի նման* (ՎՏ, 66), **(նպատակի պարագա)**:

3. Մակբայական ՀԴՄ-ների շարահյուսական գործառույթները

Մակբային հարաբերակից ՀԴՄ-ները շարահյուսական մակարդակում հանդես են գալիս մակբային բնորոշ լրացական դերերով՝ պարագայական գործառույթներով¹⁴⁷:

Մակբայական ՀԴՄ-ներն ամենից հաճախ գործառվում են որպես ձևի և չափ ու քանակի պարագաներ¹⁴⁸: Ընդ որում, այդ կարգի երկգագաթ կապակցությունները (որոնք մեզանում հազվադեպ են)

¹⁴⁶ Ի տարբերություն ձևի և չափի պարագաների՝ հանգամանքային պարագաները ցույց են տալիս գործողության հետ կապված հանգամանքները՝ տեղ, ժամանակ, պատճառ, նպատակ և այլն:

¹⁴⁷ Տես K. M. Karapetian, English similes, էջ 17, А. И. Молотков, Основы фразеологии русского языка, էջ 140, Խ. Գ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 277:

¹⁴⁸ А. Г. Назарян, նշվ. աշխ., էջ 118, Հ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 105:

կապակցվում են միայն բայերի հետ, իսկ միազագաթ կառույցները կարող են կիրառվել նաև ածականների հետ¹⁴⁹:

Միազագաթ մակբայական կապակցությունների առումով մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ ձևի հարաբերությունն արտահայտող *պես* կապը և *նման* անիսկական կապն իրենց խնդիրներով գործածվում են նաև իբրև ձևի պարագաներ, որոնք ցույց են տալիս գործողության կատարման ոչ թե ճիշտ նույն, այլ մոտավոր ձևը, իսկ այդ արվում է համեմատությամբ կամ նմանության բաղդատմամբ¹⁵⁰:

ՀԴՄ-ները, հանդես գալով ձևի պարագայի պաշտոնում, մի առարկայի գործողությունը համեմատում են մեկ այլ առարկայի գործողության հետ¹⁵¹:

Հմնտ. մակբայական ՀԴՄ-ները **ձևի պարագայի շարահյուսական պաշտոնում**:

Եկել են ահա *երազի նման*, Շարվել են քո դեմ «հերոսները» քո (ԵԶ, 3, 340): Ոչ մի տեղ արյան տաքություն չզգացի ու *կարծես մոգական մի գավազանի զորությամբ* վերակենդանացա (ՆԴ, 324): Հաղորդալարերին *նոտաների նման* շարվել էին տատրակները (ԶԽ, 278): Թոփման հասկանում էր, որ իր վերջը եկել է, և դրանից նա, *ասես հրաշքով*, վերականգնեց իր կորցրած ուժերը (ՍԽՄ, 607): *Շանթի նման* փոեց գետին (ԱԻ, 2, 104): Մեկ էլ հանկարծ թփի տակեն մի եղնիկ Դուրս ծկվեց *նեղի նման* ու թռավ (ԱԻ, 2, 27): Միքայելն արդեն *ծղի նման* իր տարած բաները տանը հասցրած և վերադարձած էր լինում (ԲՈ, 34):

Հմնտ. մակբայական ՀԴՄ-ների իրացումները՝ գործողության ներքին հատկանիշ արտահայտող ձևի պարագայի իմաստով:

Կարծես երազի մեջ զգաց, որ այն չասաց, ինչ պիտի ասեր (ԲՍ,

¹⁴⁹ Հմնտ. А. Г. Назарян, նշվ. աշխ., էջ 118:

¹⁵⁰ Հմնտ. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 398, Ա. Մարգարյան, Արդի հայերենի կապերը, Ե., ԵՊՀ, 1955, էջ 81:

¹⁵¹ Գործողության ձև ասելով՝ հասկանում ենք նրա թե՛ արտաքին, թե՛ ներքին հատկանիշները: Ձևի պարագան ճիշտ չէր լինի ընկալել սուկ իբրև գործողության ձև ցույց տվող լրացում. այն կարող է տարբեր կողմերից բնութագրել գործողությունը, ինչպես նաև ցույց տալ գործողություն կատարողի վիճակը և այլն: Հմնտ. Լեոնին, որ դեռ Երևանում ինձ թվում էր փոքր-ինչ ավելի սեթևեթող աղջիկ, հիմա կանգնած է *փշրվածի նման* (ՎՊ, 158):

122): Եվ նա ծախսում էր *քեֆն ուզածին պես* (ՆԴ, 124): Ծովն ընկած մարդու նման նամարդ օձից կախ ենք ընկել (ԱԻ, 1, 136): Վասակը գողության մեջ բռնվածի պես կարմրեց (ԴԴ, 439):

Երկանդամ մակբայական ՀԴՄ-ները ժամանակակից հայերենում հազվադեպ են: *Քամու // հողմի պես արագ* երկգագաթ ՀԴՄ-ն այդ կարգի եզակի օրինակներից է:

Հմմտ. Մի կողմում ես եմ, մյուսում՝ Աստված, Վազում ենք կարծես *հողմի պես արագ* (ՍԽ, 105):

Հմմտ. *արծանի պես ուղիղ*¹⁵² (երկգագաթ) և *փեպուրի պես* (միագագաթ) երկարժեք ՀԴՄ-ների իրացումները՝ մակբայական արժեքով (հատկանշային - պարագայական կիրառություններ):

Եվ քայլում էր կրկին *մարմարյա արծանի պես ուղիղ* ու անթեք (ԵԶ, 3, 69): Ես *փեպուրի պես* եկա (ՆԲ, Գ, 9, 80):

Մակբայական ՀԴՄ-ները խոսքային միջավայրում կատարում են նաև **չափ ու քանակի պարագայի գործառական դեր**՝ ցույց տալով գործողության, եղելության չափը:

Հմմտ. Պարզ էր, որ աներոջ մահը *մազի չափ* չէր խլրտում նրա ազգակցական զգացումների նիհիլը (ԱՇ, 4, 17):

Չափ ու քանակի պարագան կարող է արտահայտել նաև հատկանիշի դրսևորման չափը, քանակը, աստիճանը՝ դրվելով ածականի վրա:

Հմմտ. Դա երկինք տանող սանդուղքի առաջին աստիճանն էր, Արտյուշան, և դու *աշխարհի չափ* երջանիկ էիր (ՎՊ, 288):

Մակբայական ՀԴՄ-ները նախադասության մեջ կարող են հանդես գալ **ստորոգելիի շարահյուսական գործառնությունով**:

Հմմտ. Մի քանի ժամ անց նա *հարբածի պես* էր (ՎՊ, 59):

Ինչպես գիտենք, որոշիչը՝ որպես գոյականական անդամի լրացում, արտահայտվում է տարբեր միջոցներով, այդ թվում՝ մակբայներով (*դանդաղ* աշխատանք, *արագ* արձագանք և այլն):

Մակբայական ՀԴՄ-ները ևս կարող են դառնալ **որոշիչ**՝ ստանձնելով **գոյորոշ գործառնությո**:

¹⁵² *Փայտի // քանոնի // արծանի պես ուղիղ* տարբերակային ՀԴՄ-ն, ինչպես նշել ենք, համատեղում է խոսքիմասային ած. // մկբ. արժեքներ. նրա գերադաս բաղադրիչը ևս ձևաբանական մակարդակում ունի ածականի և մակբայի արժեքներ (տես է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան», 1976, էջ 1491):

Հմմտ. Ուտեացոց Հովհաննես իշխանը ... շանթ ու կրակ... գորավոր ձեռքերով, հաղթանդամ մարմնով մի մարդ՝ քամու նման արագ, քաջերի քաջը (ԿԶ, 354):

Մակբայական ՀԴՄ-ների այդօրինակ կիրառությունները, սակայն, չունեն մեծ հաճախականություն:

Այսպիսով՝

1. Շարահյուսական մակարդակում ՀԴՄ-ները՝ իբրև շարահյուսություններ, կապակցվում են նախադասության այլ անդամների հետ՝ հանդես գալով գործառական տարբեր դերերով:

2. Խոսքիմասային այս կամ այն նշանակությամբ առանձնացող ՀԴՄ-ները դրսևորում են կիրառական տարբեր հաճախականություն: Հանդես գալով խոսքային միջավայրում՝ նրանք ունենում են կախյալ կամ անկախ գործածություն՝ ցուցաբերելով առավել կամ պակաս ակտիվություն:

3. Ածականական ՀԴՄ-ները նախադասության մեջ կատարում են ածական խոսքի մասին բնորոշ շարահյուսական պաշտոններ: Առավել հաճախ հանդիպում են որոշչի պաշտոնում, հանդես են գալիս բաղադրյալ ստորոգյալի կազմում որպես ստորոգելի:

4. Անվանողական արժեք ունեցող բայական ՀԴՄ-ները խոսքային միջավայրում հիմնականում ունեն անկախ գործածություն: Նրանց գերադաս բայ բաղադրիչը, արտահայտվելով դիմավոր-եղանակային այս կամ այն ձևով, ձեռք է բերում նաև հաղորդակցական արժեք:

Ժամանակակից հայերենում բայական ՀԴՄ-ները մեծ մասամբ հանդես են գալիս պարզ և բայական բաղադրյալ ստորոգյալների գործառույթներով:

5. Մակբայական ՀԴՄ-ները նախադասության մեջ կատարում են մակբայ խոսքի մասին բնորոշ պարագայական գործառույթներ՝ դառնալով ձևի և չափ ու քանակի պարագաներ:

Մակբայական ՀԴՄ-ները կարող են գործածվել նաև որոշչի և ստորոգելիի շարահյուսական պաշտոններով:

6. Ածական // մակբայ երկարժեքություն դրսևորող ՀԴՄ-ները նախադասության մեջ հանդես են գալիս երկգործառույթ դերով՝ ածականի քերականական իմաստով կատարելով որոշչի գործառույթ, մակբայի քերականական իմաստով՝ հատկանշային-պարագայական պաշտոններ:

Բ. Հաղորդակցական ՀԴՄ-ների կառուցվածքային-քերականական առանձնահատկությունները

ԴՄ-ներն իրենց շարահյուսական կառուցվածքով համապատասխանում են կամ բառակապակցություններին, կամ նախադասություններին, այսինքն՝ ունեն կամ անվանողական, կամ հաղորդակցական արժեք:

Յուրաքանչյուր հաղորդակցական ԴՄ¹⁵³, կազմվելով նախադասության կաղապարով, նրա նկատմամբ դրսևորում է թե՛ ընդհանրություններ, թե՛ տարբերություններ: Այդօրինակ ԴՄ-ներին բնորոշ են ստորոգումը՝ հատկանիշի վերագրումն առարկային (*Գործը հալած յուղի պես է ընթանում*), հնչերանգը, որը կարևորվում է նախադասության ամբողջականության, մտքի ավարտվածության առումով:

Ինչ վերաբերում է հաղորդակցական ԴՄ-ներում արտահայտված եղանակավորման, ժամանակի, դեմքի, թվի և հաստատման-ժխտման քերականական կարգերին, ապա դրանք հանդես են գալիս միայն ստորոգման, հնչերանգի և մտքի ավարտվածության պայմաններում¹⁵⁴:

Անդրադառնանք ժամանակակից հայերենի հաղորդակցական համեմատություն-դարձվածային միավորների քերականական-կառուցվածքային առանձնահատկություններին:

1. Ձևավորվելով նախադասությունների կաղապարով՝ հաղորդակցական ՀԴՄ-ները հանդես են գալիս որպես մասնակիորեն կամ ամբողջաբար վերահմաստավորված, կայուն և պատրաստի վերարտադրելի յուրատեսակ կառույցներ, որոնք պատկերավոր կերպով արտահայտում են դատողություններ մարդու և նրան շրջապատող աշխարհի, մարդ-աշխարհի փոխհարաբերությունների վերաբերյալ (*Ասես առանց ձեռք լինի: Ոնց որ գլխիդ սառը ջուր լցնեն: Ջրի պես գնում, ավազի պես մնում է: Կարծես այս աշխարհից չէ:*

¹⁵³ Հաղորդակցական ԴՄ-ների մասին տես Խ. Գ. Բաղիկյան, ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, էջ 293-322, Պ. Ս. Բեդիրյան, ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, էջ 180-184, Ալ. Ս. Մարգարյան, ժամանակակից հայոց լեզու, էջ 309-328:

¹⁵⁴ Հմմտ. Խ. Գ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 298:

Պարզ է, ինչպես երկու անգամ երկու) և այլն:

2. Հաղորդակցական ՀԴՄ-ները մեծ մասամբ ցուցաբերում են նախադասության կազմիչների կայուն շարադասություն. *Յուրպոր թրի պես կպրում է: Թացն էլ չորի պես վառվում է: Փողը ջրի պես գնում է: Սարի պես կանգնած՝ ուռի պես դողում եմ: Կարծես երկնքից է իջել:*

3. Խնդրո առարկա ՀԴՄ-ների՝ բայով արտահայտված ստորոգյալը զուրկ է լրիվ հարացույցից:

Բայը դեմքի, թվի, եղանակի և ժամանակի քերականական կարգերի սահմանափակումներով է հանդես գալիս:

Ա) Բայը միայն մեկ դեմքով ու թվով է հանդես գալիս հետևյալ ՀԴՄ-ներում. *Կյանքդ ջրի պես երկար լինի: Մոր կաթի պես հալյալ լինի (3-րդ դեմք, եզակի թիվ): Ջրի պես երկար արև ունենաս: Ոնց որ ուղտին գդալով ջրես (2-րդ դեմք, եզակի թիվ): Ոնց որ ուրբերիցս քար կախած լինեն: Ոնց որ քար վերցնեն ու գլխովդ տան: Ոնց որ խնձորը երկու կես անեն (3-րդ դեմք, հոգնակի թիվ): Ուրքդ վերմակիդ չափով մեկնիր (2-րդ դեմք, եզակի թիվ): Իրեն այնպես է զգում, ինչպես ծուկը ջրում (3-րդ դեմք, եզակի թիվ):*

Բայը երկրորդ և երրորդ դեմքերով կարող է արտահայտվել հետևյալ ՀԴՄ-ներում. *Ասես արշին ես / է կուլ տվել: Ասես գետնի տակն անցար / անցավ: Ասես երկինք համբարծվեցիր / համբարծվեց: Կարծես այս աշխարհից չես / չէ: Կարծես լուսնից ես / է իջել: Կարծես Մանթաշուվի թռոը լինես / լինի:*

Բ) Հաղորդակցական ՀԴՄ-ներում բայը եղանակային սահմանափակ ձևերով է հանդես գալիս:

ա) Միայն սահմանական եղանակով՝ որպես օբյեկտիվորեն գոյություն ունեցող գործողություն, եղելություն. *Ասես արշին է կուլ տվել: Կարծես երկնքից է իջել: Ասես գետնի տակն անցավ: Ասես ջրի տակը սուզվեց: Ասես քամին տարավ: Ասես երկինք համբարծվեց: Ասես գետնից բուսնեց:*

բ) Միայն ըզծական եղանակով. *Կյանքդ ջրի պես երկար լինի: Մոր կաթի պես հալալ լինի: Ոնց որ ուրբերիցս քար կախած լինեն: Ոնց որ մարդու գլխին խփեն: Ոնց որ գլխիդ սառը ջուր լցնեն: Ոնց որ ուղտին գդալով ջրես: Ոնց որ պատին ասես: Ոնց որ դանակով կորես:*

գ) Միայն հրամայական եղանակով՝ արտահայտելով գործողության կատարման հրաման՝ հորդոր. *Ուրբդ վերմակիդ չափով մեկնիր:*

դ) Միայն հարկադրական (երբեմն ենթադրական) եղանակով. *Ամեն մարդ ուրքն իր վերմակի չափով պետք է մեկնի // ~ կմեկնի:*

զ) Բայի ժամանակային ձևերը մասամբ են դրսևորվում հաղորդակցական ՀԴՄ-ներում. նրանցում բայն առավելագույնը երկու ժամանակային ձևերով է դրվում:

ա) Միայն ներկա. *Սարի պես կանգնած՝ ուռի պես դողում եմ: Ինչպես երկու անգամ երկու հավասար է չորսի:*

բ) Միայն անցյալ. *Կարծես (մորից) նոր ծնվեց: Կարծես երեկ էր:*

գ) Միայն ապառնի. *Ջրի պես երկար արև լինես: Ոնց որ պապրին ասես: Ոնց որ դանակով կտրես: Ոնց որ ուղտին գդալով ջրես:*

Բայը զույգ ժամանակային ձևերով կարող է կիրառվել հետևյալ ՀԴՄ-ներում. *Յուրպը թրի պես կտրում է / էր: Գործը հալած յուղի պես է / էր ընթանում* (ներկա / անցյալի անկատար): *Ոնց որ գլխիդ սառը ջուր լցնեն / լցնեին: Ոնց որ մարդու գլխին խփեն / խփեին: Ոնց որ ուրբերիցս քար կախած լինեն / լինեին: Ասես հեքիաթ լինի / լիներ* (ըղծական ապառնի / ըղծական անցյալ):

4. Հաղորդակցական ՀԴՄ-ները՝ որպես պատրաստի վերարտադրելի նախադասություններ, հիմնականում հաստատական բնույթ ունեն:

Նրանցում պատահում են ՀԴՄ-ներ, որոնք ձևավորումով հաստատական են, իսկ արտահայտած մտքով՝ ժխտական: Վերջինս պայմանավորված է դարձվածային յուրահատուկ իմաստով:

Հմնտ. *Ոնց որ պապրին ասես* (ոչինչ չի ազդում): *Կարծես երկնքից է իջել* (չգիտի որևէ հանրահայտ բան):

Խնդրո առարկա ՀԴՄ-ներում երբեմն հանդիպում են այնպիսիները, որոնցում բաղադրիչներից մեկը հանդես է գալիս հակառակ իմաստով՝ հակադրությունը տարածելով ողջ դարձվածքի վրա. *Ինչպես թամբը կովին է սազում* (ամենևին չի սազում): *Պարզ է, ինչպես պղպոռ գեպը* (բուլբուլին պարզ չէ)¹⁵⁵:

¹⁵⁵ Հմնտ. այդորինակ հետևյալ ՀԴՄ-ները ուսերենում. *Как свинья в апельсинах разбирается. Нужен как прошлогодний снег. Нужна как собаке пятая нога.*

Որպես բուն ժխտական դարձվածային նախադասություն է հանդես գալիս *Կարծես այս աշխարհից չէ* ՀԴՄ-ն:

5. Հաղորդակցական ՀԴՄ-ները, ըստ երանգի, մեծ մասամբ պատմողական են: Ընդամին, նրանցով ավելի շատ հաստատվում է այս կամ այն իրողությունը, եղելությունը. *Յուրաքանչյուր թրի պես կտրում է: Կարծես իր մոր գիրկն ընկավ: Այնպես է նայում, ինչպես թուրքը խոզի մսի վրա: Ասես հալվեց: Հարդի պես ծախվում է: Կարծես ուրքերի տակից քաշվում է հողը* և այլն:

Նրանցում հազվադեպ են բացականչական նախադասությունները, որոնք էլ հիմնականում բարեմաղթություններ են. *Մոր կաթի պես աննուշ լինի: Կյանքդ ջրի պես երկարի: Ջրի պես երկար արև ունենաս:*

Հաղորդակցական ՀԴՄ-ների մեջ եզակի է *Ուրքդ վերմակիդ չափով մեկնիր* դարձվածային հրամայական նախադասությունը, որն արտահայտում է գործողության կատարման հորդոր:

6. Մասնագիտական գրականության մեջ, ըստ կառուցվածքային գործոնի, տարբերակվում են պարզ, բարդ, միակազմ, երկկազմ, լրիվ և թերի դարձվածային նախադասություններ¹⁵⁶:

Ժամանակակից հայերենի հաղորդակցական ՀԴՄ-ներում առկա են նախադասություն-դարձվածքների գրեթե բոլոր կառուցվածքային տիպերը:

Կազմությամբ պարզ հաղորդակցական ՀԴՄ-ները համընկնում են պարզ ընդարձակ նախադասություններին: Նրանցում ենթական երբեմն կարող է լրացում ստանալ կամ ծավալվել: Ենթակայի այդօրինակ լրացումները կոչվում են ծավալիչներ (*Կարծես մի ծանր քար ընկավ ուսերիցս*):

Ստորոգյալի ծավալիչը, որը ՀԴՄ-ների պարագայում ընդհանրապես դիտվում է որպես մշտական անդամ կամ համեմատության հենակետ, կարող է ունենալ իր լրացումը (*Փողը թաժամ հացի պես գնում է: Գործը հալած յուղի պես է ընթանում: Աղբյուրի ջրի պես երկարի կյանքդ*):

Հաղորդակցական ՀԴՄ-ներում պատահում են միակազմ դի-

¹⁵⁶ Հմմտ. Խ. Գ. Բաղիկյան, Դարձվածային ոճաբանություն, էջ 11:

մավոր նախադասություններ, որոնցում ենթական չկա, և հնարավոր չէ վերականգնել: Վերջիններս էլ լինում են կամ ձևական դիմային նշանակությամբ (*Մոր կաթի պես հալալ է: Կարծես երեկ էր: Երագի նման էր: Հեքիաթի նման էր*), կամ ընդհանուր դիմային նշանակությամբ (*Ուրբդ վերմակիդ չափով մեկնիր*), կամ անորոշ դիմային նշանակությամբ (*Ոնց որ ուղտին գդալով ջրես: Ոնց որ դանակով կտրես: Ոնց որ պատին ասես: Ոնց որ գլխիդ սառը ջուր լցնեն: Ոնց որ ոտքերիցս քար կախած լինեն: Ոնց որ խնձորը երկու կես անեն*):

Բարդ համադասական նախադասության ձևավորում ունեն հետևյալ ՀԴՄ-ները. *Սարի պես կանգնած եմ, ուռի պես դողում եմ: Ուղտի պոչի պես ո՛չ երկարում է, ո՛չ կարճանում: Քարի պես քաղվում, հողի պես մաղվում է: Ջրի պես գնում, ավազի պես մնում է:*

Ստորև բերվող ՀԴՄ-ներն ունեն բարդ ստորադասական նախադասության կառուցվածք.

Իրեն այնպես է զգում, ինչպես ծուկը ջրում: Պարզ է, ինչպես երկու անգամ երկու հավասար է չորսի: Պարզ է, ինչպես պղտոր գեղը: Այնպես է նայում, ինչպես թուրքը խոզի մսի վրա:

Հաղորդակցական ՀԴՄ-ների գերակշիռ մեծամասնությունը, սակայն, ձևավորվել է որպես բարդ ստորադասական նախադասության ստորադաս բաղադրիչ:

Հմմտ. Ասես առանց ձեռք լինի: Կարծես փշերի վրա նստած լինի: Կարծես (մորից) նոր ծնվեց: Կարծես իր մոր գիրկն ընկավ: Կարծես Մանթաշովի թոռը լինի: Ասես հալվեց: Ոնց որ մի խնձոր՝ երկու կես արած: Ասես հեքիաթ լինի և այլն:

Այդօրինակ ՀԴՄ-ները ներունակ են խոսքաշարում դրսևորվելու որպես խոսքի ամբողջական հատվածներ: Ըստ որում, նրանք հանդես են գալիս բարդ ստորադասական նախադասության մեջ որպես ստորադաս բաղադրիչ, որի համեմատ գերադասը չունի կայունություն:

Հմմտ. Ու շունչ քաշեց Խչեգարեն, *կարծես իր մոր գիրկն ընկավ* (ՀՇ, 91):

Բարդ ստորադասական ՀԴՄ-ի գերադաս բաղադրիչը կարող

է գեղջված լինել: Այս դեպքում ստորադասական նախադասություն- դարձվածքը հանդես է գալիս որպես թերի նախադասություն¹⁵⁷:

Հմմտ. Նրանք ինձ չէին տեսնում: Իսկ ես նրանց՝ *ոնց որ ափիս մեջ* (ԲԱ, 32):

Խնդրո առարկա ՀԴՄ-ները կարող են կիրառվել երկխոսությունների մեջ որպես թերի նախադասություններ:

Հմմտ. – Նադոն Հունոյին նման է:

– *Ոնց որ մի խնձոր՝ միջից կես արած* (ՊՊ, 5, 333):

Ստորադասական նախադասության ձևավորումով ՀԴՄ-ները սովորաբար ունեն ինքնուրույն կիրառություն: Այդօրինակ ՀԴՄ-ների մեծ մասը միայն արտաքին կառուցվածքով է ստորադասական, իսկ բովանդակությամբ՝ ոչ: Այդպիսի ՀԴՄ-ները պետք է դիտել ինքնուրույն գործածվող դարձվածային նախադասություններ:

Հմմտ. Երևաց երկրորդ շունը, երրորդը, շների հետևից էլ Պանինը: *Ասես գեպնի փակից բուսավ* (ԱԲ, 5):

Ասես ուրքերի փակից քաշվում էր հողը (ԱՍՈ, 429):

Կարծես երեկ էր: Եկա, ցահել տղա, կարծում էի՝ հազար տարի պիտի ապրեմ (ԶԽ, 249):

Այսպիսով՝

1. Հաղորդակցական ՀԴՄ-ների ամենակարևոր առանձնահատկություններն են՝ ստորոգումը, հնչերանգը և մտքի ավարտվածությունը: Էական նշանակություն ունեն նաև եղանակավորությունը և բաղադրիչների շարադասությունը:

2. Հաղորդակցական ՀԴՄ-ներն ունեն նաև եղանակի, ժամանակի, դեմքի, թվի և հաստատման-ժխտման քերականական կարգեր:

3. Ըստ հնչերանգի կամ նպատակադրման՝ այդ կարգի ՀԴՄ-

¹⁵⁷ Հաղորդակցական ՀԴՄ-ներում գեղջված կարող են լինել ինչպես ենթական, այնպես էլ ստորոգյալը. *Սարի պես կանգնած՝ ուռի պես դողում եմ* (ենթական): *Ջրի պես գնում, ավազի պես մնում է* (ենթական և ստորոգյալի մի մասը): Պարզ հաղորդակցական ՀԴՄ-ներում կարող են պատահել կիրառություններ, երբ գեղջված են թե՛ ենթական, թե՛ ստորոգյալը, և նախադասությունն արտահայտված է ՀԴՄ-ների համեմատական մասի կամ համեմատության հենակետի միջոցով: Դա հատուկ է երկխոսություններին, որոնցում հաղորդակցական թերի ՀԴՄ-ն հանդես է գալիս իբրև պատասխանական խոսք:

Հմմտ. – Դու հաստատ գիտես այդ բոլորը:

– *Հինգ մարիս պես* (ԱՍՈ, 352):

ները մեծ մասամբ լինում են պատմողական, եզակի դեպքերում՝ հրամայական և բացականչական:

4. Հաղորդակցական ՀԴՄ-ները կարող են լինել միակազմ և երկկազմ, պարզ և բարդ, լրիվ և թերի:

5. Խնդրո առարկա ՀԴՄ-ները հիմնականում ունեն ստորադասական նախադասության ձևավորում:

II. ՀԴՄ-ների տարբերակները

ՀԴՄ-ներին բնորոշ առանձնահատկություններից է հոմանշային շարքերով և դարձվածային տարբերակներով հանդես գալը:

Դարձվածային տարբերակները հստակորեն սահմանազատվում են դարձվածային հոմանիշներից նրանով, որ նրանք ունեն ձևային միևնույն հիմքը, որն անխախտելի է:

Դարձվածային տարբերակների համար կարևոր է համարվում նաև նրանց յուրաքանչյուր շարքում իմաստային նույնության պահպանումը¹⁵⁸:

Ընդհանրապես մասնագիտական գրականության մեջ դարձվածային տարբերակներ են համարվում այն դարձվածային միավորները, որոնք տարբերվում են միմյանցից այս կամ այն բառով, ձևաբանական կառուցվածքով կամ շարադասությամբ և այլն, բայց չեն տարբերվում դարձվածքի ընդհանուր իմաստով¹⁵⁹:

ՀԴՄ-ներում առկա են ընդհանրապես դարձվածային տարբերակներին բնորոշ բոլոր դրսևորումները, որոնք կախված են դարձվածքի ձևափոխության բնույթից:

Լեզվաբանական գրականության մեջ առանձնացվում է դարձվածային տարբերակների ընդհանուր առմամբ երեք տիպ՝ բառային, քերականական և քանակային¹⁶⁰:

Դարձվածաբանության մեջ որպես դարձվածային տարբերակներ նշվում են նաև ձևային փոփոխությունների, հնչյունական հա-

¹⁵⁸ Տե՛ս Օ. Մ. Неведомская, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими, АКД, էջ 8: Հմմտ. նաև Ս. Դ. Игнатьева, Структурные и семантические свойства....., АКД, էջ 7-8:

¹⁵⁹ Տե՛ս Ա. Դ. Райхштейн, Немецкие устойчивые фразы, Ленинград, «Просвещение», 1971, էջ 8:

Դարձվածային տարբերակների մասին տե՛ս Խ. Գ. Բաղիկյան, Դարձվածային ոճաբանություն, էջ 81-86, Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, էջ 213-215, Ալ. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 335-337, Լ. Մ. Խաչատրյան, Դ. Ս. Գյուրջինյան, Դիտարկումներ «Աստված» բաղադրիչով կայուն բառակապակցությունների շուրջ, «Էջմիածին», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1995, հ. 1, էջ 42-46:

¹⁶⁰ Հմմտ. Լ. Մ. Խաչատրյան, Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորներն արդի հայերենում, էջ 19, Ս. Դ. Игнатьева, նշվ. աշխ., էջ 8-9, А. В. Кунин, Английская фразеология, էջ 62, 118:

վելումների և անկումների հիման վրա առաջացած տարատեսակները.

Բոլորը մի // մեկ մարդու պես, ջրի նման երկար // երկայն արև լինել, շան պես քաշ // քարշ գալ, խեղդվողի պես ձեռքը // ձեռք փրփուրին գցել և այլն:

Դարձվածային տարբերակների մեջ առանձնացվում են նաև դարձվածքների բաղադրիչների համադրական-հարադրական փոխարինմամբ (*փալասի պես կախվել // կախ ընկնել, կարմիր թելի պես անցնել // անց կենալ, տղի պես չարկվել // պոկ չգալ մեկից*), ժամանակակից հայերենի և գրաբարյան ձևերով (*սպիտակ ինչպես ձյունը // սպիտակ իբրև զծին, կարմիր ինչպես արյունը // կարմիր իբրև զարիւն, գայլի պես ագահ // քան զգայլ ագահ*), արևելահայերեն-արևմտահայերեն ձևերով (*լուսնոտի նման դեգերել // լուսնոտի մը պես դեգերիլ, երկու անգամ երկու՝ չորսի պես պարզ // երկու անգամ երկու չորս կ'ընեն պես պարզ, աշխարհի չափ // աշխարհին չափ*) տարբերակներ:

Դարձվածային տարբերակներ կարող են առաջանալ նաև դարձվածքների հեղինակային տարբեր մեկնաբանությունների հետևանքով: *Ճերմակ // սպիտակ ինչպես ձյունը* դարձվածքը, օրինակ, տարբեր հեղինակների մոտ տարբեր ընդմիջարկումների կարող է ենթարկվել: Այդպես առաջանում են այս և այլ դարձվածքների՝ յուրօրինակ հեղինակային-քանակական տարբերակներ:

Հմնտ. *Ճերմակ* է նրանց գլխի ալիքը, *Ինչպես վաղորդյան ձյունը լեռների...* (ՀԹ, 2, 247): Միրուքը երկար, մինչև գոտին, *սպիտակ, ինչպես նորեկ ձյուն* (ՀԹ, 4, 87):

Տաշեղի նման // պես ՀԴՄ-ն նույնպիսի հեղինակային-անհատական մեկնաբանությունների և ծավալումների է ենթարկվել հետևյալ նախադասություններում.

Քաշվեցինք զգույշ մենք մի կողմ, որ հորձանքը մեզ չճգմե, Կամ չնչին տաշեղի նման մեզ հանկարծ իր հետ չտանի (ԵԶ, 3, 60): Պղպող հեղեղի բերանն ընկած տաշեղի պես Լառ-Մարգարը շատ ափերի էր զարկվել (ԱԲ, 10):

Տարբերակներով հանդես եկող ՀԴՄ-ն մտնում է լեզվի մեջ որպես իր տարբերակների միագումարություն¹⁶¹:

¹⁶¹ Հմնտ. А. В. Кунин, Англо - русский фразеологический словарь, М., 1967, г. 2, էջ 1253:

Դիտարկենք ՀԴՄ-ների դարձվածային տարբերակների հիմնական խմբերն առանձին-առանձին:

Ա. Բառային (հոմանշային) տարբերակներ

Դարձվածային տարբերակների մյուս տիպերի համեմատությամբ այս կարգի տարբերակներն առավել տարածվածներն են: Քննվող դարձվածքների տարբերակների 70%-ից ավելին կազմում են հենց բառային տարբերակները:

1. ՀԴՄ-ների բառային տարբերակներն առաջանում են տվյալ դարձվածքի այս կամ այն բաղադրիչը որևէ հոմանիշով փոխարինելով՝ առանց տվյալ իմաստի շրջանակներից դարձվածքը դուրս բերելու: Հոմանշային տարբերակներ կարող են ձևավորվել համեմատության կապերի, ինչպես նաև համեմատություն արտահայտող բառերի փոփոխությամբ: ՀԴՄ-ների բառային տարբերակների մեջ ամենաշատն այդօրինակ բաղադրիչների՝ հոմանիշներով փոխարինմամբ ձևավորվածներն են.

Գաբոսայի *նման // պես* (հաղթանդամ), աշխարհի *պես // չափ* ծեր (չափազանց ծեր), կրակի *պես // նման* (1. շատ ճարպիկ, 2. շատ արագ), կարկուտի *նման // պես* իջնել (շեշտակի իջնել), սնկի *պես // նման* աճել (արագ բազմանալ), օձի *պես // նման* սողալ (ստորաքարշություն անել), մի դռան շան *նման // պես* (հաշտ ու խաղաղ), *որպես // ինչպես* ջրի երկու կաթիլ (շատ նման՝ ներքինով, արտաքինով), *ասես // կարծես* գետնի տակն անցնել (հանկարծակի անհետանալ)¹⁶², լույսի *նման // պես* պարզ (շատ պարզ, հստակ), *ինչպես // ասես* ափի մեջ (լավ տեսանելի լինելու մասին) և այլն:

Հմմտ. – Խնդրում եմ, մանվածապատ խոսքերով ամեն ինչ *լույսի նման պարզ* մի համարեք (ՔԹ, 495): Եթե ձեզ համար աշխարհում առհասարակ ամեն ինչ լուսավոր է, *լույսի պես պարզ*, ապա ինձ համար շատ բաներ մութ են (ն. տ., 495): Նրա սյունազարդ և ընդարձակ սրահից երևում էին, *ինչպես ափի մեջ*, թե՛ ամրոցը յուր բնակարաններով ու պահականոցներով և թե՛ շրջակա լեռներն ու ձորերն իրենց գեղեցիկ կամ անհեթեթ տեսարաններով (Մ, 4): Գարդմանա շրջակաները երևում էին այնտեղից՝ *ասես ափի մեջ* (ն.տ., 54):

¹⁶² Հմմտ. րուս. *как (словно, точно) сквозь землю провалиться*.

ՀԴՄ-ների հոմանշային տարբերակներն առաջանում են նաև կապակցությունների գերադաս անդամների փոփոխությամբ հետևանքով.

Աղբյուրի պես *խփել // հոսել // բխել // հորդել* (առատորեն և անվերջ գալ), աչքի բբի պես *սիրել // փայփայել // գուրգուրել* (որպես ամենաթանկագին բան մեծ խնամքով փայփայել), օդ ու ջրի պես *անհրաժեշտ լինել // պետք գալ* (կենսականորեն չափազանց անհրաժեշտ լինել), կատվի նման *մեջքի վրա չընկնել // մեջքին չգալ // թաթերի վրա ընկնել* (1. համառել, 2. խուսափել վնասից՝ վտանգից), մոլախոտի նման *ածել // բազմանալ* (արագ բազմանալ), օձի պես *պաղ // սառն* (1. մարմնով շատ սառն, 2. սառնադեմ), ձկան պես *լուռ // համր // անխոս* (համառորեն լռելու մասին), կտավի պես *ճերմակ // սպիտակ* (չափազանց ճերմակ, գունատ), առյուծի պես *քաջ // խիզախ // համարձակ* (չափազանց քաջ), գայլի պես *անկուշտ // ազահ* (չափազանց ազահ) և այլն:

Հմմտ. Տեսար միտքս - *գայլի պես անկուշտ, գայլի պես ազահ* (ՊՍ, 14):

ՀԴՄ-ների հոմանշային տարբերակներ ձևավորվում են նաև կապակցությունների համեմատվող մասերի փոփոխություններով.

Կրավի // քաթանի պես գունատ (շատ գունատ), *բազուկի // ճակնդեղի* պես կարմիր (չափազանց կարմիր), կարծես *մոգական // կախարդական* գավազանով (շատ արագ)¹⁶³, *կոտրած // անպոչ // պոչապ* գդալի պես մեջ ընկնել (իրեն չվերաբերող բաներին խառնվել), մի *գավաթ // բաժակ* ջուր խմելու պես բան լինել (շատ հեշտ բան լինել), *գիսավոր // պոչով* աստղի պես երևալ ու անհետանալ (ուշ-ուշ և հանկարծ երևալ ու իսկույն անհետանալ), *լեռան // սարի* պես կանգնել (մեկի) թիկունքին (հզոր պաշտպան լինել), *գժի // ցնդվածի // խելագարի // խելքը թոցրածի* նման վազել (անմտաբար՝ մոլեգնած վազել՝ փախչել), *խենթի // խելագարի* պես սիրել (ինքնամոռաց սիրել) և այլն:

Հմմտ. Նա *խենթի պես սիրում էր* մանավանդ Ասլանի բարձր պարիսպներով շրջապատված այգին, որտեղից ամառվա շոգ օրերին հաճելի զովություն էր փչում (ՄԽՀ, 501): - Իմացի՛ր, Արևիկը

¹⁶³ Հմմտ. կարծես *հրաշքով // կախարդանքով* ՀԴՄ-ն ֆրանսերենում. *comme par miracle // magie*.

խելագարի պես սիրում է Քաջանց Գարեգինին (ն. տ., 584):

2. Բառային տարբերակներ կարող են առաջանալ նաև ՀԴՄ-ների բաղադրիչները փոխարինելով այնպիսի բառերով, որոնց հետ նրանք ունեն իմաստային ինչ-ինչ ընդհանրություններ, բայց ազատ կիրառություններում չունեն հոմանշային հարաբերություններ: Այդպիսին կարող են լինել այն բառերը, որոնք կամ արտահայտում են իմաստային միևնույն դիտվածքի հասկացություն, կամ միևնույն հատկության (որակի) կրողներն են¹⁶⁴:

Դանակի // դաշույնի պես սիրտը խրվել (խոր խոցվել), *ասես մեխերի // ասեղների* վրա նստած լինել (անհանգիստ վիճակում լինել), *փախչել ինչպես ժանտախտից // վարակից* (մեկից // մի բանից խուսափել), *աղայի // թագավորի* պես ապրել (չքեղության մեջ ապրել), *կարմիր // սև* թելի պես անցնել (ցայտուն կերպով երևալ), *կարծես որոտ պարզ // կապույտ* երկնքից (հանկարծակի, անսպասելի), *դանակի // թրի* պես կտրել (1. բուժել, 2. որևէ մեկին կամ մի հարց կտրականապես մերժել), *ջալամի* պես գլուխն *ավազի // հողի* մեջ թաղել (համառորեն հրաժարվել վտանգի աչքերին նայելուց), *մահու* պես *տխուր // դաժան // դժվար* (ծանր՝ ճնշող հոգեվիճակի մասին) և այլն:

Հմմտ. ... – Ա՛խ, այն գիշերը՝ անսահման երկար, – Այն լուրթո՛ւնը՝ մահու պես տխուր... (ՎՏ, 182): *Մահու պես դաժան* ձմեռն է իջել, Մարել են, մեռել – երգ, ծաղիկ ու բույր... (ն.տ., 181): *Մահու պես դժվար* է անլույս սպասումը... (ԵԶ, 67):

Դարձվածքի բաղադրիչների քանակին համապատասխան՝ ձևավորվում են դարձվածքի առավել կամ պակաս բառային տարբերակներ: Երկանդամ ՀԴՄ-ները բնականակաբար թույլ են տալիս ավելի քիչ բառային տարբերակներ կազմել, քան նրանց ծավալումներով կազմված ՀԴՄ-ներում է հնարավոր:

¹⁶⁴ Հմմտ. Լ. Դ. Игнатьева, նշվ. աշխ., էջ 8, О. М. Неведомская, նշվ. աշխ., էջ 8:

Բ. Քերականական տարբերակներ

ՀԴՄ-ների քերականական տարբերակներն ի հայտ են գալիս ինչպես այդ կարգի կառույցների բաղադրիչների, այնպես էլ ամբողջական կապակցությունների քերականական (ձևաբանաշարահյուսական) տարբեր ձևավորումներով:

1. ՀԴՄ-ների ձևաբանական տարբերակներն առաջանում են դարձվածքների բաղադրիչների ձևաբանական հատկանիշների հիման վրա:

Ձևաբանական այդպիսի փոփոխակումը հայերենում կապված է հիմնականում համեմատելի գոյականի հոլովի և թվի զուգաձևության հետ:

ա) ՀԴՄ-ները մեզանում դրսևորում են առավել հաճախ հոլովական տարածնությամբ առաջացած տարբերակայնություն.

Գիշերի // գիշերվա պես խորհրդավոր, *մահվան // մահու* պես դժգոյն, *արյունի // արյան* պես կարմիր, *ձյունի // ձյան* պես ճերմակ, *եզի // եզան* պես աշխատել, *մահի // մահու* չափ, *ուռի // ուռու* պես դողալ և այլն:

Հմմտ. Նրա խոսելու ժամանակ մովրովն *ուռի պես դողում էր* (ՊՊ, 303): Ձեն հանելիս, ոտը թափ տալիս *ուռու պես դողում էին* (ՀԼԴԲ, 573):

ՀԴՄ-ների հոլովական զուգաձևություններում համեմատելի գոյականը կարող է հանդես գալ անհնչյունափոխ և հնչյունափոխված տարբերակներով.

Սունկի // սնկի նման աճել, *շուքի // շքի* պես հետևել, *թռչունի // թռչնի* պես ազատ, *կարկուտի // կարկտի* պես թափվել, *տիզի // տզի* պես կպչել, *ձյութի // ձութի // ձթի* պես կպչել, *փայտի // փեպի* նման տնկվել, *սափանայի // սափանի* պես և այլն:

Հմմտ. – *Սափանայի պես* եկավ, մեր խոսակցությունը կտրեց, – *ասաց աղան* (ԲՈ, 56): *Սոնա – Վայ... Աշոտ... խիղճը կտրվի... Սափանի պես* ղնց բուսար առաջ... էստեղ ինչ էիր անում (ԱՍԿ, 371):

Առանձին դեպքերում ՀԴՄ-ների ձևաբանական տարբերակներ ստեղծվում են գոյականի տարբեր հոլովաձևերով¹⁶⁵.

¹⁶⁵ Հմմտ. *ոնց որ պարհն ասես* ՀԴՄ-ն ռուսերենում դրսևորում է հոլովական հետևյալ բազմաձևությունները. *как об стене (в стену, к стене, от стены) горюх*.

Կարծես այս *աշխարհից // աշխարհում* չլինել և այլն:

ՀԴՄ-ների ձևաբանական որոշ տարբերակներում գոյական բաղադրիչները հանդես են գալիս հոլովված և կապական կառույցներով.

Կատվի նման *մեջքին // մեջքի վրա* չընկնել, քարի նման ծանրանալ *սրտին // սրտի վրա*, ասես *երագում // երագի մեջ* և այլն:

բ) ՀԴՄ-ների ձևաբանական տարբերակներում համեմատելի գոյականները կարող են հանդես գալ եզակի-հոգնակի ձևերով.

Երկնքի *թռչունի // թռչունների* պես ապրել, *ոչխարի // ոչխարների* պես (մեկին) հետևել, *օճառի պղպջակի // պղպջակների* պես հօդս ցնդել, *ուրվականի // ուրվականների* նման (մեկին) հետևել, ինչպես *քամու // քամիների* բերանն ընկած չոր տերև, գլխի *մազի // մազերի* չափ, *հեղեղի // հեղեղների* պես թափվել, սարյակի *փեփուրի // փեփուրների* նման սև, *գիշերի // գիշերների* պես սև, *ձյան // ձյունների* պես սպիտակ:

Հմմտ. Նրա վերջին ճառագայթները, խաղալով շատրվանից բարձրացած *ձյունի պես սպիտակ* ջրային փոշիների հետ, շողշողում էին ծիածանի վառ գույներով (Մ, 133): Ու աղավնի կթոցնեն *ձյունների պես սպիտակ* (ԱԻ, 33):

Եզակի-հոգնակի ձևերում ՀԴՄ-ների գոյական բաղադրիչների թվի քերականական կարգի նշանակությունը չի պահպանվում: Վերը բերված բոլոր օրինակներում էլ եզակի-հոգնակի զուգաձևություններն իմաստային և քերականական առումներով չեզոք են:

գ) ՀԴՄ-ների ձևաբանական տարբերակներ առաջանում են նաև այլ ուղիներով: Այդպիսին են գոյականի կամ փոխանվանաբար գործածված բառի՝ ստացականությունն արտահայտող հոդով և առանց հոդի կիրառությունները (*մորդ // մոր* կաթի պես հալալ լինի, *ուզածիդ // ուզածի* պես), տարբեր ածանցներով կազմված միևնույն ածականի կիրառությունները (որպես *թափառական // թափառիկ* շուն), հարաբերական ածականի փոխարինումը գոյականի սեռականով (*դամոկլյան // Դամոկլեսի* սրի պես կախված լինել մեկի գլխին), գոյական // ածական երկարժեք բառ - հարակատար դերբայ փոխարինումը (*գժի // գժվածի* պես), անձնական դերանվան փոխարինումը ստացական հոդով (աղբյուրի ջրի պես երկար լինի *քո*

կյանքը // կյանքդ), բայական ՀԴՄ-ներում բայ բաղադրիչի չեզոք - կրավորակերպ չեզոք զուգաձևությունը (ծյան պես *հալչել // հալել // հալվել*), նույն բայի կիրառությունները պատճառական ածանցով և առանց ածանցի (օձի նման *ֆշշացնել // ֆշշալ*), բազմապատկական ածանցով և առանց դրա (հավերի պես *մորթորել // մորթել*) և այլն:

2. ՀԴՄ-ների շարահյուսական տարբերակներ կարող են առաջանալ կամ բաղադրիչների շարադասական փոփոխություններով, կամ ողջ կառույցի ձևափոխությամբ:

ՀԴՄ-ների հետևյալ տարբերակները պայմանավորված են այդօրինակ կապակցությունների բաղադրիչների շարադասական փոփոխություններով.

Դանակի պես *սիրտը խրվել // խրվել սիրտը*, մոմի նման *ամեն կողմ շուռ տալ // շուռ տալ ամեն կողմ*:

Ամբողջական կառույցների ձևափոխությամբ են պայմանավորված ՀԴՄ-ների հետևյալ տարբերակները.

Ռումբի պես պայթել // ասես ռումբ պայթել, մի դռան երկու շան պես // ոնց որ մի դռան երկու շուն, փայտ կուլ տվածի նման լինել // կարծես փայտ կուլ տված լինել, շանթախարի պես // կարծես շանթախար և այլն:

Հմմտ. Դահճապետը *շանթախարի պես* ամբողջ մարմնով դողաց (ՐՍ, 419): Գոհար իշխանուհին, որ յուր պատասխանը տվել էր միայն որդու համարձակախոսությունից գրգռված և ոչ թե թագուհուն վշտացնելու մտքով, հիշեց նորից յուր խոսքերը և մնաց *կարծես շանթախար* (Մ, 15):

ՀԴՄ-ների շարահյուսական տարբերակներ կարող են առաջանալ նաև երկգագաթ կապակցություններում **կապական կառույց + գերադաս բաղադրիչ // գերադաս բաղադրիչ + կապական կառույց** կաղապարների փոփոխություններով.

Շուն ու կարվի պես ասրել // ասրել ինչպես շուն ու կարու, սնկի պես աճել // աճել ինչպես սունկը, փոթորկի պես անցնել // անցնել ինչպես փոթորիկ, երեխայի նման վարվել (մեկի հետ) // վարվել ինչպես երեխայի (երեխաների) հետ և այլն:

Հմմտ. Երեխի նման խաբեցին ինձ շատ, Երազուն ու խենթ երեխի նման, *Երեխի նման վարվեցին ինձ հետ*, Մի խորթ ու օտար

երեխի նման (ՀԹ, 56): Նրանք սովոր են բոլորի հետ *վարվել, ինչպես երեխաների հետ* (ՎԱ, 219):

ՀԴՄ-ների շարահյուսական տարբերակները, սակայն, այս կամ այն բաղադրիչի ընդգծման, շեշտման հետ կապված չեն:

Գ. Քանակային տարբերակներ

ՀԴՄ-ների քանակային տարբերակներն առաջանում են նրանց համառոտ և ծավալուն կազմերի դեպքում. դարձվածքը փոփոխվում է իր քանակական կազմով՝ դուրս չգալով նույն կառուցվածքի շրջանակներից.

*Մազնիսի պես ձգել // ~ դեպի իրեն, ջրի երկու կաթիլի պես նման լինել // ~ իրար, վարագի պես // վայրի ~, աստղի պես ցուլալ // հեռավոր ~, սրի պես կտրել // հապու ~*¹⁶⁶:

Հմմտ. Հանկարծ լուռությունը *սրի պես կտրեց* աղմուկը (ԴԴ, 513):
– Երկիրը չենք տալիս, ու էսպես էլ կպատասխանեք արքային, – *հապու սրի պես կտրեց* Առաքելը (ն. տ., 156):

Երբեմն բառային հավելումը կարող է ամբողջի և մասի, ընդհանուրի և մասնավորի, վերացականի ու կոնկրետի փոխհարաբերություններ արտահայտել.

Սև ինչպես սարյակը // սարյակի փեփուրը, գունապ ինչպես պապը // պապի ծեփը, կարմիր ինչպես վարդը // վարդի թերթը, ապրել ինչպես թռչունը // երկնքի թռչունը, պարզ ինչպես լույսը // ցերեկվա լույսը, խայթվածի պես // օձից ~ և այլն:

Հմմտ. Քեոի Ղուկասը *խայթվածի պես* վեր ցատկեց (ՆԶ, 49):
Օձից խայթվածի պես նա ետ է դառնում և հարցական խստությամբ նայում իր քրոջը (ն. տ., 240):

ՀԴՄ-ների քանակային բոլոր տարբերակներում ևս կարևորվում է դարձվածային տարբերակների յուրաքանչյուր շարքում իմաստային նույնականության պահպանումը:

ՀԴՄ-ների դարձվածային տարբերակների թվարկված բոլոր տիպերը, ինչպես տեսանք, վերաբերում են դարձվածքի ձևին, որն ընդունակ է ենթարկվելու մասնակի փոփոխությունների, բայց՝ ոչ

¹⁶⁶ Հմմտ. *աճել ինչպես սունկը // ~ անձրևից հետո* ՀԴՄ-ն ոռոտերենում և անգլերենում. *распу как грибы (после дождя), spring up like mushrooms (over night)*.

դարձվածքի բովանդակությանը, որը, անկախ ձևափոխություններից, միշտ մնում է նույնը:

Այսպիսով՝

1. Լեզվաբանական գրականության մեջ առանձնացվում է ՀԴՄ-ների տարբերակների հիմնականում երեք տիպ՝ բառային, քերականական և քանակային: Երբեմն նշվում են ՀԴՄ-ների ձևային և այլևայլ զուգաձևությունների հիմունքով առաջացած տարբերակներ:

2. ՀԴՄ-ների տարբերակները դուրս չեն գալիս դարձվածքի տվյալ իմաստի շրջանակներից. ձևը ենթարկվում է մասնակի փոփոխությունների, իսկ բովանդակությունը մնում է գրեթե նույնական:

3. ՀԴՄ-ների տարբերակներից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, անկախ լեզվական միավոր է: Տարբերակային ՀԴՄ-ն, իր փոփոխակումներով հանդերձ, լեզվի մակարդակում հանդես է գալիս որպես մեկ ամբողջություն:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ-ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անվանողական ՀԴՄ-ների իմաստային խմբերը

Երբ խոսվում է այս կամ այն կապակցության դարձվածային իմաստի մասին, որը դարձվածքների որոշակի խմբի ամենավերացական, առավել ընդհանրական իմաստն է, պետք է անպայման նկատի ունենալ նաև կայուն կապակցությունների (ԿԿ) բաղադրիչների մասնակի կամ ամբողջական վերաիմաստավորումը: Վերջինս կապակցությունը դարձվածք դիտելու կարևորագույն պահանջներից մեկն է: Այս առումով հարկ է ընդգծել, որ «դարձվածքները բավականին բարդ, երբեմն հակասական միավորներ են: Դրանք մի կողմից ունեն ամբողջական նշանակություն (նրանց բաղադրիչները կարծես մի տեսակ լուծվում են կառուցի ընդհանուր իմաստի մեջ), մյուս կողմից՝ շատ դարձվածքների բաղադրիչներ հաճախ լիովին չեն զրկվում ազատ կառույցներում դրսևորած իմաստներից, հանդես են գալիս բառական ուղիղ նշանակություններով, որի հետևանքով էլ ԿԿ-ները բովանդակային պլանում դառնում են պատճառաբանված»¹⁶⁷: Այսպիսի հայեցակետը հատկանշական է նաև ՀԴՄ-ների համար:

Լեզվաբանական գրականության մեջ ընդհանրապես առանձնացվում է ՀԴՄ-ների երկու տիպ՝ համեմատություն-դարձվածք և համեմատություն-իդիոմ¹⁶⁸: Վերջինիս բնորոշ է ընդհանրական իմաստը, որը ԴՄ-ների առանձին բաղադրիչների իմաստներից չի

¹⁶⁷ Տե՛ս Լ. Մ. Խաչատրյան, Խոսքիմասային տարաբժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, էջ 67:

¹⁶⁸ Հմմտ. Н. Н. Амосова, Основы английской фразеологии, էջ 145-146, В. М. Огольцев, О фразеологизации устойчивых сравнений, Сб. «ВСФЕ», ч. I, էջ 67, 79, А. Г. Назарян, Фразеология современного французского языка, էջ 199:

բխում: Իսկ համեմատություն-դարձվածքներին հատուկ է դարձվածայնորեն կապված իմաստով անդամի¹⁶⁹ առկայությունը: Այդպիսին կարող է լինել ՀԴՄ-ների կախյալ (համեմատական) բաղադրիչը¹⁷⁰:

Փամանակակից հայերենի ՀԴՄ-ներում համեմատաբար սակավ են **իդիոմները (հատկաբանությունները)**. մեզանում գերակշռում են **համեմատություն-դարձվածքները**, որոնք էլ կքննենք իմաստաբանության դիտանկյունից:

Առհասարակ ԴՄ-ների բովանդակային դիտվածքում առանձնացնում են դարձվածային և քերականական իմաստներ¹⁷¹:

Ի տարբերություն ԴՄ-ների առանձին, առավել որոշակի իմաստների՝ դարձվածային իմաստը նրանց ընդհանրական իմաստն է, որով համախմբվում են ԴՄ-ները՝ հարաբերակցվելով այս կամ այն խոսքի մասին¹⁷²:

Այսպիսով, դարձվածային նյութի քննությունն ավելի նպատակահարմար է կատարել ըստ ԴՄ-ների յուրօրինակ շարքերի կամ խմբերի¹⁷³, որոնք տարբերակվում են իմաստային-քերականական առանձնահատկություններով:

Անդրադառնանք ածականական, բայական և մակբայական ՀԴՄ-ների իմաստաբանությանն առանձին – առանձին:

¹⁶⁹ Բառի՝ դարձվածայնորեն կապված կամ ոչ ազատ իմաստը կապակցության կազմում և նրա շնորհիվ ձեռք բերված իմաստն է (տե՛ս Օ. Ս. Ахманова, Словарь лингвистических терминов, М., «Сов. энциклопедия», 1969, էջ 164, 503):

¹⁷⁰ Հմմտ. Ս. И. Ройзензон, Сравнительные устойчивые обороты, обозначающие цвет, Сб. «ПФ», էջ 258:

¹⁷¹ Դարձվածային և քերականական իմաստների կողքին կարևորվում է նաև դարձվածակազմիչ իմաստի առկայությունը (տե՛ս Л. Е. Кругликова, Структура лексического и фразеологического значения, М., МГПИ, 1988, էջ 5):

¹⁷² Հմմտ. А. Г. Гюльмагомедов, О специфике фразеологического значения, Сб. «Вопросы лексической и фразеологической семантики», Ростов н/Д, РГПИ, 1979, էջ 86, В. П. Жуков, Русская фразеология, էջ 144:

¹⁷³ Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ ՀԴՄ-ները, ըստ իրենց համընդհանուր իմաստների դրսևորման, առանձնահատուկ միջակա դիրք են զբաղեցնում այն դարձվածքների համեմատությամբ, որոնց ընդհանրական կամ դարձվածային իմաստը նախանշվում կամ չի նախանշվում քերականորեն գերադաս անդամի միջոցով (տե՛ս В. П. Жуков, Семантика фразеологических оборотов, էջ 34):

Ա. Ածականական ՀԴՄ-ների իմաստաբանությունը

Ածականը բնութագրվում է հատկանշային բովանդակությամբ, որ ներառում է բազմազան նշանակություններ՝ անձի արտաքին (*գեղեցիկ-իգեղ*), ներքին (*բարի-չար*) հատկանիշներ, նյութական կարողության առումով բնութագրումներ (*հարուստ-աղքատ*), առարկաների գունային (*սև-սպիտակ*), համի (*դառը-քաղցր*) և այլ հատկանիշներ, երևույթների, վերացական հասկացությունների բնորոշումներ (*պարզ-բարդ*) և այլն:

Ածականական ՀԴՄ-ները հիմնականում պահպանում են այդ խոսքի մասին հատուկ իմաստային հատկանիշները:

Ածականական ՀԴՄ-ներում առանձնացվում են իմաստային առանձին խմբեր կամ ենթախմբեր:

1. Անձի հատկանիշ և դրա գնահատականի բարձր աստիճան¹⁷⁴ ցույց տվող ՀԴՄ-ներ, հմմտ. *բողկի պես առողջ, Հոռմի պապի պես անսխալական, հրեշտակի պես բարի*:

2. Իրի հատկանիշ և դրա գնահատականի բարձր աստիճան ցույց տվող ՀԴՄ-ներ. հմմտ. *արճիճի // քարի նման գորշ, քանոնի պես ուղիղ*:

3. Երևույթի՝ վերացական հասկացության հատկանիշ և դրա գնահատականի բարձր աստիճան արտահայտող ՀԴՄ-ներ. հմմտ. *երկու անգամ երկու՝ չորսի պես պարզ, կյանքի պես թանկ, մահու պես դաժան*:

1. Անձի հատկանիշ ցույց տվող ՀԴՄ-ներ

Դրանք վերաբերում են մարդու ինչպես արտաքինին, այնպես էլ ներքին աշխարհին, նրա էությանը:

ա) Անձի արտաքին հատկանիշ արտահայտող ՀԴՄ-ներ

Այդորինակ համեմատություն-դարձվածքների մեծ մասում կախյալ բաղադրիչը հանդես է գալիս հատկանիշի ակտիվացման գործառույթով՝

¹⁷⁴ ԴՄ-ների բովանդակային կառուցվածքի մեջ դարձվածային իմաստի հետ կարևորվում է նաև հուզարտահայտչական նշանակության, դրական կամ բացասական գնահատականի առկայությունը (հմմտ. Ս. Ս. Чернышева, Фразеология современного немецкого языка, էջ 52-53, Խ. Գ. Բադիկյան, Դարձվածայի ոճաբանություն, էջ 12):

սաստկական նշանակություն հաղորդելով ածական գերադաս բաղադրիչին, հմմտ. *հրեշտակի պես գեղեցիկ, օձի պես սառը, փարբեր ինչպես երկինք ու երկիր, առյուծի // եզան // վարագի // ցուլի // փղի պես ուժեղ, խոզի պես գեր, տաշեղի նման թեթև, թղթի պես բարակ // նուրբ, չոփի // ծղոփի պես նիհար, Ադամի չափ ծեր, սատրանայի նման փզեղ, եզան պես առողջ, արագիլի նման բարձրահասակ, թղթի // կավճի // մազադաթի // մեռելի // պարփի ծեփի // քաթանի պես գունաւոր, կոճղի նման ամուր // պնդակազմ* և այլն:

Այս բոլոր ՀԴՄ-ներում ածական գերադաս անդամներով նշված հատկանիշներին կարելի է հավելել *խիստ, շատ, չափազանց, անչափ* և սաստկական իմաստի այլ բառեր¹⁷⁵. ածականական ՀԴՄ-ների պարագայում դրական կամ բացասական գնահատականն իրացվում է՝ մեծ մասամբ սաստկական իմաստ (համեմատության սուբյեկտի հատկանիշի գնահատականի բարձր աստիճան) հաղորդելով այդօրինակ կապակցություններին:

Հմմտ. Նա հիշեց իրենց նշանդրեքի առավուրդ, երբ սև շորեր հագած, *մեռելի պես գունաւոր* Արևիկը կծկվել էր ակումբի մոտի քարե նստարանին ու այնպես ջարդված էր երևում, ասես ընկել էր քարի տակ (ՄԽՀ, 586): Արագածի հարավային լանջի գյուղերում ո՛վ չէր ճանաչում Դավոյին՝ *կոճղի նման ամուր* կազմվածքով այդ քուրդ որսորդին (ՎԱ, 119):

Անձի հատկանիշ արտահայտող ՀԴՄ-ների թեմատիկ այս խմբում հանդիպում են նաև այնպիսի կապակցություններ, որոնցում չկան գերադաս և սպասարկու բաղադրիչներ¹⁷⁶. հմմտ. *վարդի պես* (շատ գեղեցիկ), *կմախքի պես* (չափազանց նիհար), *թթած-կպցրածի նման* (խիստ թուլակազմ), *ինչպես մի պարկեր // նախշ ու նկար* (անչափ գեղեցիկ, չքնաղ), *Գարսուայի նման, ժայռի // լեռան // սարի պես* (1. հաղթահասակ, վիթխարի, 2. շատ պնդակազմ):

Հմմտ. Մին էլ հսկան՝ էն *սարի պես*, Վրա նստեց – մե՛ծ, ահարկու (ՀԹ, 2, 146):

¹⁷⁵ Տե՛ս Ա. Գ. Назарян, նշվ. աշխ., էջ 198, Н. Н. Амосова, Основы английской фразеологии, էջ 146, К. М. Karapetian, English similes, էջ 14:

¹⁷⁶ Ընդհանրապես ՀԴՄ-ներում կարևոր է նաև չափազանցության դերը, որի միջոցով սաստկացվում է այս կամ այն հատկանիշը՝ մեծացվելով կամ փոքրացվելով: Վերջինս հանդես է գալիս որպես չափազանցություն-նվազեցում (նվազատյոթ կամ լիտոտա), (տե՛ս Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, էջ 108-109):

բ) Անծի ներքին հատկանիշ՝ վիճակ արտահայտող ՀԴՄ-ներ

Իմաստաբանական տեսանկյունից մեր ուսումնասիրած ՀԴՄ-ների մեծ մասը (շուրջ վաթսունը) պատկանում է հենց իմաստային այս դաշտին:

Ընդհանրապես դարձվածքներով ավելի ցայտուն, վառ ու պատկերավոր են արտահայտվում մարդու ներաշխարհը, հոգեբանական վիճակներն ու խառնվածքը: Լեզվի դարձվածային նյութի այդ ներունակությունը խիստ բնորոշ է նաև ՀԴՄ-ներին:

Այս դեպքում հատկանշային բովանդակությամբ ՀԴՄ-ների ներգործողը (սուբյեկտը) մարդն է, որը կարող է լինել ազնիվ, անազնիվ, հավատարիմ, խելացի, հիմար, միամիտ, խորամանկ, չար, բարի, հեզ, մեծամիտ, խիզախ, վախկոտ, դաժան, սառնասիրտ և այլն:

Այս ենթախմբի ՀԴՄ-ները ևս ցույց են տալիս հիմնականում հատկանշային հասկացության գնահատականի բարձր աստիճան, հմմտ. *թռչունի պես ազատ, նորահարսի պես խոնարհ, կաշաղակի նման շարախոս, գիշերվա նման խորհրդավոր, երեխայի // մանկան նման անեղծ // անմեղ, աղվեսի պես խորամանկ, սիրամարգի պես գոռոզ, նապաստակի նման վախկոտ, քարի // սառույցի պես սառն, գազանի նման անգութ, գերեզմանի // ձկան // քարի պես լուռ, էշի պես հիմար // անխելք, ոզնու պես փշապատ, ժայռի նման մոայլ, երեխայի պես թույլ, Սողոմոնի նման իմաստուն, ձյան // բյուրեղի պես մաքուր, սնդիկի պես շարժուն, գայլի // խոզի նման ազահ, շան պես հավատարիմ, աղավնու // գառան նման հեզ // մեղմ, առյուծի պես քաջ:*

Հմմտ. Աղավնի էր նրա անունը, և *աղավնու նման էլ մեղմ*, քնքուշ աղջիկ էր (ՎԱ, 86): Նա արժանավոր մարդ է, երդվում եմ, Շատ խոր հմուտ գիտության գաղտնիքների մեջ, *առյուծի պես քաջ* (ՍՍ, ԻՇ, 145):

Միազագաթ ՀԴՄ-ներից շատերը ևս մատնանշում են անծի ներքին հատկանիշ. հմմտ. *կրակի պես* (շատ ճարպիկ, եռանդուն), *օճառի պղպջակների պես* (խիստ դատարկամիտ), *գառնազգեստ գայլի նման* (շատ երկերեսանի), *դառը խոտի պես* (չափազանց անհետաքրքիր), *բորենու // ուրուրի նման* (խիստ դաժան, անգութ), *ոսկու պես* (շատ բարի, ընկերասեր) և այլն:

Այսօրինակ կառույցով ՀԴՄ-ների մի մասն էլ դրսևորում է անձի ներքին-հոգեբանական վիճակի իմաստ. հմմտ. *ինչպես առանց ձեռքերի* (անօգնական), *ջուրն ընկածի պես, թրջված հավի նման, կարասն ընկած մկան պես, կոտրած գերանի պես* (վշտաբեկ), *սև ուրբաթի պես* (1. լուռ, 2. տխուր):

Այդպիսի ՀԴՄ-ները հավասարապես կարող են վերաբերել թե՛ անձին, թե՛ գործողությանը՝ ցուցաբերելով խոսքիմասային տարար-ժեքություն:

Ընդհանրապես ածականն ու մակբայն արտահայտում են հատկանիշի ընդհանուր գաղափար: Իսկ անձի (ներքին) վիճակ արտահայտող ՀԴՄ-ների իմաստային իրացումները կատարվում են խոսքային միջավայրում՝ ըստ լրացյալի խոսքիմասային արժեքի. հմմտ. *ապառաժի նման լուռ* (մարդ), *ապառաժի նման լուռ* (նստել), *գլխին կացնի հարված ստացածի պես* (մարդ), *գլխին կացնի հարված ստացածի պես* (անշարժանալ) և այլն:

ՀԴՄ-ների միջոցով անձի բնութագիրը կարող է տրվել նաև ըստ նրա նյութական կարողության, դրության:

Համեմատենք ՀԴՄ-ների հետևյալ հականշային զույգը. *Կրեսոսի նման հարուստ* (հմմտ. ռուս. *богат как Крез*, անգլ. *as rich as Croesus*), *Հոբի պես աղքատ* (ռուս. *беден как Иов*, անգլ. *as poor as Job*):

2. Իրի հատկանիշ ցույց տվող ՀԴՄ-ներ

Այդօրինակ հատկանշային ՀԴՄ-ները բնութագրում են առարկաները (իրերը) տարբեր տեսանկյուններից՝ ըստ ձևի, մեծության, համաձայն համի, գունային և որակական այլևայլ հատկանիշների: Այդպիսի ՀԴՄ-ների մեծ մասին ևս բնորոշ է նրանց արտահայտած հատկանշային հասկացության սաստկական նշանակությունը, հմմտ. *բյուրեղի պես մաքուր, դառն ինչպես լեղի, թղթի պես բարակ // նուրբ, մեղրի // շաքարի պես քաղցր, արճիճի // քարի նման գորշ, մազի պես բարակ, մեկտաքսի նման փափուկ, քանոնի պես ուղիղ, փաշեղի // փեկուրի նման թեթև, փղոսկրի // արծաթի պես փայլուն:*

Հմմտ. Շապիկը նոր էր, շատ բարձր, փղոսկրի պես փայլուն օձիքով (ՆԴ, 275):

Գոյականի և կապի համադրմամբ կազմված հետևյալ ՀԴՄ-ներն ու նրանց ծավալումները ևս տարբեր առումներով են հատկանշում առարկաները. *լեռան պես, ծառի պես, սարի պես // չափ* (շատ մեծ, խոշոր), *մաստրի չափ, գնդասեղի գլխի չափ, թռչունի կտուցի չափ, լուցկու փուսի չափ, ծրի աչքի չափ, ասեղի ծայրի չափ, կորեկի չափ, եղունգի չափ* (շատ փոքր, աննշան) և այլն:

Հմմտ. Մենք պատերազմի ժամանակ մի *եղունգի չափ* հացով ենք ապրել (ՈւԴԲ, 189):

3. Երևույթի և վերացական հասկացության հատկանիշ ցույց տվող ՀԴՄ-ներ

Այդ կարգի ՀԴՄ-ները կապվում են երևույթների և վերացական հասկացությունների հետ՝ դրսևորելով նրանց հատկանիշների գնահատականի բարձր աստիճան. *արևի լույսի // օրվա պես պարզ, ջուր խմելու չափ // պես հեշտ, սև աղվեսի պես հազվագյուտ, գորդ-յան հանգույցի պես բարդ, հայելու պես պարզ, մյուռոնի // մեռոնի պես սրբազան, կյանքի պես // չափ քաղցր, մահու // մահվան չափ փխուր // դժվար // դաժան, մոր կաթի // թթվածնի // օդի նման անհրաժեշտ* և այլն:

Հմմտ. Ա՛խ, հայրենաշունչ ձեր հորովելը *Կյանքի չափ քաղցր* է և սիրավետ (ՀՍ, 90): Տխուր էր տեսարանը, *մահվան չափ փխուր* էր (ՐՍ, 452): Եթե բանը մնաց կամավոր համաձայնության, հողատեր-աղան այն գյուղացուց, որին հողն *օդի նման անհրաժեշտ* է, կվերցնե իր ուզածին չափ արենդ (ՎՏ, 380):

ՀԴՄ-ների վերոհիշյալ խմբավորումը չի կարելի բացարձակացնել: Նշված խմբերի դարձվածքները կապված են միմյանց հետ. միևնույն ՀԴՄ-ն, լինելով բազմիմաստ, կարող է հանդես գալ միաժամանակ մի քանի իմաստային խմբերում¹⁷⁷:

Համեմատենք ապառաժի // ժայռի // քարի // գրանիտի // կաղնու // կոճղի // երկաթի // կապարի // պողպատի նման ամուր // դիմացկուն // կարծր // հաստատուն // պինդ // ուժեղ տարբերակային ՀԴՄ-ները, որոնք կարող են արտահայտել անձի և արտաքին-ֆիզիկական, և ներքին-հոգեկան հատկանիշներ:

¹⁷⁷ Հմմտ. Л. Д. Игнатьева, Структурные и семантические свойства..., էջ 13:

Հմմտ. Ջահել ժամանակս մեջքս կաղնու նման պինդ էր (ՎԱ, 136): *Կաղնու նման կարծր* նրա կամակորուքունը կաղնու պես էլ բոցավառվեց (ԱՍՈ, 544):

Գիշերի պես խորհրդավոր, սառուցի պես սառն, օճառի պղպջակների պես, օվկիանի պես // նման անեգր // անհուն, ոզնու պես փշուր // փշապատ, արևի // արևների նման պայծառ // լուսավոր // հուր և մի շարք այլ ՀԴՄ-ներ խոսքաշարում հնարավորություն ունեն կապակցվելու ինչպես անձ, այնպես էլ երևույթ և վերացական հասկացություն ցույց տվող բառերի հետ:

Հմմտ. Վերջապես մայրը համոզվեց, որ Ռուբիկը վատ տղա չէ: Այո՛, մի քիչ չարածճի է, *ոզնու պես փշուր*, սակայն հոգով բարի (ԲՍ, 116): Ձգում եմ *ոզնու պես փշապատ* մտքերս, բայց նրանք վերստին կծկվում-գնդվում են (ՊՍ, 6, 198): Թռչում էր անհագ՝ դեպի արևը, և ինքն էլ *պայծառ՝ նման արևին* (ԱԻ, 2, 85): Ու կլինես դու իմ անբիծ հարսնացուն՝ *Արևների նման պայծառ, լուսավոր* (ԵՉ, 76): Օ՛, թովչություն արնահուն երգի ու կյանքի, –... Երգ՝ *արևի նման հուր*, կյանքի պես անգին (ԵՉ, 3, 466):

Աշխարհի չափ, ծովի չափ, սարի չափ (շատ մեծ) հոմանշային շարքի ՀԴՄ-ները կարող են վերաբերել և՛ իրերին, և՛ երևույթներին ու վերացական հասկացություններին:

Հմմտ. Հեռվից աչքին ընկան արևի տակ հուրիացող ցորենի՝ *սարի չափ* շեղջերը (ՀԼԴԲ, 518): – Բա ո՞նց, մեծին չլսողի ոտքը քարին շատ կառնի. հլա սպասիր... *Սարի չափ* բեռ է վերցրել իր մեջքին, թող քաշի (ՍԻՆ, 461): – Մարդուց դուրս եկած աղջիկ է, ով կիմանա նրա *սարի չափ* ցավը (ն. տ., 522):

Բառաիմաստային լայն կապակցելիությամբ օժտված են հատկապես **գունանուն բաղադրիչով ՀԴՄ-ները**:

Գունանունները մասնագիտական գրականության մեջ ենթարկվել են համակողմանի քննության. ուշադրություն են դարձրել հատկապես նրանց իմաստային կառուցվածքին, լեզվաոճական արժեքին, դարձվածակազմիչ դերին¹⁷⁸:

¹⁷⁸ Տե՛ս Ս. Ե. Кругликова, Фразеологические единицы современного русского литературного языка с «цветовыми» прилагательными, (ԱԿԴ), Ս. Ա. Григорян, Семанитическое поле цветообозначений армянского языка, (ԱԿԴ), Ե., ԵԿՄ, 1989, նաև՝ Ս. Ա. Գրիգորյան, Հայերենի գունանունները և նրանց լեզվաոճական արժեքը, Ե., «Նաիրի», 1998:

Հետաքրքրություն են ներկայացնում գունանիշ բաղադրիչով դարձվածքներին և հատկապես ՀԴՄ-ներին նվիրված ուսումնասիրությունները¹⁷⁹, որոնցում տարաբնույթ հարցադրումներ ու մեկնաբանություններ են կատարվել: Գունանուններն արտահայտում են գունային հասկացություն. նրանց իմաստային գլխավոր հատկանիշը գույն ցույց տալն է:

Դարձվածքների կազմությանն առավելապես մասնակցում են հիմնական գույների անունները կամ միջուկ գունանունները¹⁸⁰:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ՀԴՄ-ներում գունանունները մեծ մասամբ կիրառվում են ուղիղ իմաստներով՝ պահպանելով իրենց գունային-նշանային իմաստները: Դրանցում միջուկ գունանունները կապակցվում են «այնպիսի կապական կառույցների հետ, որոնց անվանական բաղադրիչի բառիմաստային դաշտին ամրագրված է տվյալ միջուկի գունային այս կամ այն երանգը»¹⁸¹:

ՀԴՄ-ներում գունանունների թե՛ ուղղակի, թե՛ փոխաբերական կիրառությունների դեպքում վերաիմաստավորված է համարվում ողջ համեմատական կապակցությունը:

Գունանուն բաղադրիչով համեմատություն-իդիոմների ընդհանուր իմաստը չի պայմանավորվում նրանց բաղադրիչների առանձին իմաստներով: Նրանք հատկանշվում են լրիվ վերաիմաստավորմամբ: Գունանուններով համեմատություն-իդիոմները մեզանում հազվադեպ են, հմմտ. *կարմիր թեյի պես // սև թեյի պես* (համաբանություն՝ ցայտուն, պատկերավոր), *կանաչ ինչպես խոտը* (երիտասարդ, անփորձ), *սև ուրբաթի պես* (1. տխուր, 2. լուռ), *սև*

¹⁷⁹ Տե՛ս С. И. Ройзензон, նշվ. աշխ., Լ. Մ. Խաչատրյան, նշվ. հոդվածը, «Մխիթար Գոշ», հ. 1, նշվ. հոդվածը, «Բանբեր ԵՊՀ-ի», հ. 1, Մ. Ղազարյան, Գունանիշ բաղադրիչով դարձվածքները ֆրանսերենում և դրանց համարժեքները ռուսերենում ու հայերենում, «Դարձվածաբանության խնդիրներ»:

¹⁸⁰ Լեզուների գունային համակարգում տարբերակվում են գունանվան միջուկ և եզրային անդամներ հասկացությունները: Հայերենի գունային համակարգում միջուկներ են դիտվում *սև, սպիտակ, կարմիր, կանաչ, կապույտ* և *դեղին* գունանունները: Գունային ենթադաշտի եզրային անդամներից են *մուօ, խավար, ճերմակ* և այլ ածականները (այդ մասին մանրամասնորեն տե՛ս С. А. Григорян, նշվ. աշխ., էջ 18-19, Լ. Մ. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, էջ 95-97):

¹⁸¹ Տե՛ս Լ. Մ. Խաչատրյան, Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորներն արդի հայերենում, էջ 17:

էին (ԱՇ, 2, 162): Հին, արդեն մորուքները ճերմակող զինվորների կողքին կանգնած էին նաև երիտասարդներ՝ **ձյութի պես սև մազ-մորուքով** (ՍԽՄ, 558): Մեծ եղբոր գլուխը պատած էր **կուպրի նման սև** և կոշտ **մազով** (ԱԲ, 292): **Մազերը՝ սև ինչպես գիշեր**, մարմինը՝ լույս մի ցերեկ (ՀՇ, 14): **Մազերը ագռավի փեղուրի պես սիփ-սև** - ահա Նատալյայի կերպարանքը (ԱՇ, 2, 167): Մի օր նա բահը ձեռքին այգում ջուր էր կապում, մեկ էլ տեսնում է երկու օձ՝ մինը սիրուն, չալտիկ, մյուսը՝ **կուպրի պես սև** (ՎԱ, 544): Բայց երբ մարդ են ուղարկում ձիու ետևից, պարզվում է, որ **ագռավի պես սև հովափրակ** է և ոչ թե աշխետ զամբիկ (ՊՍ, 3,189):

Սպիտակ (ճերմակ) գունանունով ՀԴՄ-ներով ընդգծվում է մարդու մազերի, մաշկի, ինչպես նաև իրի, կենդանու և երևույթի չափազանց, սաստիկ սպիտակությունը:

Հմմտ. *ձյունի // կավճի // լույսի // թղթի // կաթի պես // նման սպիտակ // ճերմակ*:

Ողական ամրոցը շրջապատող ծառազարդ բլուրները մխում էին **ձյունի պես ճերմակ գոլորշիներով** (ՐՍ, 17): Հուզմունքից դողում էր **ձյունի պես ճերմակ** նրա *մորուքը* (ՍԽՀ, 463): Բայց **ձյունի պես ճերմակ ձիուն** հետևում էր այն սև ձին (ՀՇ, 90): Մի անգամ նա տեսավ Մաշոյին՝ **ձյունի նման սպիտակ շորերով**, մազերի մեջ՝ թառամած մանուշակներ (ԱԲ, 71): **Լույսի պես սպիտակ դեմքին** խաղում էր ժպիտ մի վերին (ԵԶ, 3, 76): Անզապելի ցանկությամբ նա նայում էր մերթ գեղեցկուհու ուռուցիկ կրծքին, մերթ **թղթի պես ճերմակ պարանոցին** (ԱՇ, 4, 88): Բայց որոնց ներսը եթե մարդ քննի, **Կաթի պես ճերմակ** մի լյարդ կգտնի (ՍՍ, 75):

Համեմատենք *թղթի*¹⁸⁵ // *կրավի* // *քաթանի* // *մազաղաթի* // *մարմարի* // *կավճի* // *գաջի* // *պարի* // *պարի ծեփի պես սպիտակ // ճերմակ // գունապ* ՀԴՄ-ները, որոնք մեծ մասամբ մատնանշում են մարդու դեմքի և շրթունքների չափազանց գունատությունը:

Հմմտ. Նա դժվարությամբ էր շնչում, *դեմքը թղթի պես գունապ* էր (ԱՇ, 2, 399): Բայց մոմե այդ գունատ գուսանի **թղթի պես**

¹⁸⁵ Ուշագրավ է, որ ռուսերենում *белый как полотно* ՀԴՄ-ն վերաբերում է մարդու չափազանց գունատ դեմքին, իսկ հայերենում *թղթի պես ճերմակ* ու անգլերենում *as white as a sheet* ՀԴՄ-ներն ունեն և «չափազանց գունատ», և «չափազանց սպիտակ» իմաստները:

ճերմակ շուրթերից Հորդում էր երգը հանկարծ ամպրոպի, որոտի պես թափով (ԵԶ, 3, 69):

Կարմիր գունանվանն արդի հայերենում իմաստաբանորեն հարում են մի շարք գոյականներ՝ *արյուն, կրակ, գինի, նուռ, վարդ, մարջան, ճակնդեղ* և այլն:

Այս գունանունով ՀԴՄ-ները վերաբերում են մարդու արտաքինին (այտերին, շրթունքներին), իրերին և երևույթներին¹⁸⁶:

Հմմտ. Բայց մերթընդմերթ նրա՝ **մարջանի նման կարմիր շրթունքներն** արտասանում էին այդ խոսքերը. «Ա՛խ, որքան ազնիվ էր նա, ամիս, որքան սիրում էի նրան...» (ԲՍ, 472): Շապիկը նոր էր՝ շատ բարձր, փղոսկրի պես փայլուն օձիքով և **արյան պես կարմիր փողկապով** (ԼԴ, 275): Վաշինգտոնի իմ տունը շրջապատել են **նռան պես կարմիր** «Մուստանգ» մեքենաներ (ԱՀ, Գ, 2, 8):

Կապույտ գունանունով կազմված համեմատություն-դարձվածքները ևս ունեն գործառական հաճախականություն՝ արտահայտելով գունային հասկացության սաստկական իմաստ:

Հմմտ. *երկնքի // լողակի (լեղակի) // ծովի պես // նման կապույտ*¹⁸⁷:

Հմմտ. Կապույտ *աչքեր* ուներ, **երկնքի պես կապույտ** (ՎՀ, 26): Խեղդամահ էր՝ **լեղակի պես կապույտ** իր *լեզուն* բերանից կախած (ԵԶ, 3, 66): Որքան համարձակ և ճշգրիտ էին դառնում իմ պատասխանները, այնքան զինվորական բլուզով ուսուցչի դեմքը պայծառանում էր, և զգվանքն ավելանում **ծովի նման կապույտ աչքերի** մեջ (ՎԱ, 162):

Այսպիսով՝

1. Ածականական ՀԴՄ-ների մեջ ընդգրկվում են անձերին, իրերին, երևույթներին և վերացական հասկացություններին վերաբերող ՀԴՄ-ներ:

¹⁸⁶ Հմմտ. անգլերենում *as red as a fire* (հայ. *կրակի // բազուկի // ճակնդեղի պես կարմիր*) ՀԴՄ-ով բնութագրվում է մարդու՝ ամոթից, զայրույթից, շփոթմունքից կարմրած դեմքը, իսկ *as red as blood / rose / cherry* (հայ. *կարմիր ինչպես արյունը / վարդը / կեռասը*) տարբերակային դարձվածքներով հատկանշվում են մարդու այտերը և զանազան իրեր (տես Հ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 34, 66):

¹⁸⁷ Հետաքրքիր է, որ **կապույտ** (անգլ. **blue**) գունանունը չի գործառվում անգլերենի՝ գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածքների կազմության ժամանակ՝ չնայած հաճախակի հանդիպող գույներից է (տես Ս. Մ. Поижензон, նշվ. աշխ., էջ 262): Մեզանում համեմատաբար քիչ են գործածվում **կանաչ** և **դեղին** գունանուններով ՀԴՄ-ները, հմմտ. *խոտի // զմրուխտի պես կանաչ, հակինթի // մաղձի // ոսկու պես դեղին*:

2. Ածականական ՀԴՄ-ների ներքին այդպիսի դասակարգումը հարաբերական է. իմաստաարժեքային այս տեսակին պատկանող շատ ՀԴՄ-ներ, լինելով բազմիմաստ, կարող են ընդգրկվել մի քանի խմբերի մեջ՝ վերաբերելով թե՛ անձերին, թե՛ իրերին, թե՛ երևույթներին ու վերացական հասկացություններին:

3. Բազմիմաստության տեսանկյունից հատկանշական են գունանուն բաղադրիչով ՀԴՄ-ները:

Բ. Բայական ՀԴՄ-ների իմաստաբանությունը

Բայական ՀԴՄ-ները կարելի է դիտարկել ոչ միայն բաղադրիչների քանակական, այլև հասկացական բովանդակության հայեցակետից:

Բայը դասվում է հատկանիշ ցույց տվող խոսքի մասերի շարքը: Եթե հատկանշային խոսքի մասերից ածականն ու մակբայն արտահայտում են անփոփոխ հատկանիշ, դերանունները՝ հատկանիշներ՝ առանց դրանք կոնկրետացնելու, ապա բայը դրսևորում է փոփոխվող հատկանիշ: Փաստորեն, իմաստաբանորեն բայը բնութագրվում է հատկանիշի ընթացայնության առումով:

Չպետք է մոռանալ, որ «դարձվածքների անդամներն առաջին հերթին այս կամ այն խոսքի մասին պատկանող բառեր են, որոնք դարձվածքների կազմում ենթարկվում են որակական, քանակական, իմաստային և քերականական փոփոխությունների»¹⁸⁸:

Առհասարակ բայական ԴՄ-ները կազմվում են երկու՝ անվանական և բայական մասերից: Բայական ՀԴՄ-ների գերադաս բաղադրիչն անպայման բայ է, իսկ կախյալ բաղադրիչը դրսևորվում է **կապ+կապի խնդիր** կառույցով:

Ընդհանրապես բայական ՀԴՄ-ներում հաճախ գերադաս բաղադրիչներն իմաստային առումով անփոփոխ են մնում, իսկ կախյալ (համեմատական) անդամները կարող են՝

1. սաստկական նշանակություն հաղորդել գործողությանը՝ արտահայտելով գործողության արդյունավետության բարձր աստիճան,
2. հանդես գալ փոխաբերական իմաստով՝ արտահայտելով

¹⁸⁸ Տե՛ս Ա. Մ. Чепасова, Л. А. Ивашко, Проблема структурности фразеологического значения, Сб. «Фразеологическое значение в языке и речи», էջ 18:

հիմնականում գործողության ընթացք՝ ձև¹⁸⁹:

1. Բայական ՀԴՄ-ներ, որոնց կախյալ բաղադրիչներն արտահայտում են գործողության արդյունավետության (բարձր կամ ցածր) աստիճան

Այդօրինակ ՀԴՄ-ների համեմատական անդամը բայի արտահայտած գործողությանը հաղորդում է սաստկական իմաստ՝ հանդես գալով չափ ու քանակի մակբայի գործառույթով: Այդպիսի ՀԴՄ-ներով նշված գործողության իմաստին կարելի է ավելացնել *շատ, խիստ, սաստիկ, չափազանց* սաստկական իմաստի բառերը, ինչպես նաև մասի և ամբողջի տեսանկյունից հատկանիշի չափը ցույց տվող *ամբողջովին, բոլորովին, լիովին* մակբայները:

Ելնելով գլխավոր բաղադրիչի իմաստային կառուցվածքից՝ կարող ենք առանձնացնել ժամանակակից հայերենի այս կարգի բայական ՀԴՄ-ների մի քանի խմբեր:

ա) Տարածության մեջ շարժում ցույց տվող ՀԴՄ-ներ.

թափվել ինչպես առարկայան եղջյուրից (անչափ շատ թափվել), *հեղեղի // գետի // աղբյուրի նման հոսել* (չափազանց շատ հոսել) և այլն:

Հմմտ. Սկսվել են աննկարագրելի բարբարոսություններ ու չարագործություններ, մարդկանց արյունը *հեղեղի նման հոսում է* (ՍՊ, ԿՊ, 88):

բ) Տարբեր ֆիզիկական գործողություններ ցույց տվող ՀԴՄ-ներ.

գրաստի // ձիու // եզի // էջի պես աշխատել // բանել (չափազանց շատ աշխատել), *յոթ մարդու չափ ուրել* (խիստ շատ ուտել), *խոզի պես ուրել // լափել* (շատ-շատ ուտել), *ծղի // ծիպիկի նման ուրել* (շատ քիչ ուտել) և այլն:

Հմմտ. – Բա ըստնց հաց կուտեն, էդ հո *ծիպիկի նման ես ուրում* (ՄԱ, 71):

¹⁸⁹ А. Г. Назарян, Фразеология современного французского языка, էջ 198-199:

զ) Մտավոր-հոգևոր գործողություններ արտահայտող ՀԴՄ-ներ.

ուռու // ուռի պես դողալ (խիստ երկյուղ կրել), մագնիսի պես ձգել // քաշել (լիովին գրավել), փախչել ինչպես ժանտախտից // վարակից, վախենալ ինչպես սաքանան խնկից // կրակից (մեկից՝ մի բանից խիստ՝ շատ-շատ վախենալ)¹⁹⁰, շան պես կապվել (մեկի՝ մի բանի հետ շատ կապվել՝ մտերմանալ), ճպուռի պես շաղակրատել (շատ խոսել), մահու չափ արել (սաստիկ ատել), խելագարի պես սիրել (շատ-շատ սիրել), կրակի պես վախենալ, շան պես դողալ (անչափ վախենալ), օձի պես խայթել (սաստիկ խոցել), կայծակի նման շանթել (խիստ վիրավորել), եղբոր պես սիրել, հոր պես սիրել (շատ սիրել), հնդկահավի պես փքվել (շատ գոռոզանալ), ուրախանալ // հրապուրվել ինչպես երեխան՝ խաղալիքով (խիստ՝ շատ-շատ ուրախանալ) և այլն:

Հմմտ. Անձանոթը նայում էր հեռացող-մոտեցող աղջկա ոտքերին, ուրախանում, ինչպես երեխան՝ խաղալիքով (ԶԽ, 45):

դ) Առարկայի վիճակն իբրև եղելություն՝ գործընթաց արտահայտող ՀԴՄ-ներ.

մի կաթիլ ջրի պես աներևութանալ (լիովին անհետանալ), շան պես հոգնել, մահու չափ հոգնել (սաստիկ հոգնել), տերևի պես դողալ, դասարբխանի շան պես մրսել (սաստիկ մրսել), ջրի նման երկարել, օխտը դևի հեքիաթի պես երկարել (շատ-շատ երկարել), թրջված հավի // մկան նման սրթսրթալ (սաստիկ մրսել), կուարի // ձյութի // ածխի պես սևանալ (շատ սևանալ), քաթանի // կավճի // պատի ծեփի պես գունարվել (չափազանց գունատվել), ձյան // կաթի // լոյսի պես սպիտակել (խիստ սպիտակել), լեղակի պես կապտել (շատ-շատ կապտել), մաղձի // ոսկու պես դեղնել (խիստ դեղնել), զմրուխտի // խոտի պես կանաչել (շատ կանաչել), արյան // վարդի // նորահարսի // բազուկի // ճակնդեղի պես կարմրել (սաստիկ կարմրել) և այլն:

Հմմտ. – Սպանեցիր, Մացանկ ապեր, – ճակնդեղի պես կարմրեց Գրիգորը (ՆԶ, 22):

¹⁹⁰ Հմմտ. ռուս. *бежать как от чумы, как черт ладана бояться*, անգլ. *avoid smb./sth. like the plague*.

Բայի խոսքիմասային նշանակությամբ արժեքավորվող ՀԴՄ-ների իմաստային այս բոլոր խմբերում էլ համեմատական կամ կախյալ բաղադրիչը ոչ թե նոր իմաստ է արտահայտում, այլ գերադաս բայ բաղադրիչով արտահայտված ընթացային հատկանիշն օժտում է սաստկական նշանակությամբ:

2. Բայական ՀԴՄ-ներ, որոնց կախյալ բաղադրիչները ցույց են տալիս գործողության ձև՝ ընթացք

Ընդհանրապես դարձվածաբանական գրականության մեջ նշվում է, որ «դարձվածային իմաստ արտահայտելու համար կառույցի բոլոր բաղադրիչների վերաիմաստավորում պարտադիր չէ. եթե ԿԿ-ների մեկ բաղադրիչն է հանդես եկել վերաիմաստավորված դարձվածային նշանակությամբ (միաբևեռ ԴՄ), երկուսը (երկբևեռ ԴՄ), երեքը (եռաբևեռ ԴՄ) և այլն, ապա նման կառույցների ներսում իմաստային ինքնուրույնություն են ցուցաբերում այն բաղադրիչները, որոնք հարադրվում են վերաիմաստավորված դարձվածային բաղադրիչներին»¹⁹¹:

Ինչ վերաբերում է բայական **միաբևեռ ՀԴՄ-ներին (унилатеральные КФЕ)**, ապա նրանց համեմատական բաղադրիչները կորցնում են իրենց իմաստները՝ հանդես գալով բոլորովին նոր նշանակություններով: Այդօրինակ ՀԴՄ-ների գերադաս բաղադրիչները պահպանում են իրենց բառարանային (ուղղակի կամ փոխաբերական) իմաստները, իսկ կախյալ անդամները դրսևորում են մակբայական իմաստներ՝ հիմնականում նշելով այս կամ այն գործողության ձևը: Ժամանակակից հայերենի բայական ՀԴՄ-ներում ավելի մեծ հաճախականություն ցուցաբերում են հենց միաբևեռ կամ միակողմ վերաիմաստավորմամբ կապակցությունները, որոնք ևս ենթարկվում են թեմատիկ դասակարգման.

ա) Տարածության մեջ շարժում ցույց տվող ՀԴՄ-ներ.

շան նման քարշ գալ (անգործ թափառել), կրիայի պես քայլել (շատ դանդաղ քայլել), վանդակում փակված գազանի պես դետուդեն

¹⁹¹ Տես Լ. Մ. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կառույցի կապակցություններում, էջ 63:

ընկնել (անելանելի վիճակում դետուդեն ընկնել), նապաստրակի պես վազել (շատ արագ վազել), կարկուտի պես տեղալ // թափվել (իրար հետևից և արագորեն տեղալ, թափվել), քամու // կայծակի // հողմի // ծրի պես թռչել // սլանալ // սուրալ (շատ արագ թռչել), պարկի պես ընկնել (ուժասպառ ընկնել), խայթվածի պես վեր թռչել (իսկույն՝ հանկարծ՝ անակնկալի եկած վեր թռչել), որսկանի բարակի պես վազել (անընդհատ դետուդեն ընկնել), քարի պես ընկնել (ամբողջ մարմնով գետին տապալվել), գնդակի պես թռչել (շատ արագ թռչել), գողի նման քայլել (զգուշությամբ քայլել), սարանի չարխի // հողի պես պտտվել (1. անընդհատ շարժման մեջ լինել, 2. իր շուրջը պտտվել), խենթի // խելագարի պես վազել (անմտաբար՝ մոլեգնած վազել՝ փախչել), սրվերի նման ներս մտնել (աննկատելի ներս մտնել), կրակից փախչողի պես դուրս թռչել (արագ՝ անմտաբար դուրս թռչել), գիշերաշրջիկի // լուսնուրի պես դեգերել (ինքնամոռացության մեջ շրջել՝ դեգերել), թիթեռնիկի // թիթեռնիկների նման շուրջը պտտվել (ոգևորությամբ անվերջ մեկի՝ մի բանի շուրջը պտտվել) և այլն:

Հմմտ. Զավահիրը թեթև թիթեռնիկի նման պտտվում էր յուր սկետուրի շուրջը և նորա հրամաններն էր կատարում (ԲՊ, 27):

բ) Տարբեր ֆիզիկական գործողություններ (մարդու ֆիզիկական, ֆիզիոլոգիական գործունեություն, ֆիզիկական գործողություններ տարբեր առարկաների նկատմամբ և այլն) արտահայտող ՀԴՄ-ներ.

գայլի պես լսվել (ազահորեն ուտել), մոր կաթի պես խմել (մեծ ախորժակով խմել), մեռելի պես քնել (շատ խորը քնել), սրվերի // շուքի պես հերկել (մեկին անընդհատ հետապնդել), դարանել (մեկին) ինչպես կատուն մկանը (մեկին ուշադիր դարանել՝ սպասելով հարմար առիթի՝ նրան բռնելու կամ նրա վրա հարձակվելու համար), գեղի բերանն ընկած տաշեղի // քամու բերանն ընկած տերևի պես քշել (թեթևորեն քշել), առյուծի պես կռվել (քաջաբար կռվել), սիրամարգի պես պճնվել (ճոխությամբ զարդարվել), մեքենայի պես աշխատել (լիակատար բեռնվածությամբ աշխատել), ժամացույցի

պես աշխատել (ճշգրիտ՝ անընդհատ՝ անդադար աշխատել)¹⁹² և այլն:

Հմմտ. – Դու դեռ կտեսնես: Այնպես կարգի բերեմ, որ բոլորը ժամացույցի պես աշխատեք (ՁԽ, 282):

գ) Մտավոր-հոգևոր գործողություններ (մարդու մտավոր-հոգևոր գործունեություն, մարդու հոգևոր ներգործությունը մեկի վրա, հոգևոր դրություն և այլն) արտահայտող ՀԴՄ-ներ.

հինգ մատի // ջրի պես գիտենալ (հանգամանորեն՝ շատ վարժ գիտենալ), *երազի նման հիշել* (աղոտ կերպով հիշել), *շան պես հասկանալ* (շատ արագ կողմնորոշվել), *թուփակի պես կրկնել* (մեխանիկորեն կրկնել), *սոխակի պես երգել* (վարպետորեն և գեղեցիկ երգել), *հալած յուղի պես ընդունել* (անվերապահորեն ընդունել), *աչքի լույսի պես սիրել // փայփայել* (որպես ամենաթանկագին բան սիրել՝ փայփայել), *շան // սատանայի պես սրել* (անամոթաբար ստել), *խաբել ինչպես մանկանը իր խաղալիքով* (միամտացնելով խաբել), *սպունգի // խողովակի պես կլանել* (անմիջապես ընդունել տեսածը՝ լսածը), *ոչխարի (հոտրի) պես (մեկին) հետևել* (կուրորեն ընդօրինակել), *քար զցած գորտի պես լռել* (հանկարծակի լռել), *կոճղի // գերեզմանի // քարի // ձկան պես լռել* (համառորեն և շարունակ լռել), *զգալ ինչպես ձուկը ջրում* (անկաշկանդ զգալ իրեն), *զգալ ինչպես փշերի // ասեղների // մեխերի վրա* (անհանգիստ զգալ իրեն), *զգալ ինչպես իր տանը* (շատ լավ զգալ իրեն), *զգալ ինչպես ափ նետված ձուկը* (շատ վատ զգալ իրեն), *այսօրվա պես հիշել* (պարզ կերպով հիշել) և այլն:

Հմմտ. Սուրենն այսօրվա պես հիշում է առաջին ծանոթությունն այդ երևելի մարդու հետ (ԲՍ, 41):

¹⁹² Հետաքրքիր է Վ. Մ. Մոկիենկոյի դիտարկումը՝ *մեքենայի պես աշխատել (работать как заведенная машина)* և *ժամացույցի պես աշխատել (работать / идти как часы)* ՀԴՄ-ների առնչությամբ, որ առաջինի մեջ բացասական գնահատական է առկա (այն բնութագրվում է որպես մեխանիկորեն կատարվող գործողություն), իսկ երկրորդը հատկանշվում է դրական գնահատականի առկայությամբ՝ ցույց տալով դիմաբանական կատարվող գործողություն (տես В. М. Мокиенко, Загадки русской фразеологии, М., «Высшая школа», 1990, էջ 35-36):

դ) Առարկայի վիճակն իբրև գործընթաց՝ եղելություն դրսևորող ՀԴՄ-ներ (կյանքի սկիզբ, ընթացք և ավարտ, զանազան վիճակներ, զգացողություններ, հույզերի արտաքին դրսևորումներ և այլն)։

ապրել ինչպես շուն ու կատու (իրար հետ անհաշտ ապրել), ապրել ինչպես Աբրահամի գոգում, աղայի // թագավորի պես ապրել (ճոխ ու անհոգ կյանք վարել), մի տան պես ապրել (ապրել իբրև հարազատներ), երկնքի թռչունների պես ապրել (անհոգ կյանքով ապրել), շան նման սարկել (աղքատության ու մենակության մեջ մեռնել)¹⁹³, փոխվել ինչպես երազում // հեքիաթում (աննկատելի արագ և հիմնովին փոխվել), ժանտախտի նման տարածվել (արագորեն՝ մեծ ընդգրկումով տարածվել), սնկի պես աճել (մեծ արագությամբ աճել), մոմի պես հալվել (արագորեն հալվել՝ հյուծվել), քարի // արձանի պես կանգնել (անշարժ դիրքով կանգնել), կաթվածահարի // օձից խայթվածի // գլխին կացնի հարված սրացածի պես կանգ առնել (հանկարծակի կանգ առնել), երազի // ծխի նման անցնել (շատ շուտ և աննկատ անցնել իբրև անձկալի մի բան) և այլն։

Հմնտ. Եվ մանկության օրերը երազի նման գալիս ու անցնում էին նրա հիշողության մեջ որպես իր մոտից անցնող գետի սրընթաց հոսանքը (ԲՈ, 129)։

Ժամանակակից հայերենի դարձվածքների, այդ թվում՝ ՀԴՄ-ների ճնշող մեծամասնությունը կազմող բայական դարձվածքների մեջ համեմատաբար սակավ են **իդիոմները**։ Վերջիններիս բնորոշ է լրիվ իմաստային փոխակերպումը՝ անկախ բաղադրիչների առանձին իմաստներից։

Մասնագիտական գրականության մեջ նույնիսկ նշվում է, որ «երբե համեմատության գերադաս անդամն ինչ-որ կերպ (հեզնաբար, չափազանցությամբ, հականշորեն) վերաիմաստավորված է, ապա մեր առջև իդիոմ է»¹⁹⁴։

Առհասարակ իդիոմների ընդհանրական իմաստի առաջացումը խարսխվում է նրանց բաղադրիչների իմաստային թուլացման գործոնի վրա։

¹⁹³ Հմնտ. րուս. умереть (подохнуть) как собака, անգլ. die like a dog.

¹⁹⁴ Տե՛ս Յ. Մ. Ротт, Компаративные фразеологизмы в русском, немецком и французском языках, Сб. «Вопросы романо-германского языкознания», էջ 118։

Անշուշտ, ՀԴՄ-ների ամբողջական վերաիմաստավորումն¹⁹⁵ օժտում է նրանց թե՛ կառուցվածքային, թե՛ իմաստային ամբողջականությամբ:

Համեմատենք իդիոմատիկ հատկանիշով առանձնացող բայական հետևյալ ՀԴՄ-ները.

անպետք թաշկինակի պես դեն նետել (ավելորդ համարելով՝ լքել), *դանակի // թրի պես կտրել* (բուժել), *էնֆիեի պես քիթը քաշել* (շատ հեշտ հաղթահարել), *խելքը թրի նման կտրել* (շատ լավ հասկանալ), *մոմի նման այրվել* (ողջ կյանքում ուրիշներին լավություն անել), *մոմի պես հադնել* (մեկի նկատմամբ նվիրվածություն ցուցաբերել), *ռումբի պես պայթել* (ցնցող ազդեցություն թողնել), *ծկան պես թպրտալ* (անելանելի՝ նեղ դրության մեջ լինել), *աղի պես հավվել* (1. ամոթից կարմրել, խիստ ամաչել, 2. անհայտ՝ ուրիշներին անիմանալի լինել, 3. մոռացման տրվել), *ուղտի պոչի նման ո՛չ երկարել, ո՛չ կարճանալ* (կյանքում իր գործունեության մեջ առաջընթաց չունենալ), *ասես ոտքի տակ ծու լինել* (շատ դանդաղ քայլել), *վարդի նման բացվել* (շատ գեղեցկանալ), *ջայլամի պես գլուխն ավազի // հողի մեջ թաղել* (համառորեն հրաժարվել վտանգի աչքերին նայելուց), *ծամոնի պես ծամել* (սաստիկ քննադատության ենթարկել) և այլն:

Հմմտ. Հիմա էլ աշխատանքից ուշանամ կամ գործի չգնամ, Ռազմիկ ջան, ինձ ու կնկանս կզցեն բերանները, *ծամոնի պես կծամեն* (ՔԹ, 274):

Համեմատություն-իդիոմներում պատահում են նաև այնպիսիները, որոնցում բաղադրիչներից մեկը (գերադաս կամ կախյալ), անկախ խնդրո առարկա համեմատական կապակցություններից, ինքնին դարձվածք է:

Հմմտ. *եզան պես կողքի ընկնել* (համառել), *շան նման (մեկի) ոտքը // ոտքերը լիզել* (շողոքորթել), *Պյուղապոսի պես ձեռքերը*

¹⁹⁵ ՀԴՄ-ներում վերաիմաստավորում երբեմն կատարվում է բառախաղի (каламбур) և հակադրույթի (антифразы) հիման վրա: Բառախաղը հիմնականում ձևավորվում է հանգավորման միջոցով՝ կազմվելով զուգահիշ մասերից, հմմտ. *քարի պես քաղվել՝ հողի պես մաղվել, ջրի պես գնալ՝ ավազի պես մնալ* և այլն: Հակադրույթն արտահայտվում է դարձվածքի բաղադրիչների և ողջ կապակցության՝ ուղղակի իմաստին հակադիր իմաստով կիրառության մեջ, հմմտ. *պղտոր գեղի պես պարզ լինել, սազել ինչպես թամբը կովին* և այլն:

լվանալ (չեզոք դիրք գրավել), **խեղդվողի պես ձեռքը փրփուրին գցել** (փրկության վերջին՝ անհուսալի միջոցին դիմել), **օձի // ցեցի պես սիրտը ուրել // կրծել** (կասկածամտել), **սառը ցնցուղի պես խելքը գուլար բերել** (սթափեցնել), **ստվարաթղթից պատրաստված տնակի պես փուլ գալ** (հույսերը հօդս ցնդել), **օճառի պղպշակների պես պայթել** (լիակատար անհաջողություն կրել), **նոյյան ագռավի նման լեռով ընկնել** (խսկց.- հատուկ նպատակով մի տեղ ուղարկվել և չվերադառնալ), **Նոյի ագռավի նման ագռավանալ** (շատ ուշանալ, մի ուրիշ տեղ կողմնակի բաներով զբաղվել), **դամոկլյան սրի նման կախված լինել (մեկի) գլխին** (միշտ սպառնացող վտանգի տակ լինել), **կոշտ ոսկորի նման կոկորդում մնալ** (անլուծելի հարց լինել) և այլն:

Հմմտ. Հայաստանը մի կոշտ ոսկորի նման մնացել էր նրա կոկորդում (ԲՍ, 90):

Ժամանակակից հայերենում առկա են գունանուն բաղադրիչով մի քանի բայական համեմատություն-իդիոմներ: Ընդհանրապես իդիոմներում գունանուն բաղադրիչները չեն պահպանում իրենց գունային-նշանային իմաստները: Այդօրինակ կապակցությունների ընդհանուր իմաստը կախված չէ նրանց բաղադրիչների առանձին իմաստներից (իմաստների գումարից), պայմանավորված չէ նրանցով:

Հմմտ. *սև աղվեսի պես դառնալ // երևալ* (շատ հազվադեպ այցելել), *սև ամպի պես չոքել* (որպես մեծ վտանգ սպառնալ), *կարմիր թելի նման անցնել*¹⁹⁶ (որպես հիմնական գաղափար ցայտուն կերպով երևալ):

Հմմտ. Այդ գաղափարը *կարմիր թելի նման անցնում է* մեր գրականության միջով սկզբից մինչև մեր օրերը (ՎՏ, 295):

Ժամանակակից հայերենի բայական համեմատություն-իդիոմների մեծ մասին բնորոշ է **մտավոր-հոգևոր գործողություններ** արտահայտելու ներունակությունը.

կարվի նման մեջքի վրա չընկնել, եզան պես կողքի ընկնել (համառել, իր ասածից չհրաժարվել), *խելքը թրի նման կտրել* (շատ լավ հասկանալ), *մոմի պես հալվել* (մեկի նկատմամբ նվիրվածություն ցուցաբերել), *կարծես այս աշխարհում չլինել, կարծես մորից նոր ծնվել* (ցնծության մեջ լինել), *ասես բերանից կրակ*

¹⁹⁶ Պատճենում է. հմմտ. րուս. *проходить красной нитью*.

թափել (զայրացած խոսել), երդումը ջրի պես խմել (երդմանը շատ թեթև վերաբերվել), որձակի պես ծուղորուղու կանչել (իր անելիքը հռչակել), ջաղացի պես սորոր փալով անցնել (արագ - արագ կարդալ վերջացնել), ջրի նման տռացնել (սահուն կարդալ), օձի նման հազար շապիկ փոխել (խիստ տանջվել), Ղազարոսի պես երգել (երկերեսանիություն անել), ածան հավի նման կշկշալ (իր անելիքը հռչակել) և այլն:

Մի քանի բայական իդիոմատիկ արտահայտություններ ցույց են տալիս **Ֆիզիկական կամ հոգևոր ներգործություն ինչ-որ մեկի վրա.**

ինչպես գրասպ քշել (շատ աշխատեցնել), *դանակի պես կտրել* (բուժել), *սառը ցնցուղի պես խելքը գլուխը բերել* (սթափեցնել), *մոմի նման ամեն կողմ շուռ փալ*, *իր ուզածի պես խաղացնել* (մեկին ստիպել իր ուզածի պես վարվել), *ոսկու պես հալել*, *գլուխն ածել* (շատ լավ հասկացնել), *բերանը զցել*, *ծամոնի պես ծամել* (սաստիկ քննադատության ենթարկել) և այլն:

Որոշ համեմատություն-իդիոմներ արտահայտում են **հասարակական կյանքին վերաբերող գործողություններ (առաքինի կամ ոչ առաքինի արարքներ, հանրագուտ կամ հակահասարակական գործունեություն).**

մոմի նման այրվել, *ջահի պես վառվել* (ողջ կյանքում բարիք գործել), *ուրագի պես միշտ իր կողմը փաշել* (շարունակ միայն իր մասին մտածել), *փյունիկի պես մոխիրներից հառնել* (վերածնվել), *նոյյան ագռավի նման լեշով ընկնել* (հատուկ առաքելությամբ որևէ տեղ ուղարկվել և չվերադառնալ) և այլն:

Խնդրո առարկա կապակցություններից մի քանիսն էլ արտահայտում են **ինչ-որ բանի ավարտ՝ բացասական արդյունքով.**

սրվարաթղթե փնակի // ավագի վրա շարված պափի պես փուլ գալ (հույսերը հօքս ցնդել), *օճառի պղպջակների պես պայթել* (լիակատար անհաջողություն կրել), *թացն ու չորն իրար պես վառվել* (տուժել):

Բայական ՀԴՄ-ներն ունեն գործածության ամենալայն ոլորտն ու գործառական ամենամեծ հաճախականությունը:

Ընդհանրապես թե՛ դարձվածքների, թե՛ իդիոմների առումով կարևորվում է համատեքստի դերը. միայն խոսքային միջավայրում է համոզիչ ու վառ դրսևորվում կայուն կապակցությունների մեծ

մասի արտահայտած իմաստը¹⁹⁷:

Որպես այս դատողության ապացույց վկայենք բայական ՀԴՄ-ների իրացումները խոսքաշարում՝ համեմատության սուբյեկտի՝ անձ կամ իր, երևույթ կամ վերացական հասկացություն լինելու տեսանկյունից:

1. ՀԴՄ-ներ, որոնցում համեմատության առարկան (սուբյեկտը) անձ է.

ապրել ինչպես շուն ու կապու, զգալ ինչպես ձուկը ջրում, հինգ մափի պես գիտենալ, մոմի նման այրվել, մոմի պես հափնել, շան պես պոչ խաղացնել, շան պես քարշ գալ, շան պես հոգնել, ապրել ինչպես Աբրահամի գոգում, կարծես ասեղների վրա նստած լինել, ջայլամի պես գլուխն ավազի մեջ թաղել, կաշաղակի պես շաղակրատել, գրաստի պես բանել, ոչխարի (հոփի) պես (մեկին) հեփնել, խեղդվողի պես ձեռքը փրփուրին գցել, խելագարի պես սիրել, մեռելի պես քնել, մոմի նման ուզած ձևը փայլ, ինչպես ժեռ սարին ապավինել, հալած յուղի պես ընդունել, նայել ինչպես թուրքը խոզի մսի վրա, փունը պոպոքի միջի պես պահել, ուղփի նման ոխ պահել, օձի պես սողալ, գողի նման քայլել, երագի նման հիշել, հյուրի պես պահել (իրեն), հնդիկ ֆաքիրի պես կուրծք ծեծել, երեխայի պես հրճվել, շան պես հասկանալ, կնոջ չափ փափկասիրտ լինել, մի մարդու պես ուրքի կանգնել, մի փան պես ապրել, մահու չափ հոգնել և այլն:

Հմմտ. Սրանից քսան կամ քսանհինգ տարի առաջ, իմ լավ միտքս է, մեր գյուղերումն *երկու դրացի մի փան պես էին ապրում* (ՊՊ, 111): *Դու ապառնիից մահու չափ հոգնել* Եվ ապառիկ ես ընդամենն ուզում (ՊՍ, 2, 37):

2. ՀԴՄ-ներ, որոնցում համեմատության առարկան (սուբյեկտը) իր է.

փոպրակի պես կախվել (հագուստը), հարդի պես ծախվել (ապրանքը), թեփի նման վեր փայլ (պտուղը):

¹⁹⁷ Հմմտ. Л. Э. Бинович, Немецко - русский фразеологический словарь, М., ГИС, 1956, էջ 7:

Հմմտ. Ծառի պրոուդը **թեփի նման վեր է տվել** (ՀԼԴԲ, 235):

3. ՀԴՄ-ներ, որոնցում համեմատության առարկան (սուբյեկտը) երևույթ է կամ վերացական հասկացություն.

ռումբի պես պայթել, սնկի պես աճել, երևալ ինչպես ափի մեջ, օճառի պղպջակների պես պայթել, հեղեղի // գեղի // աղբյուրի պես հոսել, դանակի // դաշույնի պես սիրտը խրվել, սուր սլաքների պես թափանցել մինչև սրտի խորքը, երագի նման անցնել, փոխվել ինչպես հեքիաթում, մի գավաթ // բաժակ ջուր խմելու պես (հեշտ) բան լինել, կարմիր թելի պես անցնել, ժանտախտի նման փարածվել, մոլախտի նման աճել, կինոժապավենի պես աչքերի առաջով անցնել, արտացոլվել ինչպես արևը մի կաթիլ ջրում, օխտը դևի հեքիաթի պես երկարել, սրվարաթղթե փնակի պես փուլ գալ, սև ամպի պես չոքել, բարի լույսի պես պարզվել, էլեկտրական հոսանքի պես ցնցել, կայծակի պես շանթել, արճիճի պես ծանրանալ սրտի // հոգու վրա և այլն:

Հմմտ. Վերջին խոսքերը **կայծակի պես շանթեցին** Մերուժանի քարացած սրտին (ԲՍ, 595): *Մի միտք արճիճի պես ծանրացել էր նրա հոգու վրա* (ԱՇ, 3, 368):

Այդպիսի դասակարգումը, սակայն, չի կարելի բացարձակացնել. մի շարք բայական ՀԴՄ-ներում համեմատության առարկայի դերում կարող են հանդես գալ թե՛ անձ, թե՛ իր և թե՛ երևույթ ու վերացական հասկացություն ցույց տվող բառեր: Համեմատենք հետևյալ ՀԴՄ-ները. *մի կաթիլ ջրի պես անհետանալ, ասես երկինք համբարձվել, ասես գետնի փակն անցնել, ասես ջրի փակը սուզվել, աղի պես հալվել, օդ ու ջրի // թթվածնի // մոր կաթի պես անհրաժեշտ լինել, փարբերվել ինչպես երկինքը երկրից // սևն սպիտակից, մագնիսի պես (դեպի իրեն) ձգել // քաշել* և այլն:

Հմմտ. Եվ այդ ուտերը **մագնիսի պես ձգեցին**, տարան բժշկին (ՎՊ, 262): Ուտքերը դժվարությամբ էր շարժում, *գետինը մագնիսի պես* նրան **քաշում էր** (ԿԶ, 471): – Այդ *ձեռագիրը մագնիսի պես ձգում է* իրեն, – շուրջը նայելով ասաց աշխատակիցը (ՄՊ, Գ, 5, 16):

Ստորև բերվող ՀԴՄ-ները նշում են և՛ անձի, և՛ առարկայի կատարած գործողություն.

ժամացույցի պես աշխատել, մեքենայի պես աշխատել, սափանի չարխի պես դառնալ, հողի պես պտտվել և այլն:

Համտ. Նա արխալուղը հանել էր, գլխարկը դեն գցել ու **հողի պես պտտվելով՝** կուտակներից քարեր էր վերցնում ու թեքելով նետում (ՍԽՄ, 640): Ամբողջ սենյակը **հողի պես պտտվեց** նրա գլխին (ԲԹ, 475):

Հետևյալ ՀԴՄ-ներում համեմատության առարկան կարող է լինել թե՛ անձ, թե՛ երևույթ կամ վերացական հասկացություն.

կրիայի պես ընթանալ, սրվերի // շուքի պես հետնել, գնդակի պես թռչել, ուրվականների նման հետապնդել // հալածել, հեքիաթի մանկան նման աճել, փյունիկի պես մոխիրներից հառնել, ծրի // ծրերի նման // պես թռչել և այլն:

Համտ. Նա **ծրի նման թռավ** թախտից (ՆԴ, 71): – Թռան այդ օրերը **ծրերի պես** (ԴԴ, 802):

Համտ. նաև ճյունի նման հավվել, թափվել ինչպես առափույթյան եղջյուրից, սառը ցնցուղի պես խելքը գլուխը բերել, երևալ ինչպես ափի մեջ, խոտի պես կանաչել, կարկուտի պես տեղալ // թափվել, հեղեղի պես թափվել ՀԴՄ-ները, որոնցում սուբյեկտը կարող է լինել և՛ իր, և՛ երևույթ:

Հացի գնդիկները **կարկուտի պես էին տեղում** նրա պարանոցի վրա (ԱՇ, 3, 26): Լեռան կատարից **համազարկերը կարկուտի պես տեղում են** ներքև (ԿՁ, 40):

Այսպիսով՝

1. Բայական ՀԴՄ-ներն օժտված են անվանողական տարբեր հնարավորություններով. այդօրինակ դարձվածքները ենթարկվում են թեմատիկ դասակարգման՝ պայմանավորված գերադաս բաղադրիչի իմաստով:

2. Բայիմաստը բովանդակում է առարկայի փոփոխային հատկանիշի ամենատարբեր դրսևորումները՝ ա) շարժում տարածության մեջ, բ) զանազան ֆիզիկական գործողություններ, գ) մտավոր-հոգևոր գործողություններ, դ) առարկայի վիճակն իբրև գործընթաց և այլն:

3. Ըստ բաղադրիչների ծուլվածության աստիճանի՝ տարբերակվում են բայական համեմատություն-դարձվածքներ և համեմատություն-իդիոմներ:

4. Ընդհանրապես համեմատություն-դարձվածքներում վերահիմաստավորման ենթարկվում է կախյալ բաղադրիչը: Վերջինս մի դեպքում զուտ ակտիվացնում կամ սաստկացնում է գերադաս բայ բաղադրիչի արտահայտած գործողության իմաստը, մյուս դեպքում որակական նոր բնութագիր է հաղորդում բայական անդամին:

Բայական համեմատություն-իդիոմներին բնորոշ են ամբողջական վերահիմաստավորումն ու ընդհանրական նշանակությունը:

5. Բայական ՀԴՄ-ներն օժտված են կապակցական լայն հնարավորություններով: Վերջիններս տարբերակվում են նաև ըստ համեմատության սուբյեկտի՝ անձ կամ իր, երևույթ կամ վերացական հասկացություն լինելու հանգամանքի: Անշուշտ, կան նաև ՀԴՄ-ներ, որոնցում սուբյեկտը կարող է լինել և՛ անձ, և՛ իր, որևէ երևույթ կամ վերացական հասկացություն:

Գ. Մակբայական ՀԴՄ-ների իմաստաբանությունը

Մակբայի խոսքիմասային արժեքով հանդես եկող ՀԴՄ-ները¹⁹⁸ ևս, ինչպես ածականական ու բայական ՀԴՄ-ները, դասվում են ոչ հաղորդակցական դարձվածքների շարքը: Մակբայական ՀԴՄ-ները ժամանակակից հայերենում գերակշիռ մեծամասնությամբ միազագաթ կապակցություններ են:

Հմմտ. *մահու չափ* (ազդու, հուզիչ, սարսափելի, ազդվել, հուզվել, սարսափել և այլն), *ծովի պես* (հոսուն, հորդառատ, քրտնել, արցունք թափել և այլն):

Այդօրինակ կապակցությունները, միանալով որոշ ածականների ու բայերի, ժամանակի ընթացքում նրանց հետ մեկտեղ ձեռք են բերել կայունություն և դարձել ինքնուրույն դարձվածքներ¹⁹⁹:

Հմմտ. հետևյալ միազագաթ մակբայական կապակցությունների կիրառությունները՝ ածականական և բայական ՀԴՄ-ների կազմում կախյալ բաղադրիչների դերով. ***խոզի պես գեր***, ***խոզի պես ուրել***,

¹⁹⁸ Մակբայական ԴՄ-ներում մակբայ բաղադրիչի առկայությունը պարտադիր չէ: Ինչ վերաբերում է մակբայական համեմատություն-դարձվածային միավորներին, ապա «բուն մակբայներով համեմատություն-դարձվածքներ հայերենում չունենք» (տես Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, էջ 105):

¹⁹⁹ Տես Ա. Գ. Назарян, նշվ. աշխ., էջ 115:

մահու չափ տրտուր, մահու չափ արել և այլն:

Ինչպես տեսնում ենք, այդպիսի կապակցությունները ածականի և բայի իմաստային կառուցվածքի մեջ էական փոփոխություն չեն մտցնում, այլ պարզապես սաստկացնում են նրանց արտահայտած իմաստները²⁰⁰: Իսկ հետևյալ ՀԴՄ-ները, որոնք հատկանշվում են մակբայի խոսքիմասային արժեքով, լիովին վերաիմաստավորված են. *ջուրն ընկածի պես, թրջված հավի նման* (վշտաբեկ), *ասես որոտ պարզ // պայծառ // կապույտ երկնքից*²⁰¹ (անսպասելի, հանկարծակի), *կարծես մոզական գավազանի հարվածով* (արագ, հեշտորեն, հրաշքով), *ջրի պես* (1. սահուն, բերանացի, 2. շռայլորեն), *շան նման* (չարքաշարար), *սև ուրբաթի պես* (1. տխուր, 2. լուռ), *կարմիր թելի պես* (ցայտուն կերպով), *ջանը կրակ ընկածի նման* (եռանդուն կերպով), *ինչպես ջուրը սագի փեփուրների վրայից*²⁰² (առանց որևէ ներգործության) և այլն:

Հմմտ. Տիգրանն զգաց, որ դրանք ոչ թե մնում էին հիշողության մեջ, այլ այնպես էին կորչում, *ինչպես ջուրը սագի փեփուրների վրայից* (ԱՍՈ, 494):

Հատկանշային (մակբայական) ՀԴՄ-ները բոլոր մակբայների նման ենթարկվում են իմաստային դասակարգման²⁰³: Իմաստային-քերականական այդ խմբին պատկանող ՀԴՄ-ները տարբերակվում են ըստ ձևի և չափ ու քանակի իմաստների:

1. Ձևի մակբայական ՀԴՄ-ներ

Ձևի մակբայական ՀԴՄ-ները մի առարկայի գործողության հատկանիշը համեմատում են մեկ այլ առարկայի գործողության հատկանիշի հետ՝ այս տեսակետից հանդես գալով ձևի մակբայների իմաստային երկու ենթախմբում:

²⁰⁰ Հմմտ. В. П. Жуков, Семантика фразеологических оборотов, էջ 119, Русская фразеология, էջ 148, А. Г. Назарян, Фразеология современного французского языка, էջ 187:

²⁰¹ Հմմտ. րուս. *как гром среди ясного неба*, անգլ. *like a bolt from the blue*.

²⁰² Հմմտ. րուս. *как с гуся вода*, անգլ. *like water off a duck's back*.

²⁰³ Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են առհասարակ մակբայական ԴՄ-ների տարբեր՝ որակական, որակաքանակային, քանակային, գործողության համատեղության, միջոցների և այլ շարքեր (տես В. П. Жуков, նշվ. աշխ., էջ 235):

ա) Գործողության արտաքին (գործողության ընթացքի) ձև ցույց տվող ՀԴՄ-ներ.

ասես որոտ պարզ // կապույտ երկնքից (հանկարծակի), կարծես մոզական գավազանի հարվածով (հեշտորեն, արագ), քամու բերանն ընկած տերևի պես, գեյրի // հեղեղի բերանն ընկած տաշեղի պես (թեթևորեն), կրակի պես (ճարպկորեն), խայթվածի // շանթահարվածի պես (հանկարծ, իսկույն), կաթվածի նման (շատ արագ), մեռածի պես (1. խիստ դանդաղ, 2. շատ հոգնած), ջրի պես (սահուն), խաղ ու պարի պես (հեշտորեն), բևեռվածի // մեխվածի պես (անշարժ կերպով), քամու // հողմի // մրրիկի պես, կայծակի նման, ծփի պես (սրընթաց) և այլն:

Հմմտ. Նա քամու պես վազում էր դեպի շոգեքարշը (ԲՍ, 64):

բ) Գործողության կատարման (ներքին) որակական հատկանիշ ցույց տվող ՀԴՄ-ներ.

ինչպես որ քեֆը տա // քեֆը տվածի պես (կամայականորեն), այսօրվա պես (որոշակիորեն), մահու չափ (ահավոր կերպով), մի դռան շան պես (բարեկամաբար), առյուծի պես (քաջաբար), մրջյունի // մեղվի նման (ժրաջան կերպով), խելագարի // խենթի պես (անգիտակցաբար), կարասն ընկած մկան պես (անելանելի վիճակում), անոթի շան նման (հոգնած, չարչարված վիճակում), որպես կոտորած գերան (ընկճված վիճակում), ուխտյալ թշնամու պես (թշնամաբար), ինչպես ասի նետված ծուկ (նեղ՝ վատ վիճակում), մուրացկանի պես (չարքաշաբար), օդ ու ջրի պես (կենսականորեն), ինչպես փշերի // ասեղների վրա (անհանգիստ կերպով), ժամացույցի պես (ճշգրիտ կերպով), փշրվածի նման (ընկճված վիճակում), մեքենայի նման (մեխանիկորեն), մի մարդու պես (միասնական, միահամուռ)²⁰⁴, բորենու պես (դաժանաբար) և այլն:

Հմմտ. Ժամանակը բորենու պես Կծամի ծանծրույթը (ԱՇ, Գ, 4, 43):

Ձևի մակբայական ՀԴՄ-ների այսօրինակ դասակարգումն անշուշտ հարաբերական է. նրանցում պատահում են կապակ-

²⁰⁴ Հմմտ. րուս. *как один (человек) // все как один*, անգլ. *as one man*.

ցություններ, որոնք օժտված են թե՛ արտաքին-ձևային, թե՛ ներքին-որակական հատկանիշներ արտահայտելու հնարավորությամբ. *կաթվածահարի պես, շանթահարի պես, գլխին կացնի հարված ստացածի պես* (կանգ առնել), *խորամանկ աղվեսի պես* (ժպտալ), *գողության մեջ բռնվածի պես* (նայել) և այլն:

Հմմտ. Հասմիկը *գողության մեջ բռնվածի պես* վեր նայեց (ՆԶ, 87):

Ածականական ՀԴՄ-ների իմաստային առանձնահատկությունները քննելիս արդեն նկատել ենք, որ կան ՀԴՄ-ներ, որոնք կարող են կիրառվել ոչ միայն որպես ածականներ, այլև իբրև մակբայներ՝ իրենց իմաստային կառուցվածքի մեջ ներառելով այն առանձնահատկությունները, որոնք հատուկ են մակբայի քերականական կարգին²⁰⁵:

Այդօրինակ ՀԴՄ-ները հանդես են գալիս խոսքիմասային երկարժեք գործառույթով²⁰⁶. հմմտ. *քանոնի պես ուղիղ* (մատներ), *քարի // ժայռի // սառույցի պես սառն* (հայացք), *թրջված հավի նման* (մարդ), *ապառաժի // քարի // գերեզմանի // ձկան պես լուռ* (մարդ), *քանոնի պես ուղիղ* (քայլել), *քարի // ժայռի // սառույցի պես սառն* (նայել), *թրջված հավի նման* (ցնցվել), *ապառաժի // քարի // գերեզմանի // ձկան պես լուռ* (դիտել) և այլն:

Հմմտ. *ապառաժի // քարի // ձկան նման // պես լուռ* տարբերակային ՀԴՄ-ների խոսքիմասային իրացումները՝ մակբայի և ածականի արժեքներով.

Նա ուզում էր համբերությունից հանել *ապառաժի նման լուռ* այդ տղային (ԱՍՈ, 51), (ած.): Մային գլուխը կախ մնում էր իր բանին *քարի պես լուռ* ու անտարբեր (ՆԴ, 52), (մկբ.): Իսկ Մային *ձկան պես լուռ* իր բանին էր (ն.տ., 56), (մկբ.):

²⁰⁵ Այս առումով ուշագրավ է Պ. Ս. Բեդիրյանի այն դիտարկումը, որ «ծայրահեղ դեպքերում համեմատությունների մեջ կարող են հանդես գալ այնպիսի բառեր, որոնք գտնվում են ածականի ու մակբայի «սահմանագլխին» և խոսքային միջավայրում, նայած լրացյալին, կարող են դիտվել իբրև ածականներ կամ մակբայներ» (տես Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 105):

²⁰⁶ Ած. // մկբ. կապակցությունների մասին հանգամանորեն տես Լ. Մ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 233 – 237:

2. Չափ ու քանակի մակբայական ՀԴՄ-ներ

Հայտնի է, որ չափի մակբայները ցույց են տալիս գործողության կամ այլ հատկանիշի չափը: Նրանք ևս ենթարկվում են իմաստային ներքին խմբավորման:

Ժամանակակից հայերենում հանդիպում են հիմնականում չափի իմաստը հատկանիշի սաստկացումով արտահայտող ՀԴՄ-ներ:

Հմմտ. *ծովի պես* (շատ-շատ), *հոգու չափ* (չափազանց), *գեպի նման* (անչափ շատ), *ամպի չափ* (շատ-շատ), *ջրի նման* (չափազանց շատ), *աշխարհի չափ* (սաստիկ, անչափ) և այլն:

Հմմտ. Ծերունին ու ազին *աշխարհի չափ* կուրախանան (ՀԼԴԲ, 49):

Այսպիսով՝

1. Մակբայական ՀԴՄ-ներում պարտադիր չէ մակբայ բաղադրիչի առկայությունը: Այդօրինակ դարձվածքները մեծ մասամբ միազագաթ կապակցություններ են:

2. Որոշ երկանդամ ՀԴՄ-ներ դրսևորում են թե՛ ածականական, թե՛ մակբայական հատկանիշներ՝ բնութագրվելով խոսքիմասային տարարժեքությամբ (երկարժեքությամբ)

3. Մակբայական ՀԴՄ-ների մի մասը ցուցաբերում է իդիոմատիկ հատկանիշներ: Այդօրինակ ՀԴՄ-ներում առանձին խումբ են կազմում այն կապակցությունները, որոնք, դրվելով ածականների կամ բայերի վրա, արտահայտում են հատկանիշի կամ գործողության դրսևորման բարձր աստիճան՝ որակական որևէ փոփոխություն չմտցնելով ածականի և բայի բովանդակության մեջ:

4. Հատկանշային-մակբայական ՀԴՄ-ները հիմնականում արտահայտում են ձևի և չափ ու քանակի իմաստներ: Վերջիններս իրենց հերթին ենթարկվում են ներքին խմբավորման: Ձևի իմաստով մակբայական ՀԴՄ-ները ցուցաբերում են մի դեպքում՝ գործողության արտաքին-ձևային, մյուս դեպքում՝ ներքին-որակական հատկանիշներ:

Չափի իմաստ արտահայտող ՀԴՄ-ներում հաճախակի հանդիպում են չափի իմաստը հատկանիշի սաստկացումով դրսևորող դարձվածքներ:

II. Հաղորդակցական ՀԴՄ-ների իմաստաբանությունը

Հաղորդակցական ՀԴՄ-ներին բնորոշ են ընդհանրապես ԴՄ-ներին հատուկ բոլոր հատկանիշները՝ կայունությունը (իմաստային, գործառական, բառային կազմի կայունություն), պատրաստի վերարտադրելիությունը և վերաիմաստավորումը:

Հաղորդակցական ՀԴՄ-ները խոսողի կողմից պատրաստի կերպով վերարտադրվում են որպես խոսքի ամբողջական հատվածներ:

Առհասարակ նախադասություն-դարձվածքները վերաիմաստավորման առումով ամենամբողջականն են²⁰⁷:

Ինչ վերաբերում է հաղորդակցական ՀԴՄ-ներին, ապա նրանցում պատահում են և՛ լրիվ, և՛ մասնակի վերաիմաստավորմամբ կառույցներ:

Ստորև բերվող հաղորդակցական ՀԴՄ-ները հատկանշվում են **ամբողջական վերաիմաստավորմամբ**.

Սարի պես կանգնած՝ ուռի պես դողում եմ (Օգտագործվում է կատակաբան ոճում, իբրև թե ուզում եմ օգնել, բայց չեմ կարող, ի վիճակի չեմ): *Կարծես մի ծանր քար // բեռ ընկավ ուտերից // սրտից* (Ծանր հոգսերից, ճնշող հոգեվիճակից ազատվեց): *Ոնց որ մի բաժակ ջուր խմես* (Չափազանց պարզ, հեշտ է): *Ասես առանց ձեռք լինի* (Անօգնական, անպաշտպան է): *Ինչպես թամբը կովին է սազում* (Ծիծաղելի է երևում // Ամենևին չի սազում): *Ոնց որ պարհին ասես* (Ոչինչ չի ազդում): *Ոնց որ ուրքերիցս քար կախած լինեն* (Հոգնած վիճակում եմ // Գլուխս ծանրացել է): *Փողը ջրի պես է գնում* (Փողն աննկատելի և արագ ծախսվում է): *Կարծես մորից նոր ծնվեց: Կարծես իր մոր գիրկն ընկավ* (Երանության մեջ ընկավ): *Ոնց որ գլխիդ սառը ջուր լցնեն* (Ասվում է՝ 1. մեկի կամ մի բանի անսպասելի հայտնվելու մասին, 2. մարդու՝ անակնկալներից հանկարծակի հիասթափվելու մասին): *Ոնց որ գլխիդ // մարդու գլխին խփեն: Ոնց որ քար վերցնեն ու գլխովդ փան* (Ասվում է մեկի անսպասելիորեն հիասթափվելու մասին): *Ասես երազ // հեքիաթ*

²⁰⁷ Տե՛ս Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, էջ 181:

լինի: Երազի // հեքիաթի նման է (Անհավատալի է):

Հմմտ. Համարյա քառասուն տարի է անցել: *Հեքիաթի նման է (ՁԽ, 34):*

Հաղորդակցական ՀԴՄ-ներում հանդիպում են նաև **միաբևեռ** կամ **միակողմ վերահիմաստավորումով տարբերակվող ՀԴՄ-ներ:**

Հմմտ. *Իրեն այնպես է զգում, ինչպես ծուկը ջրում (Որևէ տեղ իրեն շատ լավ է զգում): Պարզ է, ինչպես երկու անգամ երկու (հավասար է չորսի): Ցերեկվա լույսի պես պարզ է (Չափազանց պարզ ու որոշակի է): Այնպես է նայում, ինչպես թուրքը խոզի մսի վրա (Ատելությանմբ, զգվանքով է նայում) և այլն:*

Հմմտ. Առաջին իսկ հանդիպման ժամանակ նա իր արհամարհանքը չէր թաքցնում և *այնպես էր նայում* ինձ վրա, *ինչպես թուրքը խոզի մսի վրա (ՀԼԴԲ, 19):*

Մասնագիտական գրականության մեջ լայն առումով դարձվածքների շարքն են դասվում նաև առածներն ու ասացվածքները, թևավոր խոսքերը, անեծքներն ու մաղթանքները²⁰⁸: Հաղորդակցական ԴՄ-ները դարձվածաբանական գրականության մեջ նույնիսկ բաժանվում են երկու՝ ոչ առածային և առածային ենթախմբերի: Այս առումով շեշտվում է, որ «առածները լեզվի դարձվածային կազմից հանելու օբյեկտիվ պատճառներ չկան, քանի որ նրանք օժտված են ԴՄ-ներին բնորոշ հիմնական կառուցվածքային հատկանիշներով»²⁰⁹:

Այս և նման հիմնավորումներին հակադրվող մոտեցումներ ևս գոյություն ունեն²¹⁰:

Այնուամենայնիվ, չպետք է անտեսել այն, որ հաղորդակցական ԴՄ-ների, այդ թվում և ՀԴՄ-ների մի մասը կազմվել է ժողովրդական

²⁰⁸ Տե՛ս Լ. Յ. Бинович, Немецко - русский фразеологический словарь, էջ 4, А. И. Смирницкий, Лексикология английского языка, էջ 16, Ա. Մ. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., Եր. համալս., 1999, էջ 304, Հ. Ղազարյան, Գունանիշ բաղադրիչով դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, էջ 113:

²⁰⁹ Տե՛ս А. Г. Назарян, նշվ. աշխ., էջ 61 – 63, 132:

²¹⁰ Հմմտ. Մ. Հակոբջանյան, Ժամանակակից ֆրանսերենի կենդանուններով կազմված ամենագործածական առածներն ու ասացվածքները և դրանց համարժեքները հայերենում, «Դարձվածաբանության խնդիրներ: Գիտաժողովի նյութեր», էջ 38–39, Լ. М. Васильев, О семантической эквивалентности фразеологизма слову (Уфа), Сб. «Проблема тождества фразеологических единиц», Челябинск, ЧГПИ, 1990, էջ 20:

լեզվամտածողությամբ, հատկապես՝ առած - ասացվածքների հիման վրա:

Մասնագիտական գրականության մեջ այս առումով նշվում է. «Առածներն իրենց այլաբանական իմաստով մոտենում են դարձվածքներին, ընդհանրացնող իմաստով՝ հեռանում: Որպեսզի առած-ասացվածքները դարձվածքներ կոչվեն, նրանք պետք է «ձերբազատվեն» ընդհանրացնող իմաստից, ապա և ազատ ձևավորում ձեռք բերեն: Խոսքային միջավայրում առած-ասացվածքները կարող են անգամ միևնույն ձևավորումով այնպես օգտագործվել, որ կորցնեն իրենց ընդհանրացնող իմաստը և կրկին ընկալվեն իբրև դարձվածքներ»²¹¹:

Հմմտ. *Ուղտի պոչի պես ո՛չ երկարում է, ո՛չ կարճանում* (Առաջընթաց չկա): *Ոնց որ գալիս է, այնպես էլ գնում է* (Ամեն ինչ իր ավարտն ունի): *Ոնց վարպետն է, այնպես էլ գործն է* (Կատարված աշխատանքը համապատասխանում է կատարողի կարողություններին): *Ամեն մարդ ոտքը իր վերմակի չափով պետք է մեկնի* (Մարդ իր հնարավորությունների սահմաններում պետք է գործի): *Ինչպես ուղտին գդալով ջրես* (Շատ քիչ է, չի բավականացնում)²¹²:

Հմմտ. – Դա նույնն է, *ինչպես ուղտին գդալով ջրես* (ՔԹ, 158):

Որոշ հաղորդակցական ՀԴՄ-ներ էլ առաջացել են բարեմաղթություն-օրհնանքների հիման վրա. հմմտ. *Մոր կաթի պես հալալ լինի* (Լիովին արժանի ես, բարով վայելես): *Ջրի պես երկար արև ունենա*: *Կյանքդ աղբյուրի ջրի պես երկար լինի* (Մեկին երկար կյանքի՝ արևշատության մաղթանք. ասվում է սովորաբար ջուր բերողին):

Հմմտ. – *Կյանքդ երկար լինի ջրի պես*, բալան կծեմ (ՍԽՀ, 665):

Հաղորդակցական ՀԴՄ-ները կարելի է ենթարկել թեմատիկ դասակարգման: Այս առումով նրանք կարող են բովանդակել տարաբնույթ դատողություններ.

²¹¹ Հմմտ. Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 54 – 55, 184:

²¹² Մասնագիտական գրականության մեջ ասացվածքը բնութագրվում է որպես խոսքը կենդանի, արտահայտիչ դարձնող լեզվական միջոց (Տեն Յ. Ս. Архангельский, Устойчивые фразы в современном русском языке, էջ 166): Առածները «փաստում են մարդկանց հատկանիշներն ու երևույթները՝ տալով գնահատական» (տես Ա. Դ. Райхштейн, Немецкие устойчивые фразы, էջ 73):

1. Անձի արտաքին - ֆիզիկական տեսքի կամ վիճակի մասին.

*Ասես շամփուր է կոլ Կովել*²¹³ (Անշարժ և ուղիղ դիրքով է կանգնել): *Ոնց որ ուրբերիցս քար կախած լինեն* (Հոգնած վիճակում եմ): *Ոնց որ խնձորը երկու կես անեն: Ասես մի խնձոր եք՝ միջից կես արած* (Շատ նման եք իրար) և այլն:

Հմմտ. – Կարլենս այնքան նման է քեզ, որ *ասես մի խնձոր եք՝ միջից կես արած* (ՆՁ, 235):

2. Անձի հոգևոր հատկանիշների, հոգեբանական վիճակների մասին.

Ասես Մանթաշուվի թոռը լինի (Մեծամիտ է): *Ոնց որ պապին ասես* (Ոչինչ չի ազդում, անտարբեր է): *Ասես առանց ձեռք լինի* (Անօգնական վիճակում է): *Կարծես ասեղների // փշերի վրա նստած լինի* (Անհանգիստ, նյարդային վիճակում է): *Ոնց որ գլխիդ սառը ջուր ցնեն: Ոնց որ գլխիդ խփեն* (Ասվում է հանկարծ հիասթափվելու մասին): *Կարծես մորից նոր ծնվեց* (Ասվում է մարդու՝ ցնծության մեջ լինելու մասին): *Կարծես մի ծանր քար // բեռ ընկավ ուսերից // սրտից* (Ծանր հոգսերից ազատվեց)²¹⁴: *Ասես հալվեց* (Ասվում է մարդու՝ հուզմունքից իրեն կորցնելու մասին) և այլն:

Հմմտ. Ընկավ աղջիկը հովվի կրծքին, *ասես հալվեց* համբույրից (ՀՇ, 91):

3. Որևէ երևույթի հանկարծակիության, անսպասելիության կամ անհավանականության մասին.

*Ասես գեպնից // գեպնի տակից բուսնեց*²¹⁵ (Հանկարծակի հայտնվեց): *Ասես երազ // հեքիաթ լինի* (Անհավատալի է): *Ասես երկինք համբարձվեց: Ասես գեպնի տակն անցավ: Ասես ջրի տակը սուզվեց: Ոնց որ դանակով կտրես: Ասես քամին տարավ* (Հանկարծակի անհետացավ) և այլն:

Հմմտ. Ժամապահին *ասես քամին տարավ* (ՌՀԴԴԲ, 131):

²¹³ Հմմտ. ռուս. *Как бумто аршин проглотил*, անգլ. *As stiff (straight) as a poker.*

²¹⁴ Հմմտ. ռուս. *Как гора с плеч свалилась.*

²¹⁵ Հմմտ. ռուս. *Как (словно) из - под земли вырос.*

4. Որևէ գործընթացի կամ բնության երևույթի ընթացքի մասին.

Փողը թաժա հացի պես է գնում: Փողը ջրի պես է գնում (Դրամն արագ ծախսվում է): *Հալած յուղի պես է գնում* (Առանց արգելքների և դժվարությունների է ընթանում): *Տուրպը թրի պես // նման կտրում // կտրապում է* (Սաստիկ ցուրտ է) և այլն:

Հմմտ. Ծնկահար ծյուն. *ցուրպն էլ հո թրի նման* մարդի երես է կտրապում (ՀԹԸ, 322):

Այսպիսով՝

1. Հաղորդակցական ՀԴՄ-ները բնութագրվում են որպես կայուն, պատրաստի վերարտադրելի և վերաիմաստավորված արտահայտություններ:

Նրանցում առկա են թե՛ ամբողջությամբ, թե՛ մասնակիորեն վերաիմաստավորված կամ միաբևեռ ՀԴՄ-ներ:

2. Նախադասություն-դարձվածքները և առած-ասացվածքները՝ որպես խրատական բնույթի դիպուկ արտահայտություններ, ունեն իմաստագործառական աղերսներ:

3. Հաղորդակցական ՀԴՄ-ները ենթարկվում են թեմատիկ դասակարգման՝ արտահայտելով մարդու և նրան շրջապատող աշխարհի հետ կապված զանազան հատկանիշներ, հարաբերություններ:

III. ՀԴՄ-ների իմաստային հարաբերությունները

Մասնագիտական գրականության մեջ ըստ բառակապակցական իմաստային հարաբերությունների՝ առանձնացվում են բազմիմաստ, հոմանիշ, հականիշ և համանուն դարձվածքներ:

Դարձվածաբանական իմաստաբանության կարևորագույն խնդիրներից մեկն էլ ինչպես ԴՄ-ների ներսում (ներկապակցական իրողություններ), այնպես էլ նրանց միջև (միջկապակցական իրողություններ) առկա իմաստային տարաբնույթ հարաբերությունների, այլև նրանցում գործող իմաստային փոփոխությունների բացահայտման հարցն է:

Այս առումով Վ. Ի. Գավրիսի դիտարկումն առավելագույնս ցայտուն է արտահայտում հարցի նշանակությունն ու արդիականությունը. «Իմաստային փոփոխությունների համակարգը, ԴՄ-ների իմաստազատման ընդլայնման ուղով, հանգեցնում է բազմիմաստության, հականշության և համանունության առաջացմանը, ինչպես նաև ԴՄ-ների հետագա իմաստային ընդլայնման ի հայտ գալուն, հետևաբար և՛ ԴՄ-ների իմաստային նույնականության խախտմանը»²¹⁶:

Ա. ՀԴՄ-ների բազմիմաստությունը

Լեզվական դինամիկ գործընթացների մեջ կարևորվում են ԴՄ-ների իմաստային փոփոխություններն ու զարգացումները, այդ թվում՝ ԴՄ-ների բազմիմաստությունը: Բառերի և դարձվածքների համար ընդհանուր այդ երևույթը՝ բազմիմաստությունը, մեկից ավելի իմաստների համատեղումն է լեզվական մեկ միավորի սահմաններում:

Դարձվածաբանության մարզում բազմիմաստ միևնույն դարձվածքը հանդես է գալիս իմաստային ճյուղավորումներով, որոնց միջև առկա է իմաստային ընդհանրություն: Ի տարբերություն բառերի՝ դարձվածքները մեծ մասամբ մենիմաստ են: Համապա-

²¹⁶ См В. И. Гаври́сь, К вопросу о первичном и вторичном фразообразовательных процессах, Сб. «Вопросы словообразования и фразообразования в германских языках», М., МГПИ, 1980, էջ 137:

տասխանաբար ՀԴՄ-ներում ևս բազմիմաստությունն առկա է առանձին դեպքերում²¹⁷:

Հմմտ. *Օձի պես սառը* – 1. մարմնով շատ սառը, 2. սառը՝ անարտահայտիչ դեմքով:

Սև ուրբաթի պես – 1. տխուր, 2. լուռ, անխոս:

Երկնքի թռչունների պես ապրել – 1. անհոգ ապրել, 2. թափառական կյանք վարել:

Աղի նման ջրում հալվել – 1. մոռացման տրվել, 2. սաստիկ ամաչել, 3. անտեսանելի՝ ուրիշներին անիմանալի լինել:

Ռումբի պես պայթել – 1. ցնցող ազդեցություն թողնել, 2. հանկարծակի ուժեղ պոռթկում լինել, իրարանցում առաջանալ:

Կարծես երկնքից է իջել – 1. արտահայտում է զարմանք կամ զայրույթ նրա նկատմամբ, ով չգիտի որևէ հանրահայտ բան, 2. անսպասելի հայտնվել:

Ինչպես // կարծես // ասես երազում // երազի մեջ – 1. ասվում է անիրական լինելու մասին:

Հմմտ. Եվ Ռուբենը, *ինչպես երազում*, այժմ առաջին անգամ էր տեսնում ասես բանտարկված ծառերը (ԿԳ, Գ, 4, 32): Իսկ ես... իսկ ես, *կարծես երազի մեջ*, Ինձ զգում եմ ինչ-որ վանքի գավթում՝ Լեցուն խեղվածներով ու մուրացողներով... (ՊՍ, 2, 170):

2. Ասվում է ինքն իր մեջ ամփոփված լինելու մասին:

Հմմտ. Հասմիկը քայլում էր *ասես երազի մեջ* (ՆԶ, 436):

1. Բազմիմաստություն և փոխաբերություն:

Վերաիմաստավորումը համեմատություն - կայուն կապակցություններում

Բազմիմաստությունն անշուշտ ենթադրում է կայուն կապակցության բաղադրիչների իմաստային կապերի թուլացում և կրկնակի վերաիմաստավորում: Զուգընթացաբար կարելի է խոսել դարձվածքների իմաստների բաղադրամասային հիմքի մասին, քանի որ դարձվածքների իմաստներն անշուշտ պայմանավորվում են նրանց

²¹⁷ Հմմտ. Օ. Մ. Неведомская, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими (ԱԿԴ), էջ 14, Հ. Ղազարյան, Գունանիշ բաղադրիչով դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, էջ 67:

բաղադրիչների ընդհանուր նշանակությամբ:

Լեզվում նորանոր իմաստների դրսևորման, իմաստազատման բարդ գործընթացում կարևոր դեր ունի փոխաբերությունը: Այս առումով արժևորվում են լեզվական կառուցի բաղկացուցիչ տարրերի փոխաբերական իմաստային առումները:

Լեզվաբանական փոխաբերությունը ենթադրում է մեկ բառի սահմաններում գլխավոր իմաստի կողքին ածանցյալ իմաստների առկայություն: Վերջիններիս իրացումը կատարվում է խոսքային միջավայրում:

Հմմտ. **լոյս** բառն ունի մի շարք ուղղակի և փոխաբերական իմաստներ. 1. որևէ մարմնի արձակած ճառագայթային էներգիան, որն ընկալվում է աչքով և տեսանելի դարձնում շրջապատող աշխարհը, 2. լուսաբաց, 3. ցերեկ (ուղղակի իմաստներ), 4. քաղաքակրթություն, 5. պայծառ ու գեղեցիկ, չքնաղ, 6. սպիտակ, ճերմակ (փոխաբերական իմաստներ):

Լոյս բառի փոխաբերական իմաստային առումները դրսևորվում են նրանով կազմված կայուն կապակցություններում. *լոյս դառնալ* - չափազանց գեղեցիկ լինել, *լոյսը պատերովը տալ* - շատ գեղեցիկ լինել, *լոյսի կտոր* // *լոյսի պես* - 1. մարմնով շատ սպիտակ, 2. շատ գեղեցիկ:

Կրակ բառն ունի մի շարք ուղղակի և փոխաբերական իմաստներ. 1. հուր, բոց, 2. խարույկ, օջախ, 3. այրվող նյութից հետո մնացած ածուխը (հիմնական իմաստներ), 4. ոգևորություն, եռանդ, ավյուն, 5. դաժանություն, խստություն (փոխաբերական իմաստներ):

Կրակ բառի փոխաբերական իմաստները վերաիմաստավորված ձևով արտահայտվում են կայուն կապակցություններում:

Հմմտ. *Կրակ կտրել* - 1. զայրանալ, բորբոքվել, 2. խիստ տաքանալ, աշխուժանալ:

Կրակի նման - 1. շատ եռանդուն, աշխույժ, ճարպիկ.

Կրակի նման է գործում (ՀԼԴԲ, 333):

2. Չափազանց արագ.

- Ձիդ նստի՛ ու առանց ժամանակ կորցնելու..... *կրակի նման* թո՛ղ Աշտարակ (ՊՊ, 196):

3. Մոլեգին, կատաղի.

Առաջինը զուսպ էր,..... երկրորդը շուտ հուզվում էր,..... *կրակի նման* լափում մինչև վերջին շյուղը և հանգչում, հանդարտվում, դառնում խոնարհ գառ (ԱԲ, 292):

Այդօրինակ հիմունքներով առաջացել են նաև *ասես բերանից կրակ թափել* ՀԴՄ-ի՝ 1. «զայրացած խոսել» և 2. «կրակոտ ճառ արտասանել» իմաստները: Այս ամենով հանդերձ, սակայն, բառերի փոխաբերական կամ երկրորդական իմաստներն էականորեն տարբերվում են նրանց դարձվածայնորեն կապված իմաստներից, որովհետև «եթե փոխաբերական նշանակությունը կարող է դրսևորվել թե՛ ազատ, թե՛ կայուն կապակցությունների մեջ, ապա դարձվածայինը՝ միայն կայուն կապակցություններում, եթե փոխաբերական նշանակությունը դուրս չի գալիս տվյալ իմաստային դաշտի սահմաններից կամ զուգորդության շրջանակներից, ապա դարձվածայինը կարող է դուրս գալ այդ շրջանակներից՝ երբեմն անճանաչելիության աստիճանի»²¹⁸:

Այս վերջին դիտարկման առումով ուշագրավ են **ափ** բառի դարձվածայնորեն կապված կամ «ոչ ազատ» իմաստները (*ինչպես ափի մեջ* կայուն կապակցության մեջ.

1. Շատ պարզ, տեսանելի.

Նրա սյունազարդ և ընդարձակ սրահից երևում էին, *ինչպես ափի մեջ*, թե՛ ամրոցը յուր բնակարաններով և թե՛ շրջակա լեռներն ու ձորերն իրենց գեղեցիկ կամ անհեթեթ տեսարաններով (Մ, 4):

2. Հասկանալի, բացահայտ.

Բայց իմ ափը ի՞նչ է տալիս: Ինքդ գիտես, որ մի ափը Մինչև անգամ ծափ չի տալիս: Ախր ի՞նչ կա այդ ափի մեջ: Կուզե՞ն դառնամ մարդ՝ *ափի մեջ* (ՊՍ, 1, 348):

2. Բազմիմաստություն և համանունություն:

ՀԴՄ-ների բազմիմաստությունը և խոսքիմասային տարարժեքությունը

Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ ընդհանրապես դարձվածքների իմաստային համակարգվածությունը դրսևորվում է նրանց միջև հոմանշության, հականշության և համանունության

²¹⁸ Տե՛ս Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, էջ 88:

առնչակցություններով: Իսկ այդ կապերի հարաբերակցությունն ու բնույթը որոշվում են դարձվածքների մենիմաստությամբ և բազմիմաստությամբ²¹⁹:

Հոմանշության և բազմիմաստության, այլև հականշության և բազմիմաստության աղերսներին կանդարադառնանք սույն ուսումնասիրության համապատասխան բաժիններում:

Հետաքրքրություն են ներկայացնում բազմիմաստությանն ու համանունությանն առնչվող հարցերը, որոնք, սակայն, դարձվածաբանության մարզում այնքան տարածված և մշակված չեն, որքան բառագիտության ոլորտում:

Մասնագիտական գրականության մեջ շատ են տարակարծությունները բազմիմաստության և համանունության վերաբերյալ:

Համանունությունն ու բազմիմաստությունը լեզվական տարբեր երևույթներ դիտելով՝ նկատենք, որ բազմիմաստ ՀԴՄ-ներում խոսքիմասային տարբեր առանձնահատկությունները չեն տարրալուծում միևնույն ՀԴՄ-ն դարձվածային համանունների, ավելին, դարձվածաբանական գրականության մեջ նշվում է, որ «դարձվածքի ձևաբանական տարաբժեքությունը մասամբ կապված է ամբողջական կառուցի բազմիմաստության հետ, բխում է դրանից և պայմանավորված է դրանով»²²⁰:

ՀԴՄ-ներում խոսքիմասային տարաբժեքությունը դրսևորվում է ածական // մակբայ երկարժեք հարաբերություններով, որոնք երևան են գալիս խոսքաշարում՝ նայած խոսքային իրադրությանը՝ հանդես բերելով հիմնականում որոշիչ // պարագա շարահյուսական գործառույթներ:

Հմնտ. *վարդի պես* ՀԴՄ-ն ունի՝ 1. շատ գեղեցիկ, 2. ապահովված՝ բարվոք կյանքով (ապրել՝ պահել) իմաստները և, ըստ այդմ, կարող է հանդես գալ ածական // մակբայ արժեքների համատեղումով:

Ծառի պես - 1. հսկա, վիթխարի, 2. հաստատուն.

ծառի պես մարդ (ած.), *ծառի պես* կանգնել (մկբ.):

²¹⁹ Հմնտ. Л. Д. Игнатьева, Структурные и семантические свойства фразеологических единиц с фразообразующим компонентом «как» в современном русском языке (АКД), էջ 15:

²²⁰ Տե՛ս Լ. Մ. Իսախանյան, Խոսքիմասային տարաբժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, էջ 219:

Մազի չափ - 1. չնչին, աննշան, 2. բնավ, բոլորովին.

մազի չափ հարգանք (ած.), *մազի չափ* չհարգել (մկբ.):

Սարի չափ - 1. շատ մեծ, 2. չափազանց շատ.

սարի չափ անհանգստություն (ած.), *սարի չափ* անհանգստանալ (մկբ.):

Եղունգի չափ - 1. չնչին, աննշան, 2. բոլորովին, բնավ.

եղունգի չափ հաց (ած.), *եղունգի չափ* չհարգել (մկբ.):

Կաղնու պես // նման - 1. չափազանց ամուր՝ պինդ.

Ջահել ժամանակս մեջքս *կաղնու պես* էր, ու կոներումս նրա ճղների չափ ուժ կար (ՎԱ, 136), (ած. / ստորոգելի):

2. Հաստատուն.

- Հարյուր տարի էն ծմակի *կաղնու պես* կանգնած էի (ն. տ., 195), (մկբ. / ձ. պ.):

3. Անդրդվելի.

Ինչ արեցին, ոչ ոք չկարողացավ պարի հրապարակ քաշել Տիգրանին, սա կանգնել էր *կաղնու նման* (ԱՍՈ, 469), (մկբ. / ձ. պ.):

3. Բազմիմաստություն և խոսքային միջավայր

Բազմիմաստության հարցերին անդրադառնալիս հարկ է ուշադրություն դարձնել բազմիմաստ դարձվածքի կիրառություններին. խոսքում բազմիմաստ դարձվածքը յուրաքանչյուր դեպքում հանդես է գալիս իր իմաստներից որևէ մեկով:

Հմմտ. *դանակի պես կտրել* ՀԴՄ-ն բազմիմաստ է, ունի՝ 1. «որևէ հարց կամ մեկին կտրականապես մերժել», 2. «բուժել» իմաստները:

Հմմտ. 1. – Սխալ է, – զրնգաց հանկարծ մի արծաթահնչյուն ծայն՝ *դանակի պես կտրելով* հոետորի մտքերը (ՆԶ, 60):

2. Իմ տատն ասում է՝ եթե հիվանդը կենդանի ձուկ կուլ տա, *կկտրի դանակի պես* (ՎԱ, 24):

Հուլի պես պտրվել ՀԴՄ-ն ևս մեկից ավելի իմաստային առումներով է հանդես գալիս.

1. Իր շուրջը արագ պտույտ գալ.

Նա արխալուղը հանել էր, գլխարկը դեռ գցել ու *հուլի պես պտրվելով*՝ կուտակներից քարեր էր վերցնում ու թեքելով նետում... (ՍԽՄ, 640):

2. Անընդհատ շարժման մեջ լինել, կրակ կտրել.

Սուսաննա – (Կոտորված ժպիտով) Կեսուր է, մայր չի, որ սիրտը ցավի, ասի՝ *հողի պես* շարունակ *պտտվում է*, երակների լայնացում ունի, թողնեմ մի քիչ հանգստանա (ԱՍԿ, 375):

Մոմի պես հալվել ՀԴՄ-ն իմաստային հետևյալ ճյուղավորումներով է հանդես գալիս.

1. Մեկի նկատմամբ նվիրվածություն ցուցաբերել.

Հալվում էին սրտերն ամեն *մոմի պես* (ՀԹ, 4, 42):

Սոֆիկ – Ուտող–ուրացող: Ամբողջ տնով *մոմի պես* առաջդ *հալվենք*, ու դու մեր արածը թափես ջուրը ու ձերոնց գովես (ՈւԴԲ, 496):

2. Նհիարել, հյուծվել.

– Երեխաս *մոմի պես հալվում է*, աստված սիրես, Դավիթ, իմացիր նրա ցավը (ԱՇ, 4, 322):

Արսենը *հալնում էր վառած մոմի պես*²²¹ (ԴԴ, 281):

Հմմտ. նաև *կարվի նման // պես մեջքի վրա չընկնել // թաթերին ընկնել* տարբերակայնություն ցուցաբերող ՀԴՄ-ի իմաստներն ու նրանց իրացումները խոսքային միջավայրում.

1. Համառել, իր ասածից երբեք հետ չկանգնել.

Կարվի նման երբեք *մեջքի վրա չընկնելով*՝ այդ պահին Կարոն էլի ժպտաց՝ չնայած հիմար ու թեթև մի ժպիտով (ԱՍՈ, 488):

2. Խուսափել վնասից՝ վտանգից.

Իսկ ջրերը, Հար տանջվելով անքնության բիրտ ձեռքից, Բարձունքներից ցած են նետվում Ինքնասպանի մոլուցքով, Բայց *կարվի պես* Միշտ *ընկնում են* իրենց ճկուն *թաթերին* (ՊՍ, 6, 179):

Խոսքաշարում ՀԴՄ-ների իմաստային դրսևորումների առումով կարևորվում է նրանց զուգորդելիությունն իմաստներն առավել որոշակիացնող բառերի հետ:

Ընդհանրապես մասնագիտական գրականության մեջ բազմիմաստության չափանիշներից մեկն էլ համարվում է այն, որ դարձվածքներն օժտված են բառաիմաստային լայն կապակցելիության հնարավորություններով²²²:

²²¹ Դարձվածքի տարբերակայնությունը չի խոչընդոտում նրա բազմիմաստությանը (տես Յ. Ս. Жуков, Русская фразеология, էջ 197):

²²² Հմմտ. Ս. Д. Игнатьева, նշվ. աշխ., էջ 11, Յ. Ս. Жуков, նշվ. աշխ., էջ 195:

Կախված իր իմաստներից՝ դարձվածքի՝ խոսքի մեջ այլ բառերի հետ կապակցվելու

Բազմիմաստ ՀԴՄ-ի իմաստը նախադասության մեջ կարող են տարբերակել՝

ա) *Առանձին բառերը.*

Ինչպես սար // սարի պես (կանգնել) – 1. որպես հզոր պաշտպան՝ հովանավոր (հանդես գալ), 2. Անհողդող՝ հաստատուն (մնալ):

Հմմտ. 1. Ամեն մի բանվորի, ծառայողի թիկունքին *սարի պես կանգնած է*, նրանց համար ցանկացած պահին կյանքը չի խնայում (ՔԹ, 316):

2. Արևի նման ճակատը պայծառ, Նայում էր խրոխտ՝ *կանգնած ինչպես սար* (ՀԹԸ, 251):

Քարի նման // պես – 1. պինդ, ամուր, 2. ծանր, 3. լուռ, անտարբեր, 4. անխիղճ, անզգա:

Հմմտ. 1. Պակաս օրի հետ Միմիայն մի գանձ՝ *Քարի նման ուժ* Տվավ ինձ հերս (ՀԹ, 2, 249):

2. Սիմոնը նստել էր դարպասի քարին, և *քարի նման* հոգսը ծանրացել էր նրա սրտին (ԱԲ, 93):

3. Մային գլուխը կախ մնում էր իր բանին *քարի պես* լուռ ու անտարբեր (ՆԴ, 52):

4. Բայց *քարի պես, ժեռ քարի պես* բեկի սիրտն անզգա Ասես չէր էլ ուզում լսել լացն ու մորմոքն աղջկա (ՀՇ, 29):

բ) *Ամբողջական նախադասությունները.*

Հմմտ. վերը բերված *սարի պես (կանգնել)* ՀԴՄ-ի երրորդ՝ «մեծ կույտ կազմած (կանգնել)» իմաստային առումը, որն ստորև նշվող օրինակում բացահայտվում է միայն կից նախադասության շնորհիվ:

– Խոտ շատ ունենք, – ժպտաց անտարբերությամբ Տիգրանը՝ մտրակը պարզելով դեպի խոտի դեզերը: – Է, *սարի պես կանգնած են* (ՆԶ, 79):

Այսպիսով՝ ՀԴՄ-ների բազմիմաստությունը հատկանշվում է հետևյալ առանձնահատկություններով.

1. Հաճախ բաղադրամասային պատճառաբանվածություն ունի.

կերպը Ա. Ի. Մոլոտկովը համարում է նրա բազմիմաստության դրսևորման լեզվական ցուցիչներից մեկը: Հմմտ. *ինչպես ջուրը սագի փեքորներից* (ռուս. *как с гуся вода*, անգլ. *like water off a duck's back*) – 1. (ինչ-որ մեկին) միևնույն է, 2. (ինչ-որ մեկի վրայից) արագ անհետանում է (տե՛ս А. И. Молотков, Основы фразеологии русского языка, էջ 123):

այս կամ այն ՀԴՄ-ի այլևայլ իմաստները որոշելիս որպես հիմք են ընդունվում նաև այդօրինակ լեզվական կառույցի բաղադրիչներն ու նրանց իմաստները:

2. Երբեմն հանգեցնում է նրանցում խոսքիմասային տեղաշարժերի. քննվող դարձվածքներում առաջանում են ձևաբանական տարարժեքություն, շարահյուսական բազմագործառույթ դրսևորումներ. այսպիսի դեպքերում միևնույն ՀԴՄ-ն չի վերածվում երկու իրարից անկախ համանունների, եթե դարձվածքի իմաստային առումների միջև տարբերությունն աննշան է:

3. Իմաստաբանորեն փոխկապակցված է նրանց հոմանշության և հականշության հետ. միևնույն ՀԴՄ-ն այլ ՀԴՄ-ների հետ հոմանշային կամ հականշային հարաբերությունների մեջ մտնում է ոչ թե ամբողջությամբ, այլ իր առանձին իմաստներով:

4. Բազմիմաստ ՀԴՄ-ների իմաստային տարբերություններն իրացվում են խոսքաշարում՝ մեծապես կախված լինելով այդ իմաստները որոշակիացնող առանձին բառերից, հարակից նախադասություններից, մի խոսքով՝ խոսքային միջավայրից:

Բ. Հոմանշությունը ՀԴՄ-ներում

ՀԴՄ-ների առանձնահատկություններից մեկն էլ (միջկապակցական) հոմանշային հարաբերությունների մեջ մտնելու կարողությունն է: Նրանցում քիչ են այն դարձվածքները, որոնք չունեն դարձվածային հոմանիշներ:

Ընդհանրապես մասնագիտական գրականության մեջ հոմանիշներ են համարվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք տարբեր են ձևական կողմով, իսկ իմաստային կողմով կամ նույնական են, կամ ունեն նրբերանգային, հուզարտահայտչական կամ ոճական և գործառական տարբերություններ²²³:

Դարձվածաբանական գրականության մեջ դարձվածային հոմանշության տարբեր, այլև միմյանց լրացնող սահմանումներ գո-

²²³ Տե՛ս Վ. Դ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1979, էջ 201, Է. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., ԵՊՀ, 1984, էջ 67:

յություն ունեն²²⁴: Առավել հիմնավորը և ամբողջականը մեր կարծիքով հետևյալ սահմանումն է. «Դարձվածային հոմանիշներ են այն տարակազմ և նույնակազմ դարձվածային միավորները, որոնք ունեն միևնույն նշանակությունը՝ միավորների ձևային պատճառաբանվածության անհամապատասխանությամբ և իմաստային նրբերանգների, ոճական-գործառական պատկանելության ու կապակցելիության հնարավոր տարբերություններով հանդերձ»²²⁵:

Այսպիսով, ինչպես բառային, այնպես էլ դարձվածային հոմանիշներին հատուկ են՝

- ա) տարբեր ձև, ընդհանուր նշանակություն ունենալը,
- բ) իմաստային ու ոճական տարբեր երանգներ արտահայտելը:

1. Հոմանիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ իմաստային և ոճական- գործառական հատկանիշների

Դարձվածաբանական գրականության մեջ այս առումով առանձնացվում են հոմանիշների երեք հիմնական տիպեր.

1. տարբեր կառուցվածքով, բայց մեկ ընդհանուր անդամով հոմանիշ դարձվածքներ կամ հոմանշային տարբերակներ,
2. տարբեր բառային կազմով հոմանիշ դարձվածքներ կամ բուն հոմանիշներ,
3. ոճական հոմանիշներ²²⁶:

Հոմանշային տարբերակները հաճախ միևնույն իմաստն են արտահայտում՝ հանդես գալով որպես **դարձվածային նույնանիշներ**:

Հմմտ. *աղբյուրի պես հոսել // հորդել // խփել // եռալ // բխել* (առատորեն և անվերջ գալ), *դանակի // դաշույնի պես սիրտը խրվել* (խոր խոցվել), *խենթի // խելագարի պես սիրել* (չափազանց շատ՝ ինքնամոռաց սիրել):

²²⁴ Հմմտ. Ս. Գ. Աբրահամյան, Հայոց լեզու, բառ և խոսք, էջ 158, Ա. Մ. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., Եր. համալս., 1971, էջ 270, Ա. Մ. Молотков, Основы фразеологии русского языка, էջ 163, А. Г. Назарян, Образные сравнения французского языка, էջ 8:

²²⁵ Ի. Ի. Чернышева, Фразеология современного немецкого языка, էջ 81:

²²⁶ Տե՛ս Օ. Մ. Неведомская, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими (АКД), էջ 7, М. Ի. Фомина, Русская лексика и фразеология, Կ. 1, М., МПИ, 1965, էջ 25 - 27, Ի. Ի. Чернышева, նշվ. աշխ., էջ 91:

Քուն դարձվածային համանիշները, որոնք կազմվում են տարբեր բառային միջոցներով, ունենում են իմաստային և հուզարտահայտչական տարբերություններ:

Հմմտ. *Ասես գեղնի փակն անցավ, ասես ջրի փակը սուզվեց, ասես քամին փարավ, ասես երկինք համբարձվեց, ոնց որ դանակով կտրես* (անհետացավ, չքացավ, չքվեց):

Տերևի նման թայրփայլ, ուռու պես դողալ, շան պես վախենալ (սաստիկ վախենալ):

Քամու նման թռչել, կայծակի նման սլանալ, հողմի պես սուրալ (շատ արագ թռչել, սլանալ, սուրալ):

Դանակի // դաշույնի պես սիրտը // ականջը խրվել, նեղի նման ցցվել սրտում, սուր սլաքների պես թափանցել մինչև սրտի խորքը, ծանր մուրճի պես հարվածել գլխին, օձի պես խայթել, կայծակի պես շանթել, գանգի մեջ ասես ասեղներ տնկվել // ցցվել («խոր խոցվել» ընդհանուր իմաստով):

Հմմտ. Ամեն մի բառդ մի դաշույնի պես ականջս է խրվում (ՍՍ, 327): Վերջին խոսքն այնպիսի մաղձոտ ծայնով արտասանեց փոքրիկ երիտասարդը, որ *նեղի նման ցցվեցավ* մեծափառ Պարթևի սրտում (ՐՍ, 83): Նրա ականջների մեջ դեռ զարկում էին մոր կծու խոսքերը և *սուր սլաքների նման թափանցում էին մինչև սրտի խորքը* (ն.տ., 360): *Ծանր մուրճի պես հարվածեց* այդ ամենը նրա *գլխին* (ԴԴ, 168): Այս էր արտահայտում նրա դիվային ժպիտը, որ *օձի պես խայթեց* Միքայելին (ԱՇ, 4, 343): Վերջին խոսքերը *կայծակի պես շանթեցին* Մերուժանի քարացած սրտին (ՐՍ, 535): Մխիթարի *գանգի մեջ ասես ասեղներ ցցվեցին* (ՍԽՄ, 548):

Ինչպես տեսնում ենք, այստեղ առկա են «շատ խոր խոցվել» ընդհանուր իմաստով հոմանիշ ՀԴՄ-ներ, որոնց միջև կան **իմաստային-աստիճանական տարբերություններ**:

Իսկ, ասենք, *ուռու պես դողալ, շան պես վախենալ* հոմանշային զույգը դրսևորում է **հուզարտահայտչական տարբերություններ**:

Դարձվածային **ոճական հոմանիշներն** առանձնանում են լեզվի գործառական տարբեր ոճերում ունեցած կիրառությամբ:

Հմմտ. *Գիսավոր աստղի պես փայլել* (գրք.), *պոչով աստղի պես երևալ* (խսկց.) - ուշ-ուշ երևալ:

Ապուշի պես (արհմրհ.), *տավարի պես* (գոհկ.) - հիմարաբար:

Աղբյուրի պես գալ (համագործած.), *վարար գեպի նման հոսել*, *թափվել ինչպես առափության եղջյուրից* (գրք.), *սելավի պես գալ* (բրբ.) - առատորեն և անվերջ գալ:

Հմմտ. Գալիս է նավթը, *գալիս աղբյուրի պես* (ԱՇ, 7, 75): Մեր կյանքում ռազմական փողի նման թնդում էին Գամառ-Քաթիպայի ազատ երգերը, *վարար գեպի նման հոսում էին* Րաֆֆու վեպերը՝ անընդհատ խորհրդավոր (ՀԹ, 476): Աթոն դուրս եկավ, տեսավ *սելավի պես եկող* բազմությունը, ու աչքերը մթնեցին (ՎԱ, 198):

2. ՀԴՄ-ների հոմանշային շարքերը

Ինչպես բառային, այնպես էլ դարձվածային հոմանիշների շարքերը համաժամանակյա (սինխրոնիկ) լեզվական իրողություններ են, որոնք կազմված են երկու կամ ավելի դարձվածքներից: Թե՛ բառային, թե՛ դարձվածային հոմանիշների համար «հոմանշային շարք» տերմինից բացի կիրառվում են նաև «հոմանիշների փունջ» կամ «հոմանիշների բույն» տերմինները²²⁷:

ՀԴՄ-ների դեպքում դարձվածային հոմանիշների շարքերը քանակական ընդգրկումներով կարող են տարբեր լինել՝ ներառելով երկուսից մինչև տասնհինգ, երբեմն ավելի ՀԴՄ-ներ: Քննվող դարձվածքների հոմանշային շարքերի մեջ մեծամասնություն են կազմում երկու, երեք և չորս դարձվածքներ ընդգրկողները: Մեր տվյալներով առավել շատ հոմանիշ ՀԴՄ-ներ ունեցող շարքերից է «պնդակազմ» ընդհանուր իմաստով միագագաթ հոմանիշ դարձվածքների հետևյալ շարքը.

Երկաթի պես, պողպատի պես, գրանիտի նման, պատի պես, պարսպի նման, կոճղի նման, կաղնու պես, ծառի պես, ցուլի պես, առյուծի պես, փղի նման, ժայռի պես, սարի պես, լեռան նման, Գաբոսայի նման (15 դարձվածք):

Իր ընդգրկունությամբ աչքի ընկնող հոմանիշ ՀԴՄ-ների շարքերից է նաև որպես նվազասույթ հանդես եկող «չափազանց փոքր» ընդհանուր իմաստով ՀԴՄ-ների հետևյալ փունջը.

Ասեղի ծայրի չափ, քորոցի գլխի չափ, մազի չափ, եղունգի չափ,

²²⁷ Տե՛ս Ա. Մ. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 135:

թռչունի կտուցի չափ, ծրի աչքի չափ, կորեկի չափ, մասուրի չափ, բալի նման // չափ, լուցկու փուսի չափ (10 դարձվածք):

«Անմտաբար, մոլեգնած» ընդհանուր իմաստով հետևյալ հոմանշային շարքը ներառում է ինը հոմանիշ ՀԴՄ-ներ.

Գժի պես, ցնդվածի պես, խենթի պես, խելագարի պես, կրակից փախչողի պես, խայթվածի պես, կայծակնահարի պես, շանթահարի պես, սպանվածի պես (վազել, փախչել, դուրս գալ, ցատկել տեղից, վեր թռչել և այլն):

3. Հոմանշություն և բազմիմաստություն

Լեզվական այս երկու երևույթներն ակնառու ընդհանրություններ ունեն: Դարձվածքների՝ հոմանշային հարաբերությունների մեջ մտնելու հնարավորությունն զգալիորեն առնչվում է նրանց բազմիմաստության հետ:

Բազմիմաստ դարձվածքի իմաստային տարբերակները գործածվում են ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր հոմանշային շարքերում:

Հոմանշային հարաբերությունների մեջ մտնում են ինչպես մենիմաստ, այնպես էլ բազմիմաստ ՀԴՄ-ները: Ինչքան իմաստներ ունի տվյալ ՀԴՄ-ն, այնքան հոմանշային շարքեր կարող է կազմել:

Հմմտ. *ջրի պես* դարձվածքը բազմիմաստ է, ունի՝ 1. «շատ վարժ, անգիր», 2. «անխնա, շոայլորեն», 3. «առատորեն» իմաստները:

Իր առաջին իմաստով այն մտնում է հետևյալ հոմանշային շարքի մեջ.

Ջրի պես, հինգ մարի պես, փրփուրի պես, Հայր մերի պես, Ավետարանի պես (գիտենալ, իմանալ, ճանաչել):

Իր երկրորդ իմաստով այն հոմանիշ է *թաժա հացի պես (փող ծախսել)* դարձվածքին, իսկ երրորդ իմաստով՝ *աղբյուրի պես, գեղի պես, հեղեղի պես (հոսել, բխել, հորդել)* դարձվածքներին:

Լույսի պես ՀԴՄ-ն ունի՝ 1. «մարմնով սպիտակ», 2. «շատ գեղեցիկ», 3. «շատ պարզ, ակնհայտ» իմաստները և համապատասխանաբար հաղես է գալիս երեք տարբեր հոմանշային շարքերում:

Հմմտ. 1. *Լույսի պես, կաթի պես, բամբակի նման, ձյան պես (սպիտակ), փրփուրի պես (ճերմակ):*

2. *Լույսի պես, հրեշտակի պես, ինչպես մի պատկեր, ինչպես*

նախշ ու նկար:

3. *Լոյսի պես, օրվա պես, արևի պես, երկու անգամ երկու՝ չորսի պես (պարզ):*

Կրակի նման ՀԴՄ-ն ունի՝ 1. «շատ ճարպիկ, աշխույժ», 2. «չափազանց արագ» իմաստները, որոնցով էլ առանձին-առանձին հոմանշային շարքեր է կազմում:

Հմնտ. 1. *Կրակի նման, կապովի նման (ճարպիկ):*

2. *Կրակի նման, ծրի պես, քամու նման, կայծակի նման, հողմի պես (սլանալ, թռչել):*

Ծրի պես դարձվածքը, բացի «շատ արագ» իմաստից, ունի նաև «շատ թեթև» նշանակությունը, որով էլ այն համանիշ է *տաշեղի նման, հովի պես, փեփուրի պես (թեթև)* ՀԴՄ-ներին և այլն:

4. Հոմանիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ ձևաբանական արժեքի

Դարձվածային հոմանիշների մեջ առանձին խումբ են կազմում տրամաբանական հասկացություն արտահայտող դարձվածային միավորները:

Դարձվածքի ձևաբանական արժեք ասելիս նկատի է առնվում նրանով արտահայտված հասկացությունը՝ խոսքիմասային պատկանելությունը. դարձվածքն այս կամ այն խոսքի մասին համարժեք է առաջին հերթին իր արտահայտած իմաստով:

Ըստ ձևաբանական արժեքի՝ հայերենում հանդիպում են մեծ մասամբ ածականական, բայական և մակբայական հոմանիշ ՀԴՄ-ներ²²⁸:

ա) Ածականի արժեք ունեցող հոմանիշ ՀԴՄ-ներ

Դրանք հանդես են գալիս հիմնականում **կապական կառույց + ածական** կամ **ածական + կապական կառույց** տարբերակներով:

Հմնտ. 1. *Կոճղի՝ գերեզմանի պես լուռ, քարի պես լուռ՝ սառն,*

²²⁸ Հազվադեպ են եղանակավորող հոմանիշ ՀԴՄ-ները: Դրանք խոսքը երանգավորող համեմատություն-դարձվածքներն են, որոնք հանդիպում են **կապ + կապի խնդիր** կառուցատիպով:

Հմնտ. *Հակառակի պես, թարսի պես, սափանայի պես: Ախպոր պես, եղբոր նման* և այլն:

ձկան պես լուռ՝ համր:

2. Կարմիր ինչպես վարդը, կարմիր ինչպես հուրը, բոսոր ինչպես արյունը:

3. Հին ինչպես աշխարհը, երկրագնդի պես հին, Ադամի չափ ծեր:

Ինչպես տեսնում ենք, ածականական հոմանիշ ՀԴՄ-ների կառուցվածքային տարբերակներ հանդիպում են նաև միևնույն հոմանշային շարքում:

Ածականական հոմանիշ ՀԴՄ-ներն արտահայտում են մարդկանց և իրերը բնութագրող հասկացություններ:

Հմնտ. 1. *Ինչպես ջրի երկու կաթիլ, ինչպես մի խնձոր՝ երկու կես արած, ինչպես մի սաջի հաց, ինչպես մի ծառի պտուղ* (ներքինով՝ արտաքինով իրար շատ նման):

2. *Ածուխի պես սև, կուպրի նման սև, մրի պես սև, սաթի պես սև, սարյակի թևի նման սև, ագռավի պես սև, մազութի պես սև, խեժի պես սև* (գերազանցապես ասվում է դեմքի, ձեռքերի, հագուստի չափազանց սև լինելու դեպքում):

Հոմանիշ ՀԴՄ-ների այս փնջում առկա են **սև** գունանիշ ածականով դարձվածքներ: Ածականական ՀԴՄ-ների շատ հոմանշային շարքեր կազմվում են հենց գունանուն բաղադրիչով դարձվածքներով:

բ) Բայի արժեք ունեցող հոմանիշ ՀԴՄ-ներ

Դրանք հանդես են գալիս **բայ + գոյական + կապ** կառուցատիպով, ինչպես նաև **բարդ ստորադասական նախադասության** ձևավորումով (առանց ստորոգման հատկանիշի):

Հմնտ. *Սպունգի պես ծծել, խողովակի պես ընդունել, ծծանի պես կլանել* (արագ՝ անմիջապես յուրացնել):

Ծխի պես անցնել, երազի նման անէանալ, միրաժի պես ջքանալ (աննկատելի և արագ անցնել, անէանալ):

Կարծես այս աշխարհում չլինել, ասես մորից նոր ծնվել (ցնծության մեջ լինել):

Փոխվել ինչպես երազում, շուռ գալ ինչպես հեքիաթում (արագ և հիմնովին փոխվել):

Տարբերվել ինչպես սևն սպիտակից, հեռու լինել ինչպես երկինքը երկրից (չափազանց տարբեր լինել):

Բայական ՀԴՄ-ները, ինչպես առհասարակ բայական կապակցությունները, ծավալման ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան մյուս ՀԴՄ-ները: Բայական ՀԴՄ-ների հոմանշային շարքերում հանդիպում են ինչպես երկբաղադրիչ, այնպես էլ բազմաբաղադրիչ ՀԴՄ-ներ:

Հմմտ. Հոլի պես պտրվել, որսկանի բարակի պես վազել, սատանի չարխի պես դառնալ (անընդհատ շարժման մեջ լինել):

Ուզածի պես խաղացնել, մոմի նման ամեն կողմ շուռ փալ (մեկին ստիպել իր ուզածի պես վարվել):

Կոփրած գդալի պես մեջ ընկնել, թանի ճանճի նման մեջտեղ ընկնել (խառնվել իրեն չվերաբերող գործերին):

Իրեն զգալ ինչպես մոր փորում, ապրել ինչպես Աբրահամի գոգում (լիության մեջ ապրել):

գ) Մակբայի արժեք ունեցող հոմանիշ ՀԴՄ-ներ

Հայերենում մեծ մասամբ առկա են լիմաստ և թերիմաստ բառերից կազմված մակբայական հոմանիշ ՀԴՄ-ներ, այլ կերպ ասած՝ այդ կարգի **միագագաթ ՀԴՄ-ներ (аднавершинные КФЕ)**: Կարող են պատահել այս կառույցի ծավալումներով մակբայական հոմանիշ ՀԴՄ-ներ:

Հմմտ. Մոլորվածի նման, սպանվածի պես, բայց՝ մի բան կորցրածի պես, ջուրն ընկածի պես (վշտաբեկ, ընկճված):

Աշխարհի չափ, ծովի պես, բայց՝ մազերի համրանքի չափ, երկնքի աստղերի չափ, ծովի ավազի չափ (անչափ, անքանակ):

Մակբայական հոմանիշ ՀԴՄ-ներն առավել արտահայտիչ են դարձնում գործողությունների հատկանիշները՝ պատկերավորություն տալով խոսքին:

Այսպիսով՝

1. Դարձվածային հոմանիշների շարքը համաժամանակյա (սինխրոնիկ) իրողություն է: ՀԴՄ-ների հոմանշային փունջը կազմվում է երկու և ավելի (մինչև տասնվեց) դարձվածքներից:

2. ՀԴՄ-ներին բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է,

որ կարող են ունենալ հոմանշային զույգեր կամ շարքեր:

3. Հոմանիշ ՀԴՄ-ներում առանձնանում են՝ ա) հոմանշային տարբերակները, որոնք մեծ մասամբ համընկնում են նույնանիշներին, բ) բուն համանիշները, որոնք դրսևորում են նրբիմաստային ու հուզարտահայտչական տարբերություններ, գ) միմյանց նկատմամբ ոճական-գործառական տարբերություններ դրսևորող ոճական հոմանիշները:

4. Ժամանակակից հայերենում ավելի շատ հանդիպում են ածականական, բայական և մակբայական հոմանիշ ՀԴՄ-ներ:

9. Հականշությունը ՀԴՄ-ներում

Ըստ իմաստային (միջկապակցական) հարաբերությունների՝ ՀԴՄ-ներում առանձնացվում են նաև հականշային կապակցություններ: Դարձվածային հականշությունը հոմանշության համեմատությամբ ավելի քիչ տարածված և առավել պակաս հետազոտված լեզվական երևույթ է:

Թե՛ բառերի, թե՛ դարձվածքների իմաստաբանական այս խումբը հատկանշվում է իմաստային բևեռայնությամբ. հականշության համար անհրաժեշտ է հասկացական հակադրություն:

Հմմտ. *հյուսիս – հարավ, արևելք – արևմուտք, բարձրանալ – իջնել, ծոփ թևով – կրիայի քայլերով, լեզու առնել – լեզուն բռնվել, խոզի պես ուրտել– ծոփ չափ ուրտել, առյուծի պես քաջ – նապաստրակի նման վախկոտ:*

Եվ հականիշ բառերը, և՛ հականիշ դարձվածքները ձևով տարբեր (կամ մասամբ տարբեր) են լինում, սակայն կարևորը նրանցում առկա իմաստային հակադրությունն է:

ՀԴՄ-ների հականշությունը ոչ թե նրանց առանձին բաղադրիչների, այլ նրանց ընդհանուր իմաստային հակադրության հետևանք է²²⁹:

Հմմտ. *քամու նման* (չափազանց արագ) - *կրիայի պես* (չափազանց դանդաղ), *աշխարհի չափ* (անչափ, անքանակ) - *եղունգի չափ* (չնչին, աննշան), *մերաքսի պես* (չափազանց փափուկ) - *քարի*

²²⁹ Տե՛ս Լ. Դ. Игнатьева, Структурные и семантические свойства ФЕ....., էջ 12:

պես (չափազանց կարծր), *սարի չափ* (շատ մեծ, վիրթսարի) - *թռչունի կտուցի չափ* (շատ փոքր), *ինչպես երկինք ու երկիր* (չափազանց տարբեր) - *ինչպես մի ծառի պտուղ* (չափազանց նման), *գայլի պես լափել* (չափազանց շատ ուտել) - *ծփի չափ ուրել* (շատ քիչ ուտել), *կարծես մորից նոր ծնվել* (երանության՝ ցնծության մեջ զգալ իրեն) - *թրջված մկան պես լինել* (վշտաբեկ լինել):

1. Հականիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ ձևաբանական արժեքի

Ընդհանրապես թե՛ բառերի, թե՛ դարձվածքների հականշային շարքի անդամների միևնույն խոսքիմասային պատկանելությունն անհրաժեշտություն է:

Ժամանակակից հայերենում առկա են ածականական, բայական և մակբայական հականշային ՀԴՄ-ներ:

ա) Ածականի արժեք ունեցող հականիշ ՀԴՄ-ներ

Ածականին հարաբերակից ՀԴՄ-ներն ամենից առաջ իմաստային առումով են փոխարինում նրան²³⁰:

Ածականի արժեք ունեցող հականիշ ՀԴՄ-ները կարող են հանդես գալ՝

1. ածական + գոյական + կապ կաղապարով (**կապական կառույց + ածական** կամ **ածական + կապական կառույց** շարահյուսական տարբերակներով) և նրա ծավալումներով.

հմմտ. *կաթի պես ճերմակ* - *ածուխի պես սև*, *խոզի պես գեր* - *կմախքի պես նիհար*, *փաշտեղի նման թեթև* - *քարի պես ծանր*, *խոզի նման կեղտոտ* - *բյուրեղի պես մաքուր*, *դառն ինչպես լեղի* - *քաղցր որպես շաքար*, *արևի // ցերեկվա լույսի պես պարզ* - *գորոշյան հանգուցի պես բարդ*, *զունսպի ինչպես պատրի ծեփը* - *կարմիր ինչպես վարդի թերթը* և այլն,

²³⁰ Հմմտ. հետևյալ հականշային զույգերը (հայերենում, ռուսերենում և անգլերենում).
Կրետսի պես հարուստ- *Հորի պես աղքատ* / *նապաստակի պես վախկոտ*- *առյուծի պես քաջ*
богат как Крез – беден как Иов / *տրչսլիւնի կակ չալս* – *храбрыи как лев*
as rich as a Croesus – as poor as Job / *timid as a hare – bold / brave as a lion.*

2. գոյական + կապ կաղապարով և նրա ծավալումներով.

հմմտ. կորեկի չափ - սարի չափ, վարդի պես - սատրանայի նման, շուն ու կատվի պես - մի դռան երկու շան նման, սև ուրբաթի պես - երկնքի թռչունների պես, ծրի աչքի չափ - աշխարհի չափ և այլն:

բ) Բայի արժեք ունեցող հականիշ ՀԴՄ-ներ

Բայական ՀԴՄ-ների լրացյալն անպայման բայ է²³¹: Այդօրինակ ՀԴՄ-ների հականշային զույգերում հանդիպում են **բայ + գոյական + կապ** կաղապարով և նրա շարահյուսական տարբերակներով ՀԴՄ-ներ:

Հմմտ. քաթանի պես գունափվել - նորահարսի պես շառագունել, ջահի պես վառվել - ուրագի պես միշտ իր կողմը փաշել, փարբերվել ինչպես երկինքը երկրից - ջրի երկու կաթիլի պես նման լինել (իրար), կարծես փշերի վրա նստած լինել - կարծես մոր գիրկն ընկնել, սրվերի պես հեղևել - փախչել ինչպես ժանտախտից և այլն:

գ) Մակբայի արժեք ունեցող հականիշ ՀԴՄ-ներ

Ինչպես նշվել է, ժամանակակից հայերենում բուն մակբայներով ՀԴՄ-ներ չկան: Որոշ ՀԴՄ-ներ շարահյուսական կիրառության մեջ, նայած լրացյալին, կարող են դիտվել կամ իբրև ածականներ, կամ իբրև մակբայներ:

Հմմտ. քորոցի գլխի չափ - աշխարհի չափ (ուրախություն), (ած.)
քորոցի գլխի չափ - աշխարհի չափ (ուրախանալ), (մկբ.)
դառն ինչպես լեղի - շաքարի նման քաղցր (խոսք), (ած.)
դառն ինչպես լեղի - շաքարի նման քաղցր (խոսել), (մկբ.)
կրակի նման - կրիայի նման (ընթացք), (ած.)
կրակի նման - կրիայի նման (ընթանալ), (մկբ.) և այլն:

²³¹ Հմմտ. հետևյալ համարժեք հականշային զույգերը (հայերենում, ռուսերենում և անգլերենում).

կրիայի պես ընթանալ - քամու պես թռչել
как черепашка идти - как ветер лететь
slow as a snail - go/ run like the wind

ծիպիկի չափ ուրել - խոզի պես լափել
есть как птучка - есть как свинья
eat like a bird - eat like a hog.

2. ՀԴՄ-ների հականշային շարքերը

Առհասարակ ԴՄ-ների հականշային շարքերին անդրադառնալիս հարկ է դրանք քննարկել հոմանշային շարքերի հետ զուգընթաց. հականիշ դարձվածքները մյուս դարձվածքների հետ մտնում են հոմանշային հարաբերությունների մեջ՝ կազմելով հականշահոմանշային յուրատեսակ շարքեր:

ՀԴՄ-ներում տարբերակվում են հականշային երկանդամ և բազմանդամ շարքեր: Վերջիններս ավելի հատկանշական են ՀԴՄ-ների համար, ինչն էլ պայմանավորված է այդօրինակ դարձվածքների՝ հոմանիշներով հարուստ լինելու հանգամանքով:

Ինչպես բոլոր դարձվածքների, այնպես էլ ՀԴՄ-ների հականշային շարքն ընդգրկում է նվազագույնը երկու անդամ:

Հմմտ. դառն ինչպես լեղին – քաղցր ինչպես մեղրը, ավանակի պես անխելք – Սողոմոնի նման իմաստուն, կոճոյի նման կարճահասակ – չինարի պես բարձրահասակ, փաշեղի նման թեթև – կապարի պես ծանր, օխտը դևի հեքիաթի պես երկար – երազի պես անցողիկ, կարծես այս աշխարհում չլինել – թրջված հավի նման լինել, մի դռան շան նման յուրա գնալ – ապրել ինչպես շուն ու կապու, մոմի նման ուզած ձեն ընդունել – կապուի նման մեջքի վրա չընկնել, սոխակի պես գեղգեղալ – ագռավի պես կոռալ, սնկի նման աճել – ձյան պես հալվել:

Ի տարբերություն ՀԴՄ-ների հականշային երկանդամ շարքերի՝ արդի հայերենում առավել մեծ թիվ են կազմում քննարկվող դարձվածքների բազմանդամ շարքերը: Այս հանգամանքը կապված է ՀԴՄ-ների դարձվածային հոմանիշների, ինչպես նաև նրանց դարձվածային տարբերակների առատության հետ:

Հմմտ. Ձյունի պես ճերմակ, կաթի // փրփուրի // բամբակի պես սպիտակ – Ածուխի // մազութի // ձյութի // կուպրի // մրի // գիշերի պես սև:

Արյան // վարդի // վարդի թերթի պես կարմիր – Քաթանի // կրավի // կավճի պես գունապ:

Գնդասեղի գլխի չափ, թռչունի կտուցի չափ, լուցկու փուփի չափ, ասեղի ծայրի չափ – Աշխարհի չափ, ծովի ավազի չափ, մագերի համրանքի չափ, սարի չափ:

Կարծես մի ծանր քար // բեռ ընկնել ուսերից // սրտից, ասես կրծքից մի բան պոկվել // քար ընկնել – Քարի // կապարի // արճիճի պես ծանրանալ ուսերին // սրտին, ասես մարդ սպանած լինել:

Քամու նման թռչել // սուրալ, հողմի պես սլանալ – Կրիայի պես դանդաղ ընթանալ // քայլել, ասես ուրքի փակ ձու լինել:

Շան նման չարչարել, ինչպես գրաստ քշել, էշի // ձիու պես աշխատեցնել – Վարդի // փնջած մորիի պես պահել, աչքի լույսի պես պահպանել:

Կաշաղակի նման շաղակրատել, ճպուռի պես շափախոսել – Քար գցած գորտի պես ձայնը կտրել, ձկան // քարի // գերեզմանի պես լռել:

Ջանը կրակ ընկածի նման լինել, հողի նման պտտվել, անիվի պես դառնալ, սափանի չարխի պես պտույտ գալ – Մումիայի նման անշարժանալ, փայտ // շամփուր կուլ փվածի նման լինել, քարի պես արձանանալ, արձանի նման կանգնել:

(Ձգալ) ինչպես ձուկը ջրում, ինչպես հավը հավաքնում – (Ձգալ) ինչպես ափ նետված // ջրից հանած ձուկը, ինչպես թռչնակը վանդակում:

Ասես գեղնի փակն անցավ, ասես երկինք համբարձվեց – Ասես գեղնի փակից բուսնեց, ասես երկնքից հայտնվեց:

3. Հականիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների

Դարձվածաբանական գրականության մեջ իմաստային հակադրություն արտահայտող դարձվածքները կազմության տեսանկյունից հատկանշվում են իրենց բառային կազմի, շարահյուսական կառուցվածքի ընդհանրություններով և տարբերություններով²³²:

Հականիշ ՀԴՄ-ներում իմաստային հակադրությունը կարող է դրսևորվել՝

ա) գերադաս անդամների միջոցով.

իմմտ. մոմի պես **փափուկ** - կապարի նման **կարծր**, Հոբի

²³² Հմմտ. Օ. Մ. Неведомская, Компаративные фразеологизмы....., էջ 8-9, Ս. Գ. Աբրահամյան, Հայոց լեզու, բառ և խոսք, էջ 162, Լ. Մ. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, էջ 65:

պես **աղքատ** - Կրեստսի նման **հարուստ**, առյուծի պես **քաջ** - նապաստակի նման **վախկոտ**, սրվերի պես **հեղինակ** - **փախչել** ինչպես ժանտախտից, մումիայի պես **անշարժանալ** - սնդիկի պես **շարժվել** և այլն,

բ) կախյալ (համեմատական) բաղադրիչներով.

հմմտ. **խոզի պես ուրել** - **ծրի պես ուրել**, **հյուրի պես զգալ** (իրեն) - զգալ **ինչպես իր փանը**, **շան պես ապրել** - **վարդի պես ապրել**, **օդ ու ջրի // թթվածնի // մոր կաթի պես** անհրաժեշտ լինել - **հերվա ձյան պես** անհրաժեշտ լինել, **օրվա պես** պարզ - **պարզ ինչպես պղտոր գետը** և այլն:

Իրենց կազմում ընդհանուր բառ ունեցող²³³ հականիշ ՀԴՄ-ներում ընդհանուր բաղադրիչը կարող է հանդես գալ քերականական տարբեր ձևերով.

հմմտ. **քարի պես ծանրանալ սրտին // ուտերին** – **ասես մի ծանր քար ընկնել սրտից // ուտերից**, **ասես գետնի փակից բուսնել** – **ասես գետնի փակն** անցնել, զգալ **ինչպես ծուկը ջրում** – զգալ **ինչպես ջրից հանած ծուկը** և այլն:

Ժամանակակից հայերենի ՀԴՄ-ներում երբեմն ն գերադաս, ն կախյալ բաղադրիչները միաժամանակ կարող են հականշություն արտահայտել.

հմմտ. **հավիտենության չափ երկարատև** – **ակնթարթի պես անցողիկ**, **օրվա պես պարզ** – **գիշերվա նման մութ**, **հրեշտակի պես գեղեցիկ** – **սափանայի պես տգեղ**:

Հականիշ ՀԴՄ-ները կարող են նաև իրենց բառային կազմով միանգամայն տարբեր լինել՝ հակադրություն արտահայտելով զուտ իրենց ընդհանուր իմաստներով՝ անկախ բառային ուղղակի հակադրություններից²³⁴:

Հմմտ. **մոմի նման ուզած ձևն ընդունել** (մեկի ուզածի պես վարվել, ենթարկվել) – **եզան պես կողքի ընկնել** (իր ասածը պնդել, համառել), **ասես ասեղների վրա նստած լինել** (նյարդային՝

²³³ Ժամանակակից հայերենում եզակի օրինակներից է **թռչունի պես ապրել** – **վանդակում փակված թռչունի պես ապրել** ՀԴՄ-ների հականշային զույգը, որտեղ որոշիչն է միայն իմաստային հակադրություն մտցնում:

²³⁴ Հմմտ. А. М. Эмирова, Об антонимических противопоставлениях в сфере фразеологии, Сб. «ВСФЕ», ч. I, , էջ 175, Ս. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 162:

անհանգիստ վիճակում լինել) – *կարծես մոր գիրկն ընկնել* (հանգիստ՝ անհոգ լինել), *ցուրտը թրի նման կտրել* (սաստիկ ցուրտ լինել) – *բոլորած թոնրի նման լինել* (սաստիկ շոգ լինել), *մոմի պես այրվել* (ողջ կյանքում հանուն ուրիշների բարօրության ապրել) – *ուրագի պես միշտ իր կողմը փաշել* (միշտ միայն իր մասին մտածել, ամեն ինչ իրեն վերցնել, ընկերոջ և մյուսների մասին չմտածել), *հեղեղի պես թափվել* (առատորեն հորդել, չափազանց շատ թափվել) – *ասես դանակով կտրել* (միանգամից կտրվել՝ դադարել), *մի կաթիլ ջրի պես անհետանալ* (հանկարծակի անհետանալ) – *ասես երկնքից ընկնել* (հանկարծակի հայտնվել) և այլն:

Մասնագիտական գրականության մեջ իմաստային առումով առանձնացնում են՝

ա) լիարժեք հականիշներ, որոնց բնորոշ են բառային իմաստի լրիվ հակադրությունը, առարկայական միանման հարաբերակցությունը և ոճական միևնույն առանձնահատկությունը, սակայն դրանք, որպես կանոն, շատ չեն.

հմմտ. *հավիտենության պես երկարապն – ակնթարթի պես անցողիկ*, *հրեշտակի նման գեղեցիկ – սափանայի նման փգեղ*, *օրվա պես պարզ – գիշերվա պես մուգ*,

բ) նշված կողմերից որևէ մեկով տարբերվող հականիշներ, որոնք ավելի մեծ թիվ են կազմում²³⁵.

հմմտ. *փրփ պես կպչել* (խսկց.) – *փախչել ինչպես սափանան խնկից* (գրք.), *նման լինել ինչպես մի սաջի հաց* (ժող.) – *փարբերվել ինչպես երկիր ու օվկիան* (գրք.), *խոզի պես կեղտոտ* (խսկց.) – *բլուրեղի պես մաքուր* (գրք.), *ջանը կրակ ընկածի նման* (բրբ.) – *փեփի նման* (բրբ.), *ծրի նման թռչել* (խսկց.) – *կրիայի պես քայլել* (խսկց.) և այլն:

4. Հականշություն և բազմիմաստություն

Ընդհանրապես յուրաքանչյուր դարձվածք հոմանիշ կամ հականիշ է համարվում մեկ այլ դարձվածքի ոչ թե ամբողջությամբ վերցրած, այլ իր առանձին իմաստով²³⁶:

²³⁵ Հմմտ. Օ. Մ. Неведомская, նշվ. աշխ., էջ 9:

²³⁶ Մենիմաստ ՀԴՄ-ն կարող է ունենալ մեկ հականիշ ՀԴՄ: Եթե ՀԴՄ-ն բազմիմաստ

Այսպես, *սարի պես կանգնել // ~ ինչպես սարը* դարձվածքը բազմիմաստ է. իր առաջին՝ «պաշտպանել» իմաստով այն հականիշ է *Պիղապոսի նման ձեռքերը լվանալ* (չեզոք դիրք գրավել) դարձվածքին, իսկ երկրորդ՝ «հաստատուն՝ ուժեղ լինել» իմաստով հականիշ է *երեխայի // մանկան նման թույլ // անզոր // անօգնական լինել // զգալ իրեն* (խիստ թույլ լինել) դարձվածքին:


Հմմտ. 1. Այդքան ասլան – բալասիներ, և թիկունքում *սարի պես կանգնած* Աբոն, որի կինը հարկադրված չէ ուրիշ շատերի պես ամեն օր մտատանջվել, թե վաղվա ճաշի համար որտեղից ինչ ձեռք բերի (ԱՍԿ, 6-7):

Զարմանդուխտի նամակը նրան պարզ հայտնել էր, որ ինքը որդիական պարտավորությունից *Պիղապոսի նման ձեռքերը լվացել*, մի կողմ էր կանգնել, ծնող, ազգական բոլորեքյան կոտորվել են ու իրանց համար գլուխը մահու տալու բնական պարտավորությունից ազատել (ՊՊ, 5, 61):

2. *Կանգնեց Դավիթ, ինչպես սարը*, Գըրգուտ սարը մեզ-մշուշում (ԼԹ, 4, 38):

Փոքրիկ *երեխայի նման* նա *անզոր է զգում իրեն* (ԱՍՈ, 26):

Բազմիմաստ ՀԴՄ-ի՝ յուրաքանչյուր իմաստի համար առանձին հականիշ ունենալու հատկությունը կարելի է ներկայացնել հետևյալ կադապարով.



Միևնույն ՀԴՄ-ի իմաստային կառուցվածքում **a**, **b**, **c**-ն տարբեր նշանակությունների ցուցիչներ են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հականիշը:

է, յուրաքանչյուր իմաստի համար կարող է ունենալ տարբեր հականիշներ: Չի բացառվում, որ իմաստներից ոչ բոլորի համար նույն ՀԴՄ-ն ունենա հականիշներ:

Հմմտ. *Լույսի պես* – 1. մարմնով շատ սպիտակ, 2. շատ գեղեցիկ, 3. շատ պարզ.

1. *լույսի պես (սպիտակ)* – *ածխի // մազութի // մրի // ձյութի պես (սև),*

2. *լույսի պես (գեղեցիկ)* – *սափանայի նման (տղեղ),*

3. *լույսի պես (պարզ)* – *գորոշյան հանգույցի պես (բարդ):*

Ծառի պես – 1. հսկա, վիթխարի, 2. պնդակազմ.

1. *ծառի պես (վիթխարի)* – *կոճղի նման (կարճահասակ),*

2. *ծառի պես (պնդակազմ)* – *թքած-կպցրածի նման (թուլակազմ):*

Վարդի պես – 1. գեղեցկադեմ, 2. բարեկեցիկ կյանքով (պահել, ապրել).

1. *վարդի պես (գեղեցիկ)* – *սափանայի պես (տղեղ),*

2. *վարդի պես (պահել)* – *շան պես (չարչարել):*

Սև ուրբաթի պես – 1. տխուր, 2. լուռ, անխոս.

1. *սև ուրբաթի պես (տխուր)* – *թռչունի պես (զվարթ),*

2. *սև ուրբաթի պես (լուռ)* – *կաջաղակի պես (շաղակրատ):*

Կրակի նման – 1. շատ աշխույժ, եռանդուն, շարժուն, 2. չափազանց արագ, 3. կատաղի, մոլեգին.

1. *կրակի նման (շարժուն, աշխույժ)* – *արձանի պես, փայտ կուլ տվածի պես (անշարժ, անկենդան),*

2. *կրակի նման (արագ)* – *կրիայի նման, մեռածի նման (խիստ դանդաղ),*

3. *կրակի նման (կատաղի)* – *գառան // աղավնու նման (հեզ) և այլն:*

5. Հականիշ ՀԴՄ-ները խոսքային միջավայրում

Հականշային երկանդամ և բազմանդամ շարքերի անդամներից յուրաքանչյուրը կարող է օժտված լինել տարբեր հուզարտահայտչականությամբ և գործառվել խոսքի ինչպես նույն, այնպես էլ տարբեր ոճերում:

Հմմտ. *փետի նման (բրբ.)* – *ջանը կրակ ընկածի նման (բրբ.)*

ծրի նման թռչել (խսկց.) – *կրիայի պես քայլել (խսկց.)*

փետի նման տնկվել (բրբ.) – *հողի պես պտտվել (խսկց.)*

մեռելի պես սփրթնել (խսկց.) – *նորահարսի պես շառագունել (գրք.):*

Հմմտ. 1. Չատին էլ եկավ՝ Անճոռնի ու մեծ, Էն Փեպի նման մեջքեղը տնկվեց (ՀԹԸ, 164):

Սուսաննա – (Կոտրված ժպիտով) Կեսուր է, մայր չի, որ սիրտը ցավի, ասի՝ հողի պես շարունակ պտտվում է, երակների լայնացում ունի, թողնեմ մի քիչ հանգստանա (ԱՍԿ, 375):

2. Լուսաստղն էլ մեռելի պես սփրթնել էր ու արևի երկյուղից գլուխ էր առել փախչում (ՊՊ, 5, 102):

– Շնորհակալություն, տեր Մամիկոնեից, – շառագունեց Գնելը նորահարսի պես (ՍԶ, 6, 136):

Գեղարվեստական երկերում առավել ցայտուն են երևում հականշային ՀԴՄ-ների հուզարտահայտչական տարբեր գունավորումները: Ստորև բերվող բնագրային օինակներում ակնառու է խնդրո առարկա դարձվածային հականիշների բազմերանգությունը:

1. Ինչպե՞ս. նա ամբողջ օրը խանութում արյուն-քրտինք թափի, շան պես չարչարվի, իսկ կնիկն անառակությունն անի... (ԱՇ, 4, 151):

Ամեն կողմից նշանավոր այդ բեյն առանձնացած ապրում էր տանը, ինչպես իշխանը դոյակում (ԱԲ, 192):

2. Ճղճղացին, ինչպես (անմիտ) Կաշաղակներ լեզվագար (ՀԹ, 2, 188):

... Եվ արժե՞ միթե, երբ գիտեմ, որ ես Կարող եմ հիմա Կոճղի պես լռել (ՊՍ, 6, 73):

3. Սաքոն մի կաթիլ ջրի պես Երևանու մեջ աներևութացավ (ՊՊ, 319):

– Ինչո՞ւ ծառ տնկենք,– կարծես գեպնի տակից բսնելով՝ մեջ ընկավ Յոթծովիմերանը (ՆԶ, 265):

Այսպիսով՝

1. Ժամանակակից հայերենում հանդիպում են ածականական, բայական և մակբայական հականշային ՀԴՄ-ներ:

2. Ըստ կազմության՝ տարբերակվում են՝ ա) իրենց բառային կազմում հականիշ (թե՛ գերադաս, թե՛ ստորադաս) անդամ ունեցող, բ) իրենց բառային կազմով լիովին տարբեր հականշային ՀԴՄ-ներ:

3. Իմաստային դիտվածքում առանձնացվում են լիարժեք և ոչ լիարժեք հականիշ ՀԴՄ-ներ:

4. Հականիշ ՀԴՄ-ները, հոմանշային հարաբերությունների մեջ

մտնելով այլ ՀԴՄ-ների հետ, կազմում են յուրօրինակ հականշահոմանշային շարքեր:

5. Հականշային ՀԴՄ-ները բնութագրվում են խոսքի ինչպես նույն, այնպես էլ տարբեր ոճերում հանդես գալու հնարավորություններով և հուզարտահայտչական տարբեր գունավորումներով:

ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԴՄ-ներն ստորադասական (երբեմն համաստորադասական) կայուն, պատրաստի վերարտադրելի և մասամբ կամ ամբողջությամբ վերահիմաստավորված կապակցություններ են, որոնք հատկանշվում են պատկերավոր համեմատություն արտահայտելու հանգամանքով:

2. ՀԴՄ-ների ձևավորմանը մասնակցում են *պես, նման, չափ, ինչպես (որպես), իբրև, ասես, կարծես* և *ոնց որ* բառերը: Այս շարքում առավել կենսունակ են *պես* և *նման* կապերը:

3. Ըստ շարահյուսական կառուցվածքի՝ ՀԴՄ-ներում տարբերակվում են բառակապակցության ձևավորումով և որպես ամբողջական նախադասություն հանդես եկող կապակցությունները:

Որպես բառակապակցություն կադապարված ՀԴՄ-ները բնութագրվում են ոչ հաղորդակցական կամ անվանողական արժեքով, իսկ նախադասության ձևավորումով ՀԴՄ-ները՝ հաղորդակցական գործառույթով:

4. Ինչպես ԴՄ-ներն ընդհանրապես, այնպես էլ ՀԴՄ-ները մասնավորապես, հարաբերակցվում են այս կամ այն խոսքի մասին, որ խարսխվում է նրանց իմաստային, գործառական և բառաքերականական բնութագրի վրա: Այս շարքում առաջին պլան է մղվում խնդրո առարկա կապակցությունների իմաստային գործոնը՝ ընդհանուր դարձվածային իմաստը, որով էլ ձևավորվում է այս կամ այն խոսքի մասի արժեքը:

Ժամանակակից հայերենում առկա են ածականական, բայական և մակբայական ՀԴՄ-ներ: Հետաքրքրություն են ներկայացնում ոչ անվանողական արժեքով եզակի այն կառույցները, որոնք խոսքը երանգավորող հատկանիշով են օժտված և հարաբերակից են վերաբերականներին:

5. Ժամանակակից հայերենի ՀԴՄ-ներում առանձնանում են խոսքիմասային երկարժեք (ածական // մակբայ) կապակցությունները, որոնք շարահյուսական մակարդակում կատարում են իմաստագործառական տարբեր (որոշչային և պարագայական) դերեր:

6. Խոսքիմասային այս կամ այն նշանակությամբ առանձնացող

ՀԴՄ-ները դրսևորում են կիրառական տարբեր հաճախականություն: Հանդես գալով խոսքային միջավայրում՝ նրանք ունենում են կախյալ կամ անկախ գործածություն՝ ցուցաբերելով առավել կամ պակաս ակտիվություն:

7. Ժամանակակից հայերենի ՀԴՄ-ների շարահյուսական առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շարահյուսական որոշակի պայմաններում իրացվող այդօրինակ կապակցություններում առաջին պլան են մղվում նրանց քերականական իմաստները՝ անկախ նրանց կառուցվածքային հատկանիշներից:

8. ՀԴՄ-ներին բնորոշ է դարձվածային տարբերակներ ունենալը: Դարձվածային տարբերակները նույն դարձվածքների տարատեսակներն են՝ բառերի, բառաձևերի, շարահյուսական կառուցվածքի և բաղադրիչների քանակական մասնակի փոփոխություններով:

9. Հաղորդակցական ՀԴՄ-ները հանդես են գալիս որպես նախադասություն-դարձվածքներ՝ հիմնականում ունենալով ստորադասական նախադասության ձևավորում:

Դրանք խոսքային հատուկ պայմաններում են հանդես գալիս որպես խոսքի ամբողջական և ինքնուրույն հատվածներ:

10. Հաղորդակցական ՀԴՄ-ներն ունեն եղանակի, ժամանակի, դեմքի, թվի և հաստատման-ժխտման քերականական կարգեր, որոնք ընտրության մեջ սահմանափակ հնարավորություններ են ընձեռում:

11. ՀԴՄ-ների իմաստաբանության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդօրինակ դարձվածքները ներունակ են արտահայտելու դրական կամ բացասական գնահատական: Ըստ որում, համեմատություն-դարձվածքների շրջանակներում այդ գնահատականը մեծ մասամբ ունի սաստկական նշանակություն:

12. ՀԴՄ-ների իմաստային-քերականական ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու նրանց իմաստային և քերականական հատկանիշների փոխադարձ կապն ու փոխպայմանավորվածությունը, ընդհանրապես արդյունավետ է դարձնում այդօրինակ կապակցությունների դարձվածային իմաստի, վերջինիս ունեցած սաստկական նշանակության և իմաստաբանական այլևայլ

խնդիրների պարզաբանումը:

ա) Ածականական ՀԴՄ-ներն արտահայտում են անձի, առարկայի, երևույթի կամ վերացական հասկացության հատկանիշ:

բ) Բայական ՀԴՄ-ները բնութագրվում են ընթացային-հատկանշային իմաստով. բայիմաստը բովանդակում է առարկայի փոփոխային հատկանիշի ամենատարբեր դրսևորումները (շարժում տարածության մեջ, ֆիզիկական գործողություն, մտավոր ու հոգևոր գործողություններ, առարկայի վիճակն իբրև գործընթաց և այլն):

գ) Մակբայական ՀԴՄ-ներն արտահայտում են գործողության կամ հատկանիշի որևէ հատկանիշ: Նրանք առավել հաճախ դրվում են բայերի վրա՝ ցույց տալով գործողության հատկանիշ:

13. Հաղորդակցական ՀԴՄ-ները բնութագրվում են որպես կայուն, պատրաստի վերարտադրելի և վերաիմաստավորված արտահայտություններ՝ իմաստաբանորեն ենթարկվելով թեմատիկ դասակարգման:

14. ՀԴՄ-ների բազմիմաստությունը լեզվի իմաստային փոփոխությունների և իմաստային զարգացումների դրսևորումներից է, որը ենթադրում է մեկից ավելի իմաստների համատեղում մեկ ՀԴՄ-ի շրջանակներում և այդ իմաստների միջև համատեղող, միավորող ընդհանուր տարրի առկայություն:

Ժամանակակից հայերենում մեր կողմից ուսումնասիրված քառասունյոթ բազմիմաստ ՀԴՄ-ներից երեսունինը հանդես են գալիս երկու, յոթը՝ երեք, մեկը՝ չորս իմաստներով: Նրանցից քսանմեկը միազագաթ ՀԴՄ-ներ են, որոնց մի մասը համատեղում է ածական // մակբայ խոսքիմասային արժեքները, քսներեքը բայական կապակցություններ են, մեկը՝ ածականական, երկուսը՝ հաղորդակցական:

15. ՀԴՄ-ներին բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ կարող են ունենալ հոմանշային զույգեր կամ շարքեր:

Ժամանակակից հայերենի՝ մեր կողմից ուսումնասիրված ութսուներկու ՀԴՄ-ների հոմանշային շարքերից երեսունչորսն ընդգրկում են երկու ՀԴՄ, երեսունմեկը՝ երեք, տասը՝ չորս, յոթը՝ հինգ կամ վեց ՀԴՄ: Հանդիպում են բազմանդամ շարքեր. տասնյոթ հոմանշային շարքերից հինգը ներառում են յոթ ՀԴՄ, չորսը՝ ինը,

յոթը՝ տասը և մեկը՝ տասնվեց ՀԴՄ:

16. Թե՛ բառային, թե՛ դարձվածային հականիշները հատկանշվում են իմաստային բևեռայնությամբ:

17. ՀԴՄ-ների հոմանշությունն ու բազմիմաստությունը, հականշությունն ու բազմիմաստությունը, հականշությունն ու հոմանշությունը փոխկապակցված են. որքան իմաստներ ունի տվյալ ՀԴՄ-ն, այնքան հոմանշային և հականշային շարքեր կարող է կազմել:

18. Ժամանակակից հայերենում առկա են ՀԴՄ-ների ածականական, բայական և մակբայական հոմանշային և հականշային շարքեր, որոնց բաղադրիչները, փոխհարաբերության մեջ մտնելով միմյանց հետ, կազմում են յուրօրինակ հականշահոմանշային շարքեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրների համառոտագրություններ

- ԱԲ** - Ա. Բակունց, Երկեր, Ե., «Լույս», 1985, 397 էջ:
- ԱԻ** - Ավ. Իսահակյան, Երկեր, հհ. 1-2, Ե., Հայպետհրատ, 1958, 399 էջ, 307 էջ:
- ԱՀ, Գ** - Ա. Հարությունյան, Վաշինգտոնյան գրառումներ («Գարուն», Ե., «Արարատ» ՍՊԸ, 1999, հ. 2, 96 էջ):
- ԱՇ** - Ալ. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հհ. 2-4, 7, Ե., Հայպետհրատ, 1950-1951, 605 էջ, 621 էջ, 528 էջ:
- ԱՇ, Գ** - Ա. Շահվերդյան, («Գարուն», Ե., «Արարատ» ՍՊԸ, 1999, հ. 4, 96 էջ):
- ԱՍԿ** - Ա. Սահինյան, Կեռմաններ, Ե., «Հայաստան», 1976, 448 էջ:
- ԱՍՈ** - Ա. Սեկոյան, Ոսկե վագերի մեջ, Ե., «Սովետական գրող», 1979, 615 էջ:
- ԲՍ** - Բ. Սեյրանյան, Այն աղմկոտ գարնան, Ե., «Հայաստան», 1965, 302 էջ:
- ԴԴ** - Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Ե., «Լույս», 1987, 1003 էջ:
- ԵԶ** - Ե. Չարենց, Երկեր, Ե., «Լույս», 1985, 478 էջ: Երկերի ժողովածու, հ. 3, Ե., ՀՍՍՌ ԳԱ, 1964, 374 էջ: Երկերի ժողովածու, հ. 3, Ե., «Սովետական գրող», 1987, 543 էջ:
- ԶԽ** - Զ. Խալափյան, Որտեղ էիր, մարդ աստծո, Ե., «Հայաստան», 1964, 318 էջ:
- ԿԳ, Գ** - Կ. Գրիգորյան, Բախտի ծառը («Գարուն», Ե., 1999, հ. 4):
- ԿԶ** - Կ. Զարյան, Երկեր, Ե., «Սովետական գրող», 1985, 575 էջ:
- ՀԹ** - Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հհ. 2, 4, Ե., Հ ԳԱ, 1990-1991, 637 էջ, 622 էջ:

- ՀԹ, Գ** - Հ. Թովմասյան («Գարուն», Ե., 2000, «Արարատ» ՍՊԸ, հ. 5, 96 էջ):
- ՀԹԸ** - Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, Ե., «Սովետական գրող», 1978, 503 էջ:
- ՀԼԴԲ** - Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան (կազմեցին՝ Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան), Ե., ԵՊՀ, 1975, 614 էջ:
- ՀՇ** - Հովհ. Շիրազ, Սիամանթո և Խջեզարե, Ե., «Հայաստան», 1970, 102 էջ:
- ՀՍ** - Հ. Սահյան, Բանաստեղծություններ, հ. Ա, Ե., «Հայաստան», 1967, 427 էջ:
- Մ** - Մուրացան, Գևորգ Մարզպետունի, Ե., «Լույս», 1989, 367 էջ:
- ՄԱ** - Մուրացան, Առաքյալը, Ե., Հայպետուսմանկիրատ, 1958, 160 էջ:
- ՄԱ, Գ** - Մ. Աբաջյանց, Գիշերը («Գարուն», Ե., 1999, հ. 2):
- ՄՊ, Գ** - Մ. Պողոսյան, Ստրուկը («Գարուն», Ե., 2000, հ. 5):
- ՆԲ, Գ** - Ն. Բաղդասարյան, Եղերերգ («Գարուն», Ե., ՀԿԿ Կենտկոմի հրատ., 1990, հ. 9, 96 էջ):
- ՆԴ** - Նար-Դոս, Պատմվածքներ, վիպակներ, Ե., «Լույս», 1978, 345 էջ:
- ՆԶ** - Ն. Զարյան, Հացավան, Ե., Հայպետուսմանկիրատ, 1960, 490 էջ:
- ՇՇ** - Շ. Շահնուր, Նահանջը առանց երգի, Ե., Եր. համալս., 1994, 214 էջ:
- ՊՊ** - Պ. Պռոշյան, Հացի խնդիր, Ե., Հայպետուսմանկիրատ, 1958, 327 էջ: Երկերի ժողովածու, հ. 5, Ե., Հայպետհրատ, 1963, 443 էջ:
- ՊՍ** - Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հհ. 1-2, 6, Ե., «Հայաստան», 1972, 1976, 525 էջ, 471 էջ, 447 էջ: Երկեր, հ. 3, Ե., «Սովետական գրող», 1983, 590 էջ:
- ՌՀԴԴԲ** - Ռուս-հայերեն դպրոցական դարձվածաբանական բառարան (կազմեցին՝ Հ. Յ. Հակոբյան, Ե. Ն. Տեր-Անտոնյանց), Ե., «Լույս», 1985, 343 էջ:

- ԱԶ** - Ատ. Զորյան, Երկերի ժողովածու, հ. 6, Ե., Հայպետհրատ, 1962, 567 էջ:
- ԱԽ** - Ա. Խաչատրյան, Եռանկյունաձև ճանապարհ, Ե., «Զանգակ-97», 2005, 144 էջ:
- ԱԽՀ** - Ա. Խանզադյան, Հողը, Ե., Հայպետհրատ, 1957, 763 էջ:
- ԱԽՄ** - Ա. Խանզադյան, Մխիթար սպարապետ, Ե., Հայպետհրատ, 1963, 743 էջ:
- ԱՊ, ԿՊ** - Ա. Պողոսյան, Կ. Պողոսյան, Ինձ բահ տվեք..., Ե., «Արևիկ», 1990, 447 էջ:
- ԱՍ, ԻՇ** - Ա. Սեֆերյան, Իմաստախոս Շեքսպիրը, Ե., Եր. համալս., 1986, 340 էջ:
- ՎԱ** - Վ. Անսյան, Լեռներ հայրենի, Ե., Հայպետհրատ, 1963, 707 էջ:
- ՎԱ, Գ** - Վ. Անդրեասյան, Շան օրը («Գարուն», Ե., «Արարատ» ՍՊԸ, 1999, հ. 3, 96 էջ):
- ՎՀ** - Վ. Հովհաննիսյան, Լեռան ճամփա, Ե., ՀԳՄ, 2001, 93 էջ:
- ՎՊ** - Վ. Պետրոսյան, Հավասարում բազմաթիվ անհայտներով, Ե., «Սովետական գրող», 1977, 478 էջ:
- ՎՏ** - Վ. Տերյան, Երկեր, Ե., «Սովետական գրող», 1989, 607 էջ:
- ՐՈ** - Րաֆֆի, Ոսկե աքաղաղը, Ե., Հայպետուսմանկիրատ, 1958, 146 էջ:
- ՐՊ** - Րաֆֆի, Պատմվածքներ և վիպակներ, Ե., «Լույս», 1986, 336 էջ:
- ՐՍ** - Րաֆֆի, Սամվել, Ե., «Հայաստան», 1967, 635 էջ:
- ՈՒԴԲ** - Ուսումնական դարձվածաբանական բառարան (կազմեց՝ Խ. Գ. Բաղիկյան), Ե., ԵՊՀ, 2002, 734 էջ:
- ՔԹ** - Ք. Թափալցյան, Հայրենաշեն, Ե., Հայպետհրատ, 1963, 583 էջ:

2. Տեսական գրականություն

1. **Աբեղյան Մ. Խ.**, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. 2, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1974, 847 էջ:
2. **Աբրահամյան Ս. Գ.**, Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., «Լույս», 1969, 439 էջ: Հայոց լեզու, բառ և խոսք, Ե., «Լույս», 1978, 187 էջ:
3. **Աղայան Է. Բ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., ԵՊՀ, 1984, 370 էջ:
4. **Առաքելյան Վ. Դ., Խաչատրյան Ա. Հ., Էլոյան Ս. Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1979, 487 էջ:
5. **Բաղիկյան Խ. Գ.**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1986, 354 էջ: Դարձվածային ոճաբանություն, Ե., Եր. համալս., 2000, 207 էջ:
6. **Բեդիրյան Պ. Ս.**, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., «Լույս», 1973, 231 էջ: Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., ՀՊՄԻ, 1990, 85 էջ: Բառերի խորհրդավոր աշխարհում, Ե., «Զանգակ», 2003, 254 էջ:
7. **Գրիգորյան Ս. Ա.**, Հայերենի գունանունները և նրանց լեզվաոճական արժեքը, Ե., «Նաիրի», 1998, 135 էջ:
8. **Գևորգյան Ե. Հ.**, Հայերենի դարձվածքները, Ե., ԵՊՀ, 1969, 137 էջ:
9. **Խաչատրյան Լ. Մ.**, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», 1996, 257 էջ: Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորներն արդի հայերենում, «Բանբեր ԵՊՀ-ի: Հասարակական գիտությունների», Ե., Եր. համալս., 1999, հ. 1, 196 էջ (15-21): Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորները գրաբարում (ըստ Աստվածաշնչի), «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, Վանաձոր, «Իրավաբանական

կենտրոն-PRESS», 2003, հ. 1, 112 էջ (22-24):

10. **Խաչատրյան Լ. Մ., Գյուրջինյան Դ. Ս.,** Դիտարկումներ «Աստված» բաղադրիչով կայուն բառակապակցությունների շուրջ, «Էջմիածին», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1995, հ. 1, 119 էջ (41-46):
11. **Կարապետյան Մ.,** Կենդանուն պարունակող դարձվածքներն անգլերենում և հայերենում, «Դարձվածաբանության խնդիրներ: Գիտաժողովի նյութեր» (խմբագր.՝ Ի. Ն. Առաքելյանի, Մ. Գ. Արարատյանի, Ա. Հ. Նազարյանի), Ե., «Ձանգակ-97», 2003, 55 էջ:
12. **Հակոբջանյան Մ.,** Ժամանակակից ֆրանսերենի՝ կենդանունով կազմված ամենագործածական առածներն ու ասացվածքները և դրանց համարժեքները հայերենում («Դարձվածաբանության խնդիրներ: Գիտաժողովի նյութեր», Ե., 2003):
13. **Ղազարյան Հ.,** Գունանիշ բաղադրիչով դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, Ե., «Ճարտարագետ», 2004, 208 էջ:
14. **Ղազարյան Մ.,** Գունանիշ բաղադրիչով դարձվածքները ֆրանսերենում և դրանց համարժեքները ռուսերենում ու հայերենում («Դարձվածաբանության խնդիրներ: Գիտաժողովի նյութեր», Ե., 2003):
15. **Մարգարյան Ա. Ս.,** Արդի հայերենի կապերը, Ե., ԵՊՀ, 1955, 103 էջ: Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ, 1990, 407 էջ:
16. **Մուրվալյան Ա. Ա.,** Հայոց լեզվի բառային կազմը, Ե., ՀՍՍՌ ԳԱ, 1955, 436 էջ: Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Ե., ՀՍՍՌ ԳԱ, 1959, 251 էջ:
17. **Ջահուկյան Գ. Բ.,** Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1989, 319 էջ:
18. **Ջահուկյան Գ. Բ., Աղայան Է. Բ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա.,** Հայոց լեզու, Ա Պրակ, Ե., «Լոյս», 1980, 528 էջ:
19. **Ջահուկյան Գ. Բ., Խլղաթյան Ֆ. Հ.,** Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ոճաբանություն, Ե., «Լոյս», 1976, 166 էջ:

20. **Սուրբապյան Ա. Մ.**, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., Եր. համալս., 1971, 295 էջ: Ժամանակակից հայոց լեզու, Ե., Եր. համալս., 1999, 351 էջ:
21. **Քոսյան Վ. Ա.**, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1975, 487 էջ: Գրաբարի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1980, 279 էջ: Միջին հայերենի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1984, 213 էջ: Արևմտահայերենի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1986, 215 էջ: Բառակապակցական կադապարների զարգացումը հայերենում, Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1990, 491 էջ:
22. **Алифиренко Н. Ф.**, О соотношении формообразовательных и деривационных связей ФЕ, Сб. Проблема тождества фразеологических единиц, Челябинск, ЧГПИ, 1990, 152 с.
23. **Амосова Н. Н.**, Основы английской фразеологии, Ленинград, ЛУ, 1963, 208 с. Значение фразеологии как особой отрасли языкознания, Сб. Проблемы фразеологии и задачи ее изучения в высшей и средней школе, Вологда, Северо-западное книжное изд., 1967, 349 с.
24. **Архангельский В. Л.**, Устойчивые фразы в современном русском языке, Ростов н/Д, РУ, 1964, 315 с.
25. **Байрамова Л. К.**, Тожество фразеологизмов в зеркале трансформаций в кореляций, Сб. ПТФЕ, Челябинск, 1990, 152 с.
26. **Бездек Я., Коут И.**, К вопросу о сопоставительном изучении фразеологии русского и чешского языков, Сб. ПФ, Вологда, 1967.
27. **Бондаренко В. Т.**, Семантика устойчивой фразы в речи. Тожество и различие, Сб. ПТФЕ, Челябинск, 1990.
28. **Бурдина З. Г.**, О фразеологизации языковых структур в синтаксисе современного немецкого языка, Сб. Вопросы словообразования и фразообразования в германских языках, М., МГПИ, 1980, 189 с.
29. **Васильев Л. М.**, О семантической эквивалентности

- фразеологизма слову, Сб. ПТФЕ, Челябинск, 1990.
30. **Везерова М. Н., Маранькова М. П.**, К вопросу о системных отношениях фразеологизмов одной тематической группы, Сб. Вопросы семантики фразеологических единиц, ч. I, Новгород, ЛГПИ, 1971, 377 с.
 31. **Виноградов В. В.**, Русский язык. Грамматическое учение о слове, М., Высшая школа, 1986, 639 с.
 32. **Вишневская Г. П.**, Индивидуально – авторское применение фразеологизмов в демократической литературной сатире XVII века, Сб. ВСФЕ, ч. I, Новгород, 1971.
 33. **Гвоздарев Ю. А.**, Функции ФЕ в русской речи, Сб. Фразеологическая номинация (особенности семантики фразеологизмов), Ростов н/Д, РГПИ, 1989, 89 с. О семантической классификации фразеологических единиц русского языка, Сб. ВСФЕ, ч. I, Новгород, 1971.
 34. **Глухов В. М.**, Образование многозначных глагольных фразем путем аналогии, Сб. Проблемы образование фразеологических единиц, Тула, ТГПИ, 1976, 162 с. Фразеологическое значение в сопоставлении с лексическим, Сб. Фразеологическая номинация (особенности семантики фразеологизмов), Ростов н/Д, 1989.
 35. **Григорян С. А.**, Семантическое поле цветообозначений армянского языка, АКД, Ереван, ЕГУ, 1989, 24 с.
 36. **Гюльмагомедов А. Г.**, О специфике фразеологического значения, Сб. Вопросы лексической и фразеологической семантики, Ростов н/Д, РГПИ, 1979, 126 с.
 37. **Диброва Е. И.**, Природа значения вариантной ФЕ, Сб. ВЛФС, Ростов н/Д, 1979.
 38. **Жуков В. П.**, Семантика фразеологических оборотов, М., Просвещение, 1978, 160 с., Русская фразеология, М., Высшая школа, 1986, 309 с.
 39. **Иванникова Е. А.**, К вопросу об эквивалентности ФЕ словосочетанию, Сб. ПФ, Вологда, 1967.

40. **Игнатьева Л. Д.**, Структурные и семантические свойства фразеологических единиц с фразообразующим компонентом «как» в современном русском языке, АКД, Ленинград, ЛГПИ, 1976, 16 с. Влияние семантической структуры фразеологизмов на характер их произнесения, Сб. Фразеологическое значение в языке и речи, Челябинск, ЧГПИ, 1988, 119 с. Количественное варьирование во фразеологических единицах с компонентом «как», «хоть», «если», Сб. ПТФЕ, Челябинск, 1990. Синонимические отношения фразеологизмов с компонентом «как» качественно – обстоятельственной семантики, Сб. Вопросы фразеологии современного русского языка, Челябинск, ЧГПИ, 1975, 132 с.
41. **Ковалев В. П.**, Основные индивидуально – авторские приемы экспрессивного использования фразеологизмов, Сб. ВСФЕ, ч. I, Новгород, 1971.
42. **Ковалева Л. И., Прохорова Н. М.**, О семантической природе устойчивых компаративов английского языка, Сб. ВСФЕ, ч. II, Новгород, ЛГПИ, 1972, 175 с.
43. **Кожин А. Н., Рухлов Ю. П.**, Неполнозначные слова в структуре фразеологизма, Сб. ВСФЕ, ч. I, Новгород, 1971.
44. **Козырев И. С.**, Современный русский язык, Минск, Вышэйшая школа, 1979, 102 с.
45. **Копыленко М. М., Попова З. Д.**, Очерки по общей фразеологии, Воронеж, ВУ, 1978, 143 с.
46. **Костючук Л. Я.**, Метафоризации некоторых устойчивых словосочетаний в древнерусском языке, Сб. ПОФЕ, Тула, 1976.
47. **Кругликова Л. Е.**, Фразеологические единицы современного русского литературного языка с «цветовыми» прилагательными, АКД, Ленинград, ЛГУ, 1977, 22 с. Структура лексического и фразеологического значения, М., МГПИ, 1988, 83 с.
48. **Кунин А. В.**, Английская фразеология, М., Высшая школа, 1970, 344 с. Фразеологическая деривация в английском языке, Сб.

- Вопросы словообразования и фразообразования в германских языках, М., 1980, 189 с.
49. **Левинтова Э. И., Вольф Е. М.**, О связи фразеологии с системой языка, Сб. ПФ, Вологда, 1967.
 50. **Лелекина Н. А.**, Синонимика и варьирование как способ фразообразования, Сб. ПОФЕ, Тула, 1976.
 51. **Лукичева Э. В.**, Устойчивые словосочетания современного русского языка с компонентами латинского происхождения, Сб. ПФ, Вологда, 1967.
 52. **Малафеева Е. Р.**, Семантическая структура фразеологизмов с компонентом «птица» в современном русском языке, Сб. Фразеологическое значение в языке и речи, Челябинск, 1988.
 53. **Мальцева Д. Г.**, Национально – культурный аспект фразеологии, АДД, М., МГУ, 1991, 36 с.
 54. **Михайлова Г. И.**, Тождество и различие процессуальных фразеологизмов – функционировании в них категории наклонения, Сб. ПТФЕ, Челябинск, 1990.
 55. **Мокиенко В. М.**, Славянская фразеология, М., Высшая школа, 1989, 286 с. Загадки русской фразеологии, М., Высшая школа, 1990, 159 с.
 56. **Молотков А. И.**, Форма фразеологизма (на материале русского языка), Сб. ПФ, 1967. Основы фразеологии русского языка, Ленинград, Наука, 1977, 283 с.
 57. **Мухин А. М.**, Устойчивые глагольные фразы и методы их изучения, Сб. ПОФЕ, Тула, 1976.
 58. **Назарян А. Г.**, Фразеология современного французского языка, М., Высшая школа, 1987, 287 с. Фразеология – достижения и задачи (Դարձվածքաբանության խնդիրներ: Գիտաժողովի նյութեր, Ե., 2003).
 59. **Неведомская О. М.**, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими, АКД, Ленинград, ЛГУ, 1973, 14 с.

60. **Ножин Е. А.**, К вопросу о фразеологии, разновидностей английского языка за пределами Англии, Сб. ПФ, Вологда, 1967.
61. **Огольцев В. М.**, Способы выражения компаративных отношений и компонентный состав устойчивого сравнения. Структурные типы компаративных фразеологизмов. О фразеологизации устойчивых сравнений, Сб. ВСФЕ, ч. I, Новгород, 1971. Компаративные фразеологизмы русского языка в сопоставлении с французскими, Сб. ВСФЕ, ч. II, Новгород, 1972.
62. **Пашкова А. В.**, Временная характеристика предикативных ФЕ, Сб. Очерки по лексике и фразеологии, Ростов н/Д, РГПИ, 1976, 114 с. Значение ФЕ и контекст, Сб. Фразеологическая номинация (особенности семантики фразеологизмов), Ростов н/Д, 1989.
63. **Печенкина В. Г., Спиридонова Л. И.**, Способы образования адъективно – субстантивных фразеологических сочетаний, Сб. ПОФЕ, Тула, 1976.
64. **Попов Р. Н.**, О природе ФЕ и некоторых процессах их развития, Сб. ПФ, Вологда, 1967. О роли архаических элементов в структурно–семантической организации ФЕ, Сб. ВСФЕ, ч. I, Новгород, 1971. О взаимодействии в языке лексической и фразеологической систем (образование слов на базе фразем), Сб. ПОФЕ, Тула, 1976.
65. **Потебня А. А.**, Из записок по русской грамматике, Т. 1., М., Учпедгиз, 1958, 536 с.
66. **Райхштейн А. Д.**, Немские устойчивые фразы, Ленинград, Просвещение, 1971, 184 с. Сопоставительный анализ немецкой и русской фразеологии, М., Высшая школа, 1980, 143 с.
67. **Ренская Т. В.**, Об эллипсисе ФЕ и их значений в языке и речи, Сб. ВЛФС, Ростов н/Д, 1979.
68. **Ройзензон Л. И., Авалиани Ю. Ю.**, Современные аспекты изучения фразеологии, Сб. ПФ, Вологда, 1967.
69. **Ройзензон С. И.**, Сравнительные устойчивые обороты, обозначающие цвет, Сб. ПФ, Вологда, 1967. Структурно

- семантические связи глагольных компаративных фразеологических единиц с фразеологизмами других типов, Сб. ВСФЕ, ч. II, Новгород, 1972.
70. **Ротт Э. Х.**, Компаративные фразеологизмы в русском, немецком и французском языках, Сб. Вопросы романо – германского языкознания, Челябинск, ЧГПИ, 1967, 186 с.
 71. **Рыньков Л. Н.**, Семантическая структура фразеологизмов в прозе и поэзии, Сб. Фразеологическое значение в языке и речи, Челябинск, 1988.
 72. **Сидоренко М. И.**, К определению фразеологических синонимов, Сб. ПФ, Вологда, 1967.
 73. **Сидякова Н. М.**, О частности и употребительности компаративных фразеологических единиц в английском языке, Сб. ПФ, Вологда, 1967.
 74. **Синельникова Л. Н.**, О соотношении перифразы как единицы образной речи и фразеологического единства как единицы словаря, Сб. ПОФЕ, Тула, 1976.
 75. **Соколова Н. В.**, Варианты узуальных фразеологизмов в произведениях Ю. Бондарева, Сб. ПТФЕ, Челябинск, 1990.
 76. **Смирницкий А. И.**, Лексикология английского языка, М., Изд. лит. на иностр. яз., 1956, 260 с.
 77. **Смит Л. П.**, Фразеология английского языка, М., Учпедгиз, 1959, 208 с.
 78. **Супрун А. Е.**, О фразеологических единиц с числительными, Сб. Вопросы фразеологии, Ташкент, Наука, 1965, 246 с.
 79. **Тагиев М. Т.**, К проблеме разграничения типов значений лексических и фразеологических единиц, Сб. ПФ, Вологда, 1967.
 80. **Телия В. Н.**, О лексических компонентах фразы как элементах ее структуры, Сб. ПФ, Вологда, 1967.
 81. **Тихонов А. Н.**, О грамматических формах, вариантах и дериватах фразеологических оборотов, Сб. ПФ, Вологда, 1967.

- Семантическая членимость слова и фразеологизма, Сб. ВСФЕ, ч. I, Новгород, 1971.
- 82. Тихонов М. Ю.,** Место ФЕ в семантических полях языка, Сб. ВСФЕ, ч. I, Новгород, 1971.
- 83. Федосов И. А.,** Структурно – синтаксические признаки разговорных ФЕ в современном русском языке, Сб. ПОФЕ, Тула, 1976.
- 84. Фомина М. И.,** Русская лексика и фразеология, ч. 1, М., МПИ, 1965, 40 с.
- 85. Чепасова А. М.,** Семантико – грамматические классы русских фразеологизмов, Челябинск, ЧПИ, 1974, 100 с. Импликация и ее следствия во фразеологии, Сб. ПТФЕ, Челябинск, 1990.
- 86. Чепасова А. М., Ивашко Л. А.,** Проблема структурности фразеологического значения, Сб. Фразеологическое значение в языке и речи, Челябинск, 1988.
- 87. Черкесова А. Г.,** О десемантизации уменьшительно-оценочных существительных в составе фразеологизма, Сб. ВСФЕ, ч. I, Новгород, 1971.
- 88. Чернышева И. И.,** Некоторые закономерности развития фразеологической системы (на материале немецкого языка), Сб. ПФ, Вологда, 1967. Фразеология современного немецкого языка, М., Высшая школа, 1970, 200 с. Фразеобразования как особая область вторичной номинации, Сб. Вопросы словообразования и фразеобразования в германских языках, М., 1980, 189 с.
- 89. Шавкунова О. В.,** К вопросу о формировании незамкнутых предикативных фразеологических единиц, Сб. ПФ, Вологда, 1967.
- 90. Шанский Н. М.,** Фразеология современного русского языка, М., Высшая школа, 1985, 160 с.
- 91. Шварцкопф Б. С.,** ФЕ в отношении к языковой норме, Сб. ПФ, Вологда, 1967.

92. **Эмирова А. М.**, Об антонимических противопоставлениях в сфере фразеологии, Сб. ВСФЕ, ч. I, Новгород, 1971.
93. **Arnold I. V.**, The English word, M., Vishaya shkola, 1986, 295 p.
94. **Goursky S. E.**, The idiomatic heart of the English language, Lvov, Vishaya shkola, 1975, 182 p.

3. Բառարաններ

1. **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան», 1976, 1615 էջ:
2. **Բաղիկյան Խ. Գ.**, Ուսումնական դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ, 2002, 734 էջ:
3. **Բարաթյան Ն. Ռ., Հարությունյան Ն. Վ.**, Գիտական գրականության ամենագործածական բառակապակցությունների անգլերեն-ռուսերեն-հայերեն բառարան, Ե., Եր. համալս., 1989, 310 էջ:
4. **Բեդիրյան Պ. Ս.**, Դարձվածաբանական բացատրական բառարան, Ե., «Լույս», 1971, 127 էջ:
5. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3 (կազմեցին՝ **Ա. Մ. Սուքիասյան, Ե. Գ. Տեր-Մինասյան, Ա. Ս. Հակոբյան**), Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1974, 574 էջ:
6. **Իշխանյան Ա. Ս.**, Թևակոր խոսքեր, Ե., «Հայաստան», 1975, 122 էջ:
7. **Խլղաթյան Ֆ. Հ.**, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Ե., «Լույս», 1976, 110 էջ:
8. Հայոց բառ ու բան (կազմեց՝ **Սահակ Վարդապետ Ամատունի**), Ս. Էջմիածին, Միաբ. մայր աթոռոյ Ս. Էջմիածնի, 1912, 707 էջ:
9. **Նազարյան Ա. Հ.**, Անգլերեն դարձվածքների ուսումնական համառոտ բառարան, Ե., Վ. Բոյուսովի անվ. լեզվբ. պետ. համալս., 2000, 216 էջ:
10. **Նազարյան Ա. Հ.**, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Ե., «Ապոլոն», 1993, 656 էջ:
11. Ռուս-հայերեն բառարան (կազմեց՝ **Ա. Ս. Ղարիբյան**), Ե., «Հայաստան», 1982, 1433 էջ:
12. Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան (խմբագր. **Ռ. Լ. Մելքումյանի, Պ. Մ. Պողոսյանի**), Ե., Եր. համալս., 1975, 615 էջ:

13. Ռուս-հայերեն դպրոցական դարձվածաբանական բառարան (կազմեցին՝ **Հ. Յ. Հակոբյան, Ե. Ն. Տեր-Անտոնյանց**), Ե., «Լույս», 1985, 343 էջ:
14. **Սահակյան Վ. Ա., Սահակյան Վ. Վ.**, Դարձվածքներ և թևավոր խոսքեր, Ե., ՎՄՎ-Պրինտ, 2002, 144 էջ:
15. **Սեֆերյան Ս. Ս., Հովհաննիսյան Լ. Վ., Լազարյան Ա. Ա.**, Անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ, 1986, 247 էջ:
16. **Սուրիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., Եր. համալս., 2003, 1237 էջ:
17. **Սուրիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա.**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ, 1975, 614 էջ:
18. **Օհանյան Հ.**, Իսպաներեն-հայերեն կենդանուն պարունակող դարձվածքների բառարան-տեղեկատու, Ե., «Ասողիկ», 2004, 91 էջ:
19. Англо-русский фразеологический словарь, Т. 1-2 (сост. **А. В. Кунин**), М., Сов. энциклопедия, 1967, 1264 с.
20. **Ахманова О. С.**, Словарь лингвистических терминов, М., Сов. энциклопедия, 1969, 607 с.
21. **Назарян А. Г.**, Образные сравнения французского языка. Фразеологизмы, М., Наука, 1965, 200 с.
22. Немецко-русский фразеологический словарь (сост. **Л. Э. Бинович**), М., ГИС, 1956, 904 с.
23. Постоянные сравнения русского языка (подготовл. **Л. А. Лебедевой**), Краснодар, КГУ, 1975, 51 с.
24. Семантические группы во фразеологии современного английского языка (сост. **А. И. Алехина**), М., Высшая школа, 1978, 157 с.
25. Словарь – справочник по русской фразеологии (сост. **Р. И. Яранцев**), М., Русский язык, 1985, 304 с.
26. Фразеологический словарь русского языка (под. ред. **А. И. Молоткова**), М., Сов. энциклопедия, 1967, 543 с.

27. Французско - русский фразеологический - словарь (под. ред. **Я. И. Рецкера**), М., ГИС, 1963, 1111 с.
28. English idioms and how to use them (By **J. Seidl, W. Mc. Mordie**), М., Vishaya shkola, 1983, 265 p.
29. English similes (By **K. M. Karapetian**), Yerevan, YU press, 1984, 98 p.
30. Similes and their use (By **G. Kleiser**), New York and London, Funk and Wagnalls, 1925, 381 p.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ5

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ-ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ԸՄԲՈՒՆՈՒՄԸ ԼԵՂՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 10

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ-ԴԱՐՁՎԱ-
ԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ – ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 31

1. ՀԴՄ-ների կառուցվածքային տիպերը 31

Ա. Բառակապակցական (անվանողական) ՀԴՄ-ներ..... 32

1. Անվանողական ՀԴՄ-ների կաղապարները, ծավալային
ընդգրկումը և բաղադրիչների կապակցման եղանակները 32

ա) *Ածական + գոյական + կապ* կաղապարով ՀԴՄ-ներ..... 33

բ) *Բայ + գոյական + կապ* կաղապարով ՀԴՄ-ներ 36

գ) *Կապ + կապի խնդիր* կառուցով ՀԴՄ-ներ 41

2. Անվանողական ՀԴՄ-ների քերականական հատկանիշները ... 45

ա) ՀԴՄ-ների ձևաբանական առանձնահատկությունները 45

1. Ածականի արժեք ունեցող ՀԴՄ-ներ..... 47

2. Բայի արժեք ունեցող ՀԴՄ-ներ..... 53

3. Մակբայի արժեք ունեցող ՀԴՄ-ներ 64

բ) ՀԴՄ-ների շարահյուսական գործառույթները 71

1. Ածականական ՀԴՄ-ների շարահյուսական գործառույթները... 72

2. Բայական ՀԴՄ-ների շարահյուսական գործառույթները..... 77

3. Մակբայական ՀԴՄ-ների շարահյուսական գործառույթները ... 79

Բ. Հաղորդակցական ՀԴՄ-ների կառուցվածքային-քերականական առանձնահատկությունները	83
II. ՀԴՄ-ների տարբերակները	90
Ա. Բառային (հոմանշային) տարբերակներ	92
Բ. Քերականական տարբերակներ	95
Գ. Քանակային տարբերակներ	98

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ	
ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	
I. Անվանողական ՀԴՄ-ների իմաստային խմբերը	100
Ա. Ածականական ՀԴՄ-ների իմաստաբանությունը	102
Բ. Բայական ՀԴՄ-ների իմաստաբանությունը	112
Գ. Մակբայական ՀԴՄ-ների իմաստաբանությունը	125
II. Հաղորդակցական ՀԴՄ-ների իմաստաբանությունը	130
III. ՀԴՄ-ների իմաստային հարաբերությունները	135
Ա. ՀԴՄ-ների բազմիմաստությունը.....	135
Բ. Հոմանշությունը ՀԴՄ-ներում	143
Գ. Հականշությունը ՀԴՄ-ներում	151
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	162
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	166
1. Սկզբնաղբյուրների համառոտագրություններ	166
2. Տեսական գրականություն	169
3. Բառարաններ	179

Լ. Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Л. Н. АВЕТИСЯН

**ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ – ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**КОМПАРАТИВНЫЕ ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ
ЕДИНИЦЫ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ
ЯЗЫКЕ**

Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$; Ծավալը՝ 11,5 մամուլ:

Տպարանակը՝ 200:

ԷԴԻՏ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am